

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

Հ.Յ.Գ. ԼԻՐԱՆԱՆԻ ԿԵԿՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԹԻՒ 3

**ԱՐՑԱԽԻՆ ՀԵՏ,
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՄԱՐ**

ՊԷՅՐՈՒԹ

1990

Համազգայինի Մ. Է. Հ.
Արսլանեան Ճեմարանի
աշակերտական գրադարանին
կողմէ

Ապրիլ 2019



Ստեփանակերտ. «ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ԻՆՈՆԵՐՐ» կոթողը

Հ.Յ.Գ. ԼԻՐԱՆԱՆԻ ԿՅԻՌՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԸՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԹԻՒ 3

ԱՐՑԱԽԻՆ ՀԵՏ, ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՄԱՐ

ՊԵՅՐՈՒԹ


1990



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԵԹԻԱՆ ՏՊԱՐԱՆ

Printed in Lebanon by Hamaskaine Wahe Sethian Press

ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
3466
ԼՂՀ ԱԳՆ



Գանձասար վանքի ընդհանուր տեսքը (հարաւէն)



Եզիշէ առաքեալ վանքի համալիրէն մաս մը

ՓՈՒՍԱՆ ՆԵՐԱԾԱԿԱՆԻ

ԻՆՔՆԱՀԱՍՏԱՏՄԱՆ, ԲԱՐԳԱԻԱԾՄԱՆ ԵՒ ԳՈՅԱՏԵԻՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Տարօրինակ է, բայց եւ այնպէս իրաւ:

Մարդկային երկու տեսակ հաւաքականութիւններ միայն ատակ են իրենց միասնական բոլորանուէր ներդրումները կատարելու իրենց ինքնութեան ի խնդիր չերիւրածոյ կամ իրաւ պաշարներու ընթացքին.— ամբոխները եւ ազգերը:

Շուտով բացառապէս կը դառնայ, սակայն, որ որակի հսկայ բաց մը գոյութիւն ունի երկու ներդրումներուն միջեւ:

Մինչդեռ առաջինի ներդրումները բոլորանուէր են միայն այնքանով, որքանով կը ներեն այն սահմանափակ կարելիութիւններն ու կարողականութիւնները, զորս մշակելու հազիւ թէ առիթ ունեցած է ամբոխը, երկրորդը կը գործէ պատմական, քաղաքակրթական ու մշակութային ամբողջ հէկքի մը վերայ, ուր դարաւոր գոյակցութիւնը տարբեր առաջա-

դէմ ժողովուրդներու, — յատկանշուած՝ առաջադի-
մութեան մակարդակի վրայ՝ խաղաղ մրցակցութեան
ու գերազանցման մթնոլորտով, ինչպէս նաև մարդ-
կայնական ձգտումներու ազնուագոյնը խտացնող
համամարդկային առ եւ տուրով, — ամուր խարխիս
մը կը հանդիսանայ առաջադէմ մարդկութեան կողմ.
Դարերով նոիրականացած արժէքներու ի խնդիր
գաղափարական, ամէն տարակույս ձերբագրատ,
արդար պայքարի:

Նոյնիսկ եթէ հարցը դիտենք պատմական
«հիմա՛»յի եւ «հո՛ւս»ի տեսանկիւնէն, հոս եւս մեծա-
պէս դերակատար է, — ինչպէս նախկինի պարագա-
չին պատմական մշակութային ու գաղափարա-
ուղղութիւնը, — ազգի անհատական թէ հաւա-
քական մակարդակի վրայ արտապայտուող՝ իր գոր-
ծած արարքի, ձգտումի թէ պայքարի գիտակցակա-
նութիւնը:

Մինչդեռ ամբոխի պարագային ակներև է
անհատական մակարդակի վրայ գիտակցական ներ-
դրումի բացակայութիւնը, այլ ընդհակառակն տի-
րապետող է իբրև թէ ամբոխի հաւաքական տգիտու-
թիւնը պարածածկող «լուսատրիչ» ու թիով չանախ
մէկէ ոչ շատ աւելի առաջնորդներու ամբոխավարա-
կան խօսքը, — որ ինքնավստահութիւն կը ներշնչէ եւ
ամբոխին ընել կու տայ արարքներ, որոնց մասին չա-
ճախ գաղափար իսկ չունի, բացի այն պարագայէն,
երբ նաև կը հրահրոյի անհատական-անձնական,
այնքա՛ն շօշափելի շահի մոլուցքը, — եւ հետեւաբար
արարքը կը ստանայ իսկապէս որ տարերային ու բը-
նագոյական բնոյթ, որ միշտ պահանջը ունի քաղա-
քակիրթ մարդկութեան առջեւ արդարանալու ու անոր
հասկացողութիւնն ու ներողամտութիւնը հայցելու,

Անդին, ազգը կը գործէ անհատական գի-
տակցութիւններու ներբախման ու բիրեղացած գա-
ղափարի հանրագումարի մակարդակին, որկէ եւ
բոլոր կարելիութիւններու նախատեսման ու ինքնա-
զսպումի առաքինութիւնները, բայց նաև երթին մէջ
դեղեւում չճանչցող ու անհատական թէ հաւաքական
մակարդակի վրայ արտապայտուող պայքարունակու-
թիւնը:

Ուրիշ կերպ կարելի չէ բացատրել, բացառա-
տօրէն, այն երեւոյթները, որոնք կը պարզուին մե-
րօրեայ ու նորագոյն մեր դիցազնամարտին ընթաց-
քին: Ղարաբաղը, որակի տեսակետէն, բախումի
վայրն է ամբոխի ու ազգի եւ ոչ միայն խորհրդային
իշխանութիւններու, այլև համայն մարդկութեան
դիրքորոշումները այս հարցին կապակցաբար ապա-
ցոյց պիտի հանդիսանան այն իրողութեան, թէ
իրե՛նք, այսպէս կոչուած քաղաքակիրթ ազգերը,
պետութիւն թէ ժողովուրդ, որքանո՞վ ամբոխ են եւ
որքանո՞վ ազգ: Ինչ որ պարզուած է ցարդ՝ շատ ալ
պատուաբեր չի կրնար ըլլալ վերէն վար «թերաճ»
«Երրորդ աշխարհ»ը դիտող պետութիւններուն հա-
մար:

Կրնայինք դիրքութեամբ զանց առնել այս դի-
տողութիւններու հասցեագրումը խորհրդային թէ այլ
«բարգաւաճ» պետութիւններու, որովհետեւ անկասե-
լի այս երթը նախ դժուար է այլեւս շրջանցել, ապա՛
որովհետեւ այդ ուղղութեամբ գերպետութեանց կողմէ
տարուած ամէն աշխատանք դէմ պիտի ըլլար պար-
զագոյն տրամաբանութեան ու բոլոր այն արժէքնե-
րուն, զորս դաւանելու պատիւը իրեն կ'ուզէ վերա-
պահել քաղաքակիրթ ամէն ազգ:

Բայց ակնյայտ իրողութիւն է, որ, աւելի քան

եօթանասունամեակէ մը ի վեր, նոյն այս ժողովուրդները կը շարունակեն անտեսել, ուրանալ եւ մոռացութեան մատնել, աւելի՛ն՝ գիտակցաբար խափանել Հայկական Յեղասպանութեան յիշատակումն ու արդար լուծումի մը յանգումը:

Ակնյալտ իրողութիւն է, որ, ամբողջ իսնամեակ մը, մենք անձանձիր ողորմով փորձեցինք խիղճն ու բանականութիւնը արթնցնել յիշեալ ժողովուրդներուն, եւ մատը մատին գարնող չեղաւ:

Ամէնէն ցաւալին ակնյալտ այս իրողութիւններու շարքին այն է, որ բացալալտ «փոկրոմ» իրարութեան այս պալմաններուն մէջ անգամ, հալրենի թէ արտասահմանեան մեր մտատրականները կը հարկադրուին, քար դնելով իրենց առօրեական մըղկըտանքին, տքնութեան, տագնապին ու երկունքին վրայ, բոլոր մարդոց կողմէ հասկնալի ու տրամաբանական լեգրով դակնեալ բացատրել այն, որ արդէն այնքան անգամներ բացատրուած է՝ յանուն խիղճի ու բանականութեան, յանուն արդարութեան ու ճշմարտութեան, յանուն արդար պահանջատիրութեան անդու եւ այլեւ անգալելի այս երթին, որ, պէտք է հասկնալի ըլլայ այլեւ, միայն մեր սեփականը չէ, այլ համայն մարդկութեան:

Այսպէս է որ այս հրատարակութեամբ ներկայացուած հեղինակներն ու նիւթերը դարձեալ կը հրամցնենք, շարունակելով հաւատալ արդարութեան ձայնի ուժին եւ անձանձիր այն հաւատքով, որ ուշ կամ կանուխ, օր մը, անոնք լսելի պիտի դառնան:

• • •

Հետագայ գրքոյկը կը բաղկանայ գլխատր չորս բաժիններէ:

Թէեւ անոնք գրուած են տարբեր թուականներու եւ բացալալտօրէն կ'անդրադառնան առնուազն Հայ Ագատագրական Ծարժումի սկիզբէն մինչեւ մեր օրերը հասնող ժամանակաշրջաններու, ակնյալտ է սակալն անոնց առաջին երեքին մէջ տիրապետող ոչ միայն ոգիի միասնութիւնը, այլեւ հակամիտութիւնը մխրճուելու հեռագոյն անցեալի ծոցին մէջ եւ անկէ քաղելու անլուր դասերը պատմութեան, ինչպէս նաեւ տրամադրութիւնը ոգեկոչելու, յիշեցման կարգով, համամարդկալին ամէնէն հեռանկարալին տենչերն անգամ:

Առաջին երկու նիւթերը քաղուած են Լ. Մկրտչեանի կողմէ կազմուած ու ծանօթագրուած «Հալրենական վկալութիւններ» գործէն, որ հրատարակութիւնն է Միւնիխի Հայկական Հարցերի Հաստատութեան:

Իր գիտական ու խորահալեաց մերձեցումով, Մկրտչեան հետգհետէ կը բանայ ծալքերը առաջին նիւթի («Խորհրդալին հեղինակի հակահայ յօդուածի քննադատութիւնը») թէ՛ հեղինակի ինքնութեան եւ թէ քննադատող խորհրդալին հեղինակի ինքնութեան: Այսպէս է որ կ'իմանանք թէ յօդուածի հեղինակը Ն. Վ. Կարապետեանն է, բալց նաեւ կ'ըմբռնենք թէ գրաքննութեան այդ տարիներուն իր ինքնութիւնը թաքցնելու հարկադրանքին տակ՝ բուն հեղինակը այս կեղծանունը կրնայ օգտագործած ըլլալ: Ժամանակը միայն ցոյց պիտի տայ թէ հմուտ պատմաբաններով հարուստ հալրենի ո՞ր մենագրողը թաքնուած է այդ անունին ետին:

Իսկ քննադատող խորհրդալին հեղինակը, որ Ս. Սկաչկօ անունով կը ներկալանայ յօդուածի ամբողջ երկարութեան, ըստ Լ. Մկրտչեանի արժա-

նահաաաո նեաեաոթեան, ոչ ալ որ է, եթէ ոչ նոյն-ինքն Եղգիֆ Ստալինը, 1910ական թուականներէն մինչեւ 20ական թուականներու սկիզբը Ազգութիւններու Կոմիսարիատի տխրահռչակ այդ ղեկավարը, որ իր այս պաշտօնը ծառայեցուց իր քաղաքական դիրքի ամրապնդման ու արտաքին քաղաքականութեան մէջ կասկածելի յարաբերութիւններու մշակման ու ամրապնդման, ի հեճուկս Լենինի 1913էն սկսած ազդարարութիւններուն եւ ընթացքի սրբագրման պահանջներուն:

Հարցը կը վերաբերի առանձնաբար 16 Մարտ 1921ին Մոսկուայի մէջ ստորագրուած ռուսերօրական դաշնագրին ու անոր նախապատմութեան: ԸՍ-կաշկո-Ստալին, այս դաշինքի ստորագրութենէն 12 օր առաջ, Ազգութիւններու Կոմիսարիատի պաշտօնաթերթ «Փիզն Կոստրուկալնուստ»-ին մէջ յատկապէս հաջ ղեկավարութեան միտքը նախապատրաստող իր յօդուածով, կ'ուզէ լրբօրէն ապացուցել որ այդքան կոտորածներէ եւ խողխողումներէ ետք հազիւ պատահաւ մը հողի վրայ հայրենիք կերտած հայրենի ժողովուրդը, դեռ չանելեալ հողային գիշումներ պետք է ընէ Թորքիոյ, ի խնդիր համաշխարհային անիրազործելի չեղափոխութեան մը: Այլապէս... եւ սպառնալիքը միշտ պատրաստ է Սկաշկո-Ստալինի յօդուածին մէջ, իբրեւ յետսապաստառ:

Ն. Վ. Կարապետեանի այս յօդուածը գրուած է 1962ին եւ տպուած լեհական «Կիլերունկի» շաբաթաթերթին մէջ: Հետագային լոյս տեսած Լ նաեւ «Հայրենական Չայներ» ժողովածուին մէջ: Հրատարակութեան թուականին պէտք է վերագրել նաեւ 1940ական թուականներէն սկսեալ արեւելահայերէնի մէջ ընթացիկ դարձած օտարամուտ բառերու գոր-

ծածութիւնը, որուն համար կը խնդրենք նաեւ մեր քննարկողներուն ներողամտութիւնը: Այս երկույոր սրբագրութեան ընթացքի մէջ մտաւ 1960ական թրականներու կէսերուն եւ արդէն ակնյայտ կը դառնայ 1979ին հրատարակուած մեր երկրորդ նիւթին մէջ:

«Սորբիդային ազգային քաղաքականութեան սկոնքները եւ նեաեաւքները հալկական օտարուած երկրամասներուն» խորագրեալ մեր երկրորդ նիւթը կը կրէ ստորագրութիւնը, հատանաբար դարձեալ կեղծանուն, Ս. Պերգեանի: Միացեալ Նահանգներու «Պսլքալ»-ի (այն առեւն դեռ օրաթերթ) 15 յաջորդական թիւերուն մէջ, 2 Փետրուար 1979էն մինչեւ 13 Մարտ, ան լոյս տեսած Լ «Լեոնային Կարտուլ «Ինքնավար մարզի» -ԼԼԻՄ- կազմաւորման հարցի շուրջ» խորագրով:

Պերգեան հանգամանօրէն կանգ կ'առնէ Ղարաբաղի Ադրբեջանի կցման պատմութեան վրայ, սկսելով 1918էն ծնունդ առած խմորումներէն եւ հասնելով մինչեւ տխուր այն թուականը (5 Յուլիս 1921), երբ կամայականօրէն Ղարաբաղը չանձնուցաւ Ադրբեջանի, ի հեճուկս Անդրերկրկոմի ժողովի գոչացուցած վճռին, դարձեալ նոյն Ստալինի տխուր դերակատարութեան իբրեւ հետեւանք: Եւ այս՝ հազիւ երեք ամիս ետք՝ ռուսերօրք 16 Մարտ 1921ի դաշնագրի ստորագրութենէն:

Որքան որ ալ 20ական թուականներու իրադարձութեանց անդրադառնան, վերոնշեալ գոյց յօդուածները, իրենց հրատարակութեան թուականներէն իսկ դատելով, կը խօսին մերօրեալ ու միշտ շարունակուող ցաւի մը մասին եւ իրենց մղումը կը ստանան պատմական ծանրակշիռ սխալ մը սրբագրուած

տեսնելու բուն ցանկությունն: Եւ այս՝ հազարերորդ անգամ ըլլալով պատմական հաւասարակշիռ փաստարկներ բերելով նոյն այս պահանջատիրութեան կապակցաբար: Նոյն այս ցանկութիւնն է որ անգուսպ կերպով ի վերջոյ բռնկեցաւ Ղարաբաղի եւ Հայաստանի մէջ անցեալ աշունէն սկսեալ եւ, իբրեւ անթելուած լաւա, ցարդ կը շարունակէ իր ժայթքումները:

Ահա այս օրերու փորձառութենէն, իբրեւ մասնակից ու իբրեւ բանակցող, մեզի կը հասնի Սիլվա Կապուտիկեանի «Բաց նամակ»ը, ողորմած՝ «գիտութեան, մշակոյթի ու մամլոյ բոլոր ազնի գործիչներին»:

Մղկտանք ու տքնութիւն, տագնապ ու ցասում, համարձակ մարտահրաւեր, որ կրնայ ինքնագոհութեան հոմանիշ դառնալ, պատճառ չեն սակայն, որպէսզի Կապուտիկեան լրջախոհութենէ հրաժարի եւ, նոյնիսկ, մեզի արդէն նախորդ զոյգ յօդուածներէն ծանօթ անառարկելի փաստարկներուն անգամ մը եւս ապաւինի, հիմնաւորելու համար իր խօսքը:

Հայոց նորագոյն պատմութեան տարեգրութեանց մէջ հաւանաբար մնալուն արժէք ստանան Ս. Կապուտիկեանի հետեւեալ խօսքերը. «Բայց նա, այդ դառն հասունութիւնը, կը ստիպի մեզ առաւել պթասի ընկալել իրականութիւնը, չենուել լոկ սեփական ներքին ուժերի վրայ, մեր տոկունութեան վրայ, չտրուել պատրանքներին, ապագայի մեր տունն աւազի վրայ չկառուցել, կը ստիպի կուրօրէն չհասատալ ու հաւատից չկուրանալ, կը ստիպի արտասահմանի հայտերին (...) առանձնապէս յոյսեր չկապել Խորհրդային Միութեան, Խորհրդային Հայաստանի հետ, յատկապէս ինչ վերաբերում է հայկական հարցի վերջնական լուծմանը՝ կապուած Յեղասպանութեան ճա-

նաչման եւ Թորքիայի նկատմամբ հողային պահանջարկների հետ, կը ստիպի սփիւքահայութեան ինքնուրոյն գործել, միտքը լարել՝ ազգի պահպանման նոր, առաւել վստահելի ուղիներ գտնելու համար»:

Իսկ այս հատորով ներկայացուած վերջին նիւթը կենդանի ժամանակագրութիւնն է ղարաբաղեան ցոյցերու, բիրտ հակադարձութիւններու եւ պաշտօնական դիրքերու օրէ օր փոխուող պատկերին: Իբրեւ վաւերագրական վկայութիւն, կրնայ առաջին հերթին չոր նիւթերու մէկտեղման տպաւորութիւնը ձգել: Բայց ղարաբաղեան հրաշքը հոս եւս կը պարտադրէ ինքզինք: Այդ ժամանակագրութեան մէջ կան կենդանի օրինակներ եւ թաքուն խորհուրդներ, որոնք իբրեւ հոմ նիւթ կրնան ծառայել բոլոր անոնց, որոնք շահագրգռուած են ըստ էութեան քննութեամբը այն իրողութեան, թէ ի՛նչպէս ազգ մը, բոլոր իր հատուածներով, հեռաւոր թէ մօտակալ բոլոր իր սփիւքներով, օտարուած թէ իւրացուած բոլոր իր հողերով, կրնայ մէկ մարդու պէս ոտքի կանգնիլ, մէկ դիրք ճշդել եւ չընկրկիլ, հակառակ անագնադողորդ սպառլիքներու ու ծանրագոյն հետեւանքներու վտանգին:

• • •

Իր «Բաց նամակ»ին մէջ, Կապուտիկեան կը մէջբերէ նամակէն հատուած մը մոսկուաբնակ ազգահոգեբան Գալինա Ստարովոյտայի. «Ամէն-մէկին բախտ չի վիճակուում ականատես լինել այն բանին, թէ՛ ինչպէս է ժողովուրդը կանգնում իր Պատմութեանը դէմ առ դէմ: Հետագայում, ինչպիսի ընթացք էլ ունենան իրադարձութիւնները՝ դրանք արդէն կա-

յացել են, եւ ժողովուրդը դրանցից դուրս կը գալ ոչ այնպիսին՝ ինչպիսին նախկինում էր»:

Այս ներածականի սկիզբը խօսեցանք համայն մարդկությանն ճիտի բեռին մասին՝ հանդէպ իրաւագուրկ ժողովուրդներու: Վերջին հաշուով, որքան մեր, նաեւ իրենց պարտականութիւնն է գիտակցիլ՝ թէ առաջին հերթէն իրենց վարկն է խնդրոյ առարկայ ու ապա՝ իրենց մ: տնակցութիւնը նման փրկչական արարքներու օգուտ է, երկար շունչի վրայ, ամէնէն առաջ իրենց, որովհետեւ գիրենք նախ արդի քաղաքակրթութեան ու մարդկային իղձերուն կը ժամանակակցէ եւ, ապա, նուիրականացած, ընդհանրացած ու զօրաոր յենակներ ստացած արդարադատական այս հանակարգը ի վերջոյ պատնէշ մը կը հանդիսանայ իրենց իսկ համար, երբ նման օրինազանցութեանց դէմ առ դէմ գտնուին նաեւ իրենք:

Բայց իրականութիւնը կը մնայ այն, որ բացի խորհրդային հանրապետութիւններու կարգ մը ժողովուրդներէն, ինչպէս նաեւ Եւրոխորհրդարանի Ընկերվարական պլոքէն, ինքզինք քաղաքակիրթ կոչող ոչ մէկ հասարականութիւն զօրակցութիւն չայտնեց ցարդ:

Ա՛յդ, վերջին հաշուով, նաեւ իրենց հարցն է:

Վերադառնալով արտաքին շարաբերութիւններու ոլորտէն դէպի ներքին շարաբերութիւններու ոլորտ, ակամայ կը մտաբերենք ազգահոգեբան Ստրոպուչուսչի վկայութիւնը այն մասին, թէ՛ «Ամէն-մէկին բախտ չի վիճակուած ակամաստես յիճե՛լ այն բանին, թէ՛ ինչպէս է ժողովուրդը կանգնում իր Պատմութեանը դէմ առ դէմ»:

Արդարեւ, կանգնիլ սեփական Պատմութեան դէմ առ դէմ, ճին եւ նոր, տէր կանգնիլ անոր ընթաց-

քին կատարուած բոլոր իրագործումներուն, տէր կանգնիլ սեփական սխալներու ու ջանալ սրբագրել զանոնք, բայց նաեւ տէր կանգնիլ սխալներու, որոնք մեր նկատմամբ գործուած են ուրիշներու կողմէ եւ ջանալ սրբագրել տալ զանոնք:

Ա՛յս է ազգի գիտակցական ուղին:

Եւ բոլորովին պատահական չէ որ Սիլվա Կապուտիկեան, իր գրութեան մէջ, կ'ակնարկէ նաեւ մինչ այդ հայրենի գրողներու կողմէ հազիւ լսելի ձայնով արտայայտուող Հայկական Հարցի մը:

Զարհուրելի դաստիարակութիւնը Պատմութեան, որ կը յուշէ թէ Արեւմտահայ ու Արեւելահայ Դատեր չկան առանձնաբար, որ ամենայն հաշոյց կառավարութիւն կը կազմուի միայն բոլոր հայերու մասնակցութեամբ, որ Հայ Դատը կամ Հայկական Հարցը մի եւ նոյն ակունքը ունի եւ ուրիշներու կողմէ հաստատուած շինծու սահմանները չէ որ Արեւմտահայաստանի Դատը պիտի վերածէին արեւմտահայոց մենաշնորհին, ոչ ալ, հակադարձաբար, Արեւելահայաստանի դատը վերածէին արեւելահայոց մենաշնորհի:

Ձեական բաժանումներ, երկպառակութիւններ ասոնք, նոյնիսկ հայրենասիրութեան ու հակահայրենասիրութեան պիտակներով սահմանուած, որոնք սակայն չեն կրնար, պատմական անկիւնադարձային պահերու, ընկոյզի մը միջուկին չափ իսկ արժէք ունենալ, դէմ յանդիման քիւրեղացած ու բիրեղի պէս չստակ առաջնորդող ու մղիչ գաղափարներու:

Հայ Դատը է, անշուշտ, Դատը բոլոր հայերուն անխտիր: Բայց Դատ ունի հաշը նաեւ ամէն օր ու ամէն վայրկեան, երբ ամէնուրեք, ուր որ ալ գտնուի,

անհատ հաշէն մինչեւ կազմակերպ հաւաքականութիւն, կ'արգելակուի, այս կամ այն ձեւով, անոր ինքնահաստատման, բարգաւաճման ու գոյատեւման երթը, ֆիզիքապէս թէ հոգեպէս, զէնքով թէ դաստիարակութեամբ:

Ինչ որ մեզ կը հասցնէ անխուսափելի միակ այն եզրակացութեան, որ, Ղարաբաղի տազմապալի ու առօրեական այս հարցէն մեկնելով, մենք չենք կրնար գայն անդամահատել Ղարաբաղի այժմու իրավիճակին պատճառ հանդիսացած թրքական բարբարոսութենէն եւ Հայ Դատէն:

Թրքական բարբարոսութեան հետեւանք կորսընցուցած ենք նաեւ մեր թիփն կէտը, մեր հայրենիքին մեծագոյն մասը եւ, այդ իսկ պատճառով, չենք աճիր, ամէն օր թիւ կը կորսնցնենք եւ պիտի կորսընցընենք այնքան ատեն որ մեզի չեն վերադարձուիր մեր պապենական հողերը:

Ահա թէ ի'նչպէս անարդարահատոյց հայը, թորք ցեղասպանին պատճառով եւ համաշխարհային մեղսակցութեան պայմաններուն մէջ չ'ստանար կարելիութիւնը ինքնահաստատուելու, բարգաւաճելու եւ գոյատեւելու:

Ինչ որ մեզ կը հասցնէ միւս անխուսափելի եզրակացութեան:

Ինչպէս որ անքակտելի է Հայ Դատի կապը ամէնորեք, այնպէս ալ անքակտելի է հայութեան պորտակապը ի'նչ երկինքի տակ ալ ապրինք, ի'նչ դաւանանքի ալ պատկանինք, ի'նչ հոսանքի ալ լծած ըլլանք մենք մեզ, գիտակցաբար կամ անգիտակցաբար, ծառայելով օտարին, որպէսզի չափսոսանք օր մը թէ անհրաժեշտ է «չտրուել պատրանքներին,

ապագայի մեր տունն աւազի վրայ չկառուցել, ... չհաւատալ ու հաւատից չկորսանալ»:

Այս ցոյց կու տայ հայութեան ողջ երթը:


Կատարուած է պատմական բախտորոշիչ տարողութեամբ անկիմադարձ մը: «Հետագայում, ինչպիսի ընթացք էլ ունենան իրադարձութիւնները՝ դրանք արդէն կայացել են, եւ ժողովուրդը դրանցից դուրս կը գայ ոչ այնպիսին՝ ինչպիսին նախկինում էր»:


Համայն հայ ժողովուրդը, գիտակցական երբեմն հակադիր ներդրումներու այդ հանրագումարը, այդ հակադրութեանց բախումին ճամբով, հասած է պատմական բիրեղացած հանգիստութեան մը եւ մէկ բազով կազմած իր գոյութեան բոլոր վայրերուն մէջ, կամուրջներ նետելով ամէն տեղ, ուր հայերով բնակուած է եւ օգնութեան ձեռք երկարելով ամէն տեղ, ուր հայութեան ինքնահաստատման, բարգաւաճման ու գոյատեւման երթը վտանգուած է:

Յարգանք պատմակշիռ այս երեւոյթի լոյս ընծայման օրինակ հանդիսացած բոլոր նուիրեալներուն:

Յարգանք հայ ժողովուրդին, որ, հագուագիւտ իր համբերատարութեամբ հանդերձ, իր ծոցէն կը ծնի նման հրաշքներու կարելիութիւնները, նախարարական տուններու կեդրոնական Հայ իշխանութեան շորջ բոլորուելէն, Վարդանանքէն ու Սարդարապատէն մինչեւ մեր օրերն ու Ղարաբաղ եւ դեռ լուսահեղեղ ապագայ:

Վ. Է.





Տոգի հնագույն անդրխորը (ձԷ՝ դուր)



Տայխ - Տոգի կամ Խաղլարի կամուրջը (Նշխանագետ)

ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ՝ ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

«Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ»-ը պաշտօնապես գոյութիւն ունի միայն 1923 թուականէն սկսեալ: «Լեռնային Ղարաբաղ» արտայայտութիւնն ալ, հիմնականին մէջ, այդ թուականին գործածութեան դրուած է: Մինչդեռ, այդ թուականէն առաջ, «Ղարաբաղ» երկրանունը միասնական ու հաւաքական էր, իր լեռնային ու դաշտային հողամասերով:

Իսկ «Ղարաբաղ» անունը, որ թրքերէն է եւ կը նշանակէ «ՄԼւ. այգի», գործածութեան դրուած է միայն ուշ միջնադարուն (14-16րդ դար): Այս երկրամասի հին հայկական բուն անունը Արցախ է եւ անհրաժեշտ է անդրադառնալ պատմական այդ անցեալին, որպէսզի վերահաստատուին անոր պատկանելիութեան հիմերը:

Հայոց պատմագրական մատեաններուն մէջ, Արցախի Ք. Ա. 6րդ դարէն իսկ հայապատկան հողամաս մը ըլլալուն մասին վկայութիւններ ու փաստագրութիւններ կան: Այդ թուականներէն սկսեալ, միշտ ալ հայկական երկրամասերու իուժը

մը գտնուած է Կուր եւ Արաֆս գետերու միջեւ, ինչպէս նաեւ այդ շրջանէն դէպի հիւսիս եւ արեւելք փոռուող դաշտային շրջաններուն մէջ:

Ներկայիս Փոֆր Կովկաս կոչուող այս շրջանին ու յարակից տարածութիւններուն վրայ գոյութիւն ունեցած են հայկական երեք նահանգներ՝ Ուտիքը, Արցախը եւ Փայտակարանը: Այս նահանգները միայն երեքը եղած են «Մեծ Հայք»ի հայկական միասնական թագաւորութեան 15 նահանգներուն կամ, ինչպէս այդ ժամանակաշրջանին կը կոչուէին, «աշխարհ»ներուն:

Իւրաքանչիւր նահանգ ունէր իր գաւառները: Արցախ ունէր 12 գաւառ, անոր հիւսիսը եւ հիւսիսարեւելքը գտնուող Ուտիքը՝ 8 գաւառ, իսկ անոր արեւելքը գտնուող Փայտակարանը՝ 10 գաւառ:

Հետագային, յատկապէս արեւելքէն խուժող հորդաներու եւ իսլամական արշաւանքներու օրերուն, բռնի մահմեդականացման պայմաններուն մէջ, մանաւանդ դաշտային ըլլալով՝ պաշտպանական անյարմարութիւններու եւ հայ բնակչութեան նոսրութեան բերումով, Փայտակարան դադրեցաւ գոյութիւն ունենալէ իրրեւ հայկական երկրամաս:

Համեմատաբար լեռնային եւ հայ հոծ բնակչութեամբ յագեցած Ուտիքն ու Արցախը միասնաբար ու դարեր շարունակ դիմադրեցին ամէն տեսակի ներխուժումներու եւ պահպանեցին իրենց հայկական դիմագիծն ու էութիւնը: Այդ նահանգներու արդէն իսկ մարտունակ բնակիչները ժամանակի ընթացքին դարձան արեւի մարտունակ եւ յաջորդական խիզախ գործողութիւններով տիրացան հոչակի: Հայաստանի այս մասը վերածուեցաւ ամուր պատնէշի ոչ միայն տեղական-պաշտպանու-

ղական, այլեւ համահայկական չափանիշներով:

Յ.Ք. 4րդ դարուն, հոռմէացիներու եւ Սասանեան պարսիկներու հակամարտութեանց օրերուն, ծայրամասային այս նահանգները կամայականօրէն միացուեցան արուեստականօրէն առաջ բերուած «Աղուանից մարզպանութեան» եւ այնուհետեւ, որոշ ստեղծ, կոչուեցան «Աղուանք» կամ, մեր մատենագիրներու անուանակոչութեամբ, «Հայոց արեւելից կողմանք»: Թէեւ այս մարզպանութիւնը երկար կեանք չունեցաւ, բայց, պարագաներու բերումով, կղզիացման ու մեկուսացման պայմաններուն մէջ, Ուտիք եւ Արցախ նահանգներու հայ բնակչութիւնը բացայայտեց ինքնաբաւութեան վարժագիծ մը, գոր հարկադրաբար առաջացուց իր սեփական շրջանի կազմակերպումին, ամբարպետումին ու ինքնուրոյնութեան պահպանումին հրամայականներէն մեկնելով: Իսկ երբ հարկը պահանջեց, ինքնաբաւ այս շրջանը եղաւ այն յառաջապահ ուժերէն, որ գիտցաւ իր մարտունակ զինուորները զոհել ի ինդիր Հայաստանին ու համայն հայութեան սպառնացող վտանգներու փարատումին:

5-6րդ դարերէն մինչեւ 9-10րդ դարեր, Արցախի եւ Ուտիքի քաղաքական դիմագիծի պահպանման ու ամրապնդման գործին մէջ վնասական դեր խաղաց տեղական տոհմիկ ազնուականութիւնը: Նշանաւոր է Առանշահիկներու հայ իշխանական տոհմը: Այնքան ամրակոտ ու միատարր էր այս շրջանի հայութիւնը, որ 11րդ դարէն սկսեալ թուրք-սելճուկներու, թաթար-մոնկոլներու եւ այլոց հորդաներուն արշաւանքներն անգամ չկր-

ցան խախտել անոր ազգագրական միասնութիւնն ու ներքին ինքնավար կեանքը:

10րդ դարուն, Խաչէնի իշխանութեան հաստատումով (10-16րդ դար), Արցախի անունը փոխարինուեցաւ Խաչէնով: Խաչէնի իշխանութեան անկումէն ետք, Խաչէնի մէջ յայտնուեցան մանր իշխանութիւններ, որոնք, ի վերջոյ, 17րդ դարու աւարտին ու 18րդ դարու սկիզբները յանգեցան հայկական հինգ մելիքութիւններուն: Երբեմնի Խաչէնի տարածութեան վրայ գոյացան Գիւլիստանի, Ջրաբերդի, Խաչէնի, Վարանդայի եւ Դիզակի մելիքութիւնները: Յատկանշականը այն էր, որ, հակառակ իրենց տարբերութիւններուն, մելիքները կը դաշնակցէին պաշտպանական բոլոր գետիններուն վրայ եւ նոյնիսկ միասնաբար բանագնացներ կը ղրկէին Արեւմտեան Եւրոպա ու ռուսական արքունիք, որպէսզի պատշաճ նախաձեռնութիւններով ազգովին փրկուէին թրփական ու պարսկական լուծէն: Կը նշանակէ որ դեռ կը պահպանուէր Արցախի պատմական ու աւանդական միասնութիւնը:

Բաւեց, սակայն, որ Վարանդայի մելիք Յովսէփի կրտսեր եղբայրը՝ Շահնագար ուխտադրժօրէն սպաննէ եղբայրը, տիրանայ անոր իշխանութեան ու, մանաւանդ, դաշնակցի պարսից արքունիքին հետ, որպէսզի, նոյն արքունիքի քաջալերանքով ու Շահնագարի մեղսակցութեամբ, թրփախօս վաչկատուն ցեղի մը ցեղապետը՝ Փանահ Լեռնային Ղարաբաղի տարածքին հաստատէ առաջին ալլակրօն ու ալլացեղ իշխանութիւնը, պատուհաս դառնալով հայ բնակչութեան: Անոր դաժանութիւններն ու բռնութիւնները շարունակուեցան իր

որդիին՝ Իբրաքիմի կողմէ: Այս օրերուն, չդիմանալով տիրող կացութեան, բազմաթիւ հայեր գաղթեցին:

Այս պայմաններուն մէջ, 1805ին, հայերը ինքնակամօրէն ընդունեցին Ռուսիոյ տիրապետութիւնը, ինչ որ իրականացաւ 1913ին, ռուսպարսկական հաշտութեան պայմանագրով: Որոշատեն խաղաղութիւն տիրեց: Բայց ռուսական իշխանութիւնը չէր հանդուրժեր որ իր կայսրութեան սահմաններուն մէջ միատարր ու միակամ մեծագնգուած հաւաքականութիւններ գտնուէին: Կը նախընտրէր անոնց միատարրութիւնը խանգարել, ալլատարր ու ալլակրօն հաւաքականութիւններ բնակեցնելով անոնց ծոցին:

Այսպէս է որ, արհամարհելով բնակչութեան ազգագրական կազմը եւ, քմահաճօրէն, վարչական արուեստական բաժանումներ առաջացնելով, ռուսական իշխանութիւնը գոյացուց Ելիզաւետպոլի նահանգը (Ելիզաւետպոլը հայկական պատմական Գանձակն է, թրքերէնով կը հնչուի Գանջա, իսկ այժմու անունն է՝ Կիրովապատ), որուն մէջ կը մտնէին ինչպէս Ղարաբաղը, այնպէս նաեւ բազմաթիւ ալլատարր ուրիշ գաւառներ:

Ազգագրական անհամատեղելի խումբեր աշխարհագրական նոյն միաւորին մէջ ամփոփելու քաղաքականութեան հետեւանքները բացորոշ են: Շուտով ծայր տուին ընդհարումներն ու բախումները: Ղարաբաղի պատմութեան մէջ, մանաւանդ նորօրեայ խժոժութիւններու լոյսին տակ, անկարելի է չյիշել 1905ի հայ-թաթարական ընդհարումները (ազերիները այն ատեն թաթար անունով կը ճանչցուէին): Այդ ընդհարումներն ու կոտորած-

ները սկսան 1905ի Փետրուարին, Բաբուի մէջ, ապա տարածուեցան Շուշի, Գանձակ, Երեւան, Նախիջեւան եւ ուրիշ վայրեր: Անոնք կրկնուեցան 1906-1907 թուականներուն: Ըստ պատմական տրւեալներու, նախալարձակ տարրերը միշտ թաթարներն էին, իսկ ինքնապաշտպանութեան դիմող տարրերը՝ միշտ հայերը: Ցարական իշխանութիւնները նահանգապետներուն եւ ոստիկանապետներուն գէնք կը տրամադրէին, պատժելու համար «ըմբոստ եւ անհնազանդ հայերը»:

*
**

Փոխանակ վերատեսութեան ենթարկելու վարչական այս կամայական քաժանումներու դրութիւնը, 1917ի ոռուսական Փետրուարեան յեղափոխութեան հեղինակները աւելի եւս վատթարացուցին կացութիւնը, միջազգայնականութեան անունով արդիականացնելով ցարական Ռուսիոյ «Բաժնէ որ տիրես»ի քաղաքականութիւնը:

Առաջացաւ «Անդրկովկասեան Առանձին Կոմիտէ»ն (*Օզակոմ*), որ կազմուած էր Կովկասի ազգութիւնները ներկայացնող հինգ անդամներէ, որոնց իւրաքանչիւրը կը փորձէր իր ազգային շահերը գերադաս համարել:

Սէյմի կազմութեան եւ անոր կողմէ խորհրդային իշխանութեան մերժումին հետ, *Օզակոմ* դադարեցաւ գոյութենէ: Իսկ 26-28 Մայիս 1918ին, Վրաստան, Ադրբեջան եւ Հայաստան, իրարու ետեւէ, հռչակեցին իրենց անկախութիւնները:

Արդ, տեղին է նշել որ միջնդեռ հայ եւ Հայաստան, վրացի եւ Վրաստան պատմականօրէն

արդէն իսկ ծանօթ ազգերու ու իրենց հայրենիքներուն անուններն էին, նոյնը կարելի չէ ըսել ո՛չ Ադրբեջանի եւ ոչ ալ ադրբեջանցի ժողովուրդին մասին:

Այժմու Ադրբեջանի աւելի հարաւը գտնուող ուրիշ հողամաս մը, որ այժմ Իրանի մաս կը կազմէ, ատենին յունարեւոյ կոչուած է *Ատրոպատենէ* (հայերէնով Ատրպատական): Հետագային, արաբները իրենց իւրայատուկ հնչիւնով այս երկրամասը կոչած են *Ազարբայջան*: Այս անունն է որ տեղափոխուած է հիւսիս եւ մինչ այդ անորոշ անուններով ու սահմանագծումներով բնորոշ հողամասի մը անունը դարձած:

Որոշ չէ նոյնպէս թէ այժմու Ադրբեջանի ազգաբնակչութիւնը ի՞նչ տարրերէ կազմուած է եւ ի՞նչ պատմութիւն ունեցած է:

Ամենայն հաւանականութեամբ, միայն 11րդ դարուն այս հողամասերը ներխուժած եւ իսլամութիւն ընդգրկած թուրք-սելճուկներու, թաթարմոնկալներու եւ այլ վաչկատուն ցեղերու մնացորդներէն գոյացած ազգաբնակչութիւն մըն է: Իբրեւ ազգային միաւոր այնքան անդիմագիծ եղած է, որ ոռուսական մարդահամարի տոմարները միայն *մահմեդական* կոչումը տուած են անոր: Մինչեւ 1930ական թուականներու կեսերը այս ազգաբնակչութեան խօսակցական լեզուն թաթարերէնն ու թրքերէնն էր: Հիմա խառնուրդ լեզու մը կը գործածուի իբրեւ «ադրբեջանցիներու մայրենի լեզու»: Իսկ, յարմարութեան համար, ժողովուրդը կը կոչուի *ազերի*:

Հայաստանի Հանրապետութեան օրերուն, Հայաստանի կառավարութիւնը բոլոր իր միջոցներով

դիմադրեց Ղարաբաղը Ադրբեջանին կցելու բազմակողմանի ննչումներու: Ադրբեջանի նորակազմ կառավարութիւնը, Թուրքիա, Խ. Միութիւն եւ նոյնիսկ Մեծն Բրիտանիա բացասական դեր կատարեցին Ղարաբաղը Հայաստանէն խլելու եւ Ադրբեջանին կցելու իրենց տրամադրութիւններէն թելադրուած:

Յստակ է, այժմ, որ Հայաստանի խորհրդայնացումէն ու յատկապէս 16 Մարտ 1921ի թուրքեւ-խորհրդային դաշնագիրի ստորագրումէն ետք է որ նամբան հարթուեցաւ, որպէսզի, խորհրդային իշխանութիւններու ննչումին տակ, 7 Յուլիս 1923ին, Լեռնային Ղարաբաղը իբրեւ «Ինքնավար Մարզ» Ադրբեջանի կազմին միանայ:

Այս անարդար որոշումին առաջնորդող իրադրութեանց մանրամասնութիւններուն կը ծանօթանաք այս հատորին մէջ տեղ գտած յատկապէս Ն. Վ. Կարապետեանի եւ Ս. Գեորգեանի յօդուածներուն ընդմէջէն:

Եւ այս անարդար որոշումի վերատեսութեան պահանջով է որ Փետրուար 1988էն սկսեալ համահայկական առումով ընդվզումի ելոյթներ տեղի ունեցան ու կը շարունակեն տեղի ունենալ. եւ փակուած չի կրնար համարուիլ այդ ելոյթներուն էջը, մինչեւ որ չգործադրուի պատմական արդարութիւնը:

ԽՄԲ.

Ա.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿԻ

ՀԱԿԱՀԱՅ ՅՕԴՈՒԱԾԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

...Ամէնուրեք վերջացել էին քաղաքացիական կոիւնտրը: Սովետական Ռուսաստանը յաղթանակով թեւակոխել էր խաղաղ գարգացման՝ ՆԷՊի շրջանը: Անդրկովկասում նոյնպէս յաղթել էր յեղափոխութիւնը: Հոչակուած էին Ադրբեջանի, Հայաստանի եւ Վրաստանի Սովետական Սոցիալիստական հանրապետութիւններ: Լեռնին ազդարարել էր, որ այժմ մեզ համար անմիջական սպառնալիք չի ներկայացնում միջազգային իմպերիալիզմը: Այդ նա ասել էր տակաւին մէկ տարի առաջ՝ 1920 թ. կէսերին: Իսկ հիմա 1921 թ. Մարտ ամիսն էր:

Մոսկուայում պէտք է տեղի ունենայ սովետա-թուրքական բանակցութիւնների վերջին փուլը, որը պէտք է նշանատրոնի «Եղբայրութեան, բարեկամութեան եւ համագործակցութեան պայմանագրի» սուրբ դաշինքի կնքումով:

Դրա համար «խաղաղութեան» կոնֆերանսի եւն հաւաքուել Ռուսաստանը, Ադրբեջանը եւ Հայաստանը՝ որպէս սոցիալիստական պետութիւններ, եւ Թուրքիան՝ որպէս կապիտալիստական-բուրժուական պետութիւն, բայց որը միաժամանակ «յեղափոխական Թուրքիա» է յորջորջում:

«Եղբայրության ու բարեկամության» պայմանագիրը, ճիշդն ասած, պատրաստ էր տակալին 1920 թ. Օգոստոսի 24ին, բայց չէր ստորագրուած, որովհետեւ Հայաստանը դեռ խորհրդային չէր դարձել, ուստի, ինչ գնով էլ լինի, հարկաւոր էր տապալել դաշնակցական բուրժուա-նացիոնալիստական կառավարութիւնը եւ Հայաստանում ստեղծել մի կառավարութիւն, որը հրաժարուէր Արեւմտեան Հայաստանից, ճիշդը՝ Սեւրի դաշնագրից, որն ստորագրել էին Առաջին Համաշխարհային Պատերազմում յաղթող բոլոր պետութիւնները եւ պարտուած Թուրքիան, պայմանագիր, որով նախատեսուում էր ստեղծել հայկական անկախ պետութիւն պատմական Հայաստանի տերիտորիայի մի մասի վրայ (Վանի, Բիթլիսի եւ Տրապիզոնի վիլայէթների մի մասը՝ ներառեալ Տրապիզոն նաահանգիստը, որպէս ելք դէպի ծով, եւ ամբողջ Արեւելեան Հայաստանը, ներառեալ նաեւ Նախիջեւանը, Ղարաբաղը, Գանձակի հայկական շրջանները, Ախալքալակը, Շուլաւերը, պատմական եւ ներկայ Ջաւախքը): Հայաստանում պէտք էր ստեղծել մի կառավարութիւն, որը հրաժարուէր այդ բոլորից եւ առհասարակ հայկական պետականութեան, եթէ ոչ հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան գաղափարից, եթէ այդ պահանջէր «համաշխարհային յեղափոխութեան շահը»: Այդպիսի կառավարութիւն կարող էր լինել միայն սովետական-սոցիալիստական՝ բոլշեւիկների կառավարութիւնը: Ուստի եւ Հայաստանում դաշնակցացիոնալիստների կառավարութիւնը պէտք է փոխարինուէր «ինտերնացիոնալ» բոլշեւիկների կառավարութեամբ:

Բայց Հայաստանում բոլշեւիկներն իրենց ուժերով չէին կարող իշխանութիւնը վերցնել: Ուրեմն հարկաւոր էր օգնել նրանց: Միշտ է, սովետական 11րդ կարմիր բանակը ուլտիմատում ներկայացրեց դաշնակներին եւ պահանջեց Ղարաբաղն ու Նախիջեւանը դատարկել գօրքերից եւ յանձնել Սովետական Ադրբեջանին, պատրուակ բռնելով, թէ այդ մարզերը պատկանում են Ադրբեջանին, որովհետեւ այդ էր պահանջում Ադրբե-

ջանի սովետական կառավարութիւնը, ինչպէս այդ պահանջում էր նաեւ մուսաւթական կառավարութիւնը, որը, ի դէպ, պահանջում էր միայն Ղարաբաղը: Բայց ո՛չ Ադրբեջանը, եւ ոչ էլ Սովետական Ռուսիան չէին կարող ասել, թէ Երեւա՞նն էլ է իրենց պատկանում, ուստի եւ կարմիր բանակը չէր կարող յարձակուել Հայաստանի վրայ եւ զաւթել Երեւանը: Դա կը դիտուէր որպէս չքողարկուած ագրեսիա եւրոպական բոլոր պետութիւնների կողմից ճանաչուած անկախ Հայաստանի հանրապետութեան դէմ: Իրա համար էլ կարմիր բանակը ձեռնպահ էր մնում ռազմական գործողութիւններից Հայաստանի դէմ:

Մնում էր, որ Հայաստանի վրայ արշաւէր հին թշնամին՝ Թուրքիան, որտեղ Քեմալ փաշան «Յեղափոխութիւն» էր խաղում՝ միամիտների աչքին թոզ փչելու համար, թէ տեսէ՞ք, թուրքերն էլ «պայքարում են իմպերիալիզմի դէմ», պատրաստ են օգնելու սովետներին, յեղափոխութիւնը տարածելու նաեւ ամբողջ Արեւելքում, ոտքի հանելու Արեւելքի ժողովուրդներին՝ ընդդէմ անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի, եւ կոմունիզմի դրօշը տանելու Փարիզ, Լոնդոն, Բեռլին, Ստամբուլ, Աթէնք եւ Երեւան ու Թիֆլիս, եթէ կ'ուզէք...

Որպէսզի Մոսկուայում հաւատային Քեմալ փաշայի այս «կոմունիստական յեղափոխական» արարչագործութեանը, դրա համար Բեռլինում բոյն դրած երիտասարդ թուրքերի ղեկավարները՝ Թալէաթ փաշան, Էնվեր փաշան, Ջեմալ փաշան, Խալիլ փաշան, Նազրմ բէյը եւ այլն, դեռ 1919 թ. սկզբից կապուել էին Բեռլինում գտնուող սովետական դիւանագիտական ներկայացուցիչ Իոֆֆէի եւ Կարլ Ռադէկի հետ, որոնց խորհրդով Էնվեր փաշան, Ջեմալ, Խալիլ փաշաները անմիջապէս տեղափոխուում էին Մոսկուա եւ սկսում բանակցել Չիչերինի, Ստալինի եւ այլ ղեկավար գործիչների հետ: Նրանց յաջողում է (Քեմալ փաշայի անմիջական դեսպան Ֆուադ փաշայի հետ միասին) համոզել Մոսկուային, որ իրօք Թուրքիայում, յանձին Քեմալ փաշայի, իբր թէ ծնուել է «թուրքական Լենինը» եւ նպա-

տակ ունի մարքսիզմի դրոշի տակ «կոմունիզմ հաստատել» ոչ միայն Թուրքիայում, այլև ամբողջ Արևելքում եւ «տեղափոխել լեղափոխական հրդեհը» նաեւ Եւրոպա ու խորտակել «եւրոպական միջազգային իմպերիալիզմը»:

Այս գաղափարը, անշուշտ, Քեմալ փաշան վերցրել էր յայտնի «մարքսիստ արեւելագէտ» հրապարակախօս Պալուվիչից (Վելտման), որը Թուրքիայի եւ Պարսկաստանի «լեղափոխական» շարժումների մասին իր բազմաթիւ յօդուածներում ու գրքերում մինչեւ երկինք էր հանել Իսլամի լեղափոխական բնույթը եւ զարգացրել մի ամբողջ տեսութիւն այն մասին, թէ յանձինս մահմեդական քարոզիչների՝ մոլլաների, շերիֆների, մուսուլմանների բանակի, պրոլետարական լեղափոխութիւնն ունի իր «աւանգարդը» մահմեդական աշխարհում: Պալուվիչի այդ մոլլաների, «լեղափոխական» տեսական այդ բաժանքը ջերմեռանդօրէն պրոպագանդում էր եւ մինչեւ հիմա էլ պրոպագանդում է սովետական պատմագիտութեան մէջ հանրայայտ Միլլերի, Վէյտի, Կրաժնի, ամէն տեսակ արսլանների, կարիւնեանների կողմից: Ստեղծուեց այնպիսի դրութիւն, որ Ազգութիւնների Կոմիսարիատը գլխաւորող եւ սովետական կառավարութեան Մերձաւոր Արեւելքի արտաքին քաղաքականութեան գլխաւոր խորհրդատուն եւ դարբնողը՝ Ստալինը հրապարակով Քեմալ փաշային եւ քեմալական Թուրքիային հոշակեց որպէս «լեղափոխութեան դրօշակակիր» Արեւելքում: Այսպէս ստեղծուեց Քեմալ փաշայի «լեղափոխական» պաշտամունքը:

Արեւելքում եւ Եւրոպայում կոմունիզմի յաղթանակը տարածելու իր «ծառայութեան» դիմաց Քեմալ փաշան սովետական կառավարութիւնից պահանջեց օգնութիւն՝ ոսկի, զէնք, հանդերձանք եւ զօրք:

Եւ սովետական կառավարութիւնը, սովի, զրկանքների, գիւղատնտեսութեան, արդիւնաբերութեան եւ տրանսպորտի չտեսնուած քայքայման պայմաններից տատապող ժողովրդին զրկելով, Քեմալ փաշային տուեց ե՛ր զօրք, ե՛ր զէնք, ե՛ր ոսկի,

ե՛ր հանդերձանք, եւ մթերքներ: Թուրքիային օգնելու նպատակին ծառայեցրեց իր ողջ լեղափոխական հզօր պրոպագանդան, միջազգային հեղինակութիւնն ու ազդեցութիւնը ընդհուպ մինչեւ Բաքուի պոլիգոններում մահմեդական ռազմագերիներից եւ Կովկասի ու Կազանի, Ղրիմի, Ուրալի եւ Միջին Ասիայի մահմեդական կամաւորներից յատուկ գնդեր սպառազինելը, վարժեցնելն ու Խալիլ փաշայի, կոմունիստ Մուստաֆա Սուրհիի եւ իր ընկերների գլխաւորութեամբ այդ գնդերը Թուրքիա փոխադրելը, որպէսզի նրանք Կարաբեքիր փաշայի հրամանատարութեան տակ կոուլին Անտանտայի «իմպերիալիստների», Հայաստանի աշխատաւորութեան դէմ, սրի քաշեն նաեւ Սարիղամիշը, Կարսը, Արդահանը, մինչեւ Ալեքսանդրապոլ՝ յանուն Հայաստանի «ազատագրման» դաշնակիցների լծից:

Թէ սովետական կառավարութիւնն ինչքան ոսկի, զէնք, հանդերձանք եւ այլ օգնութիւն ցոյց տուեց Քեմալ փաշային, այդ «լեղափոխական» միսիան իրականացնելու համար, այդ մասին, բացի Պալուվիչի վերոյիշեալ գրքից, կարելի է իմանալ 1961 թ. Մոսկուայում հրատարակուած Կուզնեցովայի բրոշյուրներից:

Եւ այսպէս, ուրեմն, «դաշնակցական» Հայաստանի հետ դատաստան տեսնելու համար ուժը գտնուած էր՝ յանձինս քեմալական Թուրքիայի, որը պատրաստ էր ի սպառ ջնջել հայութիւնը, որպէսզի այլեւ խօսք չլինէր Սեւի դաշնագրով նախատեսուած անկախ Հայաստանի մասին: Եւ իրօք, Քեմալն ստացաւ պահանջուած դրամը, զէնքն ու զօրքը Սովետական Ռուսաստանից եւ Իտալիայից, 1920 թ. Սեպտեմբերի 23ին շարժեց իր հորդաները դէպի Կարս, Օլթի, Սարիղամիշ, Արդահան եւ Ալեքսանդրապոլ, պատրուակ բռնելով, թէ ինչո՛ւ են հաշտը մտել Օլթի, որը, իբր թէ, հայերին չի հասնում Բրեստի դաշնագրի համաձայն, որը սակայն վաղուց չեղեալ էր յայտարարուած: Սակայն ինքը՝ Քեմալ փաշան, պարզ յայտարարել էր, որ Հայաստանի դէմ իր արշաւանքի «նպատակն է վերջ տալու

այսպէս կոչուած Երեւանի պետութեանը, որն ուռուցքի նման ընկած է Թորքիայի մարմնի վրայ»:

Գտնուելով երկու ահեղի արցանի մէջ (Քեմալի յարձակոող բանակի եւ Նախիջեւանում կանգնած 11րդ կարմիր բանակի), անօգնական ու ուժասպառ փոքրիկ Հայաստանը բնականաբար պիտի պարտուէր եւ... պարտուեց: Այդ 1920 թ. Նոյեմբերի 23ին էր: Տակաին Հոկտեմբերի 11ից Երեւանում էր գտնուում Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանը, որն ապաստում էր, թէ դաշնակները երբ պետք է իրենց դիմադրութիւնը աւելորդ համարեն եւ հրաժարունեն իշխանութիւնից, այն յանձնեն իրեն, որպէսզի ինքն էլ իր ձեռքով այն յանձնի Ադրբեջանում կանգնած եւ Երեւան մեկնելու պատրաստ Հայաստանի Յեղկոմին՝ Սարգիս Կասեանի գլխաւորութեամբ:

Որպէսզի թուրքերը Երեւան չմտնեն եւ Քեմալի չյաջողուի իրականացնել իր դիւային պլանը՝ սրի քաշել նաեւ Արեւելեան Հայաստանի մնացած տերիտորիայի հայութեանը, ինչպէս նրանք վարուել էին Արեւմտեան Հայաստանի, Կարսի, Արդահանի, Սարիղամիշի ազգաբնակչութեան նկատմամբ, դաշնակների վերջին կառավարութիւնը Դեկտեմբերի 2ին յատուկ ակտով Հայաստանի իշխանութիւնը յանձնում է Սովետական Ռուսաստանի լիազօր-ներկայացուցիչ Լեգրանին եւ հետանում ասպարէզից:

Դեկտեմբերի 2ի կեսօրից արդէն Հայաստանի տերն էին համարում բոլշեւիկները: Թում էր, թէ կամ Լեգրանը Սովետական Ռուսաստանի անունից, կամ արդէն Ղազախից Դիլիջան հասած Հայաստանի Յեղկոմը անմիջապէս պիտի յայտարարէին թուրքերին, որ չեն ճանաչում Ալեքսանդրապոլում թուրքերի հետ հաշտութեան բանակցութիւններ վարող դաշնակցական կառավարութեան պատուիրակութեան լիազօրութիւնները եւ պահանջում են թուրքերից բանակցութիւններ սկսել բոլշեւիկների հետ:

Սակայն այդպիսի յայտարարութիւն չի արում ոչ Լեգրանի, ոչ էլ Կասեանի կողմից:

Տեսնելով իրենց անորոշ վիճակը, Ալեքսանդրապոլում բանակցութիւններ վարող պատուիրակութեան նախագահ Ալեքսանդր Խատիսեանը հեռախօսով կապում է Երեւան եւ հարցում անում՝ «թուրքերը պահանջում են անյապաղ պատասխան տալ. ստորագրո՞ւմ ենք հաշտութեան պայմանագիրը թէ ոչ. եթէ ոչ, ապա թուրքերը շարժում են Երեւան. ի՞նչ անենք:

Երեւանում Դրոն հարցում է անում Լեգրանին՝ ի՞նչ պատասխան տալ հարցումին: Լեգրանը խուսափողական պատասխան է տալիս: Վերջ ի վերջոյ, Դրոն եւ բոլշեւիկեան կոմիսար Սիլիւնը, որոնք ներկայացնում էին արդէն բոլշեւիկեան նոր կառավարութիւնը, հրահանգ են տալիս Խատիսեանին՝ պայմանագիրն ստորագրելու, նկատի ունենալով՝ խափանել այդպիսով Կարաբէքիր փաշայի արշաւանքը Երեւանի վրայ:

Այդպէս է աշխարհ գալիս Ալեքսանդրապոլի դժբախտ պայմանագիրը, որը, սակայն, օրինական ուժ պիտի ստանար միայն երկու պետութիւնների պատվամենտների կողմից հաստատուելուց՝ մէկ ամսուայ ընթացքում: Հայաստանի կողմից այն երբեք չի վաւերացուել, հետեւապէս իրաւական միջազգային փաստաթղթի ուժ չի ունեցել եւ չէր կարող ունենալ: Այն մնաց որպէս մեռած նորածին:

Ապա, որպէսզի վերջնական ձեւակերպում ստանային հաշ-թուրքական յարաբերութիւնները եւ խաղաղութիւն հաստատուէր երկու երկրների, ինչպէս եւ սովետական հանրապետութիւնների ու հարեւան «բարեկամ», «եղբայր», «յեղափոխական» Թորքիայի միջեւ, հարկաւոր էր կնքել նոր պայմանագիր: Այդ նպատակով էր հրահարուած Մոսկուայի կոնֆերանցիան երեք սովետական եւ մէկ կապիտալիստական-բուրժուական պետութիւնների միջեւ: Ինչպէս ասուեց վերելում, պայմանագրի տեքստը տակաին պատրաստուել էր 1920 թրւականի Օգոստոսի 24ին, բայց չէր ստորագրուել նրա համար,

որ լուծուած չէր Հայաստանում երկու կողմերին էլ ձեռնառու կառավարութեան հարցը: Այժմ, երբ արդէն լուծուած էր այդ հարցը, բարեկամները կարող էին հասարակել Մոսկուայում եւ ստորագրել ցանկալի դաշնագիրը, որով Հայաստանը եւ հայ ժողովուրդը պիտի զոհաբերէին «համաշխարհային լեղափոխութեան շահերին», այսինքն՝ թուրքական իմպերիալիզմին (իրականում):

1921 թ. Մարտի 16ին Մոսկուայում ստորագրուեց հայ ժողովրդի պատմութեան մէջ այդ ամենամոռայ ու ստորացուցիչը հանդիսացող դաժան, անմարդկային միջազգային վաւերագիրը:

Ահա թուրքական ագրեսիայի զոհ փոքր, հարստահարուած ու անպաշտպան հայ ժողովուրդը եւ նրա հայրենիքը յօշոտման ենթարկող ամօթալի այդ ակտից 12 օր առաջ Ստալինի գլխատրած Ազգութիւնների Կոմիսարիատի «Ժիզն Նացիոնալիստէյ» թերթի էջերում երեւում է Ս. Սկաշկոյի այս յօդուածը, որի նպատակն էր նախապատրաստել հայ հասարակութեան ու նոյնիսկ հայ կոմունիստներին, որպէսզի մասնատրապէս Հայաստանում շահութահար չլինէին եւ անսպասելի ծանր հարուածից ինչ որ բողոքներ կամ անհնազանդութեան ցոյցեր չանէին այդ խաչատրակ ակտի դէմ:

Յօդուածի նպատակն էր հասկացնել տալ հայերին, որ ամենաշնչին բողոքի դէպքում՝ անխնայ կը ճզմոխի Հայաստանի եւ հայ ժողովրդի մնացած մասն էլ, որ Հայաստանը եւ հայ ժողովուրդը պէտք է կրեն իրենց բաժին ընկած ազգային մեծագոյն զոհաբերութիւնների խաչը, անմոռունջ մօտենան «համաշխարհային լեղափոխութեան» զոհասեղանին եւ ներկեն այդ սեղանն իրենց արիւնով:

Հայաստանը եւ հայ ժողովրդի մեծ զանգուածները զոհաբերուեցին, բայց ո՞ւմ: Արդեօք լեղափոխութեա՞նը: Ոչ ոք այնպէս էլ չտեսաւ այդ համաշխարհային լեղափոխութեանը ո՛չ Թուրքիայում, ո՛չ Արեւելքում, ոչ էլ Եւրոպայում:

Ստալինի կողմից Մուստաֆա Քեմալ փաշայի ձեռքում կրեակալած լեղափոխական դրօշի տեսիլքը յօդս ցնդեց օճառի սրկաշակի նման, ցրուեց ուղեկների, զինովեւների, պաւլովիչների, միլլերների բարձրացրած համաշխարհային լեղափոխութեան միրածը եւ մարդկանց աչքերի առաջ կանգնեց արիւնկզակ բորենիների՝ միջազգային իմպերիալիստների եւ նրանց սնուցած ու սանձազերծ արած թուրք լեւուզակների հայութեան արիւնով ներկուած մողկալի կերպարանքը:

1915 թ. թուրք-գերմանական բանակի «թիկունքն ապահովելու» պատրուակով, իսկ 1920-21 թ.թ. «համաշխարհային լեղափոխութեան» շահերին զոհ մատուցելու նշանաբանով նոյն մարդագազանները միջազգային խրախճանք էին կատարում յօշոտելով արիւնաթաթախ Հայաստանը եւ հայ ժողովրդի մարմինը:

Եւ յօդուածագիր Ս. Սկաշկոն ու նրա քալանջի կարիւնեաններն ու արովները մինչեւ օրս էլ ճզնում են հաւատացնել մարդկանց, մարքսիզմ-լենինիզմի անունով, թէ իբր թուրքական մոլլաները, բէկերն ու փաշաները կոմունիստական «լեղափոխութեան դրօշակիրներն» են եղել Արեւելքում, թէ իբր նրանք պայքարել են «միջազգային իմպերիալիզմի» դէմ, թէ իբր «իմպերիալիստները դրանք հայերն են եղել, որովհետեւ ուզում էին ունենալ անկախ, մեծ Հայաստան, ձեռք բերել Վանը, Բիթլիսը, Լրզրումը, Ղարսը, Արդահանը»: Եթէ սա է մարքս-լենինեան ուսմունքը, պրոլետարական լեղափոխութեան եւ նրա ուժերի մասին, ապա ո՞րն է թուրքական իմպերիալիզմը, ո՞րն է առ հասարակ կողոպուտի, ժողովուրդների ստրկացման ու բնաջնջման մարդակերային փիլիսոփայութիւնը...

Իայց ատելի լաւ է ուղղակի անցնենք բուն յօդուածի բովանդակութեան քննութեանը, այն ժամանակ ատելի պարզ կը լինի, թէ ինչ է իրենից ներկայացնում այն «մարքսիզմը», այն «կոմունիզմը», որի հետանկարով օրօր է ասում հայ ժողովրդին յօդուածագիրը, մի քարոզ-կոնցեպցիա, որը մինչեւ օրս էլ իշ-

խում է սովետական ու սովետահայ պատմագրության մէջ՝ որպէս ղեկավար մեթոդոլոգիական ուղղութիւն ու կոնցեպցիա:

Յօդուածի սկզբում Ս. Սկաշկոն ընթերցողին ծանօթացնում է յառաջիկայ կոնֆերանսի մասնակիցների հետ՝ երեք սովետական սոցիալիստական երկրներ՝ Իտալիայում, Արքեպիսկոպոս Նիկիայի և Հայաստանը, եւ մէկ կապիտալիստական-բուրժուական պետութիւն՝ Թուրքիան, որը մինչեւ այդ հոշակուած էր որպէս «յեղափոխական», «յեղափոխութեան դրօշակիր» Արեւելքում, իմպերիալիստական Անտանտայի դէմ ազդարարուած մահու եւ կենաց ազատագրական պայքարի «աւանգարդ», իսկ հիմա Մոսկուայի կոնֆերանսին է ներկայանում որպէս «կապիտալիստական-բուրժուական» իմպերիալիստական հակումներ ու պլաններ, զայրողական նպատակներ հետապնդող պետութիւն:

[...]:

Ընթերցողը թող յիշի, որ սա նորամուծութիւն է Մարքսի դասակարգային պայքարի տեսութեան մէջ: Այս տեսանկիւնից յայտնի է, որ իմպերիալիզմի դէմ մղուող պայքարը նախ եւ առաջ դասակարգային պայքար է, որ մղում է շահագործուող ու հարստահարուող ժողովուրդը, բանուոր դասակարգի գլխաւորութեամբ:

Մինչդեռ Ս. Սկաշկոն ազդարարում է, որ զայրողական նպատակներ հետապնդող եւ դարերով բազմաթիւ ժողովուրդներ կեղեքող նոմադական, ուազմա-ֆեոդալական թուրքական փաշաներն ու բէկերը, մոլլաներն ու ասսիմիլատորները իբր թէ պայքարում են իմպերիալիզմի դէմ, այսինքն՝ թուրքական իմպերիալիզմն իբր թէ պայքարում է երոպական իմպերիալիզմի դէմ, որ իբր թէ թուրքական իմպերիալիզմի այդ «պայքարը» հենց այն «յեղափոխական» պայքարն է, որն ապահովելու է կոմունիզմի յաղթանակը Եւրոպայում եւ հենց Թուրքիայում:

Սա իրօք որ «նորամուծութիւն» է մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի մէջ, համաշխարհային պրոլետարական յեղափոխութեան մարքս-լենինեան ուսմունքի մէջ: Առաջին անգամ

խում ենք, որ կոմունիստական յեղափոխութեան դրօշը կարող են բարձրացնել կապիտալիստական-բուրժուական ֆեոդալական-իմպերիալիստական դասակարգի ներկայացուցիչները՝ լանձինս թուրք փաշաների, բէկերի, մոլլաների:

Այս «մարքսիստական» յայտնագործութիւնից յետոյ Ս. Սկաշկոն բացատրում է, թէ ինչ պատմական նշանակութիւն ունի յառաջիկայ կոնֆերանցիան. նա գրում է, որ Մոսկուայի յառաջիկայ այդ կոնֆերանցիան «բացառիկ կարեւոր նշանակութիւն ունեցող իրադարձութիւն է: Նա շրջադարձային կէտ պէտք է հաւնդիսանայ համաշխարհային յեղափոխութեան պատմութեան մէջ: Այդ կոնֆերանսում պէտք է կատարուի երկուսից մէկը»:

Եւ ահա թէ ինչ:

ա. Կամ այդ արեւելեան պետութիւնները «իրար հետ սերտ կապ կը հաստատեն» եւ այն ժամանակ «իմպերիալիզմի դէմ մղուող պայքարը կը ստանայ չտեսնուած ուժ ու ծաւալ».

բ. Կամ թէ՛ փոխադարձ հասկացողութեան չզալով, նրանք երես կը շրջեն միմեանցից եւ այդպիսով իսկ «սոսկալի հարուած կը հասցնեն Արեւելքում յեղափոխութեան զարգացմանը»:

Իսկ այդ կը նշանակէր «յեղափոխութեան յարատեւ ձգձգում Արեւմուտքում»:

Յօդուածագիրը մարգարէական հաստատութեամբ եւ վստահութեամբ զգուշացնում է ընթերցողին, որ համաշխարհային սոցիալական (ուշադրութիւն դարձրէք՝ «սոցիալական», սսել է թէ դասակարգային, կոմունիստական) յեղափոխութեան յաղթանակն «այժմ հաւասարապէս կախուած է ինչպէս Արեւմուտքի յեղափոխական պրոլետարիատից, այնպէս էլ իմպերիալիստների կողմից հարստահարուող Արեւելքի երկրներից:

Այստեղ Ս. Սկաշկոն կատարել է երկրորդ «**ուղղումը**» պրոլետարական կոմունիստական յեղափոխութեան դասակարգային պայքարի մարքս-լենինեան տեսութեան մէջ:

Մինչդեռ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում» Մարքսն ու Էնգելսը յայտարարել են, որ համաշխարհային սոցիալիստական կոմունիստական յեղափոխության յաղթանակի մէջ ամենաշահագրգռուած եւ դրա համար ամենահետեւողական պայքարող ուժը միջազգային պրոլետարիատն է, այստեղ Ս. Սկաշկոն մեզ փորձում է հաւատացնել, թէ այդ յաղթանակը «այժմ հաւասարապէս կախուած է ինչպէս Արեւմուտքի յեղափոխական պրոլետարիատից, այնպէս էլ իմպերիալիզմի կողմից ճնշուած արեւելեան երկրներից»: Դժուար չէ նկատել, որ Ս. Սկաշկոն մի մակարդակի վրայ է դնում երոպական պրոլետարիատին (դասակարգին) եւ Արեւելքի երկրներին (առանց դասակարգի խտրութեան՝ բանուորները, գիւղացիները, բուրժուաները, կալուածատէրերը, մոլլաները, փաշաներն ու բէկերը, խաներն ու աղալարները միասին վերցրած), իրենց յեղափոխական շահագրգռուածութիւններով՝ համաշխարհային կոմունիզմի յաղթանակին իրենց նուիրուածութեան տեսակէտից: Այսպիսով ջնջում է տարբերութիւնը. Ջեմալ փաշան եւ Մարսէլ Կաշէնը, Կարլ Լիբկնէխտը, մոլլաները, Ծէյխ ու Իսլամը եւ անգլիական ածխահատները, Սիլեզիայի ջուլիակները, Ռուրի մետալուրգները, Համբուրգի դոկերը «միատեսակ» յեղափոխական մարտիկներ են, յեղափոխութեան յաղթանակը «հաւասարապէս» կախուած է նրանցից:

Միանգամայն ակնյայտ է, որ Ս. Սկաշկոյի քարոզած «Մարքսիզմ» ոչ մի նմանութիւն չունի «Մանիֆեստից» մեզ յայտնի մարքսիզմի հետ: Լենինիզմը մեզ սովորեցնում է, որ գաղութային ճնշուած ժողովուրդների ազատագրական պայքարը (ոչ թէ թուրքական փաշաների ձգտումները՝ Հայաստանը եւ հայ ժողովուրդը բնաջնջելու, Անդրկովկասը գալթելու եւ Բոսֆորից մինչեւ հարաւ ու Պամիր մեծ թուրանական պետութիւն ստեղծելու գաղափարական իմպերիալիստական ձգտումները) ոչ թէ նոյնական է պրոլետարիատի մղած յեղափոխական պայքարի հետ, այլ հանդիսանում է պրոլետարական յեղափոխու-

թեան սուկ ռեզերվը: Հետեապէս նրանք իրենց սոցիալական բովանդակութեամբ եւ նպատակներով միանգամայն տարբեր բաներ են:

Ս. Սկաշկոն արհեստականօրէն նոյնացրել է այդ երկու տարբեր ուժերը, ատելին՝ միատեսակ շահագրգռութիւններ է վերագրել երոպական պրոլետարիատին ու թուրքական փաշաներին սուկ նրա համար, որպէսզի յանգի անհեթեթ, հակաբնական ու հակապատմական եզրակացութեան, թէ կոմիւնիստների մասնակից սոցիալիստական երկրները եւ կապիտալիստական Թուրքիան «պէտք է բոլոր ջանքերը գործադրեն՝ հասնելու անխզելի կապի, արեւմտաեւրոպական իմպերիալիզմի դէմ պայքարելու համար»:

Ո՞վ է ճիշդ: Մարքսն ու Լենինը իրենց դասակարգային պայքարի տեսութեամբ թէ Ստալինի գլխաւորած կոմիսարիատի օրգանի հոշակած սոցիալիստական յեղափոխութեան եւ թուրքական փաշաների դասակարգային համերաշխութեան այս նոր տեսութիւնը, որը հրամցում է որպէս մարքսիզմ-լենինիզմ... Սրանցից որի՞ն հաւատանք, ո՞րն է գիտական...

Դժուար չէ նկատել, որ գիտական հիմքից գուրկ քաղաքական մի դեմագոգիա է Ս. Սկաշկոյի «տեսութիւնը», որը ոչ մի կապ չունի մարքսիզմ-լենինիզմի հետ:

Անցնենք առաջ: Ըստ Ս. Սկաշկոյի, ինչպէ՞ս եւ ի՞նչ հիմքի վրայ պէտք է տեղի ունենայ սոցիալիզմի ու թուրքական կապիտալիզմի «եղբայրական» այդ սրբազան դաշինքը: Դրա համար, — ասում է Ս. Սկաշկոն, — կոմիւնիստները պէտք է «միմեանց փոխադարձ զիջումներ անեն», որոնք «ի վիճակի լինեն վերացնելու փոխադարձ դժգոհութիւնը եւ վերապահութեան բոլոր առիթները»:

Բայց ինչպիսի՞ք են լինելու այդ զիջումները, եւ ո՞վ պէտք է նախաձեռնութիւն հանդէս բերի զիջումների խնդրում: Ս. ըՍկաշկոն գրում է, թէ հանդիպելու են երեք սոցիալիստական եւ մէկ կապիտալիստական-բուրժուական նացիոնալիստական

պետություններ: Պետությունների աշխարհահայեացքից էլ երեւում է, թէ ինչպիսի գիշումներ եւ ով ում պէտք է կատարի գիշումները: Անկարայի կառավարութիւնը, — ասում է յօդուածագիրը, — հետապնդում է ազգային-պետական շահեր, որի համար չափազանց կարեւոր նշանակութիւն ունի թուրքական տերիտորիայի պահպանման եւ գուցէ մեծացման հարցը. «Մինչդեռ սոցիալիստական երկրների համար ոչ մի դեր չի խաղում» «ո՛չ տերիտորիան, ոչ էլ ազգային միասնութիւնը»:

Սա էլ երրորդ «նորամտծութիւնն» է Ս. Սկաշկոյի կողմից, մարքսիզմ-լենինիզմի տեսական գանձարանում նորամտծութիւն, որը տրամագծօրէն հակադիր է Լենինի յայտնի դրոյթին, թէ մէկ երկրի սոցիալիզմի յաղթանակի հնարատրութեան նախապայմաններից մէկը սոցիալիստական պետութեան տերիտորիայի բաւականաչափ մեծ լինելն է, թէ սոցիալիզմին կարելի է հասնել միայն ազգային կոլտուրայի ծաղկման ճանապարհով, որն անհնարին է առանց ազգի՝ իբրեւ միութեան ապահովման եւ այլն:

Բնականաբար հարց է ծագում, թէ «սոցիալիստական երկրներ» ասելով ի՛նչ է հասկանում Ս. Սկաշկոն, կարո՞ղ է լինել պետութիւն կամ երկիր՝ առանց որոշակի տերիտորիայի, չէ՞ որ ամէն մի պետութիւն (սոցիալիստական թէ կապիտալիստական՝ միեւնոյն է) կարող է ստեղծուել միայն տերիտորիայի վրայ, ազգային միութեան բազայի վրայ, այլ կերպ դժուար է պատկերացնել երկիր, պետութիւն: Սկաշկոն, սոցիալիստական պետութիւն կամ երկիր ասելով, արդեօք հասկանում է մի երեւակայական ինչ-որ տարածութիւն, որ մարդկային որոշակի ազգային միութիւն չի՞ պահանջում իր գոյութեան համար: Այսպիսի անհեթեթ հալիցիճացիա դժուար է նոյնիսկ երեւակայել, որն անմատչելի է մարդկային նորմալ ուղեղին ու բանականութեանը:

Ս. Սկաշկոյի պատկերացումը սոցիալիստական երկրների սոցիալիզմի մասին՝ ուղեղի հիւանդագին բաժանք է եւ ու-

րիշ ոչինչ: Տուեալ դէպքում մեզ՝ հայ ընթերցողներին ամենեւին չի հետաքրքրում այն հարցը, թէ ինչ հալիցիճացիաների եւ բաժանքների է ընդունակ Ս. Սկաշկոյի ուղեղը. նրա յօդուածը մեր ուշադրութեանն է արժանացել միայն այն պատճառով, որ այդ բաժանքները բարձրացուել են պետական քաղաքականութեան մակարդակին եւ հայ ժողովրդին են հրամցում որպէս դիւանագիտական տեսական արգումենտներ, պրոլետարական համաշխարհային յեղափոխութեան «շահերին» Հայաստանի եւ հայ ժողովրդի զոհաբերումը «հիմնատրելու» համար. մեզ են հրամցում որպէս Լենինի պատուիրաններ, որոնցմով հայերը պէտք է ղեկավարուեն, եթէ չեն ուզում դաւաճանած լինել սոցիալիզմին, համաշխարհային յեղափոխութեանը եւ համամարդկային իդէալների շահերին, եւ այդ քարոզը կարդացում է Մոսկուայի Ազգութիւնների Կոմիսարիատի օրգանի Էջերից, «խաղաղութեան կոնֆերանցիայի» նախօրեակին, որտեղ, ի հակադրութիւն Վերսալի «իմպերիալիստական» լուծման, պիտի տրուի հաշկական հարցի «սոցիալիստական» լուծումը:

Եւ ահա թէ Սկաշկոն ի՛նչ ուղի է գտնում Հաշկական Հարցը լուծելու համար: Ծարունակենք ունկնդրել նրան:

Քանի որ տերիտորիան ու ազգային միութիւնը ոչ մի նշանակութիւն չունեն սոցիալիստական երկրների համար, այդ պատճառով էլ, — գրում է նա, — սոցիալիստական պետութիւնները կոնֆերանսում պէտք է ղեկավարուեն Լենինի առաջարած սկզբունքով՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքով, որը պահանջում է. «Ա) Մի երկրի յեղափոխութեան շահերը ենթարկել համաշխարհային յեղափոխութեան շահերին, Բ) Բուրժուագիայի նկատմամբ յաղթանակ տարած ազգի ընդունակութիւնը եւ պատրաստականութիւնը, գնալու ազգային մեծագոյն զոհողութիւնների՝ յանուն միջազգային կապիտալի կործանման»:

Այնուհետեւ, համաշխարհային մասշտաբով պրոլետարական պայքարի շահերը պահանջում են ազատագրել գաղու-

թային եւ կիսագաղութային երկրները իմպերիալիստական երկրների լծից, այդ պատճառով էլ այդ պայքարի շահերը պահանջում են համակողմանի աջակցութիւն Թուրքիային, որն այժմ միակ կիսագաղութային երկիրն է, որն իբր թէ «Անտանտայի իմպերիալիստական պետութիւնների դէմ ակտիւ պայքար է մղում»:

Միտքը պարզ է. բանի որ Թուրքիան միակ «կիսագաղութային» երկիրն է Արեւելքում, որը պայքարում է բացառապէս «Անտանտի իմպերիալիստական կառավարութիւնների դէմ», իսկ համաշխարհային յեղափոխութեան շահերն էլ պահանջում են գաղութային ու կիսագաղութային երկրների ազատագրում իմպերիալիզմի լծից, ուստի անհրաժեշտ է «համակողմանի պաշտպանութիւն» Թուրքիային սոցիալիստական երկրների կողմից:

Նկատենք եւ յիշենք, որ Արեւելքում Թուրքիան միակ երկիրն էր, որը իբր թէ պայքարի է դուրս եկել միջազգային իմպերիալիզմի դէմ, դրա համար էլ Ստալինը Թուրքիային էր վերագրել Արեւելքում յեղափոխութեան դրօշակակրի պատիւը: Քիչ յետոյ պիտի տեսնենք, որ Թուրքիայի «յեղափոխական», «հակաիմպերիալիստական» պայքարի մասին սկսուած այս տիեզերական թմբկահարութեան տակ թաքնուած է մի բան՝ դառն, ողբերգական իրականութիւն.— Ա) Համաշխարհային պրոլետարական յեղափոխութեան ոչ մի հեռանկար գոյութիւն չունէր, Բ) Իմպերիալիստական Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան եւ այլն ամուր շարունակում էին նստած մնալ Արեւելքում եւ Աֆրիկայում, Գ) Թուրքիան ոչ միայն կրակոց անգամ չի արձակել Անտանտի իմպերիալիստական կառավարութիւնների դէմ, այլեւ ամենեւին մտադրութիւն չի ունեցել կրակելու նրանց վրայ. աւելին, նրանց աջակցութեամբ (Ֆրանսիա, Անգլիա, Ամերիկա եւ դրանց գումարած Սովետական Ռուսաստանի իբրք համակողմանի դիւսնագիտական, ռազմական եւ նիւթական վիթխարի մասշտաբների օգնութիւնը) շարունակել

Լ մարդակերական ագրեսիւ այն քաղաքականութիւնը, հաչերի, յոյների, քրդերի նկատմամբ, որ սկսել էին Սուլթան Աբդուլ Համիդը եւ Երիտասարդ Թուրքերը՝ նպատակ ունենալով Թուրքիայի տիրապետութեան տակ առնել Անդրկովկասը, Բաքուն եւ տարածել Թուրքիայի տիրապետութիւնը մինչեւ Պամիրի լեռները, Դ) Տմարդի կերպով իմպերիալիստներ են յորջորջուել Թուրքիայի դարաւոր բռնակալութիւնից ազատագրուել ցանկացող հայ ժողովուրդը եւ յոյները, այսինքն՝ հենց նոր ինքնորոշուող Հայաստանը եւ անկախ Յունաստանը: Ահա այս երկու ժողովուրդներն են դիտուել իբրեւ Անտանտայի «իմպերիալիստներ», սրանց ազգային գոյութեան իրաւունքն է հռչակուել որպէս «իմպերիալիստական ռոսնձգութիւն» Թուրքիայի դէմ, եւ նրանց կրկին ստրկացնելու նպատակով է Քեմալ փաշան ռազմական ագրեսիւ ձեռնարկել նրանց դէմ՝ հաատացնելու յեղափոխական ֆրակի հերոսներին, թէ ինքը պայքարում է երրպական իմպերիալիզմի դէմ, խոստանալով Անգլիայի դէմ հանել ամբողջ Արեւելքը, եթէ իրեն պահանջող ռազմական, նիւթական եւ դիւսնագիտական օգնութիւն ցոյց տրուի սոցիալիստական պետութեան՝ Ռուսաստանի կողմից, Ե) Վերջապէս, պետք է տեսնենք, որ իրականում սոցիալիստական երկրների զոհաբերութիւնները կատարուել են ոչ թէ յեղափոխութեան շահերի համար, այլ Առաջին Համաշխարհային Պատերազմում ջարդուած թուրքական բորենու ժանիքները սրելու, արիւնաքամ հայ ժողովրդի մարմինը կրկին յօշոտելու համար: Սա է իրողութիւնը:

Անդրադառնանք նորից Ս. Սկաչկոյին: Լսենք, թէ ի՛նչ օգնութիւն եւ պաշտպանութիւն է առաջարկում Թուրքիային սոցիալիստական երկրների կողմից: Նա գրում է. «Պէտք է բաւարարել Թուրքիայի պետական ազգային շահերը: Որպէս բուրժուա-նացիոնալիստական (ընթերցողը պետք է նկատած լինի, որ թուրքական բուրժուական նացիոնալիզմը եւ Թուրքիայի նոյնիսկ իմպերիալիստական նպատակները հարեւան ժո-

ղովորդների նկատմամբ դիտում են իբրև Արեւելքում եւ Երոպայում «յեղափոխական» միսիայի դրսևորումների արտայայտութիւններ) Անկարայի ազգային բուրժուական պետութիւնը, բնական է, չունի եւ չի ցանկանում յաղթահարել իր նացիոնալիզմը (թող լինի նոյնիսկ իմպերիալիստական երանգով նացիոնալիզմ), մինչդեռ սոցիալիստական պետութիւնները, այնուամենայնիւ, պէտք է յաղթահարեն իրենց նացիոնալիզմը եւ համաշխարհային յեղափոխութեան շահերին զոհաբերեն իրենց տերիտորիաները, այլեւ նոյնիսկ իրենց ցեղակիցների խմբերին»:

Յետոյ, «եթէ մենք հաւատում ենք համաշխարհային յեղափոխութեան յաջողութիւններին, ապա պէտք է հասկանանք, որ այդ բոլոր զոհաբերութիւնները միայն ժամանակաւոր են, որ համաշխարհային յեղափոխութեան յաղթանակից յետոյ նրանք բոլորը լուծարքում են»:

Այսպէս, ուրեմն, յեղափոխական ենք, ուրեմն պէտք է հաւատանք համաշխարհային յեղափոխութեան յաջողութիւններին եւ համարձակ տերիտորիալ ու ցեղակիցների խմբերի զոհաբերութիւններ պէտք է կատարենք թուրքական նացիոնալիզմի Մոլոխին. չէ՞ որ նա «հովանաւորում է» յեղափոխութեան յաղթանակն Արեւելքում եւ Երոպայում, գիտակցելով միաժամանակ, որ այդ զոհաբերութիւնները «ժամանակաւոր են», որ համաշխարհային յեղափոխութեան յաղթանակից յետոյ «չեղեալ» կը յայտարարուեն այդ զոհաբերութիւնները:

Յօդուածագիրը «մոռացել է» ասել, թէ զոհաբերութիւնները «լուծարքի» ենթարկելուց յետոյ, այնուամենայնիւ, ինչպէ՞ս են յարութիւն առնելու զոհաբերուած «ցեղակիցների խմբերը», կամ թէ արդեօք նրանք անվերադարձ կորո՞ւտ են համարում: Ասենք չի մոռացել. քիչ յետոյ նա յիշում է այդ մասին եւ միութարում անհանգստացող հայերին, թէ համաշխարհային յեղափոխութիւնը (յաղթելուց յետոյ) «կը բննի եւ կը գտնի հողի իւրաքանչիւր կտորի իսկական տիրոջը, յանձին նրա վրայ աշ-

խատող աշխատատրի», ի՛նչ անենք, թէ զոհաբերուած հայերի փոխարէն այդ զոհաբերուած հայկական հողերի վրայ կ'աշխատեն թուրքեր, քրդեր կամ ռուսներ, մէկ չէ՞, աշխատատրն աշխատատր է, հայեր չեն լինի՝ թող թուրքեր լինեն, հողի համար մէկ է... Ռբայիսի՝ լայնախոհութիւն... Ուրիշի արեան ու գրպանի հաշուին:

Չպէտք է վախենալ Թուրքիայից, իրատում է մեզ ըԱկաշկոն, եթէ նրան կասկածենք իմպերիալիզմի եւ մարտնչող իմպերիալիզմի մէջ, որը ձգտում է իր տիրապետութեան տակ պահել հայ ազգաբնակչութեամբ հողերը եւ նոյնիսկ զարթել Կովկասը, ապա նոյնիսկ այդ ժամանակ հարկ չկայ վախենալ Թուրքիայից, քանի որ նրա բոլոր իմպերիալիստական ձգտումները դատապարտուած են անպատուութեան, որովհետեւ Երոպայում պրոլետարական յեղափոխութիւնից յետոյ անխուսափելի է կոմունիզմի յաղթանակը Թուրքիայում, որը չունի իր արդիւնաբերութիւնը եւ այդ պատճառով էլ չի կարող անկախ մնալ Երոպայից: «Այս հեռանկարից ելնելով, սոցիալիստական պետութիւններն առանց վարանելու պէտք է զիջումներ անեն նացիոնալիստական պետութիւններին», յիշելով, որ այդ զոհաբերութիւնները միայն ժամանակաւոր բնոյթ են կրում: Եւ հայերիս իւրախուսում է Ռուսաստանի օրինակով. 1918 թ., — գրում է Ակաշկոն, — Ռուսաստանը կարողացաւ զոհաբերել Ուկրաինան եւ իր զգալի մասը յանուն կոմունիզմի օճախի փրկութեան, ինչո՞ւ հիմա սոցիալիստական պետութիւնները չպէտք է որոշ զիջումներ անեն Թուրքիային, որը յեղափոխութեան «դրօշակակիրն» է Արեւելքում եւ Երոպայում:

Յետոյ՝ «Այս բոլոր նկատառումները, — շարունակում է նա, — վերաբերում են գլխաւորապէս Հայաստանին, քանի որ ո՛չ Ռուսաստանը, ո՛չ Ադրբեջանը վիճելի հարցեր չունեն Թուրքիայի հետ: Կոնֆերանսի գլխաւոր հարցը Հայկական Հարցն է, այսինքն այն, որ Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ

վերացունեն բոլոր թիրիմացութիւնները եւ հաստատունն բարեկամական շարաքերութիւններ:

Ընթերցողը, հաւանաբար, արդէն նկատել է, որ տուեալ դէպքում մենք ականատես ենք Սկաշկոյի կողմից արդէն չորրորդ նորամուծութեանը՝ մարքսիզմ-լենինիզմի տեսութեան մէջ, այսինքն՝ չորրորդ յայտնագործութեանը:

Մարքսիզմ-լենինիզմը, ի հարկէ, չի ժխտում ազգային մեծ զոհաբերութիւնների անհրաժեշտութիւնը համաշխարհային յեղափոխութեան շահերին: Բայց տուեալ դէպքում մեզ համար միանգամայն նորութիւն, այն էլ տարօրինակ նորութիւն է, որ համաշխարհային յեղափոխութեան շահերի տակ փաստօրէն հասկացում է ամենաբարբարոսական թուրքական իմպերիալիզմի գալթողական արիւնարբու շահերը, որ սոցիալիստական Հայաստանը, որն առանց այն էլ արիւնաքամ է եղել, ծով արեան գնով է հասել սոցիալիզմի ուղին, պէտք է պատրաստակամութեամբ տերիտորիալ եւ ցեղակիցների խմբերի զոհաբերութիւններ կատարէր ռազմա-ֆեոդալական, արիւնարբու թուրքական իմպերիալիզմին: Եթէ սա մարքսիզմ-լենինիզմ է, ապա ո՞րն է ամենաանսքող բանդիտիզմը, բռնութեան եւ ագրեսիայի սրբագործումը անպաշտպան ժողովուրդների նկատմամբ: Ո՞ր մնաց ճնշում ազգերի ինքնորոշման իրատուքի լենինեան դեկլարացիան: Ի՞նչ առընչութիւն Սկաշկոյի յայտնագործութեան եւ այդ դեկլարացիայի միջեւ...

Ս. Սկաշկոն յամառօրէն կոչ է անում՝ Հայաստանը անպայման պէտք է դեկալարուի ազգային մեծագոյն զոհաբերութիւնների լենինեան սկզբունքով, այսինքն՝ պէտք է հրաժարուի ոչ միայն մեծ Հայաստանի մասին դաշնակների իմպերիալիստական ձգտումներից՝ **միշտ հայկական համարուած հողերի միաորումից**: Ս. Սկաշկոն չի ժխտում, որ Արեւմտեան Հայաստանում հայերը հսկայական բազմութիւն են կազմել ազգաբնակչութեան մէջ՝ շուրջ 40 տոկոսը, իսկ որոշ շրջաններում նոյնիսկ բացարձակ մեծամասնութիւնը... նա «համետարար»

լռութիւն է պահպանում մի հարցում, թէ ինչպէ՞ս է պատահել, որ երկրի բնիկ ժողովուրդը՝ հայերը, բնակչութեան մէջ միայն առանձին սանջակներում են մեծամասնութիւն կազմում, իսկ հիմնականում 40 տոկոսից չի անցնում, մի ժողովուրդ, որը դարեր շարունակ պետութիւն է ունեցել այդ երկրում, որի անունով էլ այդ երկիրը կոչւում է Հայաստան, իսկ Թուրքիա անունը յայտնի է դարձել միայն վերջին դարերում: Այս հարցը չի զբաղեցնում «մարքսիստ» յօդուածագրին: Նա շրջանցում է այն: Բայց նա յիշում է, որ պատերազմի ժամանակ այդ հայ ազգաբնակչութիւնը ենթարկուել է բռնութիւնների՝ Էնվերի կառավարութեան կողմից, որ տեղահանուել է իր հայրենիքից, մասամբ կոտորուել, մասամբ էլ ցրուել Փոքր Ասիայում եւ Կովկասում: Ուզում է հասկացնել, որ քեմալական Թուրքիան մեղք չունի այդ հարցում, դա Էնվերն է արել, մոռանալով, որ նոյն Էնվերը կատարում էր այդ ոճրագործութիւններն իր կուսակցական զինակից Մուստաֆա Քեմալի հետ յիսկատար համագործած եւ նոյնիսկ նրա առաջադրած կրեդոյով, որը Քեմալը շարադրել էր տակախն 1910 թ. Երիտասարդ Թուրքիայի կուսակցութեան կենտրոնի միտում, որ նրանց համագործակցութիւնը հայ ժողովուրդի նկատմամբ իրենց ոճրագործ պլանների իրականացման համար շարունակուել է նաեւ 1918 թ. ի վեր, մինչեւ Էնվերի սատկելը Միջին Ասիայում, որ այդ նոյն Էնվերն էր, որ Բեռլինում, Մոսկուայում եւ Բաքում եռանդով համոզում էր սովետական դիւանագէտներին՝ ամէն տեսակ օգնութիւն ցոյց տալ Քեմալին, եւ նամակներ էր յղում Քեմալին՝ խորհուրդ տալով նրան՝ ամուր կառչել Սովետական Ռուսաստանից, որից ինքը յաջողացրել էր ահագին ոսկի ստանալ, որը եւ ուղարկում էր իրեն՝ Քեմալին թուրքական մեծ տէրութեան գոյութիւնը պահպանելու եւ Հայաստանի հաշուին այն մեծացնելու համար սկսած պայքարը մինչեւ վերջ հասցնելու նպատակով:

Հայ ազգաբնակչութեան քանակի մասին տուեալները յիշելով, Սկաշկոն ամենեւին տրամադրուած չէ խօսելու հայ ժո-

դովրդի պատմական իրաունքների և ազգային շահերի օգտին: Ընդհակառակը, նա յիշում է այդ փաստերը, որպեսզի կրկնի թուրքական փաստարկն այն մասին, թե քանի որ Արեւմտեան Հայաստանում այլեւս հայեր չկան, ուրեմն՝ հայերի ձգտումն մեծ Հայաստան ստեղծելու համար պէտք է դիտել իբրեւ «իմպերիալիստական» դաշնակցական ոտնձգություն Թուրքիայի ամբողջութեան և ազգային շահերի դէմ: Ս. Սկաշկոն, լիովին անտեսելով ժողովուրդների իրաունքների միջազգային իրաւական նորմաները, ամբողջովին կանգնած է թուրք զաւթիչների աւագակաշին տեսակետի վրայ, որի համաձայն՝ բաւական է սրի քաշել որեւէ ժողովրդի և բռնի ուժով տեղահան անել ու աքսորել իր երկրից, որպէսզի «օրինական» ճանաչուի բանդիտի իրաւունքն այդ ժողովրդի հայրենիքի նկատմամբ, այն ճանաչուի արդէն որպէս բանդիտի սեփականութիւն:

Այդ իմաստով էլ նա գրում է. «Բայց ճշմարիտ է նաեւ այն, որ ներկայումս այդ տեղերում (Արեւմտեան Հայաստանում) հայ ազգաբնակչութիւնը կազմում է հազիւ 5-10 տոկոս (Հարբորդի ամերիկեան յանձնաժողովի 1919ի տուեալներով, որը, ի հարկէ, հակուած չի եղել նուազեցնելու հայ ազգաբնակչութեան տոկոսը)»: «Բացի այդ, — շարունակում է այնուհետեւ Ս. Սկաշկոն, — (ոչալ ուժի տեսակետից) Վանի և Բիթլիսի իրական տէրերը հանդիսանում են ոչ թէ թուրքերը, այլ քրդերը, որոնք ոչ մի գնով չեն համաձայնուի իրենց հողերը Հայաստանին յանձնելու»:

Եւ որպէս փաստարկ բերում է հետեւեալ էպիգոդը. իբր թէ Մոսկուայի թուրքական արտակարգ դեսպանութեան ներկայացուցիչը Անկարայի ժողովրդական ժողովին զեկուցել է, թէ Ռուսաստանը բանակցութիւնների պայման է առաջադրում Վանի և Բիթլիսի գիջումը Հայաստանին: Այդ ժամանակ իբր թէ քուրդ դեսպուտատները բացագանչել են. — «Տուէ՛ք, բայց թող հայերը փորձեն գալ ևս վերցնել...»:

Այդ պատճառով էլ Սկաշկոն եզրակացնում է, թէ ուժերը

լրջօրէն հաշուի առնելու դէպքում հայերը պէտք է հասկանան, որ իրենք տուեալ վիլայէթները վերցնելու համար հնարաւորութիւն չունեն. դրանք վերցնել կարող են միայն Ռուսաստանի օգնութեամբ, բայց նրանք պէտք է հասկանան նաեւ, որ ռուսական կարմիր բանակը այդպիսի պայմաններում երբեք չի նրանի Վանը և Բիթլիսը նրանց համար, որովհետեւ Հայաստանի շահերի համար ներխուժել Թուրքիա՝ կը նշանակէր թուրք ժողովրդին և ամբողջ Արեւելքին ապացուցել, որ Սովետական Ռուսաստանը շարունակում է ցարական Ռուսաստանի քաղաքականութիւնը և ռուսական կոմունիզմը հանդիսանում է միայն բողարկուած ռուսական իմպերիալիզմ: Դժուար չէ նկատել, որ Սկաշկոն անտեսում է հարցի միւս, թերեւս աւելի լուրջ կողմը. ինչո՞ւ չի կարելի ենթադրել ճիշդ հակառակը, որ անտեսելով այդպիսի մի հարստահարուած, կողոպտուած ժողովրդի ազգային շահերը, ինչպիսին է հայ ժողովուրդը, ձեռք մեկնելով հայերին և Արեւելքի միւս ժողովուրդներին դարձրով կեղեքող իմպերիալիստներին, յանրժայցնելով թուրքական լուծը Հայաստանի վրայ, դրանով իսկ Սովետական Ռուսաստանը փաստօրէն ձգտում է յանրժայցնել թուրքական իմպերիալիզմի լուծը նաեւ քրդերի, արաբների, յոյների և միւս ճնշուած ժողովուրդների նկատմամբ, որ այդպիսով ռուսական կոմունիզմը փաստօրէն հանդիսանում է իմպերիալիստական բռնակալութեան բողարկուած պաշտպանն ու զինակիցը, փոքր, ճնշուած ժողովուրդների շահերը մեծ ազգերի զաւթողական շահերին ենթարկելու պաշտպանն ու ջատագովը: Հաւանաբար հենց այդպէս էլ ընկալեցին սովետա-թուրքական ռազմական և քաղաքական զինակցութիւնը 1920-21 թուականներին, որի հետեւանքով էլ, իրականում, Արեւելքի և ոչ մի ժողովուրդ չարձագանգեց սկաշկոնների, պալովիչների և ընկ. կոչերին՝ համաշխարհային լեղափոխութեան յաղթանակի և երոպական կապիտալի տիրապետութիւնը տապալելու անհրաժեշտութեան մասին: Արդեօք դա չէ՞ր պատճառը, որ ճնշուած ժողովուրդնե-

րից եւ ոչ մէկը չչարեց «յեղափոխական» յորջորջուած քեմալական Թուրքիային, բացի Սովետական Ռուսաստանից եւ Ադրբեջանից, եւ ընդհակառակը՝ բոլոր արաբական ժողովուրդներն էլ գերադասեցին ընդունել Անգլիայի, Ֆրանսիայի մանդատները, պոկուեցին Թուրքիայից՝ համոզուած լինելով, որ այդպիսով անելի շուտ կը հասնեն քաղաքական ազգային ինքնորոշման:

Պատմութիւնը լիովին հաստատեց հենց այս ենթադրութեան ճշմարտացիութիւնը: Վերջապէս, ինչո՞ւ չենթադրել, որ եթէ հենց սկզբից Սովետական Ռուսաստանի օգնութեամբ (այն ոսկին, գէնքը, հանդերձանքը եւ կամատրական գնդերը, որ տրամադրում էին յեղափոխութեան դիմակ հագած թուրք փաշաներին ու բէկերին, եթէ այդ օգնութիւնը տրուէր ճնշուած եւ ինքնորոշման ձգտող հայ ժողովրդին) ստեղծուէր իրօք մեծ Հայաստան, ապա այսօրուայ փոքրիկ Սովետական Հայաստանի փոխարէն մենք կ'ունենայինք մեծ Սովետական Հայաստան, որի օրինակը հսկայական հեռանկարային դեր կարող էր խաղալ Մերձատր եւ Միջին Արեւելքի ճնշուած ժողովուրդների համար, նրանց յեղափոխութեան անելի ակտիւ ռեզերվներ դարձնելու տեսակէտից: Միս կողմից, այդ փաստն աշխարհին ցոյց կը տար, որ անպատիժ չեն կարող մնալ փոքր ժողովուրդների իրաւունքները ոտնահարողները եւ իսկական պատմական դաս կը հանդիսանար առաջին հերթին հենց թուրք ժողովրդի համար, որը կը բռնէր իսկական սոցիալիստական յեղափոխութեան ուղին եւ ոչ թէ կը դառնար Քեմալ փաշայի յեղափոխական կատակերգութեան կոյր գործիքը՝ փաշաների տիրապետութիւնը եւ ստրկական լուծն իր ուսերին յաւերժացնելու համար:

Սրանք հարցեր են, որոնց կողքով լռութեամբ են անցել նրանք, ովքեր շտապել են թուրքական իմպերիալիզմի շահերին զոհաբերել Հայաստանը եւ հայ ժողովուրդը, կարծելով, թէ դրանով «նպաստում են» յեղափոխութեան զարգացմանն

Արեւմուտքում եւ «ապահովում են» կոմունիզմի յաղթանակը Եւրոպայում եւ... Թուրքիայում:

Եւ ցաւալին այն է, որ աշխարհը երբեք չի հաստատել այդ զտանցանքին. նոյնիսկ այդ առասպելների յօրինողները հենց 1921-22 թ.թ. արդէն գիտակցեցին, որ չարաշար մոլորութեան են մատնուած, սակայն հրապարակով չխոստովանեցին իրենց հիասթափութիւնը, որովհետեւ արդէն շատ ուշ էր իրենց սխալն ուղղելու համար, ուստի եւ գերադասեցին լռել, մինչդեռ այդ միբաժին կորօրէն հաւատացող հայերից շատերը մինչեւ օրս էլ շարունակում են իրենց հրապարակախօսական եւ գիտական «հետազօտութիւնների» մէջ կրկնել նոյն սկաշկոների, պալովիչների ցնորամտութիւնները «յեղափոխական Թուրքիայի», հայ նացիոնալիստների «իմպերիալիստական» ձրգտումների մասին:

Բայց շարունակենք ունկնդրել Ս. Սկաշկոյին մինչեւ վերջ: Նրա կարծիքով, Սովետական Ռուսաստանը, թէկուզ արդէն սոցիալիստական դարձած Հայաստանի համար չի կարող պաշար սկսել Թուրքիայի դէմ, որովհետեւ, — ասում է նա, — այդ կը նշանակէր ձախողել անգլիական իմպերիալիզմի դէմ յեղափոխական պաշարն ամբողջ Արեւելքում: Աւելին: «Եթէ նոյնիսկ ժամանակակից Հայաստանում ծուարած փախըստականները Վանից եւ Բիթլիսից ենթարկուէին անասելի զրկանքների, եթէ Թուրքիայում մնացած հայերը, — գրում է Ս. Սկաշկոն, — ներկայումս էլ շարունակէին ենթարկուել հալածանքների ու զրկանքների, հարստահարութիւնների կառավարութեան կողմից (ուզում է ասել, եթէ Քեմալն էլ հայերի հետ վարուի այնպէս, ինչպէս Թալէաթն ու Էնվէրը), միեւնոյն է, Հայաստանին միաժամանակ ոչինչ չի մնում անելու, քան հաշտուել դրա հետ եւ զոհաբերել համաշխարհային յեղափոխութեան շահերին՝ ե՛ւ իր նախկին տերիտորիաները, ե՛ւ այնտեղ մնացած իր ժողովրդի խմբերը»: «Հայաստանը, — շարունակում է նա ցինիկօրէն, — պէտք է հրաժարուի ոչ միայն այդ տերի-

տորիաներից, որոնք պահանջում է, այլև ևնչնիսկ նրանցից, որոնք արդեն մտել են անկախ Հայաստանի կազմի մեջ»:

Սօսքը վերաբերում է ոչ միայն Արեւմտեան Հայաստանին, այլև Կարսին ու Արդահանին, որոնք չպետք է դառնան կոուստանդուլ Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ, — խրատում է մեզ Ս. Սկաշկուն:

Ինչո՞ւ, — գուցէ հարցնի ընթերցողը: «Ռոպիտետե, — պատասխանում է նա, — այդ մարզերի գրաւումը դաշնակցական կառավարութեան կողմից հանդիսացել է «որպէս իմպերիալիստական ակտ», քանի որ նրանց բնակչութեան 67 տոկոսը կազմում են մահմեդականները, ուստի եւ գերադասեցին լռել, մինչդեռ այդ մարզերը կարող են պահանջել ազգերի ինքնորոշման իրաւունքի սկզբունքով»: Այդ մի կողմից: Միւս կողմից էլ, — գրում է Սկաշկուն, — «Կարսի եւ Արդահանի խնդրում շահագրգռած է ոչ միայն Հայաստանը, այլև Ռուսաստանը, որովհետեւ այդ վայրերը պլացդարմ են հանդիսանում Կովկասի դարպասների մօտ»: «Ով տիրում է Կարսին, նա տիրում է Կովկասին»: Բերելով Մարքսի այս խօսքերը, յօդուածագիրն անելացնում է. — Բայց եւ այնպէս, «Սովետական Ռուսաստանը միջազգային հարցերին չի նայում իր «պետական» շահերի տեսակէտից, նա հաւատում է համաշխարհային պրոլետարական յեղափոխութեան յաղթանակին եւ գիտէ, որ այդ յաղթանակի հետեանքով բոլոր պլացդարմները եւ նախադոները կորցնում են իրենց ամէն մի նշանակութիւն, այդ պատճառով էլ Սովետական Ռուսաստանը անընդունելի չի համարելու իր համար Կարսի եւ Արդահանի զիջումը եւ ժամանակաւոր յանձնումը Թուրքիայի ձեռքը»:

Ինչպէս նկատում է ընթերցողը, այստեղ մենք գործ ունենք Սկաշկունի հինգերորդ «նորամուծութեան» հետ՝ մարքսիզմ-լենինիզմի տեսական գանձարանում:

Ստացում է, որ սովետական պետութեան համար նշանակութիւն չունեն իր պետական շահերը միջազգային հարցե-

րում, որովհետեւ՝ իբր թէ՛ ղեկավարում է միայն համաշխարհային յեղափոխութեան հեռանկարի շահերով:

Սակայն մարքսիզմ-լենինիզմի պրակտիկայում սովետական կառավարութեան արտաքին քաղաքականութիւնը մեզ այլ բան է ասում, ճի՛շդ հակառակը: Միջազգային բոլոր հարցերը քննելիս սովետական պետութիւնը ելնում է նախ եւ առաջ իր սեփական՝ պետական շահերից: Այլ կերպ էլ չի կարող լինել, որովհետեւ սովետական պետութիւնը, յոյսը դնելով համաշխարհային յեղափոխութեան հեռանկարի վրայ եւ հաւատալով նրա յաղթանակին, անընդհատ զիջումներ անելով կապիտալիստական տերութիւններին, վաղուց արդէն դադարած կը լինէր գոյութիւն ունենալուց. անելին, սովետական պետութիւնը, ղեկավարուելով առաջին հերթին իր պետական շահերով, միջազգային հարցերում ոչ միայն աշխատում է ոչ մի զիջում չանել կապիտալիստական երկրներին, այլ եւ ամէն միջոցի դիմում է յետ պահանջելու առաջներում կատարած այս կամ այն հարկադրական զիջումները, ուղղել պատմական անարդարութիւնները եւ նույնիսկ զիջումներ կորզել իր շահերի օգտին՝ կապիտալիստական երկրներից: Տիշենք թէկուզ Արեւմտեան Ռուսիանայի եւ Բելոռուսիայի, Մոլդաւիայի եւ Հարաւային Սախալինի յետ գրաւումները, որոնցից Ռուսաստանը զրկուել էր 1918-21 թուականներին, յիշենք Կորիլեան կղզիների յետ գրաւումը, որ Ռուսաստանը կորցրել էր ռուս-ճապոնական պատերազմում եւ որոնց կապակցութեամբ նույն Ստալինը հրապարակաւ ճորէն կրկնեց Կլեմանտյի յայտնի ֆրազը, թէ «40 տարի մենք սպասում էինք այս ժամին»: Տիշենք վերջապէս Վիբորգի շրջանի վերցնելը Ֆինլանդիայից եւ այլն:

Միայն Հայաստանի նկատմամբ է, որ չի յիշում պատմական անարդարութիւնն ուղղելու անհրաժեշտութիւնը, հաւանաբար այն պատճառով, որ այժմ էլ Հայաստանը դիտում է իբրեւ գոհ ինչ-որ շահերի, յեղափոխութեան՝ թէ թուրքական իմպերիալիզմի շահերին՝ դժուար է կռահել: Բոլոր դէպքերում

կատարեալ սուտ է եւ անշնորհք քաղաքական դեմագոգիա ըՍ-կաշկոյի հինգերորդ այս տեսական յայտնագործութիւնը, որի նպատակն է մոլորեցնել եւ յիմարացնել արովների, կարին-եանների նման կոյր մարդկանց:

Եւ այսպէս. համաշխարհային կոմունիզմի յաղթանակը մեծագոյն ազգային զոհաբերութիւններ է պահանջում, այսինքն՝ թէ թորքական ազրեսի նացիոնալիզմի Մոլոխն է զոհեր պահանջում, ուստի եւ պէտք է լիովին բաւարարել Թորքիայի «պետական, ազգային» այդ իմպերիալիստական պահանջները: Այդ պահանջները բաւարարուած կը լինեն, եթէ Հայաստանը եւ հայ ժողովուրդը զոհաբերուեն Թորքիային: Դրա դիմաց Անկարայի կառավարութիւնից պահանջում է, որ Թորքիան էլ, ազգային զոհաբերութիւններ չանելով հանդերձ, այնուամենայնիւ, որոշ զիջումներ անի յեղափոխութեան շահերին, հասկանայ, որ ա՛յդ էլ մեծ զիջում է, գրեթէ «ազգային զոհաբերութիւն»: Եթէ միայն հասկանայ, որ Սովետական Հայաստանն ամենեւին էլ դաշնակցական չէ, հայ կոմունիստների եւ դաշնակցների միջեւ ոչ մի ժառանգական կապ չկայ, դրա համար էլ անհեթեթութիւն կը լինէր Սովետական Հայաստանին վերաբերուել այնպիսի թշնամանքով, ինչպէս դաշնակցական Հայաստանին, եւ պահանջել կոմունիստներից իրագործելու դաշնակցականների հետ կնքած պայմանագիրը:

Սկաշկոն, երեւում է, շատ լաւ հասկացել է, որ հայերը որքան էլ խիզախ ու անվեհեր են ազգային ազատագրութեան համար մղած պայքարում, այնքան էլ միամիտ, դիրարհատաւ են ու անհեռատես քաղաքականութեան մէջ: Եւ որովհետեւ իր յօդուածը գրել է գերազանցապէս հայերին ազգային մեծագոյն զոհաբերութիւններ կատարելու անհրաժեշտութեան մէջ համոզելու համար, դրա համար էլ հարկ չի համարել խորամուխ լինելու դիւանագիտական որոշ նրբութիւնների մէջ, վստահ լինելով, որ հայերը չեն հասկանայ այդ նրբութիւնները, որ նրանք կորօրէն կը հաւատան իրեն: Զէ՛ որ ինքը հանդէս է գալիս Ազ-

գութիւնների Կոմիսարիատի օրգանի էջերում, Լեւինի անունից, Լեւինին վկայակոչելով:

Միամտութիւն կը լինէր ենթադրել, թէ Սկաշկոն չի հասկացել դիւանագիտական այդ նրբութիւնը: Ծատ լաւ իմացել է, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը մեռած նորածին էր, որը չունէր գոյութեան իրատունքի ուժ, այն հանուեց արդէն մեռած մօր արգանդից, երբ հանգուցեալի մահնի մօտ կանգնած էին բոլշեիկ մանկաբարձները եւ բժիշկներ, որոնք, եթէ ուզեմային, կարող էին լոյս աշխարհ չբերել օրապակաս եւ անկեւեղան մանկանը, բայց նրանք կարգադրեցին դուրս քաշել մօր արգանդից վիժուածքը, որպէսզի հիմք ունենան այդ այլանդակ ծնունդի համար մեղադրել իրենց քաղաքական հակառակորդներին, մատնացոյց անելով այն փաստը, որ դիակի հերձույթ, ահա, կատարուել է դաշնակցականների ձեռքով եւ ոչ թէ բոլշեիկ մանկաբարձների ու բժիշկների: Պայմանագրի տակ դրուած է դաշնակցական Խատիսեանի ստորագրութիւնը, որը կարելի էր եւ հրապարակել որպէս պատմական վաւերագիր: Իսկ որ Խատիսեանը մոլորուած էր եւ չգիտէր ինչ պատասխանել Կարապետի փաշայի ուլտիմատումին («Ստորագրի՛ր, թէ չէ շարժում եմ Երեւանի վրայ»), պատասխանի էր սպասում Երեւանում արդէն իշխանութեան տէր դարձած բոլշեիկներից եւ միայն Երեւանից տրուած «ստորագրեցէ՛ք» հրահանգից յետոյ ստիպուած է լինում ստորագրել պայմանագիրը, այդ մասին լը-րում է պատմութիւնը, որովհետեւ հեռախօսային հրահանգը չի հրապարակուել:

Այդ ի՛ր հերթին: Ոչ պակաս կարեւոր է նաեւ այն փաստը, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը իրականում ծնուեց իբրեւ հրէշ, ի հարկէ՝ դաշնակցական-նացիոնալիստական մօր արգանդից, բայց որը արգասաւորուել էր սովետա-թորքական ռազմա-քաղաքական դաշինքի կողմից զազանաբար բռնաբարուելու հետեւանքով (սովետական ոսկով, զէնքով, հանդերձանքով եւ քեմալական հորդանների բիրտ ուժերով): Վեր-

ջապէս Սկաշկոն շրջանցում է այն փաստը, որ թուրքերը ոչ մի իրաւունք չունէին Մոսկուայի կոնֆերանսում հայ կոմունիստներին պահանջելու իրագործել Ալեքսանդրապոլի պայմանագիրը հենց այն պարզ պատճառով, որ այդ պայմանագիրը ուժի մէջ էր մտնելու երկու երկրների՝ Հայաստանի եւ Թուրքիայի պառլամենտների կողմից վաւերացուելուց յետոյ: Բայց դաշնակցական կառավարութիւնը եւ պառլամենտն այլեւս գոյութիւն չունէին հենց պայմանագիրն ստորագրելուց 12 ժամ առաջ, հետեւապէս պայմանագիրը չէր կարող եւ չի վաւերացուել Հայաստանի պառլամենտի կողմից, ուստի եւ չի կարող իրաւական որեւէ ուժ ունենալ: Ս. Սկաշկոն շատ լաւ գիտէր, որ ծիծաղելի բան է միջազգային դիւանագիտութեան պրակտիկայում իրաւական ուժ չստացած, հետեւապէս եւ ապօրինի վաւերագիրը վկայակոչելը: Տոեալ դէպքում քեմալական թուրքերը պարզապէս ձեռք են առել սովետական դիւանագետներին, եթէ պահանջել են հայ կոմունիստներից՝ իրագործելու ոչ մի ուժ չունեցող Ալեքսանդրապոլի դաշնագիրը, այլ խօսքով, որդեգրել են հենց իրենց՝ թուրքերի լրբութեան այդ մեռած վիժուածքը:

Բայց գիտենալով այդ նշմարտութիւնը, ինչո՞ւ Սկաշկոն, այնուամենայնիւ, հարկ է համարել յիշատակել իր յօդուածում թուրքերի այդ լպիրշ պահանջի մասին եւ խրատական տոնով յորդորել նրանց, որ նրանք հայ կոմունիստներին տարբերեն դաշնակցականներից, որոնց մէջ, իբր թէ, «ոչ մի ժառանգական կապ չկայ»: Այդ նա արել է միայն եւ միայն այն նպատակով, որ շանտաժի ենթարկի հայ կոմունիստներին, թէ տեսէ՛ք, հա՛, մի՛ հրաժարուէք տերիտորիալ եւ ազգային մեծ գոհաբերութիւններից, հակառակ դէպքում թուրքերը (ի հարկէ՛՜ նաեւ Մոսկուան) ձեզ կը դիտեն որպէս դաշնակցների ժառանգական յաջորդներ: Դիւանագիտական «անփութութեամբ» Սկաշկոն թաքցրել է որոշակի այդ քաղաքական հաշիւը, վստահ չի նկելով, որ հայ կոմունիստները չեն նկատի այդ հաշիւները եւ կուրօրէն կը հաւատան իր «փաստարկներին»:

Դժբախտաբար, նա չի սխալուել իր քաղաքական հաշիւների մէջ: Յօդուածը լիովին հասել է իր նպատակին, ամէն բան կատարուեց իրականում այդ հաշիւներին համապատասխան:

«Անկարայի կառավարութիւնը պէտք է հասկանայ, — շարունակում է Սկաշկոն միախորտել հայ կոմունիստներին, անլի միշո՞՞ բթացնել նրանց զգօնութիւնը, — որ (լսէ՛ք) Թուրքիայի թշնամի դաշնակցական Հայաստանը մեռած է. եթէ նա փորձի յարութիւն առնել, ապա նա կը ջախջախտի անողորքաբար, ինչպէս յեղափոխական հայ ժողովրդի, այնպէս էլ նրան աջակցող Սովետական Թուսաստանի ուժերի կողմից»:

Այստեղ դժուար չէ նկատել, որ Սկաշկոն կատարում է արդէն վեցերորդ իրեն յատուկ «գիտական» յայտնագործութիւնը յեղափոխութիւնների տեսութեան բնագաւառում:

Տեսէ՛ք, Թուրքիան, «բուրժուա-անցիոնայիստական» իմպերիալիստական-գալթողական նպատակներ հետապնդող Թուրքիան միաժամանակ յորջորջում է որպէս «յեղափոխական» Թուրքիա, որին թշնամի է դաշնակցական Հայաստանը, որի ժողովուրդը՝ հայ ժողովուրդը նոյնպէս յեղափոխական է ազդարարում:

Ստացում է հանելուկ. Հայաստանը թշնամի է Թուրքիային, իսկ ժողովուրդը յեղափոխական է ու «քարեկամ», այդ պատճառով էլ Սովետական Թուսաստանը իր ուժերով «օգնում է» «յեղափոխական հայ ժողովրդին», որի հետ միացեալ ուժերով պատրաստ է «նզմել» Հայաստանը, եթէ նա յանդգնի յարութիւն առնել: Ակամայ յիշում եւ թուրքական փաշաների եւ ռուսական գաղութարարների լկտի փիլիսոփայութիւնը՝ «Հայաստանը առանց հայերի»:

Մի՞թէ նոյնը չի ստում փաստօրէն նաեւ Սկաշկոն, միայն թէ մի քիչ այլ ձեւակերպումներով, յեղափոխական ֆրազաբանութիւններով քողարկուած: Ստացում է, որ Թուրքիա եւ թուրք ժողովուրդը կամ ազգ նոյնական նշանակութիւն ունեցող հաս-

կացութիւններ են: Աւելին. «Կապիտալիստական-բուրժուական-իմպերիալիստական-նացիոնալիստական Թուրքիա»՝ ասել է թէ «յեղափոխական Թուրքիա»: Միեւնոյն է, դրանք նույնական են, այդ հասկացողութիւնների միջեւ տարբերութիւն չկայ, բայց նոյնը չի կարելի ասել Հայաստանի եւ հայ ժողովրդի մասին: Այս դէպքում Հայաստանը «հակայեղափոխական» հասկացողութիւն է, եթէ նա ազգային շահեր է հետապնդում, իսկ հայ ժողովուրդը յեղափոխական է, որը թէւ ասքում է Հայաստանում, բայց Հայաստանից «տարբեր» բան է: Չի կարելի նրանց շփոթել իրար հետ կամ նույնացնել: Այնտեղ «Հայաստանն առանց հայերի», այստեղ՝ «հայ յեղափոխական ժողովուրդ, առանց Հայաստանի»: «Հասան քաշալ» կամ «Քաշալ Հասան»՝ ի՞նչ տարբերութիւն կայ: Հազիւ թէ լրջամիտ մարդը որեւէ փորձ անի այստեղ սկզբունքային տարբերութիւն որոնել էութեան տեսակէտից:

Կարող են մեզ առարկել թերեւս մի փաստարկով, թէ այդ Դաշնակցական Հայաստանը Անտանտայի հետ էր կամ գրունդում էր նրա ազդեցութեան տակ, իսկ Թուրքիան պայքար էր յայտարարել Անտանտային, որի համար էլ նրան ասում էին «յեղափոխական Թուրքիա»:

Սակայն չպէտք է կտրուել կոնկրետ պատմական իրականութիւնից: Մէկ բան է պայքար յայտարարելը եւ ուրիշ է գործնական, իրական պայքար մղելը: Այլ բան է լինել Անտանտայի պետութիւնների հետ, գաղութներին եւ օտար ժողովուրդներին թալանելու յասակնութիւններով, բոլորովին ուրիշ բան է լինել պատերազմում յաղթած պետութիւնների հետ՝ ազգային-քաղաքական ինքնորոշման հասնելու միակ ձգտումով: Թուրքիան պայքար էր յայտարարել Անտանտային միայն խօսքով, իսկ գործնականում ոչ մի անգլիացու կամ ֆրանսիացու վրայ ոչ մի գնդակ չի արձակել:

Իրականում, քեմալական Թուրքիան սերտօրէն կապուած էր իտալական, ֆրանսիական, անգլիական եւ ամերիկեան

իմպերիալիստների հետ, որոնք լաւ հասկանալով Քեմալի յեղափոխական ֆրազների եւ Անտանտային պայքար յայտարարելու զուտ պրոպագանդիստական իմաստը, ռուսների աչքին թող փչելու համար, նոյնիսկ խրախուսում էին Քեմալին՝ այդ աչքակապութեան ներկայացման մէջ, ամէն կերպ ընդառաջում էին նրան, Թուրքիան ուժեղացնելու համար, որպէս ապագայ պլացդարմ եւ ֆորպոստ Սովետական Ռուսաստանի դէմ: Եւ նրանք չսխալուեցին իրենց ստրատեգիական եւ քաղաքական հաշիւների մէջ: Քեմալական Թուրքիան ամուր կապուեց եւ մնացել է մինչեւ օրս էլ կապուած ամենաագրեսիւ իմպերիալիզմի զինակառքին:

Իսկ Հայաստանը... Թէւ ձեւականօրէն Անտանտայի հետ էր կապուած, սակայն գործնականում մնաց լքուած Անտանտայի կողմից, մեծակ թուրքական իմպերիալիզմի դէմ-յանդիման, որի ճիրաններից հենց ձգտում էր ազատագրուել: Աւելին. Հայաստանը կտրելով յոյսն Անտանտայից, դիմեց Սովետական Ռուսաստանին, յոյս ունենալով, որ վերջինս՝ իր կողմից հուշակած ազգերի ինքնորոշման իրաւունքի դեկլարացիայի հիման վրայ կը ճանաչի Հայաստանի անկախութիւնը իր պատմական իրաւունքները պաշտպանելու համար: Հայաստանը պաշտպանութիւն չգտաւ ո՛չ Անտանտայից, ոչ էլ Սովետական Ռուսաստանից, թէւ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ երբեք չի ծագել կոնֆլիկտ, թշնամութիւն կամ մման որեւէ բան: Ընդհակառակը, այն ժամանակ, երբ սովետական իշխանութեանը Բաքում սպառնում էր թուրքական ագրեսիան, Հայաստանի (հենց Անտանտայի դաշնակից Հայաստանի) զինուած ուժերն էին կոմունիստների հետ կուում թուրք-գերմանական ագրեսորների դէմ, սովետական Բաքում պաշտպանելու համար: Սա՛ է պատմական ճշմարտութիւնը:

Բայց Քեմալ փաշայի «յեղափոխական» աչքակապութիւնն այստեղ խաղաց իր չարագործ դերը: Այդ ներկայացման շնորհիւ համաշխարհային յեղափոխութեան մասին բարձ-

րացրած պրոպագանդայի հեղեղի մէջ ջրահեղձ եղաւ ու էալ իրականութիւնը. միանգամից իրերն ու երեւոյթները ա՛յլ գոչներով երեւացին Մոսկուայում. երէկուայ թուրք զայթիչները նոյն փաշաների գլխատրոթեամբ որակուեցին «յեղափոխութեան դրօշակակիրներ Արեւելքում» եւ երոպական կոմունիզմի համար ուղի հարթողներ, իսկ Հայաստանը, որի միակ մեղքը «ինքնուրոյն իրաւունքի համար» ձգտումն ու պայքարն էր, յորջորջուեց որպէս «իմպերիալիզմի ագենտուրա», «Անտանտայի կապկապած շուն» (տես Պալովիչի մօտ), «Սովետական Ռուսաստանի թշնամի», «իմպերիալիստական ագրեսիա սանձազերծող» եւ այլն: Ստացուեց այնպէս, որ Հայաստանի գալթումը թուրքերի կողմից ճանաչուեց որպէս «արդարացի», գրեթէ «յեղափոխական» ակտ (տես Ա. Կարիճեան, Գ. Արով, Հ. Էլչիբէկեան եւ ընկ.), իսկ Հայաստանի ձգտումն՝ ինքնորոշուելու, միատրուելու, մի անկախ պետութիւն դառնալու համար, ընդհակառակը, յորջորջուեց որպէս «իմպերիալիստական գալթողական պլաններ», ուղղուած Թուրքիայի «սուվերէնութեան» դէմ եւ այլն (տես նոյն հեղինակների մօտ): Սա՛ է պատմական ճշմարտութիւնը:

Ս. Սկաչկոն հայերին խորհուրդ է տալիս ղեկավարուել Լենինի հռչակած սկզբունքներով, ազգային մեծագոյն զոհողութիւնների գնալ՝ յօգուտ համաշխարհային յեղափոխութեան յաղթանակի շահերի: Ծա՛տ լաւ, բայց ո՛ր էր յաղթանակի հեռանկարը, ի՛նչ եղաւ այդ յեղափոխութիւնը ոչ միայն Արեւմուտքում, այլեւ Արեւելքում... Այդ հեռանկարը միրած էր եւ ոչ թէ ու էալ իրականութիւն: Հայաստանի եւ հայ ժողովրդի շահերը՝ պատմական իրաւունքները զոհաբերուեցին այդ միրածին: Եւ ի զուր չէ՛ր արդեօք...

Աւելի լաւ չէ՛ր լինի, որ ինքը՝ Սկաչկոն, Ստալինը, պալովիչները, ռադեկները, զինովեւները, միլլերները եւ նրանց հայ աշակերտները նոյնպէս ղեկավարուէին Լենինի պատուիրաններով ու սկզբունքներով, թէ յեղափոխական ֆրակը չէ՛ կարե-

ւոր, այլ կատարած կոնկրետ գործը եւ ըստ այնմ էլ պէտք է դատել մարդկանց, քաղաքական կուսակցութիւնների եւ կառավարութիւնների մասին, թէ պատերազմը նախորդ տարիներից վարած քաղաքականութեան շարունակութիւնն է՝ ռազմական միջոցներով եւ այլն:

Քեմալ փաշայի, Ջեմալ փաշայի, Խալիլ փաշայի, Ֆուդր փաշայի խոստումների եւ «յեղափոխական» ֆրակների յետեւում հարկաւոր էր տեսնել նրանց գործարքն անգլօ-ֆրանս-ամերիկեան իմպերիալիստների հետ, թուրքական հորդանների գալթողական արիւնոտ պլաններն ու գործողութիւնները կողոպտումն ու յօշոտումն Հայաստանում եւ Անդրկովկասում, հարկաւոր էր հաշուի առնել, որ թուրքական փաշաները Հայաստանի վրայ արշաւելով, շարունակում էին զենքի ուժով իրականացնել իրենց դասակարգային նախկին հայացքին քաղաքականութիւնը, որ թուրքական փաշաները հենց միայն իրենց դասակարգային էութեամբ չէին ուզեցնալ յեղափոխութիւն կատարել՝ որովհետեւ անհեթեթութիւն է հաւատալ, որ թուրքական ֆեոդալները-կապիտալիստները-փաշաները պատրաստ էին ինքնասպանութիւն կատարել՝ տապալելով իրենց դասակարգային տիրապետութիւնը, որ ընդհակառակը, նրանք ամէն ջանք կը թափեն կոմունիստներին Տրապիզոնի մօտ ծովախեղդ անել... ինչպէս եւ վարուեցին Մուստաֆա Սուբհիի եւ իր զինակիցների հետ, հենց որ Քեմալ փաշայի «յեղափոխական» ակեալները գրաւելով Կարսը՝ շարժում էին դէպի Ալեքսանդրապոլ, այսինքն՝ երբ պարզուեց, որ Հայաստանը պարտում է, եւ ապահովումն է թուրք ֆեոդալների ու կապիտալիստների արիւնոտ լծի վերահաստատումը ոչ միայն Արեւմտեան Հայաստանում, այլեւ Արեւելեան Հայաստանի մի զգալի մասի վրայ եւս: Հարկաւոր է տեսնել այս արիւնոտ գործերը եւ դրանո՛վ միայն գնահատել փաշաների Թուրքիային եւ ոչ թէ հաւատալով յեղափոխական ֆրակների փոթորիկին՝ շտապել հռչակել Քեմալ փաշային «յեղափոխութեան դրօշակակիր Արեւելքում»:

Միաժամանակ հարկատր էր Լենինի սկզբունքներով ղեկավարուել Հայաստանի նկատմամբ սովետական կառավարության քաղաքականությունը մշակելիս:

Ի՞նչ քաղաքականություն կարող էր եւ վարել է իրականում Թուրքիայի եւ ցարիզմի լծի տակ ճնշուած եւ հարստահարուած իրաւագորկ Հայաստանը եւ հայ ժողովուրդը:

Միայն եւ միայն մի քաղաքականութիւն՝ թօթափել ստրկութեան շղթաները եւ հասնել ազգային-քաղաքական ինքնորոշման: Իսկ մարքսիզմ-լենինիզմը պահանջում է պաշտպանել այդպիսի ժողովուրդների պայքարը իրենց անկախութեան համար, որ նրանց կողմից մղուող պատերազմներն իրենց ստրկացրած բնակալութիւնների դէմ սրբազան, արդարացի պատերազմներ են, յեղափոխական պայքար:

Ինչո՞ւ, ուրեմն, Հայաստանի արդարացի պատերազմը թուրքական ջարդարարների եւ գաղութարարների լծից ազատուելու համար չպաշտպանուեց, այլ ընդհակառակը՝ դատապարտուեց Սովետական Ռուսաստանի կողմից: Աւելին. պահանջուեց, որ նոյնիսկ արդէն սոցիալիստական դարձած Հայաստանը մեծագոյն զիջումներ եւ ազգային զոհաբերութիւններ անի ոչ միայն հարեւան Սովետական Ադրբեջանին եւ Վրաստանին, այլեւ կապիտալիստական-բուրժուական-իմպերիալիստական Թուրքիային: Ո՞ր է այստեղ տրամաբանութիւնը եւ յեղափոխական սկզբունքայնութիւնը, ո՞ր մնացին Լենինի հոշակած սկզբունքները... Ով ցանկանում է հասկանալ, թէ ինչու նոյնիսկ մեր օրերում Միլլերը եւ ընկ. շարունակում են հանդէս գալ պատմագիտութեան մէջ որպէս Թուրքիայի ապուղեւտներ, թէ ինչու առանց հայ ժողովրդի կամքը հարցնելու նրա անունից պաշտօնական յայտարարութիւններ են արում Մոսկուայում Թուրքիայից հողային պահանջներ չունենալու մասին եւ այլն՝ նման հայ ժողովրդին ազգային շահերին հակառակ երեւոյթներ,— նա պետք է ուշադիր ուսումնասիրի Սկաշկոյի այս յօդուածը եւ նրա մէջ շարադրուած մտքերը, դրանց

լոյսի տակ նաեւ 1921 թ. Մարտի 16ին Մոսկուայում կնքուած սովետա-թուրքական պայմանագիրը «եղբայրութեան ու բարեկամութեան» մասին: Այն ժամանակ միայն հայ մարդը ի վիճակի կը լինի ըստ արժանույն գնահատելու եւ արժէքատրելու մի շարք հայ հրապարակախօսների, բանասերների ու պատմաբանների (Կարինեան, Աբով, Արզումանեան, Ղարիբջանեան, Էլչիբէկեան, Յովիկ Կարապետեան, Սարիբէկ Կարապետեան, Արտաշէս Ոսկերչեան, Արամայիս Կարապետեան, Բ. Օհանջանեան, Թաշիկ Բադաղեան եւ այլն) ազգային նիհիլիզմի եւ գոեհիկ սոցիոլոգիզմի ոգով գրուած գրական բալաստը:

Ս. Սկաշկոն իր յօդուածը վերջացնում է հետեւեալ տիրադասով, թէ «Անկարայի կառավարութիւնը գերազանց գիտէ, որ հայ-թուրքական թշնամանքը զուտ արհեստական երեւոյթ է, որն առաջացել է մեծ տէրութիւնների քաղաքականութեան հետեւանքով: Ցարական Ռուսաստանի անհետացումով եւ Անտանտայի ազդեցութիւնից Հայաստանի դուրս գալով, հայ եւ թուրքական թշնամանքի պատճառները վերանում են եւ ոչ մի հիմք չկայ սպասելու նրա շարունակուելուն»:

Մասնատրապէս հայ ընթերցողը չի կարող չնկատել, որ այստեղ յօդուածագիրը միակողմանի եւ սուբեկտիւ մեկնաբանութիւն է տալիս հայ-թուրքական թշնամանքի սկզբունքներին: Աւելին. ըստ էութեան, հեղինակն այդ երեւոյթի մասին շարադրել է, աւելի ճիշդ՝ արտայայտել է զուտ թուրքական կոնցեպցիա: Այդ Ձեմալ փաշան էր իր յուշերում զարգացնում այն միտքը, թէ հայ ազատագրական շարժումները, որոնք վատացրին հայ-թուրքական յարաբերութիւնները, իբր թէ չէին բխում Թուրքիայի տիրապետութեան տակ գտնուող հայերի վիճակից, քանի որ հայերը, իբր թէ, միշտ էլ գոհ են եղել Թուրքիայում իրենց վիճակից, այլ հետեւանք էին ոռուսական ցարիզմի «պրովոկացիաների»: Այդպէս են դատել նաեւ մի շարք հայ հրապարակախօսներ, պատմաբաններ, որոնք մեխանիկօրէն կրկնել են միայն թուրքական վերսիան, առանց խորամուխ լինելու այդ

վերսիայի սոցիալ-քաղաքական միտումներին: Այդպես դատել՝ ճշմանակում է կամ մակերեսային մօտեցում ցուցաբերել հայ ազգային-ազատագրական շարժումների առաջացման սոցիալ-քաղաքական և պատմական պատճառները բացայայտելու խնդրին, կամ բացարձակապես անընդունակ լինել հասկանալու թուրքական բռնակալութեան արհմտ քաղաքականությունը քրիստոնեայ հպատակների նկատմամբ. կամ էլ՝ միտումնաւոր կերպով ֆալսիֆիկացիայի ենթարկել պատմական իրականությունը:

Վերջինը վերաբերում է առաջին հերթին թուրքական պաշտօնական պատմագրութեանը և թուրքիայի ապոլոգետներ պալովիչներին, միլլերներին և ընկ., որոնք քաղաքական պատուերներից և հաշիւներից էլնելով գիտակցաբար կեղծում են պատմությունը:

Նրանց կոնցեպցիային շարող հայերը միայն կուրօբէն կրկնում են նրանց: Իրականում պատմական ճշմարտությունն այն է, որ հայ ազգային-ազատագրական շարժումները նախ և առաջ հետեւանք էին տնտեսական, քաղաքական հարստահարությունների, բռնությունների և կամայականությունների, որոնց ենթարկուած էր հայ ժողովուրդը թուրքական բարբարոսական կարգերում: Հայ ժողովրդի ազգային զարթօնքը կապուած էր Եւրոպայի առաջատար երկրների բուրժուա-դեմոկրատական յեղափոխությունների գաղափարախօսութեան և Ռուսաստանում ու Թուրքիայում աստիճանաբար ձեւակերպուող կապիտալիստական նոր արտադրաշարաբերությունների հետ, բնականաբար ծնում և հասունացնում էր ազատագրական գաղափարախօսություն և շարժում: Մեծ տերությունները ձգտում էին օգտագործել ճնշուած ժողովուրդների հակաթուրքական շարժումները և ոչ թէ առաջ էին բերում ազատագրական շարժումներ:

Սկաշկոչի մեկնաբանութեան համաձայն, մեծ տերությունների քաղաքականությունն է ծնել Արովեանին, Նալբանդեանին, Պատկանեանին, Բաֆֆուն, Արծրունուն, որ այս մեծ

մտածող, հայրենասէր և ազատատենչ գործիչների քարոզած գաղափարները չեն, որ առաջ են բերել ազգային-ազատագրական շարժումներ, այլ մեծ տերությունների քաղաքականությունը:

Հենց այդպես էլ գրում է տիւրահոշակ Միլլերը: Այստեղ անհերթելությունը գերազանցում է ինքն իրեն: Ուստի ևս անելորդ է երկար կանգ առնել այդ խնդրի վրայ:

Այստեղ միաժամանակ բխում է այն յոռետեսությունը, որը յարուցում է իր մէջ Սկաշկոչի երկրորդ միտքը, թէ ցարական Ռուսաստանի անհետացումով և Անտանտայի ազդեցութիւնից Հայաստանի դուրս գալով, իբր թէ վերանում են հայ-թուրքական թշնամանքի պատճառները: Լա կը լինէր, ի հարկէ, եթէ այդպես լինէր: Բայց, դժբախտաբար, այդպես չէ իրականում, քանի որ այդ թշնամությունը ծնող հիմնական պատճառը չի վերացել:

Երբ Հայաստանը կ'ազատագրուի թուրքական գերությունից, միայն այն օրը կարող են պայմաններ ստեղծուել, որպէսզի այլեւ շարունակուի հայ-թուրքական թշնամությունը: Այլապէս ինքնախաբէություն և կեղծիք կը լինի այդ թշնամանքի վերացման մասին ամէն մի յուսադրական յայտարարութիւն:

Հենց այդպիսի սնամէջ յայտարարություններ են Սկաշկոչի յուսադրական խօսքերը, թէ յառաջիկայ կոնֆերանսը, իբր թէ, վերջ կը դնի «բոլոր թիրիմացություններին և կը կոփի նրան մասնակից բոլոր պետությունները՝ անխաղի բարեկամութեան ամուր շղթայով», թէ այն ժամանակ Արեւելքում յեղափոխութեան համար կը բացուի աշխարհը կեղեքող իմպերիալիզմի նկատմամբ նոր, փայլուն, անընդհատ յաղթանակների դարաշրջանը, թէ դրանով սկիզբ կը դրուի «Կովկասի, Վրաստանի, Հայաստանի, Անատոլիական Թուրքիայի սովետական ֆեդերացիայի ստեղծմանը... ֆեդերացիա, որը հանդիսանում է այն միջուկը, որի շուրջը մօտ ժամանակներում համախմբուելու են նաև Արեւելքի ուրիշ պետություններ», թէ «Թուրքիայի համար հարց է բարձրանում արդէն ոչ թէ Հայաստանի դէմ պայքարելու

մասին, այլ միատրման մասին՝ իմպերիալիզմի դեմ ընդհանուր պայքարի համար» եւ այլն, որոնցմով վերջանում է նրա յօդուածը:

Պատմութիւնը սառը ջուր լցրեց այս բոլոր սնամէջ յոյսերի վրայ: Թուրքիան մնաց նոյն գիշատիչը, իսկ Հայաստանը՝ նրա արինաթաթախ գոհը, յանուն յեղափոխութեան եւ թուրքական կոմունիզմի միրածի: Եթէ մի կողմ նետենք յեղափոխութեան ֆրագի վարագոյրը, ապա կ'երեւայ զարհուրելի ճշմարտութիւնը՝ թուրքական իմպերիալիզմի եւ Սովետական Ռուսաստանի զինակցութիւնը Հայաստանի անկախութեան ոչնչացման եւ նրա տերիտորիան բաժանելու համար: Անտանտայի տերութիւնները վստահ չէին, թէ նոյնիսկ մեծ Հայաստանը երթեւէ կը ծառայի որպէս պլացդարմ Սովետական Ռուսաստանի դէմ: Այդ պատճառով էլ նրանք գերադասեցին ունենալ ուժեղ Թուրքիա, ուստի եւ խրախուսեցին Քեմալին:

Ծանօթ.— Քեմալը պարտքի տակ չմնաց: Հենց Լօզանում երես շրջեց Սովետական Ռուսաստանից եւ փաստօրէն միացաւ Անտանտային, համաձայնուելով Սեւ ծով թողնել օտարերկրեայ ռազմականեր: Միակ հարցը, որի համար Չիչերինը Լօզան էր գնացել եւ յոյս ունէր ստանալ Թուրքիայի համաձայնութիւնը՝ թոյլ չտալ նեղուցների ռեժիմը մշակելիս օտարերկրեայ ռազմակաների մուտքը Սեւ ծով, հաւատացած լինելով, որ Հայաստանին եւ Յունաստանին ջախջախելու համար ցոյց տուած ֆինանսական եւ ռազմական օգնութեան դիմաց դաշնակից Թուրքիան կը պաշտպանի իր հաւատարիմ դաշնակից եւ հովանաւորող Ռուսաստանին: Բայց Քեմալն այլեւս Սովետական Ռուսաստանի կարիքը չուներ, նրանից արդէն ստացել էր, ինչ որ պէտք էր, ուստի միացաւ Անգլիային, ընդդէմ Սովետական Ռուսաստանի: Ահա եւ քեզ «յեղափոխական Թուրքիա»:

Ն. Վ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Բ.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԱԿՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՕՏԱՐՈՒԱԾ ԵՐԿՐԱՄԱՍԵՐՈՒՄ

Նախիջեւանը, Լեոնային Ղարաբաղը եւ նրա յարակից միւս հայկական շրջանները Սովետական Հայաստանից կտրելու եւ բռնի կերպով Սովետական Ադրբեջանի կազմի մէջ մըտցնելու իրական պատմութիւնը հասկանալու եւ ճիշդ ներկայացնելու համար, պէտք է առաջին հերթին հաշուի առնել Անգլոփրկովկասում սովետական իշխանութեան հաստատմանը նախորդած տարիներին ստեղծուած իրավիճակը, ազգային եւ քաղաքական ուժերի յարաբերակցութիւնը:

Անգրկովկասն այդ ժամանակամիջոցում իմպերիալիստական, դասակարգային, ազգային-կրօնական հակասութիւնների մի խճճուած հանգոյց էր, որտեղ արինափեղութիւնների, քաղաքական դատերի եւ օտարերկրեայ զինուած միջամտութիւնների օգնութեամբ տեղի էր ունենում ազգային հողային սահմանագծումների բռնի գործողութիւն: Ընդ որում, պատմական ամբողջ ընթացքը գործում էր հայ ժողովրդի դէմ, որն ամենահոծ ու տարածուած զանգուածն էր կազմում Անգրկովկասում: Նրա վիճակը պարզապէս ողբերգական էր: Նա կանգնած էր ֆիզիքական լրիւ բնաշնչման վտանգի առջեւ:

Հայ ժողովուրդը ոչ միայն դարձաւ ցեղասպանութեան առաջին զոհը, այլև մէկը միւսի ետեւից կորցրեց իր ասանդական հողերը, որոնց վրայ նա դարերից ի վեր բնակութիւն էր հաստատել: Նրա դէմ կազմուել էր մի ընդհանուր ճակատ, որտեղ յատկապէս մեծ եռանդով էին գործում թուրք բարբարոսները եւ նրանց մուսաաթ արինակիցները:

Թուրք զարթոյններն Անդրկովկաս էին փոխադրել արդէն Արեւմտեան Հայաստանում կիրառած ցեղասպանութեան յանցագործ մեթոդները, ձգտելով իրենց մեղասակիցների օգնութեամբ ոչնչացնել հայերի վերջին մնացորդները, որոնք լուրջ արգելք էին հանդիսանում պանթուրանական աշխարհակալ նկրտումների ճանապարհին: Աւելի յաճախակի էին հնչում ադրբեջանական ու թրքական ժողովուրդների արինակցական, լեզուական, պատմական եւ կրօնական միասնութեան մասին կոչերը, շեշտում հոսֆորից մինչեւ Միջին Ասիա գտնուող թրքալեզու բնակչութեանը մէկ ընդհանուր հզօր պետութեան մէջ միաւորելու անհրաժեշտութիւնը:

Անդրկովկասում 1918-1920 թուականների իրադարձութիւնները ցոյց տուեցին, որ Սովետական Ռուսաստանի դէմ ուղղուած հրէշատր այդ աշխարհակալ ծրագիրները բոլորովին էլ դատարկ խօսքեր չէին: Իրենց ճանապարհին նրանք բնաջնջում էին հայ ժողովրդին, որն իր բախտը ընդմիջտ կապել էր ռուս ժողովրդի հետ, արիւնով ներկում Բաքու, Գանձակ, Ծուշի քաղաքները, Նախիջեւանը եւ հայաբնակ այլ վայրերը, օգտագործում եւ միմեանց հետ կոտեցնում Անդրկովկասի հակալեղափոխական ուժերը:

Զախշախիչ պարտութիւն կրելով Արեւմուտքում եւ օգտուելով Սովետական Ռուսաստանի թուլութիւնից ու խառը իրավիճակից, Թուրքիան նետում էր դէպի Արեւելք եւ նոյնիսկ չէր թաքցնում իր արեւելեան քաղաքականութեան նուաճողական էութիւնը: Այսպէս, Անդրկովկասեան Սէյմի ներկայացուցիչների հետ ունեցած բանակցութիւններում (1918, Բաթում)

թրքական բանակի հրամանատար Վէհիբ փաշան, դիմելով հուլիական ներկայացուցչին, հաղորդում է.

«Դուք տեսնում էք, որ ճակատագիրը մեզ Արեւմուտքից Արեւելք է մղում: Մենք հեռացանք Բալկաններից, հեռանում ենք Աֆրիկայից, բայց մենք պէտք է ձգտենք դէպի Արեւելք, այնտեղ մեր արիւնն է, մեր կրօնը եւ լեզուն: Եւ այդ ձգտումն ունի տարերային բնոյթ, մեր եղբայրները գտնում են Բաքում, Կաղստանում, Թուրքեստանում եւ Ադրբեջանում: Մեզ անհրաժեշտ է ճանապարհ այդ կողմի վրայ: Եւ դուք, հայերդ, կանգնած էք մեր ճանապարհին: Պահանջելով Վանը, դուք փակում էք մեր ճանապարհը դէպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջեւանը եւ Զանգեզուրը, դուք խանգարում էք մեզ իջնել Կուր գետի հովիտը եւ Բաքու: Կարսը եւ Ախալքալաքը փակում են մեր ճանապարհը դէպի Ղազախ եւ Գեանջա: Դուք պէտք է մի կողմ քաշուէք եւ մեզ ճանապարհ տաք:

Ահա թէ ինչո՞ւմն է հիմնական վեճը:

Նոյնը կրկնում էր Զեմալ փաշան. «Մենք հեռացնում ենք մեր ճանապարհից այն ամէնը, ինչ խանգարում է հասնելու մեր նպատակներին: Դուք միշտ եղել էք ռուսների հետ, իսկ ռուսները իր հանդիսանում են մեր ռիսկիւմ թշնամիները»:

Այդ չափազանց բարդ ու լարուած իրադրութեան պայմաններում, հայ ժողովրդի միակ անշահախնդիր պաշտպանը Լուվետական Ռուսաստանն էր, որը ինքը ծանր կացութեան մէջ յինելով՝ օգտագործում էր բոլոր հնարատր միջոցները՝ Արեւմրտեան Հայաստանը եւ հայ ժողովրդին փրկելու համար:

Մինչդեռ Դաշնակցութիւնը չցանկացաւ Հայկական Հարցում ազնուօրէն մինչել վերջ համագործակցել Սովետական Ռուսաստանի հետ եւ իր տատանողական ու հաշտողական ազգակործան քաղաքականութեամբ տապալեց հայ ժողովրդի փրկութեան համար այդ ժամանակ ստեղծուած միակ հնարատրութիւնը:

Ամէնից վճռական պահին, երբ վտանգ էր սպառնում

Սովետական Ռուսաստանից բռնի կերպով անջատելու Անդրկովկասի առանձին շրջանները, հաչ ժողովրդի ազգային հերոս Անդրանիկը իր ջոկատով մտնում է Նախիջեանի գաւառ եւ 1918 թուականի Յուլիսի 14ի հրամանով այն յայտարարում Ռուսաստանի անբաժանելի մասը: «Հանրապետութեան կառավարութեան իշխանութիւնը չճանաչողները կամ նրա թշնամիներին աջակցողները, — նշում է հրամանում, — կը դիտուեն որպէս Ռուսաստանի դաւաճաններ» (Տես «Հայաստանի Արխիւների Բանբեր», 1965, N° 1):

Միաժամանակ նա այդ մասին հետագրով հաղորդում է Կովկասի արտակարգ կոմիսար Ս. Ծահումեանին եւ խնդրում տեղեկացնել, որ ինքը իր ջոկատով ամբողջապէս գտնում է Ռուսաստանի կենտրոնական կառավարութեան տրամադրութեան տակ եւ ենթարկում նրան (Տես Ա. Ի. Միկոյեան, «Պայքարի Ծանապարհով», Մոսկուա, 1971, էջ 42, ռուսերէն):

Սովետական Ռուսաստանի եւ Հայաստանի դաշնակցական կառավարութեան միջեւ 1920 թ. Օգոստոսի 10ին Թիֆլիսում ստորագրուած համաձայնագրում նշում էր, որ Ղարաբաղը, Զանգեզուրը եւ Նախիջեանը ժամանակատրապէս գրաւում են ռուսական զօրքերի կողմից:

«ՌՍՖՍՀի այդ ժամանակատր գրաւումով նկատի էր առնում ստեղծել բարենպաստ պայմաններ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հողային վեճերի խաղաղ լուծման համար այն սկզբունքների հիման վրայ, որոնք պէտք է սահմանուէին մօտիկ ապագայում ՌՍՖՍՀ եւ Հայաստանի հանրապետութեան միջեւ կնքուելիք խաղաղութեան պայմանագրով» (Տես «Հոկտեմբերեան Մեծ Յեղափոխութիւնը եւ Սովետական Իշխանութեան Յաղթանակը Հայաստանում», Երեւան, 1967):

Այդ հարցերը լուզում էին նաեւ Ս. Մ. Կիրովին, որ այն ժամանակ եղել է ՌՍՖՍՀ լիազօր ներկայացուցիչը Մեծշէտիկեան Վրաստանում: Վ. Ի. Լենինին ուղղուած իր նամակում (1920 թ. Օգոստոսի 20ին) նա գրում է.

«Վերջում կ'ուզենայի Ձեր ուշադրութիւնը հրաւիրել Հայաստանի նկատմամբ մեր վերաբերմունքը հնարատրին չափ շուտափոյթ որոշելու անհրաժեշտութեան վրայ: Այդ հարցը մեզ համար այստեղ ունի չափազանց մեծ նշանակութիւն: Մուսուլմանական եւ հայկական մասսաները որոշակիօրէն յուսախար կը լինեն, եթէ Սովետական Ռուսաստանը վերջնականապէս չլուծի նրանց համար տանջալի հարցը: Այդ մասին ես բազմիցս հաղորդել եմ Չիչերինին, բայց Մոսկուայում հայկական պատգամատրների հետ վարուող բանակցութիւններից այժմ հաւանօրէն ոչինչ չի ստացում: Այնուամենայնիւ, հարցն ինչ որ կերպ պէտք է լուծել» (Ս. Մ. Կիրով, «Յօդուածների եւ Ծառերի ժողովածու», Մոսկուա, 1937 թ., էջ 56-57, ռուսերէն):

Նոյն խնդրանքով դիմելով Գ. Վ. Չիչերինին, նա գրում է. «Այստեղ քաղաքական իրադրութեան մէջ միւս բնորոշ խընդիրը հայկական հարցն է: Այն ամէնը ինչ կարելի էր ձեռնարկել Ձեր հրահանգը անցկացնելու համար, իմ կողմից արուել է: Ցաւօք, արդիւնքը ողբալի է, գործը ոչ մի քայլ առաջ չի շարժուել...: Ստեղծուած դրութիւնից միակ ելքը՝ Մոսկուայում այդ հարցի հաստատուն լուծումն է, միայն նրա հեղինակութիւնը կարող է լուծել գործը:

Չպէտք է հարցի լուծումը դանդաղեցնել, քանի որ վիճելի մարզերում տեղի ունեցող անընդհատ ընդհարումները, սիստեմատիկ կոտորածները՝ այդ ամէնը ահատր կերպով վարկաբեկում են մեր քաղաքականութիւնն այստեղ: Այդ բոլորը վերագրում են կա՛մ մեր չար մտադրութիւններին, կա՛մ մեր անճառակութեանը» (Ս. Մ. Կիրով, «Յօդուածներ, ճառեր, փաստաթղթեր», Հատ. 1, Մոսկուա, 1936, Բ. հրատ., էջ 231, ռուսերէն):

Ուշագրաւ է նաեւ հետեւեալ հանգամանքը: Ս. Մ. Կիրովն արդէն Սովետական Ադրբեջանի մի խումբ ղեկավար աշխատողների հետ ունեցած իր հանդիպումներից ու գրոյցներից գալիս է այն եզրակացութեան, որ նրանք չեն ցանկանում Նա-

խիջեւանի գաւառը, Օրդուբադը, Ջանգեզուրը եւ Ղարաբաղը վերադարձնել Հայաստանին, պատճառաբանելով, որ «այդ մարզերը մուսաւթական կառավարութեան ժամանակ պատկանել են Ադրբեջանին» (նոյն տեղում, ընդգծումը մերն է):

Հողային հարցերը յատուկ նամակագրութեան առարկայ են դարձել նաեւ արտաքին գործերի ժողկոմ Գ. Վ. Չիչերինի եւ դաշնակցական Հայաստանում ՌՍՖՍՀ լիազօր ներկայացուցիչ Բ. Վ. Լեգրանի միջեւ: Վերջինս նոյնպէս գտնում էր, որ «վիճելի» շրջանները պետք է մտնեն Հայաստանի կազմի մէջ:

1920 թ. Նոյեմբերի 29ին սովետական կարգեր հաստատուեցին նաեւ ամբողջ Արեւելեան Հայաստանում: Եւ ամա այս լուրն առնելով՝ յաջորդ օրն իսկ Ադրբեջանի խորհրդային Յեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի ու արտաքին գործոց ժողովրդական կոմիսար Հուսէյնովի ստորագրութեամբ Հայաստանի Յեղկոմին յղուեց հետագիր, որի մէջ մասնատրապէս գրուած է. «Այսօրուանից Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ եղած սահմանային վեճերը յայտարարում են վերացուած: Լեռնային Ղարաբաղը, Ջանգեզուրը եւ Նախիջեւանը համարում են Հայաստանի սոցիալիստական հանրապետութեան մի մասը» («Կոմունիստ» հայերէն թերթ, 1920 թ. Դեկտ. 7, N° 2):

Այս հետագիրը, համապատասխան մեկնաբանութիւններով, Ադրբեջանի Յեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի կողմից, իբրեւ յայտարարութիւն, հրապարակուել է Դեկտեմբերի 1ին գումարուած Բաքուի Խորհրդի հանդիսատր նիստում:

Ադրբեջանի Յեղկոմի յայտարարութիւնը ողջունել են 11րդ բանակի ռազմայեղափոխական խորհրդի կողմից Միխայլովը, ՌՍԴ(բ) Կենտկոմի կողմից Կամենսկին, իսկ Ս. Գ. Օրջոնիկիձէն Ադրբեջանի Յեղկոմի յայտարարութիւնը համարել է ժողովուրդների միջազգային եղբայրութիւնը հաստատող մեծագոյն պատմական երեւոյթ. «Այստեղ ընթերցուած այս ակտը մեծագոյն կարեւորութիւն ունեցող ակտ է, պատմական ակտ,

որն իր նմանը չունի մարդկութեան պատմութեան մէջ» (Ս. Գ. Օրջոնիկիձէ, «Յօդուածներ եւ ճառեր», Հատ. 1, Մոսկուա, 1956, էջ 141, ռուսերէն):

Դեկտեմբերի 2ին Օրջոնիկիձէն հեռագրեց Լեւինին. «Երէկ Ադրբեջանը արդէն յայտարարեց Նախիջեւանը, Ջանգեզուրը եւ Լեռնային Ղարաբաղը Սովետական Հայաստանին յանձնելու մասին» (նոյն տեղում, էջ 142):

Ն. Նարիմանովի հռչակած յայտարարութեան առթիւ Բաքուի Խորհրդի հանդիսատր նիստի անունից հրապարակուել է հետեւեալ յայտարարութիւնը.

«Բաքուի Խորհրդի եւ Ադրբեջանի Յեղկոմի հանդիսատր նիստը, բոլոր բանուորների եւ կարմիր գուարդիականների կազմակերպութիւնների հետ միասին, պրոլետարական ուրախութեան անկեղծ զգացումով շեշտում է խորհրդային լեղափոխութեան յաղթանակը Հայաստանում, շնորհատրում եւ ամբողջովին հաւանութիւն է տալիս ընկ. Նարիմանովի հռչակած պատմական յայտարարութեանը, որով մէկընդմիջտ ի չիք են դառնում Հայաստանի եւ մուսուլման աշխարհի միջեւ եղած ազգային վեճերը, արիւնահեղ պատերազմները եւ բաց անում Անդրկովկասի ու ամբողջ Արեւելքի ժողովուրդների համար երջանիկ կեանքի նոր էջ» («Կոմունիստ», 1920, Դեկտ. 9, N° 3):

Ողջունելով Հայաստանում սովետական կարգերի հաստատման եւ նրա հողային նուազագոյն ամբողջականութեան հաստատման փաստը, Սովետական Ռուսաստանի կառավարութեան կողմից Ի. Ստալինը յղել է հետագիր՝ արձանագրելով Սովետական Ադրբեջանի արդարացի քայլը. «Դեկտեմբերի 1ին Սովետական Ադրբեջանը կամատր հրաժարում է վիճելի գաւառներից եւ յայտարարում է Ջանգեզուրի, Նախիջեւանի ու Լեռնային Ղարաբաղի տալը Սովետական Հայաստանին» («Պրաւդա», Դեկտ. 4, 1920, նաեւ՝ Ի. Ստալին, «Երկեր», Հատ. 4, Մոսկուա, 1947, էջ 414, ռուսերէն):

ՌԿ(բ) Անդրկոմի քիւրոն 1921 թ. Մայիսի 2ին Ս. Կիրո-

վի նախագահությամբ ստեղծում է յատուկ յանձնաժողով Անդրկովկասի սովետական հանրապետությունների սահմանները որոշելու համար: Առաջին իսկ նիստում Հայկական ՍՍՀ ներկայացուցիչ Ա. Բեկզադեանը յայտարարեց, որ սահմանները որոշելիս անհրաժեշտ է հաշուի առնել ցարական իշխանության ժամանակ Անդրկովկասի վարչական անարդարացի բաժանումը եւ Սովետական Հայաստանի բացառիկ ծանր դրությունը եւ «Ցանուն ընդհանուր համերաշխության, յանուն մէկընդմիջտ ամենաանկեղծ, բարեկամական փոխշարաքերութիւնների, կատարել յայտնի հողային զիջումները, ընդ որում՝ այն շրջաններում, որոնք միաձոյլ բնակեցուած են հայկական բնակչութեամբ»:

Այդ զիջումները, շարունակում է Ա. Բեկզադեանը, մասնատրապէս վերաբերում են Ախալքալաքի գաւառին, որտեղ բնակչութեան 72 տոկոսը հայեր են, այսպէս կոչուած Լոռու շէգոք գօտուն, որտեղ գրեթէ ամբողջովին հայեր են բնակում, բայց գրաւուել է մենշտեիկեան Վրաստանի կողմից, Լեոնային Ղարաբաղին, որտեղ բնակչութեան 94 տոկոսը կազմում է հայութիւնը: Ընդ որում՝ Բեկզադեանը նշում է, որ իր եւ Միսանիկեանի հետ զրոյցի ժամանակ այդ տեսակէտը լիովին բաժանում է նաեւ Ստալինը (այս եւ միւս արխիւային փաստաթղթերը հիմնականում բերուած են Ս. Խ. Խարմանդարեանի «Լենինը եւ Անդրկովկասեան Ֆեդերացիայի ստեղծումը» գրքից. «Հայաստան հրատ., 1969, էջ 101-108, ուսերէն»):

Հայկական ՍՍՀ հողային կազմաւորման մասին ասում է նաեւ ՌՍՖՍՀ Արտաքին գործերի ժողկոմատի 1920-21 թ.թ. տարեկան հաշուետուութիւնում, որը ներկայացուել է Խորհուրդների 9րդ համագումարին. «Դեկտեմբերի 2ին, Հայաստանում ՌՍՖՍՀ լիազօր ներկայացուցիչ Լեգրանի կողմից. Հայաստանի անկախ սոցիալիստական սովետական հանրապետութիւն հռչակելու մասին ստորագրուած համաձայնագրում որոշուել է նաեւ տերիտորիան՝ Էրիւանի նահանգը, Կարսի մի

մասը, Չանգեզուրի գաւառը, Ղազախի գաւառի մի մասը եւ Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք մինչեւ 1920 թուականի Դեկտեմբերի 28ը եղել են Հայաստանի տնօրինութեան տակ: 1921 թուականի Յուլիսին համաձայնագիր է կնքում Ադրբեջանի հետ Լեոնային Ղարաբաղի վերաբերեալ, որը մտցում է Սովետական Հայաստանի կազմի մէջ» («ՍՍՀՄ արտաքին քաղաքականութեան փաստաթղթերը», Մոսկուա, 1960, Հատ. 4, էջ 711, ուսերէն):

Դէպքերը զարգանում էին իրենց բնական ու տրամաբանական ընթացքով: Ամիսներ անց, երկրի ներքին հրատապ հարցերը լուծելուց յետոյ, Սովետական Հայաստանի կառավարութիւնն անդրադարձաւ Լեոնային Ղարաբաղին՝ հրապարակելով հետեւեալ հրամանագիրը.

«Ադրբեջանի սոցիալիստական խորհրդային հանրապետութեան Յեղկոմի յայտարարութեան եւ Հայաստանի ու Ադրբեջանի սոցիալիստական խորհրդային հանրապետութիւնների կառավարութիւնների միջեւ եղած համաձայնութեան հիման վրայ յայտարարում է, որ Լեոնային Ղարաբաղն աշտըմուանից կազմում է Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետութեան անբաժան մասը»:

Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետութեան
Ժողկոմների խորհրդի նախագահ՝ Ա. Միսանիկեան
(Ալ. Մարտունի)

Քարտուղար՝ Մ. Ղարաբէկեան
1921 թ. Յունիսի 12, Երեւան

Թում է՝ լուծուած էր հարցը, վերջ էր տրուել հայ ժողովրդի մի խոշոր հատուածի պատմական նակատագրի վրայ կատարուած անարդար խաղին, մանաւանդ, երբ հրամանի հետ միաժամանակ յայտնի էր դարձել, որ Անդրերկրկոմի յատուկ կարգադրութեամբ Յունիսի 25ին Թիֆլիսից Լեոնային Ղարաբաղ են ուղեւորուել Հայաստանի կառավարութեան արտակարգ

լիազօր Ասքանազ Մուսեանը եւ Ադրբեջանի կառավարութեան ներկայացուցիչ Ասադ Կարաւեր՝ տեղում կարգաւորելու երկրամասը Հայաստանի կազմի մէջ մտցնելու հանգամանքները:

Սակայն Ելլախ կայարանում Կարաւեր Մուսեանին յայտնում է, որ Բաքուից կարգադրուած է, որպէսզի իրենք երկուսով գնան Բաքու՝ Նարիմանովի հետ հարցերը տեղում լուծելու համար: Մուսեանը հրաժարում է այդ շնախատեսուած ճանապարհորդութիւնից եւ նոյն օրը (Յունիսի 25ին) յատուկ սուրհանդակի միջոցով հենց Ելլախից Օրջոնիկիձէին գրում է, որ «Լեոնային Ղարաբաղի հարցի ամենաշտապ ու աներկդիմի լուծումն ունի վիթխարի կարեւորութիւն ունեցող քաղաքական նշանակութիւն... հետագայ ձգձգումը միայն յաղթաթուղթ է մեր թշնամիների ձեռքում» (ՄԼԻ-ի ԿԿԱ, ֆ. 85, գործ 14, ծրար 141, թ. 4):

Ամենայն հաւանականութեամբ, Կիրովն ու Օրջոնիկիձէն արդէն տեղեակ էին Ղարաբաղի հարցում Նարիմանովի դիրքի փոխուելուն եւ հակատրամաբանական վճիռները կանխելու համար նրանք հեռագրեցին Ադրբ. Յեղկոմի նախագահին: Այս հեռագրում արտայայտութիւն է գտել երկու աննկուն յեղափոխականների անհանգստութիւնը Ղարաբաղի եւ շրջակայ շերջանների հայ բնակչութեան ճակատագրի համար:

Հեռագրում ասուած է. «Հայաստանի հետ սահմանների մասին բանակցութիւնների ընդհատումը, Զանգեզուրում տիրող իրադրութեան պայմաններում, կը ստեղծի ծայրայեղ անձեռընտու տպաւորութիւն... Խնդրում ենք շտապ հրաւիրել Քաղբիւրօ (Ադրբ. Կ(բ) Կ ԿԿի), Ժողկոմխորհի (Ադրբ. ՍՍՀ) եւ լուծել Ղարաբաղի հարցն այնպէս, որպէսզի վաղը՝ Յունիսի 27ին, հնարատր լինի ասարտել բանակցութիւնները: Եթէ հետաքրքրուում էք մեր կարծիքով, ապա այն հետեւեալն է. ի շահ բոլոր բախումները վերջնականապէս լուծելուն եւ իսկական բարեկամական յարաբերութիւններ հաստատելուն՝ Լեոնային Ղարաբաղի հարցը լուծելիս պէտք է ստաջնորդուել այսպիսի սկզբ-

բունքով. ոչ մի հայկական գիղ չպէտք է միացուի Ադրբեջանին, ինչպէս եւ ոչ մի մահմեդական գիղ չի կարելի միացնել Հայաստանին» (ՄԼԻի ԿԿԱ, ֆ. 65, գործ 18, ծրար 229, թ. 1-2):

Նոյն օրը Ադրբ. Կ(բ) Կ Քաղբիւրօն եւ Ադրբ. Ժողկոմխորհը ընդունել են որոշում այն մասին, որ համաձայն չեն Լեոնային Ղարաբաղը Հայկ. ՍՍՀին վերադարձնել՝ ելնելով, իբր թէ, տնտեսական ու վարչական աննպատակայարմարութիւնից, որ՝ նոյն պատճառով դէմ են նաեւ հայկական ու ադրբեջանական բնակավայրերը հանրապետութիւններին ըստ ցեղային պատկանելիութեան կցելու սկզբունքին: Անմիջապէս էլ Նարիմանովը յայտնել է, թէ Լեոնային Ղարաբաղը Հայկ. ՍՍՀին տրուելու դէպքում Ադրբ. ՍՍՀ «Ժողկոմխորհը հրաժարում է պատասխանատուութիւնից», քանի որ հակառակ դէպքում «Մենք Ադրբեջանում ոտքի կը կանգնեցնենք... հակաաւտտական խմբերին...» (ՄԼԻի ԿԿԱ, ֆ. 64, գործ 2, թերթ 7, թ. 13):

Հասկանալի է, ուրեմն, որ Ադրբեջանում եւ նրա սահմաններից դուրս այն ժամանակ գործում էին «հակաշեղափոխական խմբեր» եւ վերջիններիս ճնշման տակ Ադրբեջանի կառավարութեան ղեկավարը հրաժարուել էր Բաքուի Խորհրդի հանդիսատր նիստում հոշակած ու դրանից յետոյ էլ քանի-քանի անգամ հրապարակած յայտարարութիւնից ու պահանջել Լեոնային Ղարաբաղը թողնել Ադրբ. ՍՍՀ կազմում՝ սպառնալով հակառակ դէպքում պատասխանատուութիւնը դէն գցել իր կառավարութեան վրայից:

Յուլիսի 4ին Անդրերկրկոմի բիւրօն, բիւրոյի բոլոր անդամների (Օրջոնիկիձէ, Կիրով, Միասնիկեան, Նարիմանով, Օրախելաշիլի, Մախարաձէ, Ֆիգատներ, Նազարեթեան) եւ յատուկ այդ նիստին հրաւիրուած Ի. Ստալինի մասնակցութեամբ, քննել է Լեոնային Ղարաբաղի հարցը եւ ձայների մեծամասնութեամբ որոշել՝ Լեոնային Ղարաբաղը մտցնել Հայկական ՍՍՀ կազմի մէջ. «կողմ» քուէարկել են Օրջոնիկիձէն, Կիրովը, Միասնիկեանը, Ֆիգատները, Նազարեթեանը: Օրա-

խելաշիլին չի մասնակցել քուէարկութեանը, եւ Նարիմանովն ու Մախարաձէն «դէմ» են քուէարկել (ՄԼԻԻ ԿԿԱ, ֆ. 64, գործ 2, թղթապանակ 1):

Սակայն այս որոշումից յետոյ Ն. Նարիմանովը կատարել է հետեւեալ յայտարարութիւնը. «Նկատի առնելով այն կարեւորութիւնը, որ Ղարաբաղի հարցն ունի Ադրբեջանի համար, անհրաժեշտ եմ համարում այն յետաձգել ՌԿ (բ) Կ Կենտկոմում վերջնականապէս լուծելու» (նոյն տեղում, գործ 1, թ. 117-118):

Ցաջորդ օրը (Յուլիսի 5ին), առանց սպասելու ՌԿ (բ) Կ Կենտկոմի քննարկմանը կամ գոնէ նրանից ստացուած կարծիքին, առանց հարցը վերաքննելու կամ նոյնիսկ քուէարկութեան դնելու, Անդրերկրկոմը «որոշում է» ընդառաջել Ն. Նարիմանովի պահանջին ու Լեոնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ՍՍՀ կազմում: Այստեղ արդէն սարքում է նաեւ նման որոշման հիմքը. «Ելնելով մահմեդականների ու հայերի միջեւ ազգային խաղաղութեան անհրաժեշտութիւնից եւ վերին ու դաշտավայրային Ղարաբաղի տնտեսական կապից, Ադրբեջանի հետ նրա մշտական կապից, Լեոնային Ղարաբաղը թողնել Ադրբ. ՍՍՀ սահմաններում, տալով նրան մարզային լայն ինքնավարութիւն» (նոյն տեղում, թ. 121):

Չի կարելի մոռանալ շատ կարեւոր մի հանգամանք, որը, ըստ երեւոյթին, վճռական նշանակութիւն է ունեցել հարցի այդպիսի լուծման համար: Բանն այն է, որ Անդրերկրկոմի նոյն նիստում քննարկման էին դրուած նաեւ Աջարիայի, Աբխազիայի եւ Հարաւային Օսեթիայի հարցերը (տես Ի. Ստալին, «Երկեր», Հատոր 5, էջ 408, ռուսերէն):

Ցատկապէս վերջին երկուսը շատ էին նման Ղարաբաղի հարցին. ներքին ուժերն ու իրերի տրամաբանութիւնը պահանջում էին երկու երկրամասերը թողնել Ռուսաստանի հանրապետութեան կազմում՝ ինքնավար հանրապետութիւնների իրաւունքով, մանաւանդ որ Օսեթիայի մեծ մասը (Հիւսիսայինը) Ռուսաստանի կազմի մէջ էր գտնուում եւ այն բաժանել իր

հարաւային կէսից՝ պէտք է նշանակէր երկփեղկել մի ժողովուրդ, որը սոցիալիզմին որդեգրուել էր ազգային միասնութեան հասնելու յոյսով: Սակայն Ստալինն ուզում էր, ինչ գնով էլ լինի, յիշեալ մարզերը պահել Վրացական ՍՍՀ սահմաններում՝ ազգային ինքնավարութեան շնորհումով: Հարցի լուծումը դիւրացնելու համար նա մթնոլորտը լցրել էր ազգային ինքնավարութեան մասին մեծադողորդ յայտարարութիւններով, որոնց առաւել ազդեցիկ ուժ տալու համար սազ էր գալիս նաեւ Ղարաբաղը Ադրբ. ՍՍՀ կազմում ազգային ինքնավարութեամբ պահելու որոշումը:

Տեղին է նաեւ յիշել, որ Նարիմանովին ձեռք չէր տալիս նոյնիսկ «լայն իրաւունքներով ինքնավար մարզի» կազմաւորման առաջարկը: Նա ամէն կերպ խանգարում էր դրան եւ պատահական չէ, որ Ադրբեջանի կառավարական որոշումն ընդունուեց միայն երկու տարի յետոյ՝ 1923 թուականի Յունիսի 24ին: Ընդ որում՝ որոշման մէջ արդէն «մոռացուել էին» այնպիսի «մանրութներ», ինչպիսիք՝ «լայն իրաւունքներ» եւ «Հայկական» բառերն են: Այսօր Լեոնային Ղարաբաղն ազգային յատկանիշով միակ անանուն ինքնավար կազմաւորումն է հանդիսանում, չհաշուած Նախիջեւանը, որի ինքնավարութեան հռչակումը Ադրբեջանի կազմում լրիւ անօրինական ու անորսմաբանական է եղել:

Առանց որեիցէ քննարկման, ազգային-պատմական ու ցեղային պարագաների հաշուառման, անտեսելով բնակչութեան կարծիքը եւ ցանկութիւնը, Ադրբեջանի կազմի մէջ մըտցուեցին նաեւ նախկին Ելիզապետոլի մահաճգի հայկական շրջանների զգալի մի մասը՝ ներկայիս Ծախումեանի, Դաշքեստանի, Խանլարի շրջանները, Գեդաքեկի եւ Ծամխորի շրջանների մի մասը (Գարդմանանց հին հայկական մարզը): Հարկ է նշել, որ անգամ թրքական գրաման եւ մուսաւաթական իշխանութեան ժամանակ այդ շրջանները պահպանել են իրենց ինքնուրոյնութիւնը եւ Լեոնային Ղարաբաղի հետ միասին չեն

ենթարկուել մուսաաթ կառավարողներին: Այդ շրջանները կարևոր դեր են խաղացել երկրամասի յեղափոխական շարժումների եւ սովետական կարգերի հաստատման գործում:

Պատմական անհերքելի փաստ է այսօր, որ Նախիջևանի, Լեռնային Դարաքաղի, յարակից հայկական շրջանների, Ախալքալախի վարչական պատկանելիության հարցերը «լուծուել են» երկրամասի այն ժամանակուայ ստանձին ղեկավար աշխատողների սխալ դիրքորոշման, ազգայնամոլության, քաղաքական երկերեսանիության, ահաբեկման եւ յանցագործ խտրութեցնող գործողութիւնների դրսեւորման պայմաններում:

Սովետական իշխանութեան հաստատումից յետոյ էլ Ադրբեջանի ղեկավարութիւնը հողային հարցերում փաստօրէն շարունակեց մուսաաթականների աւարառու քաղաքականութիւնը, սերտ գործարքի մէջ մտնելով քեմալական Թուրքիայի հետ: Նարիմանովը սպառնում էր բոլորին, որ Զանգեզուրի, Դարաքաղի եւ Նախիջևեանի յանձնումը Սովետական Հայաստանին՝ յառաջ կը բերի ոչ միայն ադրբեջանական ժողովրդի, այլեւ ամբողջ «մուսուլմանական Արեւելքի» դժգոհութիւնը, որը ներկայումս իբր թէ կանգնած է յեղափոխական ուղու վրայ: Թուրք կառավարողները տեղեակ էին Նարիմանովի գործողութիւններին եւ շյապաղեցին Մոսկուայի բանակցութիւններում օգտուել «բարենպաստ» պայմաններից եւ թելադրել իրենց կամքը: Կարսն ու Արդահանը ստանալուց յետոյ, թրքական դիւանագիտութեանը յաջողութեց 1921 թուականի Մարտի սովետա-թրքական պայմանագրում մտցնել, ըստ որի «Նախիջևեանը անցնում է Ադրբեջանի հովանաւորութեան տակ՝ առանց այն երրորդ պետութեանը յանձնելու իրաւունքի»: Դրանից յետոյ Պարսկաստանի հետ հողերի փոխանակման կարգով Թուրքիան ձեռք բերեց լեզուի նման ձգող հողակտոր, որպէսզի Նախիջևեանի վրայով շօշափելի սահման ունենայ «եղբայրական Ադրբեջանի» հետ: Եւ այսօր երկու կողմերն էլ տօնական տրամադրութեամբ աշխարհագրական բոլոր տեղեկատուներուն

յայտարարում են, որ Թուրքիան եւ Ադրբեջանը սահմանակից են:

Սովետական Հայաստանի ձեռքում մնաց միայն Զանգեզուրի լեռնոտ ու քարքարոտ նեղ շղթան, որն աղիքի նման ձգում է դէպի Իրանի սահմանը: Արեւելքից՝ Ադրբեջան, արեւմուտքից՝ նոյնպէս Ադրբեջան: Այսպիսով, Անդրկովկասում սովետական իշխանութեան հաստատումից յետոյ էլ հողային հարցերում «հրաշք» տեղի չուներ: Սովետական Հայաստանի, վերջին հաշուով նաեւ Սովետական Ռուսաստանի դէմ ուղղուած այն միասնական խմբաորումը, որի մասին քազմիցս զգուշացրել էր իր ելոյթներում ու յօդածներում Ստ. Ծահումեանը, շարունակում էր գործել նաեւ նոր պայմաններում, անլի բողարկուած ու յաճախ էլ անլի լկտի ձեւերով: Հայաբնակ հողերի գերակշռող մասը մնաց Թուրքիայի, Ադրբեջանի եւ Վրաստանի տիրապետութեան տակ: Արեւմտեան Հայաստանում ցեղասպանութեան զոհ դարձաւ մէկուկէս միլիոն հայութիւն:

Բացի այդ, նախապատերազմեան ժամանակի համեմատութեամբ, Կովկասում հայերի թիւը պակասեց մօտ մէկ միլիոն մարդով: Կենդանի մնացած հայերի մի մասը ցրուեց աշխարհով մէկ: Հայ ժողովրդի թուլացումը, անհուն գրկանքները, սովն ու համաճարակը անխուսափելիօրէն անդրադարձան նաեւ նրա բարոյական ու հոգեկան վիճակի վրայ: Նա խաղաղութիւն էր տենչում թէկուզ հողային մեծ զիջումների գնով: Այս հանգամանքը եւս որոշակի դեր խաղաց, որ Անդրկովկասում սովետական իշխանութեան յաղթանակից յետոյ էլ հողային հարցերը լուծուէին նրա հարեւանների օգտին: Անդրկովկասի հողային բաժանման վերաբերեալ Ստ. Ծահումեանի առաջարկած արդարացի նախագծից ոչինչ չմնաց: Յայտնի է, որ այդ ծրագրով Հայաստանի կազմի մէջ պետք է մտնէին (չհաշուած թրքական Հայաստանը) Երեւանի նահանգը եւ Ելիզաւետպոլի նահանգի մի մեծ մասը, ամբողջ Կարսի մարզը եւ Թիֆլիսի նահանգի հարաւային մասը: Մինչդեռ, Սովետական Հայաստանին

անցան Երեւանի նահանգը (հանած Սուրմալուի եւ Նախիջեւանի գաւառները) եւ Զանգեզուրի ու Լոռուայ շրջանները:

Մասնատրապէս, Ադրբեջանական ՍՍՀ-ը տէր դարձաւ մուսաւաթների տիրապետութեան ժամանակ թրքական սուլանների ու խարդախ քաղաքականութեան օգնութեամբ հաստատուած սահմաններին՝ 86.600 քառ. կլմ. մեծ մասամբ արգաւանդ հարթավայրային տարածութեան: Հայաստանի սահմանը «Նոր Բայազէտի եւ Էջմիածնի շուրջը» սահմանափակելու թրքական ծրագիրը իրագործուեց գրեթէ լիովին: Նրան մնաց 29.800 քառ. կլմ. տարածութեամբ (հաշուած նաեւ Սեւանայ լիճը) գերազանցապէս հրաբխային, լեռնոտ, քարերով ու ժայռերով պատած մի փոքր հողամաս:

Բերենք միայն երկու փաստաթուղթ, որոնք ցոյց են տալիս, թէ վիճելի հողային հարցերը լուծելիս ինչպիսի ստոր ու կեղտոտ թրքական «փորձուած» մեթոդներից էին օգտուում իրենց «կոմունիստ» անուանող ադրբեջանցի ազգայնամոլները:

Ահա թէ ինչպիսի հրահանգներ է արձակել իր վստահելի մարդկանց Ղարաբաղի այն ժամանակուայ Յեղկոմի նախագահ Ասադ Կարաեւը: Հրահանգներից մէկում (1920 թ. Յուլիսի 19ին) նա հաղորդում է. «Ադրբեջանի կառավարութիւնը որոշել է Ղարաբաղը եւ Զանգեզուրն Ադրբեջանին միացնելու համար բաց թողնել 200 միլիոն ռուբլի»:

Իսկ մի ուրիշ նամակում (1921 թ. Յուլիսի 21ին) նա տալիս է հետեւեալ ղեկավար ցուցումը. «Մինչեւ հիմա Զանգեզուրի գիւղերի 90 տոկոսը դեռեւս չեն զինաթափուել: Դա ցաւալի է: Բայց անելի ցաւալին այն է, որ մինչեւ հիմա չի գլխատուել (չի մնացել առանց առաջնորդների) Զանգեզուրի Հայութիւնը: Նրա մտատրականութիւնը եւ ռազմական գլուխները մինչեւ հիմա մնում են գիւղերում: Աշխատէ՛ք օր ու գիշեր: Զանացէ՛ք, որպէսզի բանտարկուեն բոլոր նշանատր եւ հարկատր հայերը: Թողէ՛ք մարդասիրութիւնը՝ դրանով չի կարելի պետութիւն ստեղծել, երկրներ նուաճել: Այստեղի ընկերներն այնքան

էլ գոհ չեն Գորիսի Յեղկոմի հայ անդամներից, աշխատէ՛ք վերնորել Յեղկոմը եւ նրանում ընտրել միայն մուսուլմաններին եւ մեզ յայտնի ռուսներին: Զօրքերով առկա վայրերում հայերին թուլացնելու նպատակով սպանէ՛ք ռուս զինուորիկն եւ մեղադրէք դրանում հայերին: Գիտէ՛ք ինչ կ'անեն ռուսները: Զանգեզուրում մի՛ թողէք ո՛չ կարգին մարդ, ո՛չ հարստութիւն, որպէսզի այդ անիծեալ ցեղը չկարողանայ ոտքի կանգնել»:

Այս փաստաթուղթը, որը պահպանում է Մարքսիզմ-Լենինիզմի Ինստիտուտի կենտրոնական կուսակցական արխիւում (Ֆ. 64, ցուց. 1, պահպ. միասոր 10), կարծում ենք, մեկնաբանութիւնների կարիք չունի:

Աւելացնենք միայն, որ այդ «կոմունիստի» դիմանկարը եւ անունն այսօր հոլովում են Ադրբեջանում սովետական իշխանութեան համար մարտնչած յեղափոխականներին նուիրում գրքերում եւ այբումներում:

Միս փաստաթուղթը, դա Անկարայում Սովետական Ռուսաստանի ներկայացուցչութեան քարտուղարի հաղորդումն է, որը տպագրուել է 1921 թ. Յուլիսի 10ին «Իզվեստիա» թերթում: Այնտեղ ասում է. «Թուրքիայում յեղափոխական շարժման տեմպի եւ վերելքի վերաբերեալ Բաքուի կուսակցական ընկերների յամառ եւ միտումնաւոր հաղորդումներից՝ շատերին, նույնիսկ պատասխանատու ընկերներին թուացել է, թէ Անատոլիան դարձել է կիսակոմունիստական: Ասադ, իրականում միանգամայն հակառակն է ստացուել այն բանի, ինչ ասում էին շահագրգռուած առանձին հաղորդավարներ եւ թրքական տարբեր ներկայացուցչութիւնների ղեկավարներ»:

Այստեղ հետեւում է, որ Սովետական Ադրբեջանի ղեկավարները սերտ կապեր էին պահպանում քեմալական Թուրքիայի հետ եւ կանխամտածուած կերպով թիրիմացութեան մէջ գցում կենտրոնական կառավարութեան պատուախանատու

շատ ընկերների, որոնք, հաստատով թրքական «չեղափոխութեան» մեծ հնարարութիւններին, շատ զիջումներ էին անում Թուրքիայի նոր կառավարողներին եւ նրանց ադրբեջանական համախոհներին: Բայց կային նաեւ կուսակցութեան ու սովետական կառավարութեան ականաւոր գործիչներ (Չիչերին, Կիրով, Օրջոնիկիձէ, Լեգրան եւ ուրիշներ), որոնք դեռ այն ժամանակ հասկանում էին քեմալական Թուրքիայի պանթուրանական միտումները եւ փորձում էին վճռականապէս դրանք կանխել:

Այսպիսին էր Անդրկովկասում հողային սահմանազրծումների, մասնաւորապէս Լեռնային Ղարաբաղի «Ինքնավար մարզի» կազմաւորման հետ կապուած պատմական իրավիճակը: Այս բոլորից յետոյ, ցաօք, այսօր գտնուում են մարդիկ, որոնք իրենց անգամ հայ անուանելով բարբաջում են, որ Լեռնային Ղարաբաղի հարցը լուծելիս ամէն ինչ եղել է ճիշդ ու օրինական, նոյնիսկ լեւինեյան ազգային քաղաքականութեան սկզբունքներին համապատասխան:

Այսօր Ադրբեջանում քար լուծեան են մատնում պաշտօնական այն փաստաթղթերը, կուսակցութեան ականաւոր գործիչների այն կարծիքները, որոնք համառօտ շարադրուեցին վերելում եւ որոնք խօսում են հայ ժողովրդի իրաւունքները յարգելու, հայապատկան ու հայաբնակ շրջանները Հայկական ՍՍՀ կազմի մէջ մտցնելու անհրաժեշտութեան մասին:

Ադրբեջանի ներկայ դեկավարութեան կարծիքով, Լեռնային Ղարաբաղի ենթակայութեան հարցը որոշելիս եղել է միայն ու միայն մի կարծիք, մի որոշում: Այդ գիծը հետեւողականօրէն անց է կացում յատկապէս մարզկոմի առաջին քարտուղար Բ. Ս. Գեորգովի գեկուցման մէջ, Լեռնային Ղարաբաղը համարելով «Ադրբեջանի բաղկացուցիչ եւ անխզելի մասը»: (Այս եւ հետագայում գեկուցումներից մէջբերումները տպագրուած են «Սովետական Ղարաբաղ» թերթի 1975 թ. Մարտի 23ի համարում): Զեկուցողը փորձում է ցոյց տալ ու ապացուցել

Ադրբեջանի պատմականօրէն անկապտելի իրաւունքը (այլ իւսարով՝ տիրապետութիւնը) Ղարաբաղի եւ նրա բնակչութեան վրայ: Հենց այստեղ էլ նա, պատմական անաւարկելի փաստերն ու փաստաթղթերը մի կողմ թողած, պատմութեան փոշու տակից մտնում է պատեհապառշամ եղանակով ժամանակին մոգոնուած թերթիկներ, դրանք իրար կցնցում եւ ներկայացնում որպէս կուսակցութեան հեղինակաւոր կարծիք:

Գեորգովը յայտարարում է, թէ միայն դաշնակներն էին, որ ցանկանում էին Ղարաբաղը միացնել Հայաստանին, որով, իբր, ուզում էին հասնել իրենց դիւային նպատակին՝ «Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեանը թշնամացնել իրենց դարաւոր եղբայրների հետ»: Իր հակապատմական մարգանքները հիմնաւորելու համար նա վկայակոչում է Ա. Ի. Միկոյեանի 1919 թ. Մայիսի 22ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի եւ Վ. Ի. Լեւինին յղած մի գրութիւն, որի մէջ իսկապէս նշուած է, թէ «Դաշնակները՝ հայկական կառավարութեան գործակալները, ձգտում են հասնել Ղարաբաղի միացմանը Հայաստանին, բայց դա Ղարաբաղի բնակչութեան համար կը նշանակէր գրկուել իրենց կեանքի աղբիւր Բաքուից եւ կապուել Երեւանի հետ, որի հետ երբեք կապուած չեն եղել...» (ՄԼԻԻ ԿԿԱ, ֆ. 461, գործ 4542, թ. 6):

Նախ, բերելով Միկոյեանի այդ խօսքերը, գեկուցողը դիտաւորեալ կերպով բաց է թողնում գրութեան մէջ այն տողերը, որտեղ ասում է. «Ղարաբաղն ու Զանգեզուրը (աւելի քան երեք գաւառների տարածքը), լեւուելով հայ զինուած զիւացիութեան վրայ, չի ճանաչում Ադրբեջանի կառավարութեանը...» (նոյն տեղում):

Երկրորդ, գեկուցողը փաստօրէն նոյնացնում է դաշնակցական եւ Սովետական Հայաստանները: 2Է՞ որ խօսքը վերաբերում է Լեռնային Ղարաբաղը Սովետական, այլ ոչ թէ դաշնակցական Հայաստանին միացնելու մասին:

Վերջապէս, Ա. Միկոյեանի կարծիքը չի կարող հեղինակաւոր լինել, առաւել եւս նա թղթին ստորագրել է որպէս

ՌԿ(բ)Կ Բաքուի կոմիտեի անդամ եւ, ամենայն հասանականութեամբ, եզրակացութիւնը գրելիս առաջնորդուել է իր անմիջական ղեկավարների յանձնարարութեամբ: Եթէ Միկոյեանը գտնում է, որ Ղարաբաղի գիղացիութեան կեանքի աղբիւրը Բաքուն է, ապա ինչո՞ւ այդ գիղացիութիւնը զէնք է բարձրացրել նրա դէմ եւ հրաժարուում է ճանաչել Ադրբեջանի կառավարութիւնը: Ուրեմն, այսօրուայ պատմաբանը Ա. Միկոյեանի խօսքերով չէ որ պէտք է վերականգնի այս կամ այն սկզբունքային երեւոյթը պատմական խառը ժամանակների համար:

Ըստ նոյն Գեորգովի, «աւանդոյթներով դաստիարակուած Լեռնային Ղարաբաղի կուսակցական կազմակերպութեան համար Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ չկար եւ չէր կարող երկու կարծիք լինել նաեւ Ադրբեջանում սովետական իշխանութեան յաղթանակից յետոյ»: Ստացում է այնպէս, որ Ղարաբաղի հայ բոլշեիկները նոյնիսկ մուսաւաթական Ադրբեջանի ժամանակ երկու կարծիք չեն ունեցել եւ պատրաստ էին իրենց հայրենիքը մուսաւաթ դահիճների տիրապետութեան տակ դնել: Դա կատարեալ սուտ է: Ադրբեջանում սովետական իշխանութեան յաղթանակից յետոյ, այո, այդպիսի կարծիքներ եղել են, որոնք հասկանալի էին այնքան ժամանակ, քանի դեռ չկար Սովետական Հայաստանը:

Վկայակոչում է նաեւ Լեոն Միրզոյեանը, որը «Ծուշուայ շրջանի երկրորդ տեղամասի արտակարգ համագումարում՝ 1921 թ. Օգոստոսի 1ին (այսինքն ԼՂԻՄի հռչակումից երկու տարի առաջ), իր զեկուցման մէջ նշել է, որ Ղարաբաղը տնտեսական, հոգեւոր, քաղաքական ու ազգային տեսակետից սերտօրէն կապուած է Ադրբեջանի կենտրոնի հետ»:

Հետագայում մենք կը տեսնենք, թէ որքա՛ն անհմատ են դարձել արդի պարագայում Միկոյեանի եւ Միրզոյեանի խօսքերը, որոնք վերոյիշեալ «որոշման» «հիմքից» գրեթէ ոչընչով չեն տարբերում: Այստեղ նշենք միայն, որ Միրզոյեանը որպէս պաշտօնական անձ ընդամենը մէկ ամիս յետոյ կրկնել

Լ. անդրերկրկոմի բիւրոյի Յուլիսի 5ի (այլ ոչ թէ Յունիսի 5ի) այսպէս կոչուած որոշումը, որը զեկուցման մէջ բնութագրում է որպէս «Օրջոնիկիձէի եւ Նազարեթեանի առաջարկութեամբ ընդունուած որոշում»:

Ոչ մի խօսք նախորդ օրուայ նիստի, յայտարարութեան, այլ կարծիքների եւ առ հասարակ դէպքերի ընթացքի ու պատմական իրավիճակի մասին:

Պարզ է նաեւ, որ ոչ Օրջոնիկիձէն, ոչ Կիրովը, ոչ Միասնիկեանը չէին կարող մի օրուայ մէջ փոխել իրենց տեսակետը նման սկզբունքային հարցում:

Առաւել եւս, մէկ օրուայ մէջ անհնար էր իմանալ այն բնակչութեան կարծիքը, որի ճակատագրի որոշման մէջ մի քանի ժամում քախտորոշ շրջադարձ կատարուեց: Հետեւապէս, յերիւրանք ու ծաղրանք է ամբողջ աշխարհով մէկ յայտարարել, թէ իբր «Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը ձեռք բերեց իր պետականութիւնն Ադրբեջանի կազմում եւ իր այդ բախտն ընտրեց կամովին»: Այդ կատարեալ կեղծիքն ու անգրագիտութիւնը կոմունիստների տեսական ամսագրում (էջ 52) հրամցում է այս անգամ արդէն Մարտունու շրջանի կուսակցութեան կոմիտեի առաջին քարտուղար Վ. Մ. Գաբրիելեանի անունից:

Նախ, չկայ եւ չի կարող լինել «Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդ», այնպէս՝ ինչպէս չկայ, ասենք, Սիբիրի, Ուրալի, Պոլովոժիէի եւ այլ վայրերի «ոռու ժողովուրդ»: Կայ մէկ, միասնական, հասարակական ազգա-ժողովուրդ հասկացութիւնը՝ «հայ», «ոռու», «լեհ», «գերմանացի» եւ այլն: Տոեալ դէպքում «սխալը», ինչպէս յետոյ կը տեսնենք, պատահական չէ՞:

Երկրորդ, միասնական ժողովրդի, ազգի մի մասը երբեք չի կարող պետականութիւն ձեռք բերել մի այլ հանրապետութիւնում, երբ դրա կողքին գոյութիւն ունի տուեալ ազգի պետականութիւն, այն էլ միութենական հանրապետութեան իրաւունքներով:

Երրորդ, Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութիւնը չէր

կարող իր բախտն ընտրել կամովին, քանի որ նրա կարծիքը ոչ ոք չի հարցրել:

Հակառակ դեպքում, ինչո՞ւ մի տող վերելում չայտարարել, թե «պահանջուեց դաստիարակչական մեծ աշխատանք» տանել, որպեսզի դարաբաղցին հասկանար «ինքնավար մարզի» կազմաորման հիմնադրումը լինելը եւ հրաժարուէր «թող եւ վատ ապրեմ, բայց կապուած լինեմ Հայաստանի հետ» «խրոնիկարարական» մտքից:

Ի դէպ, Լեոնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմի մէջ մտցնելը միշտ էլ Գեորգովի պէս են մեկնաբանել նաեւ Ադրբ. ՍՍՀ ղեկավարները, ընդհուպ մինչեւ Ա. Հ. Ալիեւը: Աւելի ճիշդ, Գեորգովը կրկնում է վերջինների՝ նրանց վերացական յայտարարութիւններին կցմցելով ինքնահնար «փաստեր»: Ա. Հ. Ալիեւը, օրինակ, Ղարաբաղի ինքնավարութեան 50ամեակին նուիրում հաւաքոյթում ունեցած իր ճառում, Լեոնային Ղարաբաղն Ադրբեջանին տալը համարել է հարցի միակ ճիշդ ու լեւնհնեան լուծումը, որով Վ. Ի. Լենինը եւ կոմունիստական կուսակցութիւնը մեծ հոգատարութիւն են ցուցաբերել Սովետական Ադրբեջանի եւ նրա անբաժան մասը համարող Լեոնային Ղարաբաղի վերածննդի ու սոցիալիստական ծաղկման մասին (տես «Սովետական Ղարաբաղ», 1973, Նոյեմբերի 24):

Սակայն յայտնի է, որ Լենինը ո՛չ իրականում, ոչ էլ տեսականօրէն չէր կարող խրախուսել Լեոնային Ղարաբաղն Ադրբեջանին յանձնելու հակամարքսիստական քաղաքական փաստը: Ընդհակառակը, ականատեսների վկայութեամբ, Օրջոնիկիձէի վերոյիշեալ հեռագիրը շատ էր ուրախացրել Լենինին: 1920 թ. Դեկտեմբերի 12ին, Ս. Տէր Գաբրիէլեանին եւ Աս. Մուսեանին ընդունելով Կրեմլում, գրոյցի ժամանակ Լենինը յիշել է նաեւ հողային վեճերի բարեշաջող լուծումը: «Դուք Ադրբեջանի հետ վճեցիք վիճելի սահմանների հարցը»: «Այո, մենք հեշտօրէն լուծեցինք Ղարաբաղի, Զանգեզուրի եւ Նախիջեանի

հարցերը» (Ասքանազ Մուսեան, «Յօդուածներ եւ ճառեր», Երեւան, 1963, էջ 222):

Յայտնի է, որ Լենինեան բոլոր ասոյթներում եւ փաստաթղթերում դատապարտում են Հայաստանը մասնատելու եւ կողոպտելու բոլոր կարգի ծրագիրներն ու գործողութիւնները:

Հայկական հարցի միակ լուծման ելքը նա գտնում էր ամբողջ Հայաստանի հողամասում Հայաստանի անկախ հայկական հանրապետութեան ստեղծման մէջ: Հետագայում սակայն, ստեղծուեց այնպիսի իրավիճակ, մի առանձնայատուկ դրութիւն, երբ ՌՍՖՍՀ ժողովրդական կոմիսարների սովետն ընդունեց «Թուրքահայաստանի մասին» դէկրետը: Սակայն, Արեւմտահայաստանի եւ Արեւելահայաստանի բաժանումը դիտում էր որպէս ժամանակատր քայլ: Ս. Տէր Գաբրիէլեանին ուղղուած ճամակներից մէկում, Վահան Տէրեանը Վ. Ի. Լենինի հետ իր խօսակցութեան մասին գրում է. «...Երբ իմ բոլոր դատողութիւններս Հայաստանի մասին յայտնեցի եւ փոքրագութեամբ անյստակ թողի ոռուսահայերի խնդիրը, նա ինձ հարց տուեց.

— Մի՞թէ տանկահայերի եւ ոռուսահայերի մէջ կայ լեզուաբանական, դատանաբանական կամ այլ որեւէ տարբերութիւն:

Եւ յայտնեցի որ՝ ոչ:

— Այսպիսի դեպքում ինձ անհասկանալի է, թէ ինչո՞ւ Դուք խօսում էք միայն Տանկահայերի ինքնորոշման մասին...» (տես Վ. Տէրեան, «Երկերի ժողովածու», Հատոր 3, էջ 481-482):

Ինչպէս տեսնում ենք, Վ. Ի. Լենինը բոլոր հայերին, լինի դա արեւմտահայ թէ արեւելահայ, դիտում էր որպէս մէկ, միասնական ժողովուրդ, ազգ, որի երկփեղկումը, թէկուզ ժամանակատր, նրան մտահոգում էր: Հետագայում, երբ Արեւմըտեան Հայաստանը փաստօրէն մնաց Թուրքիայի տիրապետութեան տակ, Լենինն առաւել էս չէր կարող երաշխատրել,

որ Արեւելեան Հայաստանն իր հերթին նոյն սովետական կարգերի պայմաններում բաժանուէր երկու մասի:

Լեւինը չէր կարող կողմնակից լինել մի ժողովրդի նոյն քաղաքական դրօշակի տակ երկփեղկուելուն՝ նաեւ տեսակաւորէն: Ազգերի ճակատագրի մասին լեւինեան տեսութեան հիմքը դրուել է ամէն տեսակ ճնշման դէմ, ամէն մի ազգի եւ ազգութեան իրաւունքների ոտնահարումների դէմ անզիջում պայքարի բովում: Դեռեւս 1903ին Վ. Ի. Լեւինը յայտարարում էր, որ սոցիալ դեմոկրատներն «իրենց ծրագրում դնում են ոչ միայն լեզուի, ազգութեան կատարեալ իրաւահասարակութիւն եւ այլն, այլեւ իւրաքանչիւր ազգի՝ ինքն իր բախտը տնօրինելու իրաւունքի ճանաչում» (Վ. Ի. Լեւին, «Երկեր», Հատոր 6, էջ 588):

Լեւնային Ղարաբաղը ինքնավար մարզի իրաւունքով Ադրբեջանական ՍՍՀ կազմում թողնելը սկզբից եւեթ հակասութեան մէջ է եղել լեւինեան ազգային քաղաքականութեան հիմնական սկզբունքների հետ:

Դեռեւս 1913ին ՌՍԴԲ(բ)Կ խորհրդակցութեան՝ ազգային հարցի գծով ընդունուած բանաձեւում Լեւինը գրել է. «...Անհրաժեշտ է մարզային լայն ատոնումիս ու միանգամայն դեմոկրատական տեղական ինքնավարութիւն, ինքնավար ու ատոնում մարզերի սահմանների որոշումը կատարելով իր իսկ՝ տեղական բնակչութեան կողմից, տնտեսական ու կենցաղային պայմանների, բնակչութեան ազգային կազմի եւ այլնի հաշուառման հիման վրայ» (Լեւին, «Երկեր», Հատոր 19, 1950, էջ 530-531):

Այստեղ խօսքը վերաբերում է դրամատիրական հասարակարգին, ուր բռնադատում էին ազգերի, յատկապէս ազգային փոքրամասնութիւնների իրաւունքները: Սոցիալիստական կարգերի օրօք ազգերի ինքնորոշման հարցում առաւել վճռական գործօն պիտի դառնար ազգային կազմը՝ տնտեսական ու կենցաղային շահերի հետ միասին:

Բ. Ս. Գեորգովը եւ նրա պէս մտածողներն աղմկում են այն մասին, թէ իբր Լեւնային Ղարաբաղի անջատումն Ադրբեջանից կը նշանակի լեւինեան ազգային քաղաքականութեան խախտում՝ կատարուած «ազգային եւասիրութեան եւ ազգային սահմանափակուածութեան արատաւոր դիրքերից»: Սակայն ինքը՝ Լեւինը, լեւինեան ազգային քաղաքականութեան հիմնադիրն ու խոշորագոյն տեսաբանը ծիծաղում էր ազգերի միջեւ եղած բռնի կապերի վրայ, դրանք համարում էր անմիջապէս խորտակելու, վերացնելու ենթակալ կապեր: 1914ին Լեւինը գրել է. «Յայտնի է, որ 1905ին Նորուեգիան անջատուեց Շուեդիայից հակառակ շուեդական կալուածատերերի տաքարին բողոքների, որոնք սպառնում էին պատերազմով...: Եւ ի՞նչ: Արդեօք այսպիսի անջատումից վնասուե՞ց ժողովուրդը, վնասուեցի՞ն մշակութային շահերը, կամ դեմոկրատիայի շահերը, բանուոր դասակարգի շահերը: Ամենեւին: Այդ երկու ժողովուրդների բռնի կապի խզումը նշանակում էր տնտեսական կամաւոր կապի ուժեղացում, մշակութային մօտիկութեան ուժեղացում, փոխադարձ յարգանքի ուժեղացում: Շուեդական եւ նորուեգական ժողովուրդների ընդհանրութիւնը, մօտիկութիւնը իրականում շահեց անջատումից, որովհետեւ անջատումը հանդիսացաւ բռնի կապերի խզում» (Լեւին, «Երկեր», Հատոր 20, Երեւան, 1950, էջ 289):

Չի կարելի մտածել, որ Լեւինը կողմնակից էր միայն նորուեգիական ու շուեդական ազգերի միջեւ եղած բռնի կապի խզմանը: Լեւինը վճռաբար դէմ էր բոլոր ազգերի միջեւ եղած ամէն տեսակ բռնի ու անբնական կապերին, այդ ազգերից մեկնումէկի շահերը ոտնահարող կապերին: Դրա համար էլ գրել է.

«Ամենուրեք, որտեղ մենք ազգերի միջեւ բռնի կապեր ենք տեսնում... անպայման եւ վճռականօրէն պաշտպանում ենք ամէն մի ազգի իրաւունքը քաղաքականապէս ինքնորոշուելու, այսինքն՝ անջատուելու: Պաշտպանել, քարոզել, ընդունել այդպիսի իրաւունք՝ նշանակում է պաշտպանել ազգերի իրաւահա-

ւասարութիւնը, նշանակում է չընդունել բռնի կապերը, նշանակում է պայքարել որեւէ ազգի ունեցած ամէն տեսակ պետական արտօնութիւնների դէմ, նշանակում է նաեւ զանազան ազգերի բանուորների մէջ դաստիարակել դասակարգային լիակատար համերաշխութիւն» (նոյն տեղում, էջ 270):

Վերը վկայակոչուած լեհիներէն դրոյթներից ելնելով՝ չի կարելի չնկատել, որ Լեոնային Ղարաբաղը Ադրբ. ՍՍՀ կազմի մէջ մտցնողները չեն առաջնորդուել լեհիներէն սկզբունքներով, տնտեսական գործօնով, ցեղային կազմով եւ բնակչութեան կամքի ու «համակրանքների» հաշուառումով: Արհամարհուել է նոյնիսկ առաջին հանգամանքը՝ տնտեսական գործօնը, չնայած հարցի լուծմանը որեւէ ուժ տալու համար յօրինուել է մի այնպիսի անիրական հիմք, ինչպիսին «վերին ու հարթավայրային Ղարաբաղի տնտեսական կապն է»:

Աւելորդ չի նշել, որ տուեալ դէպքում ոտնահարուել է ամբողջ հայ ժողովրդի, Հայկական Սովետական Հանրապետութեան անկապտելի իրաւունքը: Եթէ 1921 թ. Մարտի 18ի սովետական-թրքական պայմանագրով թուրքերի տիրապետութեանն անցան հայկական այն նահանգները, որոնք նախընթացին միշտ էլ գտնուել էին Ռուսաստանի սահմանների մէջ, ապա տրամաբանական էր, որ յարգուէին գոնէ Հայաստանի պատմական, ցեղային ու տնտեսական իրաւունքները և նրանքին հողերի վրայ: Զէ՞ որ առանց Ղարաբաղի ու Նախիջեւանի Հայաստանը տէր էր մնում լեռնոտ ու անբերրի մի այնպիսի տարածութեան, որի վրայ անհնար պիտի լինէր ստեղծել առաջնակարգ գիղատնտեսութիւն:

Այսպիսի պայմաններում Լեոնային Ղարաբաղը Հայկական ՍՍՀ կազմում թողնելը կ'ունենար ոչ միայն քաղաքական վիթխարի նշանակութիւն (աշխարհի ժողովուրդները կը տեսնէին, թէ ինչպէս սովետական կառավարութիւնն իր արդար վճռով պաշտպանում է հիւծուած ու արիւնաքամ Հայաստանի

իրաւունքը), այլեւ սովետական իրաւահաւասար ժողովուրդների ընտանիքում հայ ժողովուրդը կը ստանար տնտեսական զարգացման առաւել նպաստաւոր հիմքեր՝ Ղարաբաղի բարեբեր հողը, նրա բնական ու հանքային հարստութիւնները, որոնք ահա անելի քան կէս դար օգտագործում են անխնայ, անտիրաբար ու անմտօրէն:

Այս դէպքում չպետք է մոռանալ նաեւ Լեոնային Ղարաբաղի հարցի շուրջ ստեղծուած այն ծանր ու անհասկանալի ծխածածկոյթը, որը չէր կարող պատիւ բերել երկու հարեւան ժողովուրդների բարի-դրացիական յարաբերութիւններին, նրանց կոմունիստական կազմակերպութիւնների միջազգային ասանդոյթներին եւ մասնատրապէս Անդրկովկասեան գօտու ազգային փոխյարաբերութիւնների կարգաւորման գործում սովետական իշխանութեան խաղացած վիթխարի դերին: Անդրկովկասի աշխատատեղերի համար, յատկապէս Ղարաբաղի հաշտութեան համար տանջող մի ստեղծուած էր մնում կատարուածը: Ի՞նչ է պատահել: Զէ՞ որ Ադրբեջանի ու Հայաստանի կառավարութիւնները հրապարակել էին յայտարարութիւններ, որոնց համաձայն՝ Լեոնային Ղարաբաղը, որպէս գերազանցօրէն հայաբնակ մարզ, մէկընդմիջտ պետք է անցնէր Հայկական ՍՍՀին: Ականաւոր դեկավարները ողջունել էին այդ միջոցառումը՝ իբրեւ պատմական վիթխարի նշանակութիւն ունեցող մի արարք, որն իր հաւասարը չունի ժողովուրդների եղբայրական փոխյարաբերութիւնների պատմութեան մէջ: Հայ ժողովուրդը երախտագիտութեամբ էր ընդունել այս բոլորը: Դժգոհ չէր նաեւ ադրբեջանական ժողովուրդը: Յամենայն դէպս, Բաքուի Սովետի հանդիսաւոր նիստի եւ Ադրբեջանի Յեղկոմի յայտարարութեան արձագանգները խօսում էին այն մասին, որ ադրբեջանական ժողովուրդը յարգել է Հայաստանի Սովետական Հանրապետութեան անկապտելի իրաւունքը Լեոնային Ղարաբաղի վրայ: Իսկ այսքանից յետոյ հարցն ինչո՞ւ ստացաւ հակառակ լուծում:

Այսօր գաղտնիք չէ, որ Ղարաբաղի (եւ ոչ միայն Ղարաբաղի) հայութեան բախտը 1921 թուականին տնօրինել եւ Ստալինն ու Նարիմանովը՝ ընդդէմ այդ նոյն Հայութեան կամքի, ընդդէմ նրա անուհից խօսող հայ, ռուս, հրեայ, վրացի կուսակցական եւ պետական ականաւոր գործիչների ձայնի: Նոյնիսկ թրքական պատմաբանները չեն թարգմանում Ստալինի «բարի ծառայութիւնները» հայկական հարցի «յաջող լուծման» գործում: Այսպէս, թրքական յայտնի պատմաբան Թեվֆիկ Բըլըկօղլուն, վկայակոչելով 1921ին մոսկովեան խորհրդատողովում (սովետա-թրքական պայմանագրի կնքման բանակցութիւններում) թրքական պատգամաւորութեան ղեկավար Եուսուֆ Բեմալ Բէյի հետ իր ունեցած զրոյցը, գրում է. «1921 թ. Փետրուարի 22ին Ստալինի հետ մեր առաջին հանդիպման ժամանակ, նա մեզ առաջարկեց գէնք, փող եւ կենդանի ուժի օգնութիւն: «Հայկական հարցը դուք արդէն ինքներդ էք լուծել», — ասաց նա»: (Թ. Բըլըկօղլու, «Աթաթիւրքը եւ Անատոլիան. 1919-1921», Ստամբուլ, էջ 21):

Թրքական ռազմական եւ քաղաքական յայտնի գործիչ, Մոսկուայում քեմալական Թուրքիայի առաջին դեսպան, գեներալ Ալի Ֆուադ Ջեքետոյը, որը մասնակցել է 1921ի սովետա-թրքական բանակցութիւններին, իր յիշողութիւնների մէջ գրում է, որ Չիչերինը չէր ուզում սահմանների հարցը լուծել յօգուտ Թուրքիայի եւ միայն Ստալինի միջամտութեան շնորհիւ յաջողուեց լուծել այն հարցերը, որոնք բանակցութիւնները փակուղու առջեւ էին դրել («Ալի Ֆուադ Ջեքետոյի քաղաքական յիշողութիւնները», «Վաթան» թերթ, 24 Ապրիլի, 1954 թ.): Նոյն տեղում, «Ստալինը եւ հայկական հարցը» յատուկ խորագրով բաժնում, Ջեքետոյը շարադրում է Ստալինի հետ 1921 թ. Փետրուարի 21ի գիշերը տեղի ունեցած թրքական պատգամաւորութեան զրոյցը. «Այն հարցին, թէ հայկական հարցը քննարկուելո՞ւ է արդեօք խորհրդատողովում, Ստալինը պատասխա-

նեց. «Դուք արդէն այն լուծել էք: Եթէ դեռ մնացել են շլուծուած հարցեր, լուծեցէք ինքներդ»:

Մի այլ հեղինակ, թրքական ժողովախառ եւ պատմաբան, պրոֆ. Ահմէդ Շիւքրու Իսմէթը, գրում է, որ ՌՍՖՍՀ արտաքին գործոց ժողկոմատը դեռեւս տատանում էր թրքական պատգամաւորութեան հետ պայմանագիր կնքել, սակայն «Ստալինի միջամտութեան շնորհիւ պայմանագիրը Մոսկուայում ստորագրուեց 1921 թ. Մարտի 16ին»:

Վերջապէս յայտնի է նաեւ Ի. Ստալինի տխրահոշակ հետագիրը Վ. Ի. Լենինին, որը ոչ մի կասկածանք չի թողնում թրքական աղբիւրների հաւաստիութեան մէջ: Ահա այդ հետագիրը. «Ընկ. Լենին, ես երէկ իմացայ, որ Չիչերինն իրօք ինչ-որ յիմար եւ պրովոկացիոն պահանջներ է ուղարկել թուրքերի հսկայական գերակշռութեամբ Վանը, Մուշը եւ Բիթլիսը (թրքական նահանգները) Հայաստանի օգտին մաքրելու մասին: Հայկական իմպերիալիստական այդ պահանջը չի կարող մեր պահանջը լինել: Պէտք է արգիլել Չիչերինին, որպէսզի նա նացիոնալիստօրէն տրամադրուած հայերի թելադրանքով նուա չուղարկի թուրքերին»:

Ստալին, 12-11-1921 թ.
(ՍՄԿԿ ԿԿ ԿԿԱ ՄԼԻ, Զ. 3. (Ստալին),
ցուց. 1, պահ. միաւոր 52-14, թուրք 2)

Անհաւատալի է, բայց փաստ: Պատմութեան հետագայ ընթացքը հաստատում է, որ Թուրքիա (ֆաշիզմի ու ժամանակակից դրամատիրութեան այդ հակասովետական ամենահաւատարիմ յենակէտը Մերձատր Արեւելքում) բաւականին հիմք ունի այսօր շնորհակալութիւն յայտնելու Ստալինի հակահայկական ուխտադրուծ քաղաքականութեան համար:

Մնում է անհասկանալի, թէ ինչու Լենինը չկանխեց «ստալինեան» հրէշատր քայլերը: Ըստ երեւոյթիս պէտք է եւ-

թաղրել, որ Ստալինը ունենալով մեծ, գրեթե անսահման լիազորություններ եւ օգտուելով Լենինի առողջութեան վատ վիճակից, կարողանում էր անցկացնել իր քաղաքական «գիծը» ոչ միայն հայկական, այլեւ սկզբունքային այլ հարցերում: Այդ կապակցութեամբ, յիշենք, թէ ինչ է գրում Վ. Ի. Լենինը.

«Ես, թում է, խիստ մեղաւոր եմ Ռուսաստանի բանուորների առջեւ այն բանի համար, որ բաւականաչափ կտրուկ կերպով չեմ միջամտել ատոմոմիզացիայի տխրահոշակ հարցին, որը, կարծեմ, պաշտօնապէս կոչում է սովետական Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան հարց: Ամբանը, երբ այդ հարցը ծագում էր, ես հիւանդ էի, իսկ այնուհետեւ, աշնանը, ես չափազանց մեծ յուսեր դրի իմ առողջացման եւ այն բանի վրայ, որ հոկտեմբերեան եւ դեկտեմբերեան ժողովներն ինձ հնարաւորութիւն կը տան միջամտելու այդ հարցին: Բայց ոչ հոկտեմբերեան ժողովում (այդ հարցի առթիւ), ոչ էլ դեկտեմբերեան ժողովում ինձ չյաջողուեց լինել եւ այսպիսով ես գրեթէ բոլորովին հաղորդակից չեղայ այդ հարցին» (տես Վ. Ի. Լենին, «Ազգային-գաղութային հարցի մասին», Երեւան, 1957, էջ 727):

Այս տողերը բերուած են այսպէս կոչուած լենինեան «կտակից», որը գրուել է 1922ի Դեկտեմբերին, Վ. Ի. Լենինի թելադրութեամբ: Ծանօթագրութիւնների մէջ նշում է. «Ատոմոմիզացիա — սովետական պետութիւնների միաւորման գաղափար՝ ատոմոմիայի սկզբունքով, դրանք ՌՍՖՍՀ մէջ մտնելու հիման վրայ: Այդ գաղափարն ընկած էր «Անկախ հանրապետութիւնների հետ ՌՍՖՍՀ փոխարաբերութիւնների մասին բանաձեւ-նախագծի» հիմքում, նախագիծ, որ առաջարկել էր Ի. Վ. Ստալինը եւ ընդունել էր Կենտկոմի յանձնաժողովը 1922 թուականի Սեպտեմբերին» (նոյն տեղում, էջ 784):

Եթէ նոյնիսկ ՍՍՀՄ կազմաւորման հարցում նման իրավիճակ էր առաջացել, ապա, պարզ է, որ Լենինը չէր կարող գործնականում որեւիցէ ձեւով մասնակից լինել «ինչ-որ» Ղարաբաղի բախտի որոշման գործին, առաւել եւս «մեծ հոգատա-

րութիւն ցուցաբերել սովետական Ադրբեջանի եւ նրա անբաժանելի մասը կազմող Լեռնային Ղարաբաղի վերծննդի ու սոցիալիստական ծաղկման համար»:

Ծիշդ է, Վ. Ի. Լենինի միջամտութեան շնորհիւ շընդունուեց Ի. Վ. Ստալինի առաջարկած նախագիծը, սակայն «ատոմոմիզացիայի տխրահոշակ հարցը» մինչեւ վերջ այնպէս էլ չյաղթահարուեց եւ լենինեան սկզբունքներին համապատասխան ճիշդ լուծում չգտաւ: Դա երեւում է թէկուզ Անդրկովկասի օրինակով, որտեղ յատկապէս վատ կերպով դրսևորուեց «ստալինեան հանճարը» ազգային հարցում:

Ստալինի գործնական միջամտութեամբ Անդրկովկասում ստեղծուեցին եւ մինչեւ հիմա էլ գոյութիւն ունեն հինգ «ատոմոմիա» եւ հինգն էլ, կարելի է ասել, ընդհանուր ոչինչ չունեն լենինեան ազգային քաղաքականութեան ոգու եւ էութեան հետ: Ահաւասիկ,

ԱԲԽԱՋԻԱ. մտցուել է Վրաստանի կազմի մէջ բնիկ ժողովրդի կամքին հակառակ, հետեւանքը՝ վրացիներն արդէն բնակչութեան 41 տոկոսն են կազմում, իսկ արխազները՝ միայն 15,9 տոկոսը (1970ի մարդահամարով):

ԱՋԱՐԻԱ. չկայ այլեւս աջարացի ժողովուրդ-ազգ: 1970ի մարդահամարով բնակչութեան 76,5 տոկոսը իրենց վրացիներ են համարել:

ՀԱՐԱԻԱՅԻՆ ՕՍԵԹԻԱ. բնակչութեան կամքը ոչ ոք չի հարցրել: Եոյն ժողովուրդը բաժանուել է Կովկասեան լեռներով եւ ստացել «երկու ատոմոմիա»: Հետեւանքը՝ բնակչութիւնը չի անել (1926ին 87 հազար, 1940ին 109 հազար, 1976ին 103 հազար):

ՆԱԽԻՉԵԻԱՆ. բնակչութեան 93,8 տոկոսը 1970ի մարդահամարով ադրբեջանցիներ են. մտնում է Ադրբ. ՍՍՀ կազմի մէջ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ. Հայ ժողովուրդը նոյնպէս

«բարձր լեռներով» երկփեղկուել է: Հետեւանքը՝ բնակչությունը չի աճել, հայերը համատարած արտագաղթել են հիմնականում Հայկական ՍՍՀ, տեղի է ունենում ադրբեջանականացման ինտենսիւ պրոցես:

Այսպիսով, երկու դեպքում նոյն ազգություններն արհեստականորէն երկփեղկուել են, միս երկու դեպքում նոյն ազգային «ատոռոմիան» մտնում է ազգային նոյն հանրապետութեան մէջ, հինգերորդում բնիկ ժողովուրդը բացարձակ փոքրամասնութիւն է կազմում: Ստացում է, որ Անդրկովկասի երեք հիմնական ազգութիւնները (վրացիները, ադրբեջանցիները եւ հայերը) ձեռք են բերել իրաքանչիւրը երկու-երեք «պետականութիւն», ընդ որում հայերն «արժանի» չեն գտնուել այդ հինգ «ատոռոմիայից» գոնէ մէկն ունենալու իրենց միութեանական հանրապետութեան կազմում, թէեւ Նախիջեւանը Երեւանի «քթի տակ է»: Ասելին. հայերը Ղարաբաղում «արժանի» չեղան ինքնավար հանրապետութեան իրաւունքին, չնայած այստեղ բռնակրում էր 156 հազար հայ, Նախիջեւանում՝ 90 հազար հայ, էլ չենք ասում տնտեսական ու մշակութային անհամեմատ բարձր զարգացման մակարդակի մասին:

«Աննկատ» մնաց նաեւ այն, որ տարբեր հնարքների հետեւանքով հայկական եւ այլ ժողովուրդներով միանոյլ բնակեցում մի շարք շրջաններ մնացին Ադրբեջանի եւ Վրաստանի կազմում, առանց ինքնավարութեան որեւիցէ իրաւունքի: Բնական է ասել, որ Անդրկովկասում ազգային կազմաւորումների հարցի «հանճարեղ» լուծման շնորհիւ, Ադրբ. ՍՍՀ կազմում սովետական իշխանութեան հաստատման պահին մնացին աւելի շատ հայեր, քան հայկական ՍՍՀում: Վրաստանի տարածքում հայերի թուաքանակը առ 1 Յունուարի 1913՝ եղել է 351.700, առ 1 Յունուարի 1916՝ 454.400, իսկ 1926 Դեկտեմբերի 17ի մարդահամարով՝ 307.000: Իսկ Ադրբեջանում՝ համապատասխանաբար՝ 405.300, 432.200 եւ 284.400 (տես Գ. Ե. Աւագեան, «Հայկական ՍՍՀ բնակչութիւնը», Երեւան, 1975, էջ 56):

Յիշեցնենք, որ Հայկ. ՍՍՀ ներկայի տարածքում բնակչութեան ամբողջ թուաքանակը 1913ին եղել է մէկ միլիոն, 1920ին՝ 720.000 եւ 1926ի մարդահամարով՝ 881.300, որից հայերը՝ 743.600:

Պատահական չէ, որ Անդրկովկասում ազգային-հողային խառնաշփոթ սահմանագծումներն ու կազմաւորումները սովետական իշխանութեան հենց առաջին իսկ տարիներին իրենց զգացնել տուեցին եւ ինքը՝ Ստալինը ստիպուած էր դռնուս 1928ին ՌԿ(բ)Կ 12րդ համագումարին տուած հաշուետւութեան մէջ խոստովանել, որ մի շարք հանրապետութիւններում, յատկապէս Վրաստանում եւ Ադրբեջանում, «պաշտպանողական ազգայնամոլութիւնը փոխարկում է յարձակողականի»:

Զեկուցման մէջ նա նշում է. «Վերցնենք Վրաստանը: Այնտեղ 30 տոկոսից աւելի ոչ-վրացական բնակչութիւն կայ: Իրանց թում են՝ հայերը, արխազները, աջարացիները, օսերը, թաթարները: Գլուխ են կանգնած վրացիները: Վրացի կոմունիստների մի մասի մէջ ծնուել ու զարգանում է մի գաղափար — շատ էլ հաշուի չառնել այդ մանր ազգութիւններին: Նրանք պակաս քաղաքակրթուած են, իբրեւ թէ՛ պակաս զարգացած են, ուստի կարելի է նրանց հաշուի չառնել: Այդ ազգայնամոլութիւն է — վնասակար եւ վտանգաւոր ազգայնամոլութիւն, որովհետեւ նա կարող է վրացական փոքրիկ հանրապետութիւնը վերածել խառնակչութեան ասպարեզի: Ասենք՝ նա արդէն իսկ վեր է ածել հանրապետութիւնը խառնակչութեան ասպարեզի:

Ադրբեջանը. Հիմնական ազգութիւնը ադրբեջանականն է, բայց այնտեղ կան նաեւ հայեր: Ադրբեջանցիների մի մասի մէջ նոյնպէս կայ այսպիսի, երբեմն բոլորովին չբողարկուած հակում այն մասին, թէ մենք գիտենք՝ որ ադրբեջանցիներս բրնիկներ ենք, իսկ նրանք՝ հայերը՝ եկուորներ են: Այս պատճառով, արդեօք չի՞ կարելի նրանց մի քիչ ետ մղել, հաշուի չառնել նրանց շահերը: Այդ նոյնպէս ազգայնամոլութիւն է: Այդ խախ-

ստան է ազգությամբների այն հաստատությունը, որի հիմքի վրայ կառուցում է ապետական իշխանությունը» (Ի. Ստալին, «Երկեր», Հատոր 5, Երևան, 1948, էջ 277-278):

Թում Լ՝ մեկնաբանություններն աւելորդ են: Հասկանալի է նաև, որ հայկական ազգայնամոլության մասին խօսք լինել չէր կարող: Հայերն ընդամենը պակաս քաղաքակրթուած, «պակաս գորգացած», «կերտ» ազգություն են, որոնց կարելի է ոչ միայն «մի քիչ», այլև բոլորովին դուրս մղել դարերի ընթացքում բոլն դրած վայրերից եւ ուղարկել Սովետական Հաստատան՝ քարերի վրայ նոր բոլն դնելու...

Ինչպէս կը տեսնենք Ղարաբաղի օրինակով, այն, ինչ ստան էր Ստալինը 1923ին, դեռ առաջին ծիծեռնակն էր: Այդ նոյն թուականին (Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կազմաւորման տարում) այստեղ դեռևս բնակում էր 157.800 մարդ, իսկ 1926ի Գեղտներէի 17ի մարդահամարով արդէն մնացել էին 125.300 մարդ (տես «Լեռնային Ղարաբաղը լիան տարում», վիճակագրական ժողովածու, Ստեփանակերտ, 1974, էջ 17, սուտերէն):

Ի՞նչ պատահեց, որ մարզի կազմաւորումից ընդամենը 3-4 տարի լեռոյ նրա բնակչութեան թիւը պակասեց 32.500 մարդով կամ աւելի քան 20 տոկոսով: Այստեղ այլ բացատրութիւն չկայ, բան Լեռնային Ղարաբաղի հալ բնակչութեան յուսանաւ դժգոհութիւնը տակոծուած վիճակից: Մարզն Ադրբ. ՍՍՀ կազմում թողնելը նրա կամքի քունդատում էր նշանակում: Յուսովար բնակչութեան մի մասը հեռացաւ Ղարաբաղից, «Ինքնավար Մարզի» կազմաւորման հենց առաջին իսկ տարիներին:

Անցել է գրեթէ յիսունհինգ տարի: Այսօր էլ, աւելի քան կէս դար լեռոյ, չի վերականգնուել Լեռնային Ղարաբաղի քրնակչութեան 1923 թուականի մակարդակը, էլ չենք տեսնում 1913 թուականի մասին, երբ մարզի ներկայ սանմաններում բնակում էր 176.000 մարդ:

Այսօր, մտաւոր մաշուարկումներով, Լեռնային Ղարաբաղում բնակում է 30 հազարով (կամ 20 տոկոսով) աւելի քիչ երգ, քան յիսունհինգ տարի առաջ, երբ հնչակուեց հայութեան ռուսար «լայն իրաւունքներով ինքնավար մարզը»:

Ընդհակառակը, նոյն ժամանակամիջոցում արբիւջանգիւնների թիւն աւելացաւ աւնուագն 20.000ով (կամ երեք անգամ):

Սա՛ է լեճիկեան ազգային քաղաքակրթութիւնը կուպիակրպով ոտնամարերու դառը նետեանը:

Սա՛ է Ղարաբաղի հալ բնակչութեան կամքին կամ ինքնորոշման իրաւունքին հակասակ վճիռ կալացնելու արդիւնը:

Ա. ԳԷՐԳԵԱՆ



Մարտանգի կամուրջը՝ Թարքաւ գետի վրայ (ԹԳ՝ գար)



Կաշպակաբերդը՝ իտալեկագետի ծախ ավեր

ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻ ԲԱՑ ՆԱՄԱԿՐ

Գ.

ԳԻՏՈՒԹԵԱՆ, ՄՇԱԿՈՅԹԻ ՈՒ ՄԱՄԼՈՅ ԲՈԼՈՐ ԱԶՆԻԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ

Սերգէյ Սերգէեիշ Աւերինցեիճն, Վիաշեպա Վստոյո-
րովիշ Իւանովիճն, Վենիամին Ալեքսանդրովիշ Կաւերինիճն, Մի-
խայիլ Ալեքսանդրովիշ Ուլիանովիճն: Գիտութեան, մշակոյթի ու
մամլոյ բոլոր ազնի գործիչներին:

Թանկագին բարեկամներ,

Մեծագոյն ուշադրութեամբ ընթերցեցիճք Մարտի 25ի
«Իզվեստիա» յոմ հրատարակած Ձեր նամակը: Զգացիճք Ձեզ
պարտրած տազնապ հեռու-հեռուներից Ձեզ հասած Լեոնա-
յին Ղարաբաղի, Հայաստանի ու Ադրբեյջանի դէպքերի կա-
պակցութեամբ: Իրօք, հեռու-հեռուներից: Չանգումսպիճն տե-
ղեկատուութեան մեր միջոցները, յատկապէս, Կենտրոնական
հեռուստատեսութեան «Վրեմիա» ծրագիրը, «Պրատա» թեր-
թը, մամլոյ այլ մարմինների որոշ գաղափարամէտ հրատարա-
կումներն ու նիւթերը սպնակիս ինդաթիպումս ձեւով ներկայաց-
րիճն կատարումս, որ պէտք էր չափազանց խորաթափանց, ի-
րերի նկատմամբ սկիական տեսակէտ ունեցող մարդ լինել (դա

լիովին վերաբերում է: Եւ Ձեզ), որպէսզի հրապարակումները ամուր, վարպետօրէն գործած վարագոյրի լեռնէից տեսնել իրերի քիչ-թէ-շատ ունայ վիճակը եւ որոշ չափով մօտենայ ճշմարտութեանը:

Մեզ հասկանալի են, իբր միմեանց դէմ ելած, երկու ժողովուրդներին հաւասար չափով հանգստացնելու ձեր մարդասիրական մտադրութիւնները: Մենք երախտապարտ են ձեր գուտ մարդկային մղումների համար: Այսուհանդերձ, թոյլ տուէք նկատել, որ հենց այդ «**հաւասար չափովն**» էլ, որով մեղաւոր էք ոչ-թէ դուք, այլ՝ նոյն խորամանկ ծխէ վարագոյրը, թուլացրեց ձեր ուղերձի ազդեցութիւնը մեզ վրայ եւ, նոյնիսկ դուք՝ մեծապէս յարգուած, վսեմ առաքինութիւններով օժտուած մարդիկ, ի վիճակի չեղաք ապաքինելու մեր վերքերը: Անչափ խորն է մեզ հասցուած վիրաւորանքը, անասհման են մեր հիւսթափոփոխնն ու ընկճուածութիւնը, եւ ես նոյնիսկ չգիտեմ՝ որքան ժամանակուս եւ ի՞նչ կերպ կը կարողանանք ձեռք բերել մեր հոգեկան հանգստութիւնն ու վերականգնել մեր ԵՍը:

Յարգելի բարեկամներ,

Լարաբաղի շուրջը բորբոքուած բունը կրքերը անա արդէն երկու ամիս է շարունակում են եւ ակամայից, ես յայտնուել եմ իրադարձութիւնների Բերմուդեան Եռանկիւնում: Եւ անա, երբ սպառուելու մօտ են ֆիզիքական ու հոգեկան բոլոր ուժերս, ես մի-քանի օրով հեռացել եմ Երեւանից եւ, առանձնանալով աստղադիտարանից ոչ հեռու՝ հանգստեան տներից մէկում, փորձում եմ կենտրոնանալ, լիշողութեանս մէջ վերարտադրել ու հնարատրին չափ իմաստաւորել անցած շաբաթների դէպքերը, փորձում եմ մի ձեւ գտնել ողջ զգացածս ու վերապրածս թղթին յանձնելու համար, գուցէ, դրանով իսկ հոգիս ազատելու՝ կոտակուած դառնութիւնից ու խոռվքից:

Սակայն, ո՞ւմ գրել: Ինչպէ՞ս գտնել ճիշդ հասցեատիրոջը:

Գրե՞լ, արդեօք, Միխայիլ Սերգէեիչ Գորբաշչովին, որն առանց այն էլ ծանրաբեռնուած է վիրաւորանք, շփոթմունք, նաեւ յոյսեր արտայայտող հազարաւոր նամակներով ու հեւագրերով՝ ստացուած Հայաստանի գիտական ու ստեղծագործական կոլեկտիւներից, գործարաններից ու կոլտնտեսութիւններից, առանձին մարդկանցից: Երեւանեան ցոյցերի ամենաթէժ պահին ես, հրապարակափօս Ջօրի Բալաշեանի հետ միասին, եղայ նրա (Գորբաշչովի) մօտ, զգացի նրա յարգանքը մեր ժողովրդի հանդէպ, հաւատացի նրա բարեացակամութեանը, երկու ժողովրդին յլած նրա Ուղերձի անկեղծութեանը: Միմչդեռ դէպքերի հետագայ զարգացումը, դժբախտաբար, զրկում է ինձ այդ բարեացակամութիւնը միմչէ վերջ հասկանալու եւ ճիշդ գնահատելու հնարատրութիւնից:

Գրել Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի նախագահութեանը, նրա անդամների՞ն, ընտրուած քուէաթերթեյով, որոնց վրայ նշուած է «*մէկին թողնել, միւսներին ջնջել*». ընտրական մի համակարգ, որը յիշեցնում է Ադամի կին ընտրելու հնարատրութիւնը:

«**Պրադա**»ի՞ն, «**Ժամանակ**» ծրագրի՞ն թէ նրանց թիկունքին կանգնած, նրանց թելադրող վերեւներին: Ոչ, իմ խօսքը չսփից դուրս լի է ցաւով ու չափազանց սուրբ է, որպէսզի հասցեագրողի բրեժնեւեան «**քարէ դարում**» քարացած այդ պաշտօնակատար-կարծրամիտներին:

Ուստի որոշեցի գրել Ձեզ, սիրելի բարեկամներ եւ ձեր միջոցով դիմել բոլոր ազնի մարդկանց, գիտութեան ու մշակութի գործիչներին, յուսալով, որ դուք կը հասկանաք եւ, ո՞վ գիտէ, թերեւս կ'օգնէք մեզ՝ դուրս գալու հոգեկան այս լաբիրինթոսից: Ին թէ նամակս որոշ չափով երկարի, արտայայտութիւններս սուր լինեն, զգացմունքներից գերծ չմնալ, խնդրում եմ ներէք ինձ՝ սպս օրերին «**համարեա-թէ այլախոհ**» անուանուածիս (իմչէեւ, ես չեմ վախենում այդ բառն օգտագործելուց): Գուցէ, ժամանակի ընթացքում այս սորամադրութիւնն անցնի, իսկ առ այժմ

դժուար է հոգու միջը ողջմտության շրջանակներում խեղդել...

Երեսնյի թատերական հրապարակում, հանրաժողովներից մեկի ժամանակ, երբ ելույթիս վերջում ինքս էլ փորձեցի լուզումս մարդկանց կոչ անել՝ համբերությամբ սպասելու հարցի արդարացի լուծմանը, ողջամիտ լինելու, այդ պահին, առաջին շարքերում կանգնած մի երիտասարդ, լարումից այլայլումս դեմքով, բացագանչեց. «**Չորրորդ դարից սկսած համբերությամբ ենք լցում, դեռ ինչքա՞ն պիտի համբերենք...**»

Վկայ է Աստուած, հայ ժողովրդի համբերությունը դարեր է հաշում:

Մենք Հոկտեմբերեան չեղափոխությանը հասանք 1915 թուականի Եդեռնի միջով, կորցնելով մեր ժողովրդի կէտը, մեր բուն հողատարածքի մեծ մասը, սփռումս աշխարհով մեկ, ճրգմումս հոգեպէս ու ֆիզիքապէս: Բայց կարծես այդ ամէնը քիչ էր. Հայաստանում խորհրդային իշխանութիւն հաստատելուց յետոյ որքի այդ բաժնից էլ կտրեցին Նախիջեանն ու Լեռնային Ղարաբաղը: Այդպիսով, կոտորակումս ժողովրդի քիչ-թէ-չատ պահպանումս միասնական մասը նույնպէս կիսուեց երկուսի:

Ամէն տեսակի տրամաբանութեան, արդարութեան սահմաններից դուրս եկող, պատմական, աշխարհագրական ու դեմոգրաֆիկ փաստարկներից բացարձակապէս զուրկ այս արարքը, որը տարիներ շարունակ մնում էր անբացատրելի, պարզ է դառնում միայն այժմ, երբ բացայայտումս է Ստալինի հրէշատր բազմակերպութիւնը: 24՝ որ դեռես 1920 թուի Դեկտեմբերի 30ին Ադրբեջանի Յեղկոմի նախագահ Նարիմանովի կողմից հռչակուեց Յեղկոմի պաշտօնական յայտարարութիւնը վիճելի տարածութիւններ՝ Զանգեզուրը, Նախիջեանն ու Ղարաբաղը Հայկական Հանրապետութեան յանձնելու մասին: Եւ հենց Ստալինի Անդրկովկաս ժամանելուց յետոյ՝ 21 թուականի Յուլիսի 5ին այս որոշումը վերանայում է եւ, արդէն իր խօսքից հրաժարումս, Նարիմանովի պնդումով Ղարաբաղն ու Նախիջեանը մտցում են Ադրբեջանի կազմի մէջ:

Ադրբեջանցի գիտնականները պնդում են, թէ այդ բանն արուել է Լենինի համաձայնությամբ, որպէս ապացոյց բերելով առաջնորդի հետևեալ բառերը. «...**Նարիմանովի կարծիքի հետ հաշուի նստել**»: Սակայն յիշենք այդ տարիների Խորհրդային Ռուսաստանի վերաբերմունքը քեմալիստական Թուրքիայի նկատմամբ, երբ Լենինը, հաւատալով Քեմալ Աթաթիւրքի «չեղափոխական ձգտումներին», բարոյական ու միջազգային աջակցութիւն էր ցուցաբերում Քեմալին, այն յոյսով, թէ կարճ ժամանակում Թուրքիայում սոցիալիստական կարգեր են հիմնուելու: Ահա այս յոյսով էր թելադրումս Նարիմանովի կարծիքը հաշուի առնելու Լենինի խորհուրդը, որ նշանակում էր հաշուի նստել «**չեղափոխական**» Թուրքիայի շահերի հետ:

Դրան գումարենք նաեւ Ստալինի նենգ հրահրումները հայ ժողովրդի դէմ, Լենինին մոլորութեան մէջ գցող նրա մտալանգումները, եւ պարզ կը դառնայ Իլյիչի 1922ի Փետրուարի 29ի գրառումներում արտայայտումս ափսոսանքը, երբ նա արդէն մահացու հիւանդ էր. «**Ես, կարծես, անսահման մեղաւոր եմ Ռուսաստանի բանտորների առաջ, որ բաւարար գործնական ու կտրուկ ձեւով չմիջամտեցի ինքնավարացման տխրահոշակ հարցին... հարցն ինձ համարեա ամբողջությամբ շրջանցեց... Ես կարծում եմ այստեղ ճակատագրական դեր խաղացին Ստալինի շտապողականութիւնն ու վարչական յափշտակութիւնը, ինչպէս նաեւ նրա չարացածութիւնը... Ընդհանրապէս չարացածութիւնը քաղաքականութեան մէջ սովորաբար ամենավատթար դեր է կատարում...**» (Վ. Ի. Լենին, «Երկեր», 4րդ հրտ., Հ. 36, էջ 553-559):

Անցեալում թաքցումս սխալների մերկայացման ու դրանք ուղղելու ներկայումս նշմարող միտումների պայմաններում, ժողովրդավարականացման, վերակառուցման ու հրապարակայնութեան գաղափարներով ոգեւորումս՝ Ղարաբաղի հայ բնակչութիւնը, որը 1920 թուականին 93, իսկ այսօր 75 տոկոս է կազմում, կրկին վեր հանեց Հայաստանին միանալու բազմիցս

արտաչայտած եւ նախկինում իր ակունքում խեղդուած բաղ-
ձանքը՝ համոզուած, որ այդ անգամ այն կ'իրականանայ:

Ղարաբաղում ահա արդէն 60 տարի չդադարող խմո-
րումներն ադրբեջանցիները վերագրել են, ասենք հիմա նոյնպէս
վերագրում են, Հայաստանի մտատրականութեանը, յատկա-
պէս գրողներին: Մինչդէռ մենք պէտք է խղճի խայթով ու մեծ
ափսոսանքով արձանագրենք որ երկար տարիներ անմասն ենք
մնացել Ղարաբաղի տագնապներին: Նախ եւ առաջ, լնացման
տարիներին երկու ժողովուրդների թմբկահարող քարեկա-
մութեան, գոնէ «**արտաքին պատեանը**» պահպանելու համար
եւ, երկրորդ, փոքրոգիօրէն վախենալով, թէ յանկարծ մեզ վե-
րոյիշեալ մեղադրանքները կը ներկայացնեն...

Անհրաժեշտ է մէկընդմիջտ հասկանալ, որ ղարաբաղ-
ցիների դժգոհութիւնը ոչ-թէ կողմնակի մարդկանց, տարբեր
«ռադիոձայների» կամ արտասահմանեան գործակալութիւննե-
րի կողմից է բորբոքում, այլ առաջ է գալիս 1921 թուականի
անարդարացիութիւնից, իրաքանչիւր ղարաբաղցու հոգում դրա
հետեւանքների մշտական ներկայութեամբ: Անարդարութիւն,
որն ինչպէս վարակի անհատնում աղբիւր՝ առանց դադարի
թունաւորում է մարմինը, առաջ բերում անցանկալի երեւոյթներ:
Աւելի ստույգ. մի կողմից վիրատրանքն ու դառնութիւնը՝ հարա-
զատ ժողովրդից բռնութեամբ անջատուած լինելու համար եւ
նրա հետ վերամիաւորուելու ձգտումը, յուսահատ բռնկումներն
ու խլրտումները: Միս կողմից՝ յամառ, անհեթեթ փորձերն ամէն
գնով կտրել, խզել Ղարաբաղի եւ Հայաստանի հոգեւոր կապե-
րը, ընդհուպ մինչեւ հետեւողական արգելքներ դնելը՝ Երեւա-
նից հեռուստատեսային հաղորդումների գծեր հաստատելու
հարցում:

Նոյնքան յամառ ու անհեթեթ փորձեր են արւում ժխտե-
լու գուտ հայկական, հինաւորց Արցախի հայերին պատկանե-
լու պատմական ճշմարտութիւնը, գաւառ, որը լոկ մոնղոլ-
թաթարական ցեղերի 1388 թուականի արշաւանքից յետոյ ան-

ուսնափոխուեց Ղարաբաղի: Բոլոր թոյլատրելի եւ անթոյլատ-
րելի միջոցներով ձգտում են ապացուցել Ղարաբաղում ադրբե-
ջանցիների բնիկ լինելը եւ, որ ամենազաւեշտականն է, պըն-
դում-համոզում են ղարաբաղցի հայերին, թէ նրանք ոչ-այլ ոք
են՝ քան՝ քրիստոնէութիւն ընդունած աղուանցի-ադրբեջանցի-
ներ, ուստի ծայրայեղ յիմարութիւն է հզօրագոյն թորքական
ցեղին պատկանելու երջանկութիւնից այդպէս մոլեգնօրէն
հրաժարուելը...

Այս ամէնին գումարում է մշտական տնտեսական,
վարչական ու քարոյական ճնշումը հայ բնակչութեան վրայ,
հալածանքները, մարզի ադրբեջանացումը, որ միեւնոյն նպա-
տակն է հետապնդում. այն է՝ ստիպել հայերին տեղահան լինե-
լու իրենց հայրենի հողերից, գաղթելու Միջին Ասիա, Ռուսաս-
տան, Հայաստան, ինչպէս Նախիջեւանում եղաւ, ուր 1920 թը-
ւականին 40 տոկոս կազմող հայ ազգաբնակչութիւնն այսօր՝ 1-2
տոկոսն է հազիւ: Հենց այս հանգամանքներն էլ կրկին ոտքի
հանեցին Ղարաբաղի հայութեանը, որը համամիութենական
դեկավարութեանը Պաշտօնական Դիմում յղելուց յետոյ, մեզ՝
Հայաստանի ժողովրդիս բազմաթիւ նամակներ ու կոչեր ուղղեց՝
խնդրելով պատուար հանդիսանալ իրեն: Եւ այս անգամ արդէն
բացարձակ դաւանանութիւն ու ստոր վախկոտութիւն կը լինէր
օգնութեան կանչին չարձագանգելը:

Թանկագին քարեկամներ,

Ահա Ղարաբաղի միջադէպերի համառօտ պատմութիւ-
նը, որը յամառօրէն թաքցում է խորհրդային ժողովրդից:
Մինչդէռ մեր քարոզչութիւնը (պրոպագանդան), մոլորութեան
մէջ գցելով բանից անտեղեակ խորհրդային մարդկանց, քա-
ղաքական կարճատեսութեամբ գործը յանգեցնում է երկու հա-
րեւան ժողովուրդների միջեւ աւանդական բախումների, կար-
ծես թէ իրադարձութիւնները նման ձեւով ներկայացնելն առա-
ւել ընդունելի է ազգերի համագործակցութեամբ հպարտացող

մեր երկրի համար, քան՝ այն փաստը, որ խորհրդային մէկ հանրապետութիւնում գտնուող հայկական ազգային մարզը ցանկութիւն է յայտնել միատրուելու Հայաստանի, նոյնպէս խորհրդային, հանրապետութեան հետ:

Ո՛վ կարող էր ենթադրել, թէ դարաբաղցիների բարձրացրած այդքան բնական ու հասկնալի պահանջները, որոնք նախորդ ամիսներին Մոսկոյա առաքուած մեծաքանակ նամակների ու դիմումների նիւթն էին հանդիսանում (դրանցից մէկի տակ իմ ստորագրութիւնն էլ է դրուած), մեր կուսակցութեան ղեկավարութեան կողմից այդ աստիճան հետետողական հակազդեցութեան կը հանդիպեն: Գուցէ, դարաբաղցիները շտապեցի՞ն իրենց գործողութիւններով, գուցէ դրանք պէտք էր յետաձգե՞լ մինչեւ որ երկրում վերակառուցումը կ'ամրապնդուի եւ ղեկավար մարմինները կը սովորեն ականջ դնել ներքեւից եկող ձայներին, ինչպէս ասում են՝ «**կը վարժուեն ժողովրդավարութեանը**»: Այդ դէպքում, եթէ կենտրոնական ղեկավարութիւնը համարում էր, թէ՛ ներկայ պահին դարաբաղեան հարցն անհնար է լուծել, կարող էր հանգիստ, առանց ժողովրդի ազգային արժանապատուութիւնը վիրաւորելու, մարդկայնօրէն, ինչպէս Գորբաչովի Փետրուարի 26ի Ուղերձում էր, բացատրել դարաբաղցիներին՝ նրանց առաջ քաշած պահանջների ժամանակավրէպ լինելը, խոստանալ նրանց, որ այդ հարցը կը քննարկուի եւ նրանք, նախորդ բոլոր 68 տարիների նման, համբերատարօրէն կը սպասէին վերին որոշմանը:

Սակայն տեղի ունեցաւ դառն հետեւանքներով յղի սըխալը. Փետրուարի 21ին կոմկուսի Կենտկոմի Քաղբիւրոն չափազանց հապճեպ վճիռ կայացրեց, որ Ղարաբաղի եւ Հայաստանի համաժողովրդական իրաւացի շարժումը որակուած էր՝ որպէս հասարակական կարգուկանոնի, ծայրայեղական ազգայնամոլների կողմից հրահրուած, խախտում: Ահա այդ իսկ, ծայր աստիճան անարդարացի, ժողովրդի ներքին աշխարհն արհամարհող, բացայայտօրէն միակողմանի գնահատականից

էլ Ղարաբաղում ու Երեւանում սկիզբ առան համատարած յուզումներ եւ դժգոհութիւն, հանրաժողովներ եւ գործադուլներ:

Նոյն այդ միակողմանի գնահատականի հետեւանքով Ադրբեջանում հաւանութեան արժանացան ու գործի դրուեցին ողջ հակադարաբաղեան, հակահայ ուժերը՝ սկսած ռադիոհեռուատատեսութիւնից, վերջացրած՝ թերթերով ու հանդէսներով, մինչեւ արիւնոտ Սումգայթ, որն ազգային յարաբերութիւնների նոյնքան ծանր 2երնոքիլ հանդիսացաւ, խորհրդային հասարակութեան պատմութեան սեւ իրականութիւնը: Երեք օր տեւած, տարօրինակ ձեւով տեղական իրաւապաշտպան մարմինների կողմից արգելքի չհանդիպած, ըստ բոլոր նշանների՝ փութաջանօրէն կազմակերպուած այդ կոտորածը ոչ-միայն Ադրբեջանի խայտառակութիւնն է, այլեւ՝ ողջ Խորհրդային Միութեան, 21րդ դարի շեմին կանգնած, նրբագոյն կիբերնետիկական բարբեր ու տիեզերանաւեր ստեղծող մարդո՛ւ խայտառակութիւնն է:

Մասնատրապէս, ուզում եմ ընդգծել, որ Ղարաբաղի ու Հայաստանի օր-օրի աճող յուզումներում, որոնք սկզբում 2-3, իսկ վերջում՝ 700 հազար մարդուց էին բաղկացած (երեւանեան ցոյցեր) իր զգալի «ներդրումն» ունի համամիութենական հեռուատատեսային «**Ժամանակ**» («Վրեմիա») ծրագիրը, որն իր, օրէցօր առաւել անպարկեշտ ու միտումնաւոր դարձող տեղեկութիւններով, կարծես նպատակ էր դրել մեր ժողովրդին հաւասարակշռութիւնից հանել, մղել նրան անցանկալի գործողութիւնների:

Բայց եթէ նրան այդ բանը շլաշողուեց հրահրել Երեւանում, ապա ինչ-որ անտեսանելի, թաքնուած ուժերի կողմից հովանաւորուող յիշեալ միակողմանիութիւնը Ադրբեջանին ազատ ու անպատիժ գործելու բացարձակ հնարատրութիւն ընձեռեց, որն էլ յանգեցրեց Սումգայթին: Նոյն այս միակողմանիութիւնը երես տուեց, սանձարձակեց ոչ-միայն Ադրբեջանում, այլեւ՝ Հայաստանում բնակուող ադրբեջանցիներին, որոնք հիմա (եւ

վատահ են՝ նաեւ ապագայում) ամէն-տեսակի գրգռումներ են առաջ բերում, վախեցնում են ղեկավարութեանը նրանով, որ իրենց ցանկութիւնները չբասարարելու դէպքում՝ հետեւելու են իրենց հայրենակիցների օրինակին...

Եւ մեր շրջանային ղեկավարները սարսափահար, չլինի՞ թէ գրգռեն «**դարաւոր եղբայրներ**» բարկութիւնը, պատրաստ են հնազանդօրէն կատարել նրանց բոլոր քմահաճոյքները, այն աստիճան, որ մեքենաներ են ուղարկում Վրաստան՝ «Բայրամի» առթիւ տօնական սեղաններին խնձոր ու ցիտրուսային պտուղներ հասցնելու: Մի՞թէ պարզ չի որ նման նուաստացուցիչ, տեղացի հայերի ինքնասիրութիւնը ոտնահարող զիջումներով, մանաւանդ եթէ դրանք մշտական բնոյթ կրեն, ժողովուրդների միջեւ իսկական բարեկամութիւն չես ստեղծի:

Պիտի ասեմ, նաեւ, որ մեզանից շատերը, չկարողանալով բացատրել կենտրոնական մարմինների բազմաձայն կողմնակալութեան պատճառները, հակուած ենք մտածելու՝ թէ այստեղ էլ է կիրառուել անհրաժեշտ մարդկանց շահագրգռուածութիւնը բորբոքելու ամենագօր միջոցը, որի բարձրագոյն արտաշայտութիւնը Բաքուի տխրահռչակ արարողութիւնը եղաւ, երբ միլիոնատոհմ հեռուստադիտողների ու ներկաների աչքի առաջ Բրեժնեւի, չգիտես, ծերութիւնի՞ց թէ նորի ձեռքբերման հաճոյքի կանխավայելումից դողացող մատին աստղաշափակական գնի ադամանդէ մատանի դրեցին...

Սակայն Մարտի 21-ից առաջ ի ցոյց բերուած կողմնակալութեան բոլոր ձեւերը, լինի դա «**Ժամանակ**» ծրագիրը թէ կենտրոնական մամուլի ապակողմնորոշող հրապարակումները, լոկ մանկական խաղեր էին, փոքրիկ առուակներ՝ ստի ու պախարակման այն հեղեղի համեմատ, որ Մարտի 21-ին «**Պրաւդա**»-ն վիժեց մեր գլխին իր «**Ջգացմունքներ ու ողջմտութիւն**» յօդուածով: Երեւի գալիք ժամանակները կը պարզեն՝ թէ ում կողմից եւ ինչ նպատակներով էր կազմակերպուել յիշեալ յօդ-

ուածը: Անկախ ամէն-ինչից, մենք յայտարարում ենք, որ այդ յօդուածը մեր ժողովրդի համար հոգեկան Սումգայթ հանդիսացաւ, որը ջախջախեց ոչ-թէ մեր մարմինն, այլեւ հոգին բզկտեց, ոտնահարեց մեզ բարոյապէս:

Պէտք էր բացարձակապէս գուրկ լինել կատարուածի մէջ խորանալու ընդունակութիւնից, իսկ անելի ճիշդ՝ ցանկութիւնից, որպէսզի այդքան կեղտ թափել եւ պղծել մեր 7նօրեայ հանրաժողով-ցոյցերը, որոնց ընթացքում մեր ժողովուրդն, ասես, արթնացաւ, կրկին վերածնուեց, մաքրուեց լճացման տարիների տիղմից ու բորբոսից, ժամանակաւոր ձեռք բերած եսասիրութեան, ընչաքաղցութեան, ազգային ու հասարակական անտարբերութեան յատկութիւններից եւ, գլուխը բարձր՝ յառնեց իր ճակատագրի, իր փառահեղ պատմութեան առաջը կանգնեց հպարտօրէն, միաձոյլ, վեհաբար, կանգնեց՝ ինչպէս վայել է իր բիբլիական ակունքների կորուսեալ վկայութիւնները վերականգնած հնագոյն ազգին:

Որտեղի՞ց հասկանային «**Ջգացմունքներ ու ողջմտութիւն**» յօդուածի պատուիրատուները, որ այդ բազմահազար ժողովրդին՝ մտաորականութեանը, բանութեանը, գիղի աշխատատեղերին ոտքի էր հանել ու հաւաքել մայրաքաղաքում ոչ-միայն Լեոնային Ղարաբաղի խնդիրը: Նրանցից իրաքանչիւրի հոգում զարթնել էին պատմական յիշողութեան գեները:

Այստեղ էր եւ 1915 թուականի ողբերգութիւնը, նրանց յետնորդների ցան ու պողթկումն, ում հայրերն ու պապերը 70 տարի առաջ ծուստուել ու ոչնչացուել էին:

Այստեղ էր Արաքսից այն կողմ թողնուած հարազատ վայրերի կարօտը՝ որպէս վաղուց ի վեր խամբած աստղի հեռաւոր լոյսը, որը կոչում էր միատրուելու, որպէսզի մէկը միսին ապաւինելով՝ մէկմէկու մէջ գտնեն կորցրածը:

Այստեղ էր դժգոհութիւնն այն բանից, որ խորհրդային կառավարութիւնը հարկ եղած չափով կանգնած չէ հայ ժողովրդի թիկունքին՝ ի պաշտպանութիւն վերջինիս իրաւունքների

Միացեալ Ազգերի Կազմակերպութիւնում, ուր ահա արդէն 20 տարի է քննարկում եւ իր վերջնական վճիռը չի գտնում հետեւեալ հարցը. Թորքիան մեղատու ճանաչե՞լ հայերին դէմ սանձազերծած, 20րդ դարի առաջին ցեղասպանութեան մէջ:

Դժգոհութիւն՝ նաեւ այն բանից, որ հանրապետութիւնում շարունակում է բարձրիքի վիճակը, կաշառակերութիւնը, դրամաշորթութիւնը, բիրտկրատիան ու կամայականութիւնները, որ Հայաստանն ու նրա մայրաքաղաքը շնչահեղձ եւ լինում քլորոպրէնից զանցող այլ թունատու գազերից, որ իր սպառնալի գոյութիւնն է շարունակում Երեւանից ոչ հեռու, երկրաշարժային գօտում, խմելու ջրի աւազանի վրայ կառուցուած առոմային էլեկտրակայանը:

Այս ամէնի հանրագումարն էր Երեւանի օրեր տեսած ցոյցի մասնակիցների հոգում, որն է՛լ պոռթկաց Ղարաբաղի առիթով եւ որին «**Զգացմունքներ ու ողջմտութիւն**» յօդուածի վերակառուցմանը հակառակ ընթացող հեղինակներն իրենց կարծրամտութեամբ այլ բնութագիր տալ չկարողացան, քան՝ «**հակասոցիալիստական գարշահոտ**» վերագրելը: Եւ դա այն դէպքում, երբ իր Հարաւարտի կատարած այցելութեան ժամանակ Մ. Ս. Գորբաշովը յայտարարեց, որ բորբոքումները Լեռնային Ղարաբաղի շուրջը հակասոցիալիստական-հակախորհրդային բնույթ չեն կրում եւ որ «**խօսքն այդ շրջաններում մշակութային, ներազգային հարցերի գոյութեան մասին է**»:

Պէտք էր զուրկ լինել տարրական նրբանկատութիւնից, դոյզն իսկ քաղաքավարութիւնից, ուրիշ ժողովրդի հանդէպ յարգանքի գգացումից, որպէսզի Երեւանի հրապարակներում ու փողոցներում հաւաքուած 700 հազար հոգու բնազդական ինքնակազմակերպուածութիւնը, զսպուածութիւնը, ինքնատիրապետումը, ժամերով ուրքի վրայ կանգնած մարդկանց հաց ու ջրով, իսկ ուժասպառ տարիքատուներին շտապ օգնութեամբ ապահովելու պատրաստակամութիւնը, հայրենակիցների համերաշխութեան այդ անսահման արտաչափութիւնը ծաղրի են-

թարկել, ծանակել՝ մեղադրելով մեզ նախօրօք «**կազմակերպուած կազմակերպուածութեան**», ամիսներ, նոյնիսկ տարիներ առաջ ստեղծած կոմիտէների եւ, Աստուած գիտէ, էլ ինչ անդրովկիականութեան գործակալների հետ կապերի մէջ: Եւ ահա այդ ամբողջը, ժողովրդի ոգու այդ վսեմ արտաչափութիւնը ցինիկաբար համարուեց «**փողոցային դեմոկրատիա**»:

Այդ դէպքում ինչպէ՞ս անուանել պաղեստինցիների կամ իրլանդացիների ամէն-օր հեռուստատեսութեամբ ցուցադրուող եւ մեր հասանութեանն արժանացող ցոյցերը: Նո՞յնպէս «**փողոցային դեմոկրատիա**»:

Իսկ ինչ վերաբերում է «Ղարաբաղ» կոմիտէներին, ապա դրանք կեանքի էին կոչուած, կազմակերպուած էին ժողովրդական տարերքով եւ իրենք էլ իրենց հերթին կազմակերպում էին այդ տարերքը: Դա փոխադարձ կապ էր՝ մէկը միւսին սնող, եւ այդ կապի շնորհիւ բազմահազարանոց հանրաժողովների ու երթերի ժամանակ ոչ-մի ճիւղ չկոտորուեց, ոչ-մի կոպիտ բառ չարտասանուեց, չարձանագրուեց նաեւ հասարակական կարգի խախտման ոչ-մէկ փաստ:

Այս «Ղարաբաղ» կոմիտէները վերակառուցման օրօք այդքան յաճախ հոլովուող նոր մտածելակերպի ու զանգուածների հասարակական ակտիւութեան արտաչափութիւնն էին եւ չնայած վերակառուցմանը հակադիր ուժերը վարկաբեկեցին ու պաշտօնապէս կազմալուծեցին դրանք, սակայն յիշեալ կոմիտէները կը մնան՝ որպէս ժողովրդավարման առաջին օրինակներ, նրանք հասարակութեան մէջ հետք կը թողնեն ու կը շարունակեն մարդկանց հոգեբանութիւնը վերափոխող իրենց ազդեցութիւնը:

Միայն որոշակի նպատակներ հետապնդող չինովնիկներն ու նրանց մանկլաիկները կարող էին կշեռքի մի նժարին դնել մարդասպան-ջարդարարներին, հարցերը Սումգայթով լուծողներին եւ միւսին՝ մեզ, Երեւանում ու Ղարաբաղում խաղաղ ցոյցի դուրս եկածներին, ընդ որում, յատուկ նախազգու-

շացումներով խնայել առաջիններին եւ մամուլում ու հեռու-տատեսութեամբ մշտական նուաստացման ենթարկել նրանց, ովքեր արինահեղութեանն ու սպանդին իրովի պատասխանեցին, ինչպէս վայել է կենսունակութեան եւ շարին դիմակայելու սեփական չափանիշներն ունեցող ժողովրդին. նրանց, ովքեր Մարտ 8ին գնում էին Ծիծեռնակաբերդ, դէպի Եղեռնի զոհերի յուշարձանը, ժողովրդական իմաստուն բնագրով, որ Սումգայթը 1915 թուի Ապրիլի 24ի շարունակութիւնն է: Քայլում էին հազարաւոր կանայք, երեխաներ, յետոյ նաեւ տղամարդիկ՝ իրենց գլուխը խոնարհելու նոր զոհերի յիշատակին. համեստ բանութեամբ ընտանիքների՝ կոտորուած իրենց բնակարաններում, սեղանի շուրջը, հեռուստացոյցի առաջ, անարգուած կանանց ու աղջիկների, նրանց պաշտպան կանգնած սպանուած լուսադէմ գինուորների, նաեւ այն աղրքեջանցիների յիշատակին, որոնք հաւատարիմ մնացին մարդ կոչուելու վսեմ պատուին ու իրենց կեանքի գնով փորձեցին փրկել հարեան-հայերին: Դեռ երկար մեր իշողութեան մէջ կը մնան նրանց քայլերը, ովքեր լուռ, ինքնամիտք բարձրանում էին բլուր տանող ոլորան ճանապարհով: Այդ քայլերի արձագանգը համաժողովրդական վիշտն ու բողոքն էին, անգօրութիւնն առնականութեան վերածելու դարերով փորձուած իմաստութիւնը. յուսահատութեան մէջ ուժ գտնելը, անարդարութեան օղակից դուրս արձնել կարողանալը դէպի վեհ Արդարութիւն:

Համամիութենական մամուլը, հեռուստատեսութիւնն ու դրանց պետերը խուլ ու համր գտնուեցին այդ քայլերի արձագանգների հանդէպ եւ, փառք Աստծոյ, մենք երախտապարտ ենք դրա համար, քանզի մեր ժողովրդի վշտի ու սգոյ իր նմանը չունեցող արտայայտութիւնը նրանք կարող էին նոյն կերպ պղծել, ինչպէս պղծեցին այն ամէնն՝ ինչ իսկական ժողովրդավարութեամբ եւ հրապարակայնութեամբ օժտուած ազնի հասարակութեան մէջ կ'ընկալուէր, որպէս հոգու եւ ոգու խիզախում:

Այդ պաշտօնաւոր լրտեսների համար առաւել մատչելի, անկեղծ ասենք, ատելի ձեռնառու կը լինէր լսել, ինչպէս Մարտի 19ին Կինոյի Տանը կայացած ժողովին երկու-երեք տաքացած երիտասարդներ, անվերջ վիրատրանքներից ու ծանակումից ինքնատիրապետումը կորցրած, կոչ էին անում սումգայթեան ջարդի գործը յանձնել միջազգային դատարանին, քանի որ խորհրդային կառավարութիւնը թաքցնում է դրա իրական չափերը, Ղարաբաղի խնդիրը չլուծելու դէպքում՝ Հայաստանը յայտարարել «անկուսակցական հանրապետութիւն», առաջարկում էին նաեւ ուրիշ յուսահատ քայլեր:

Ես կարող եմ պետական անվտանգութեան գործին այդքան նուիրուած խմբագրութիւններին ձրիաբար տրամադրել էլ ատելի ծանրակշիռ, յատուկ «դոսիէ»ի սազական, այդ նոյն բնոյթի տեղեկութիւններ:

1988 թուականի Մարտի 23ին մենք բոլորս, թէ՛ Հայաստանում եւ թէ Ղարաբաղում, ոչ-թէ խմբուած (ահա արդէն 2 ամիս է մեզանից ոչ-որ չի կարողանում տանը մեճակ մնալ), շունչներս պահած սպասում էինք Գերագոյն Խորհրդի նախագահութեան որոշմանը՝ ուրախալի լուրն առնելու յոյսով: Ես նոյնպէս գտնում էի ծանօթներիցս մէկի տանը: Երբ «ժամանակ» ծրագրի խօսնակը դժնդակ ձայնով յայտարարեց նախագահութեան վճիռը՝ ամէն-բան թողնել ինչպէս որ է, առաւել եւս, երբ հանրապետութիւնների ղեկավարները դատախազական տոճով սկսեցին մատ թափահարել առանց այդ էլ մի անկիւնում կծկուած որբուկ-Հայաստանի վրայ, որը յանկարծ համարձակուել էր չհնազանդուել, բոլորիս գլխին, ասես, սառը ջուր լցրեցին:

Քարացածութեան մի-քանի վայրկեանից յետոյ զայրոյթի ձայներ պայթեցին: Ամէնից առաւել վրդովուած էր երիտասարդութիւնը: Տանտիրուհու դուստրը՝ մասնագիտութեամբ արուեստագէտ, փխրուն մի աղջիկ, յուզմունքից դողացող ձայնով քացագանչեց.- «Եթէ այդպէս է, ես էլ զէնք կը ճարեմ, ես էլ

կը սովորեմ երեխաներ մորթել, երեսում է, մարդասպանների հետ աւելի են հաշուի նստում՝ բան՝ մեզ նմանների»։ Տղաներից մէկը նրան ընդհատեց. «Եկէք դիմենք Թուրքիային, ասենք որ Ռուսաստանի հանդէպ մեր հակուածութեան համար մեղանշում ենք, որ մենք այսուհետեւ...»

Ինչ-որ մէկը թոյլ չտուեց նրան խօսքն ասարտել. «Հապա ի՞նչ երեսով ենք նայելու Արարատին»։ Բոլորն ասեւ միանգամից սթափուեցին, ուշքի եկան, մի-բանիսի աչքերին արցունքներ չայտնուեցին, յուսախաբութեան ու անելանելիութեան արցունքներ. «Ոչ, դա լինելու բան չէ, աւելի լաւ է դիմենք Կանադային, Աւստրալիային, խնդրենք մեզ մի հողակտոր տրամադրել եւ ողջ ժողովրդով տեղափոխուենք այնտեղ։ Տեսնում ենք, որ այստեղ մեզ կամենում են կոխկռտել՝ որպէս ազգի... մինչեւ վերջ»։

Այնուհետեւ հնչեց էլի մի տնքացող ձայն. «Լաւ, տեղափոխուենք, բայց ո՞ւմ ենք թողնելու մեր տաճարները, մեր խաչքարերը, մեր Երեւանը»։

Դուք կարո՞ղ էք պատկերացնել, յարգելի Սերգէյ Սերգէեիչ, Վիսչեսլաւ Վսետլոդովիչ, Վենիամին Ալեքսանդրովիչ, Միխայիլ Ալեքսանդրովիչ, որ այդ «Լաւ, տեղափոխուենք...» բառերն ինձ էին պատկանում, այո, հենց՝ ինձ...

Ահա թէ ինչպիսի բառեր է ստիպում արտասանել անելանելիութեան պահը, ստիպում է ապստամբել սեփական անձի, սեփական էութեան, դարերի դէմ...

Նկարագրեցի մեր հակազդեցութիւնը Գերագոյն Խորհրդի որոշմանը եւ մտածեցի յանկարծ այս արտայայտութիւնները ընկնեն տարբեր «օւշարենկոնների» ձեռքը։ Չէ, ես չեմ վախենում, թէ այդ բառերը կը վերագրուեն Օժեգովի բառարանով ստուգուած «հրահրմանը», այսպէս կոչուած, «արեւմտեան ռադիոձայների» կողմից եւ կամ տաք-տաք վկայութիւններ կը դառնան մի նոր, ջախջախիչ յօդուածի համար։ Վախենում եմ նրանից, թէ՛ ինչպիսի քմծիծաղով են ընդունելու եւ ինչ հնատն

զգացմունքայնութիւն համարելու «Ո՞ւմ ենք թողնելու մեր տաճարները, մեր խաչքարերը, մեր Երեւանը», «Հապա, ի՞նչ երեսով ենք նայելու Արարատին» խօսքերը։ Բայց դա ինչո՞ւ, այդ ի՞նչ ցուցմունքի համաձայն ես պարտ եմ մտածելու, թէ մեր բաներն ինչպէ՞ս կ'արձագանգեն նրանց գլխում։ Ո՞վ է իրաւունք տուել նրանց, այդ նորայայտ թուղթ-մրոտող կամակատարներին իրենց գրիչները սրաշեղքի տեղ թափահարելու անտիկ ժամանակներից մեր օրերը հասած ժողովրդի վրայ, որը սովոր է իր խիղճն ու գործերը միայն իր սրբազան լեռան դատին ներկայացնել եւ, ո՞վ է դրանց թոյլ տուել որ այդ ամէնն անեն սոցիալիզմի, վերակառուցման, ժողովրդավարութեան, Լենինի անունից, որն իր վերջին գրառումներում պատուիրում է նրբանկատ ու զգուշ գտնուել փոքրաթիւ ժողովուրդների ազգային զգացմունքների նկատմամբ։

Թանկագին բարեկամներ,

Այս օրերին մենք բազմաթիւ նամակներ ենք ստանում տարբեր ազգութիւնների մեր բարեկամներից, որոնք իրենց աջակցութիւնն ու մասնակցութիւնն են արտայայտում. Միխայիլ Գուդիցից, Վալենտին Ռասպուտինից, Անդրէյ Բիտովից, Միխայիլ Մատուսովսկուց, Ֆազիլ Իսկանդերից, Ստանիսլաւ Ռասսադից, Միխայիլ Լոտմանից, Կրուպնիկից եւ շատ ուրիշ յայտնի ու անյայտ մարդկանցից։ Հայաստանի «ջոջերը», չզիտես, վախենալով երկրով-մէկ ճոռացող իրենց բազկաթոռները կորցնելու՝ ց թէ որպէսզի «կրքեր չբորբոքեն», արգելում են հրապարակել այդ նամակները։ Ես գտնում եմ, որ մեր դեկավարների ոչ-խելացի զգուշարութիւնը վնաս է հասցնում ժողովուրդների իսկական բարեկամութեանը։ Չէ՞ որ այսօր իրեն այդքան միայնակ զգացող մեր ժողովրդին հեռագրերի ու նամակների հրապարակումը կ'օգնէր աւելի թեթեւ շնչելու։

Մեր անկեղծութեանն ու դիրահաւատութեանը, մի ան-

պատշաճ դաժանութեամբ տրուած՝ պատասխանի արդիւնքը հանդիսացող այս դառն հասունութիւնը շատերիս ոչ-միայն կը հրի դէպի հոգեկան ընդլատակ, ներքին յուսահատութիւն եւ օտարացում, ներքին գաղթ, այլեւ աղետալի շափերով կ'արագացնի արտագաղթը դէպի Ամերիկա: Իսկ մեզանից նրանք, ովքեր ամենայն խստութեամբ դատաւարտում էին հայրենիքը լքողներին, արդ ոչ-մի բառով չեն կարողանայ կանգնեցնել նրանց: Ինչի՞ համար պարտադրել մարդկանց այսուհետեւ էլ ջարդուիշուր լինել, ամենափոքր չափով իսկ վերակառուցուելու յոյս չներշնչող, բիրտկրատական մեքենայի անիւների տակ: Չէ՞ որ ամէն-մէկը չէ, որ համաձայն է յանուն գաղափարի պահպանել Հայրենիքը, դառնալ հայրենի յուշարձանների՝ Ջուարթոնցի, Էջմիածնի պահակը, երեխաներին մեծացնել քլորոպրէնով թունաորում երկնքի ներքոյ, զաւակներին ենթարկել, իրաքանչիւր պահ պայթել սպառնացող, ատոմակայանի մահաբեր մտազայթահարմանը:

Ասա՛ղ, ախ ներքին ու արտաքին գաղթին չես դիմակաչի ո՛չ «Ղարաբաղ» կոմիտէների կազմալուծմամբ, ո՛չ շրջկոմների ու քաղկոմների սկսած հետապնդումներով, ո՛չ Երեւանի վրայ պտտուող ահեղաշունչ ռազմական ուղղաթիռների դողդիւնով, որոնց ժողովուրդը դառն հեզմանքով անուանեց «**վերակառուցման**» ծիծեռնակներ, ո՛չ երեւանեան հրապարակներն ու փողոցները ռուս բարետես գիւտորներով լցնելով, ում, ի դէպ, մենք 300 տարի սպասել էինք, եւ ում մեր աղջիկները հին սովորութեամբ ծաղիկներ էին նուիրում...

Սակայն մի կողմ թողնենք Երեւանի թատերական (օպերայի) հրապարակը եւ տեղափոխուենք Ղարաբաղ, որն էլ հանդիսանում է ողջ երկրին ընդգրկած դրամայի իսկական թատերաբեմը եւ որտեղ, ենթադրում եմ, ձեռքից ձեռք է անցնում Խ. Մ. կոմկուսի Կենտկոմի ու նախարարների Խորհրդի վճիռը՝ մարզի սոցիալ-տնտեսական, մշակութային վերափոխումների մասին:

Հաւանաբար, որոշման տակ իրենց ստորագրութիւնները կրած՝ յարգարժան ընկերներ Մ. Ս. Գորբաչովն ու Ն. Ի. Ռիժկովը զարմացած են, որ Լեոնային Ղարաբաղի բնակիչներին չեն ուրախացնում այդ որոշման մէջ տեղ գտած բաւական շոայլ խոստումները եւ նրանք շարունակում են իրենցը պնդել՝ պաւանջում են անջատում Ադրբեջանից:

Եւ այնչափ կ'ուզէի, որպէսզի դուք՝ «**Իզվեստիա**» յում տպագրում յօդուածի յարգելի հեղինակներ, դիտէիք Ղարաբաղի դէպքերը դրոշմած ժապաւէնները: Այդ պատկերներում զարհուրանք են պատճառում ոչ-թէ Ղարաբաղին սահմանակից Աղդամի շրջանի ադրբեջանցիների կողմից ջարդուիշուր արում մեքենաներն ու կրպակները եւ, նույնիսկ, ոչ այնքան հիւսանդանոցներում վիրակապում ու գիպատորում, ծեծում ու խեղանդամում հայերի աղեկէզ, սարսափազդու տեսքը, այլ՝ Ստեփանակերտի քառանկին հրապարակում հաւաքուածների վիճակը: Մարդը, եթէ նրա կրծքում սիրտ է բաբախում, այլ ոչ «սպարատչիկին» բնորոշ ապարատ, չի կարող առանց փշաքաղուելու նաչել այդ մարդկանց, որոնք, ասես քառակուսի վանդակն ընկած, պատառոտուող սրտով զարկում են երկաթաճաղերին, անընդմէջ վանկարկելով. «**Հա-յաս-տան, Ար-մե-նիա**»: Այդ հպարտ, դարերով չընկճուած, իրենց քաջութեամբ փառաբանուած ղարաբաղցիները, որոնք երկրին 5 մարշալ, 20 Խորհրդային Միութեան Հերոս, 44 հազար Հայրենական Մեծ Գատերազմի (Չրդ Աշխարհամարտի) գիւտոր են տուել, մեր օրերում հասցուել են նման վիճակի... Եւ ահա նրանց Հայաստանի փոխարէն մատուցում են «հասարակական-տնտեսական վերափոխումներ», այն էլ դրանց ներդրումը յանձնարարելով Ադրբեջանի այլեւայլ նախարարութիւններին ու հաստատութիւններին: Ղարաբաղցիներին քաջ յայտնի է նման վերափոխումների գիճը: Չէ՞ որ արդէն քանիերորդ անգամ թղթի վրայ այնքան գեղեցիկ, դրախտային կեանք սուլող որոշումները նման «**ներդրողների**» խորամանկ ձեռքերով ճիշդ

հակառակ արդյունքն են տուել. միջոց են ծառայել մարզի էլ-աւելի արդիւնաւէտ ադրքեջանացման համար:

Ծնորհակալութիւն կուսակցութեանն ու կառավարութեանը՝ նոր դպրոցների բացման, բնակատարածութիւնների ընդլայնման, նոր ճանապարհների անցկացման համար, սակայն Ղարաբաղում առանց այդ էլ նոր բնակարանների կարիք չեն զգում, քանի որ, նախ, բնակչութեան բնական աճ գոյութիւն չունի եւ, ամենակարեւորը, բազմաթիւ դարաբաղցիներ, շրիմանալով ազգային ու բարոյական հալածանքին, լքել են իրենց տներն ու դիմել՝ օտար վայրեր:

Լայնատարած բնակարաններից առաւել՝ դարաբաղցիներիւն անհրաժեշտ է ազատ շնչելու տարածութիւն՝ մարդու գոյութեանը վայել: Թէկուզ եւ առատ ու կուշտ, մէկ է՝ սնունդը նրանք չեն կամենում ընդունել վանդակաճաղերի միջով: Նրանց պէտք չէ դրամը — թող նույնիսկ 400 միլիոն — այն ձեռքերից, որոնք ճանկերը պրելով պատրաստ են մխրճել նրանց սիրտը, եթէ Մոսկուան թէկուզ մի պահ շրջի իր հանդարտեցնող, զգօն հայեացքը:

Նրանք գիտեն, որ շուտով, շատ շուտով, գործի դնելով Խ. Մ. Գերագոյն Խորհրդի Որոշման՝ կարգ խախտողներին պատասխանատուութեան կոչելու կէտը, իրականացնելով «**Բաքինսկի ռապոչի**» թերթի սպառնալիքները՝ «**Ղարաբաղի խժողութիւնների**» մեղաւորներին խստիւ պատժելու մասին, Բաքում նստած գլխաւոր եւ ոչ-գլխաւոր դատախազներն ու իրենց նմանակները, եղբայրական բարեկամութեան պատառներով ծածկուած, մոլաբար արբանքով հաշուեյարդար կը տեսնեն «**Կոունկ**» կոմիտէի անդամների հետ, Ղարաբաղի ողջ հայութեան հետ, այդ անհնազանդ սպարտակների, որոնք յանդրգնեցին ապստամբել ժամանակակից «**կրասների**»՝ ալիւնների ու բաղիրովների դէմ...

Եւ Սումգայթի դէպքերը խայտառակ լռութեամբ պարուելու հետ մէկտեղ՝ յանգաւորուած ու արձակ ներքողներով

որոտաճայն գովերգուած, առասպելի վերածուած Խորիման Աքստովան, որն իր տոհմական սովորութեան համաձայն՝ զըլխաշորն է նետել հայերի վրայ յարձակուած աղդամցի-ջարդարարներին կանգնեցնելու համար, հագիւ թէ այդ հաշուեյարդարի ժամանակ կը կարողանայ խելքի բերել վրէժի ծարաւ պետական այրերին...

Ահա թէ ինչու են երկաթաճաղերին զարկում դարաբաղցիները, ինչու են այդպիսի յամառութեամբ ձգտում միանալ իրենց հարազատ ժողովրդին: Եւ պէտք է ոչ-միայն հոգեպէս, այլ նաեւ քաղաքականապէս կոչը լինել, որպէսզի երեխայի՝ իր մօրը մեկնած ձեռքերը եւ մօր ձգտումը՝ դէպի հարազատ զաւակը կոչել «**տարածքային յաւակնութիւններ**» կամ, ինչպէս ադրքեջանցի 250 գիտնականներն, ակադէմիկոս Վիկտոր Համբարձումեանին ուղղած, իրենց հեռագրում են արտայայտուել, «**Ադրքեջանի կարկանդակից համեղ պատառ պոկելու**» ցանկութիւն:

Աստծոյ սիրոյն, մեզ պէտք չէ այդ «**համեղ պատառ**» մենք վարժուել ենք ապրելու 30 հազար քառակուսի կմ.ից էլ պակաս քարքարոտ հողի վրայ, սակայն ազնուաբար ու վեհանձնօրէն ապրելու, այնպէս որ Ղարաբաղի 4,5 հազար քառակուսի կիլոմետրը միացնելով՝ միեւնոյն է, 2ինաստան չենք դառնալու:

Մենք այնպէս ենք յոգնել եւ հիմա մեր շուրջն ամեն-բան այնքան անիմաստ է թում, բացի այդ մեր արժանապատուութիւնից ցածր ենք համարում համաշխարհային գիտութեամբ հաստատուած պատմական ճշմարտութիւններն ապացուցելու համար վէճի մէջ մտնել, որ հաւատացէք, յարգելի հասցէատէրեր, անսահման երախտապարտ կը լինէինք բոլոր նրանց, ովքեր ոչ-թէ նենգասպառնալիքով (շանտաժ), հալածանքներով, անպատկառօրէն, այլ հանգիստ՝ գիտականօրէն հիմնաւորուած փաստերով, հաւաստիաբար կ'ապացուցեն մեզ, թէ Ղարաբաղը երբեք զուտ հայկական տարածք չի եղել, թէ հայկական գրերը

յղացող Մեսրոպ Մաշտոցը դեռ 5րդ դարում Արցախ անուանեալ Ղարաբաղում չի հիմնել առաջին հայկական դպրոցները, 13րդ դարի հայկական ճարտարապետության գլուխգործոց Գանձասարի վանքն ու Ղարաբաղի, համաշխարհային ամենատարբեր գիտական հետազոտություններում, ալբոմներում ու հանրագիտարաններում տեղ գտած, հարիրաւոր յուշարձաններն ու խաչքարերը ոչ-թէ հայերն են ստեղծել, այլ՝ աղուանցի-ադրբեջանցիները, որ մեզ իրենց ականաւոր աշխատությունները հայոց լեզուով ժառանգած՝ պատմագիրներ Կիրակոս Գանձակեցին, Մովսէս Կաղանկատուացին, Մխիթար Գոշը եւ, անգամ, հայկական այբուբենի տառերով ակրոստիքոս կերտած Դաւիթ Քերթոզը, նոյնպէս, աղուանցի-ադրբեջանցիներ են եւ թէ, իբր հրով ու սրով Ղարաբաղ խուժած ու աղուանական մշակութային արժէքները ոչնչացրած բարբարոս-հայերն այրել են վերոյիշեալ պատմիչների ստեղծագործությունների բնագրերը՝ նախօրօք թարգմանելով դրանք հայերէնի...

Ես ցանկանում եմ ամբողջութեամբ մէջբերել Նովոսիբիրսկից ստացուած հեռագրի տեքստը. «Մարտի 26ին մեր մանկավարժական ինստիտուտում հանդիպում կայացաւ շրջանաւարտ-բանասէրներու հետ: Դրանք Նովոսիբիրսկի մարզի գիւղերի ու քաղաքների ուսուցիչներն են: Նրանք պատուիրեցին իրենց հիացմունքը յայտնել Ձեր անձնուիրութեանը: Սրտի ցաւով իմացանք Լեոնային Ղարաբաղի իրադարձութիւնների մասին: Որոշակիօրէն գիտակցում ենք մեր պատասխանատուութիւնն այն ամէնի համար՝ ինչ կատարում է մեր երկրում: Երեւակայել չենք կարող Խորհրդային Միութիւնն առանց եղբայրական հայ ժողովրդի, որի դարաւոր մշակոյթը խորհրդային բազմազգ մշակոյթի անբաժանելի մասն է կազմում: Մեր անձնական հարստութեան մասը: Մաղթում ենք ողջ հայ ժողովրդին համբերութիւն, առնականութիւն, տոկունութիւն, ինքնատիրապետում: Մենք հաւատում ենք լաւագոյն ելքին, ողջամտութեանը: Հաւատում ենք մշակոյթին, որի կենսահաստատ ձայնը

պէ՛տք է լսուի: Մենք յաւերժ Ձեզ հետ ենք: Ուսանողների, ուսուցիչների, դասախօսների յանձնարարութեամբ՝ Էլվիրա Գորիուխինա»:

Անհնար է առանց յուզմունքի ընթերցել այս տողերը, միաժամանակ անկարելի է չնկատել հետեւեալ, յայտնի չէ՝ ինչպիսի հերթական ապակողմնորոշման արդիւնքը հանդիսացող սրտաճնլիկ արտայայտութիւնը. «**Չենք կարող պատկերացնել Խորհրդային Միութիւնն առանց եղբայրական հայ ժողովրդի**»: Մի անհանգստացէք, սիրելի նովոսիբիրսկցիներ, մենք դուրս չենք գալ Խորհրդային Միութեան կազմից, մանաւանդ որ գնալու տեղ չունենք, մեր թիկունքում Թուրքիան է, իր ատամների կրճտոցը չթաքցնող Թուրքիան:

Մենք երեք դար շարունակ մեր հայեացքը սեւեռել ենք դէպի հիւսիս, դէպի Ռուսաստան, նայել ենք փրկութեան յոյսով, սիրով ու հաւատարմութեամբ: Մինչդեռ, ըստ երեւոյթին, քաղաքականութիւնը սիրոյ հետ աւելի պակաս է հաշուի նստում, քան՝ ատելութեան:

Պատահական չէ, որ Մարտ ամսի «Հուրրիէթ» թուրքական լրագիրը «Խորհրդային մարդն ու ազգայնամոլութիւնը» յօդուածում, Ղարաբաղի դէպքերը մեկնաբանելով, գրում է, «...Խորհրդային ադրբեջանցիների համեմատ՝ խորհրդային հայերն աւելի մեծ պատրաստակամութեամբ են իրենց անձը զոհել յանուն կոմունիզմի: Սակայն Կրեմլը, հայերի եւ ադրբեջանցիների միջեւ տեղի ունեցածն ուսումնասիրելիս, հաշուի է առել ոչ-միայն թուրք-ազերիների, այլե՛ բոլոր թուրքերի կշիռը: Իրօք, Խորհրդային Միութիւնում թուրքերի թիւը հասնում է 50 (չիտուն) միլիոնի: Թուրքական այս վիթխարի զանգուածի դէմ յանդիման, ինչպիսիս էլ լինի հայերի արժէքը կոմկուսի աչքում, Կրեմլի հաշիւներում այն չի կարող թուրքերի արժէքը ունենալ»: Մեզ՝ հայերիս մնում է յիշել հին հայկական ասացուածքը. «**Թուրքն ինքն անհիծուած է, բայց նրա խօսքն՝ օրհնուած**»:

Եթէ իսկապէս, «Հուրրիէթ» թերթի ինքնագոհ եզրակա-

ցութիւնները ճշմարտացի են, յամենայն դէպս կ'ուզենայինք հասկանալ՝ որքանո՞վ է քաղաքականութիւն կոչուած գործօճին ձեռնառու մոռննալ, որ ցարական կառավարութիւնը միշտ ձրգտում էր իր հարաւային սահմանները բնակեցնել հայերով, իմանալով վերջիններիս աներկբայ նուիրութիւնը Ռուսաստանին, իսկ այժմ ապշեցուցիչ անհետատեսութեամբ ոչ միայն չի անհանգստանում հայ բնակչութեան նօսրանալով այդ շըրջաններում, այլեւ՝ նպաստում է հայերի ստոնցմանն ու օտարացմանը Ռուսաստանի նկատմամբ: Միթէ՞ Հունգարիայի, Չեխոսլովակիայի, Լեհաստանի դէպքերից եւ բրեժնեւեան մի շարք ուրիշ անմիտ քայլերից յետոյ, ռուսների հանդէպ աճող անբարեացակամութեան ակայութեամբ, այդչափ անէական է նաեւ հայերի անձնուէր աչքերում անվստահութեան ստուերներ ծնելը...

Այստեղ կ'ուզէի մի քանի տող մէջբերել մեզ ուժ հաղորդած մէկ այլ նամակից, որը Մոսկուայից մեզ յղել է ազգահոգեբան (Էտնոպսիխոլոգ), պատմական գիտութիւնների թեկնածու Գալինա Ստարովոյտովան. «**Ամէն-մէկին բախտ չի վիճակում ականատես լինել այն բանին, թէ՛ ինչպէս է ժողովուրդը կանգնում իր Պատմութեանը դէմ առ դէմ: Հետագայում, ինչպիսի ընթացք էլ ունենան իրադարձութիւնները՝ դրանք արդէն կայացել են, եւ ժողովուրդը դրանցից դուրս կը գայ ոչ այնպիսին՝ ինչպիսին նախկինում էր**»:

Արդարեւ, մարդկային ոգու հզօրութիւնը փորձող՝ երկամտեայ պայքարից յետոյ մենք «**դուրս ելանք ոչ այնպիսին՝ ինչպիսին նախկինում էինք**», ինչ-որ տեղ ուրիշ դարձանք, անելի հասուն: Դառնութեամբ տրուեց մեզ այդ հասունութիւնը, մեծ հաւատի փլուզման գնով, որոշ չափով 1905 թուականի Յունուարի 9ը յիշեցնող՝ փլուզում:

Մենք՝ սկզբում Ղարաբաղի ժողովուրդը, յետոյ նաեւ՝ Հայաստանի, դիմեցինք դէպի Չմեռնային Պալատը՝ Լեհինի անուան հրապարակը Ստեփանակերտում եւ թատերական հը-

րապարակը Երեւանում, համոզուած, որ կենտրոնական իշխանութիւնը կը հասկանայ մեզ եւ կ'ընդատաշի: Մենք գնում էինք սոցիալիզմի երկրի, ռուս ժողովրդի վերակառուցման նկատմամբ վստահութիւն արտայայտող ցուցապատառներով: Խորհրդային Միութեան կոմկուսի Կենտկոմի Գլխաւոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի մեծադիր նկարներով: Սակայն մեզ վրայ կրակ բացեցին: Կրակ բացեցին Քաղբիւրոյի եւ Գերագոյն Խորհրդի նախագահութեան վերոյիշեալ անարդար որոշումներով, զանգուածային տեղեկատուութեան միջոցների ծաւալած ստապատիր, արատաւորող քարոզչութեամբ՝ աղբրեջանական կողմի նկատմամբ ակնյայտ բարեացակամութեամբ: Կրակ բացեցին Սումգայթով:

Ովքե՞ր են դրանք՝ կրակողները, մենք չենք կարող հասկանալ, անելի ճիշդ, չափազանց ծանր է հասկանալը:

Մի՞թէ, իրօք, 3 եւ 50 միլիոնի յարաբերութիւնը հաշուի առնող, հասարակական ու ազգային արդարութեանն ի սպառ օտար «գորբալ» քաղաքագէտները:

Կամ էլ ցարական կայսերապաշտութեան մենատիրական ձգտումները ժառանգած ժամանակակից, Լեհինի բաւերով ասած, «**ռուսական բիրտ ժանդարմները**», որոնց նախ զարմացրեց, ապա զայրացրեց, իսկ յետոյ վախեցրեց, իր ակնկալիքներն այդքան միահամուտ արտայայտել յանդգնած սակաւաթիւ ժողովուրդի խիզախումը:

Եւ վերջապէս, գուցէ, վերակառուցման թշնամիները, որոնք շտապեցին քաղաքական, բարոյական ու վարչական ճնշումներով խեղդել ժողովրդավարութեան ու հրապարակայնութեան հազիւ ծիլ տուած ընձիւղները, այն է՝ Ղարաբաղի մարզկոմի նիստի եւ կուսակցական լիաժողովի վճիռը, որը ժողովրդի ազատ կամքի պաշտօնական հաստատումն էր, այնուհետեւ ղարաբաղցիներին պաշտպան կանգնած՝ երեւանեան ցոյցերը: Դրանով իսկ վերակառուցման հակառակորդները կամեցան, առաջին հերթին, դաս տալ Խորհրդային Միութեան

բոլոր ժողովրդներին, միաժամանակ նաեւ ցոյց տալ՝ թէ ինչի կարող են յանգեցնել վերակառուցման հոշակած ազատութիւնները...

Աչապէս թէ այնպէս, խաղաղօրէն փողոց ելածներին վրայ, մեզ բարոյապէս գնդակահարող, կրակ բացեցին: Եւ մենք այլեւ Յունուարի Ցի ժողովուրդը չենք, այլ՝ Յունուարի 10ի, մէկ օրուայ մէջ հասունացած ժողովուրդը:

Ես կ'աւէի, մեր ժողովրդին օգուտ կը տայ նման հասունութիւնը: Չէ, աւելի շուտ, հակառակն: Բայց նա, այդ դառն հասունութիւնը, կը ստիպի մեզ առաւել պթափ ընկալել իրականութիւնը, յենուել լոկ սեփական ներքին ուժերի վրայ, մեր տոկունութեան վրայ, շարուել պատրանքներին, ապագայի մեր տունն աւագի վրայ չկատուցել, կը ստիպի կորօրէն չհաստատալ ու հաստից չկուրանալ, կը ստիպի արտասահմանի հայերին այսուհետեւ Խորհրդային դեպքանատներին այդքան անշահախնդրօրէն ու նուիրուածութեամբ չծառայել՝ դրանց ու Խորհրդային Միութեան շորջը համակրանք ու բարեացակամութեան մշտական մթնոլորտ ստեղծելով, կը ստիպի նրանց առանձնապէս յոյսեր չկապել Խորհրդային Միութեան, Խորհրդային Հայաստանի հետ, շատկապէս, ինչ վերաբերում է հայկական հարցի վերջնական լուծմանը՝ կապուած Յեղասպանութեան նանաչման եւ Թուրքիայի նկատմամբ հողային պահանջարկների հետ, կը ստիպի սփիւոքահայութեանն ինքնուրոյն գործել, միտքը լարել՝ ազգի պահպանման նոր, սուսել վստահելի ուղիներ գտնելու համար:

Ես չեմ ուզում թուարկել նմանօրինակ անհեթեթութիւններ, միայն կը կրկնեմ, որ մենք անչափ շնորհապարտ կը լինենք բոլոր նրանց, ովքեր կ'ապացուցեն այդ, ի դժբախտութիւն մեզ, չափտեանս անապացուցելին եւ մենք, հանդարտուած ու հաշտուած, անհոգ կ'ապրենք՝ առանց այդ ստորացուցիչ վէճերի ու հոգեկան տառապանքների:

Եւ թող ձեզ չզարմացնի, յարգելի բարեկամներ, եթէ

մեր արտայայտենք ես մէկ, առաջին հայեացքից տարօրինակ, ցանկութիւն, որ ծագեց մեր մէջ այս օրերին. գոնէ Ղարաբաղը յայտնուէր սահմանի այն կողմում, Թուրքիայում, մեր գերուած գաւառների՝ Վասպուրականի, Մուշի, Բիթլիսի, Էրզրումի ու միւսների կողքին: Չէ՞ որ այդ դէպքում գոյութիւն չէր ունենայ մեզ վրայ այդքան թանկ նստած այն մոլորութիւնը, թէ հնարարութիւնը եւ ստորագրութիւնների միջոցով, աղերսելով երկրի Սահմանադրութեանը՝ Լեռնային Ղարաբաղը միատրել Խորհրդային Հայաստանի հետ... Չէր լինի այդ փոխադարձ տանութիւնն ու օտարութիւնը մեր եւ ադրբեջանցի գործընկերների միջեւ, որոնց հետ բարեկամներ ենք եղել, համագումարների ու յոբելեանների օրերին միմեանց ձեռք ենք սեղմել, եղբայրութեան ու բարեկամութեան մասին բառեր արտասանել...

Չէ՞ որ Նագիւմ Հիքմէթն ու ես վաղեմի բարեկամներ էինք, չնայած եւ սահմանի այն կողմում մնացած մեր զայթուած հողերն ու որբացած յուշարձանները լսերժ ապրել են իմ մէջ: Խրաքանչիւր հանդիպումի մեզ համար արդէն սովորութիւն էր դարձել գրկախառնուելը՝ ինչպէս քոյրը եղբօր հետ եւ, ամէն անգամ ես մի պահ ընկրկում էի ու կէս լուրջ-կէս կատակ կրկնում. «**Հողերը: Նախ վերադարձրէք մեր հողերը, յետոյ՝ կը գրկախառնուենք**»: Միշտ ժպտադէմ, պայծառաւես Հիքմէթը պատասխանում էր. «**Յեղափոխութիւն լինի՝ անպայման կը վերադարձնենք**»...

Որտեղի՞ց իմանար մեծ մարդասէրն ու կոմունիստը, որ իր եւ իմ կողմից գովերգուած կոմունիստական երկրում, բաղձալի յեղափոխութեան յաղթանակից 70 տարի անց 15 թուի մի նոր կիրառում է լինելու. խաբէութեան ու բռնութեան գնով գերուելու եւ ոչ-միայն ուրիշի հողերն ու յուշարձանները, այլև՝ մարդը, կենդանի մարդը եւ, որ իր՝ Հիքմէթի ցեղակից գրողներն ու մշակույթի գործիչները ցաւալի թեթեւութեամբ մոռացութեան են մատնելու Էնգելսի բառերը. «**Չի կարող ազատ լինել այն**

ժողովուրդը, որը կեղեքում է ուրիշ ժողովուրդները»:

Թանկագին ընկերներ, մենք բոլորս գիտենք եւ մեր գըրքերում, բանաստեղծութիւններում, բեմերից անդուլ կերպով կրկնում ենք, որ մարդու համար ամենաթանկը ազատութիւնն է, մարդկային ինքնասիրութիւնը, արժանապատուութեան զգացումը: Մենք ամէնքս ընդվզում ու գոռում ենք Սումգայթի մասին: Սումգայթը մարդու ֆիզիքական ոչնչացումն է, ա՛յն ցեղի «ազգային կատարելատիպ»ն ու մախնական, դասական գոչակերպը, որի մասին, դեռ 150 տարի առաջ Վիկտոր Հիգուի գրած «Յոյն Տղան» բանաստեղծութեան «Ամէնորեք մահ է ու աւերակ՝ այստեղով թորքն է անցել» բառերից յետոյ ոչ-մի բացատրութեան կարիք չի զգացում:

Մեր հասարակութեան համար, հասարակութիւն, որը մարդու գոյութեան նոր, առաւել մարդասիրական ուղիներ է փնտռում, պակաս ամօթալի չեն՝ բարեկամութեան մասին ցուցապատառներով վարպետօրէն քողարկուած՝ բոնութեան հրճարամիտ ձեւերը, երբ մարդը չի կամենում, իսկ նրան պարտադրում են ապրել այլազգի դաժան դրածոների ատելի իշխանութեան տակ, դրանց կամայականութիւններից շատերժ կախման մէջ: Դա հակամարդասիրական է, հակամարդկային: Դա ոչ միայն ազգի, այլեւ մարդու իրաւունքների խաչտառակ տուայտանքն է:

Այդ մասին մենք բոլորս, լինեն հայերը, ռուսները, ուկրաինացիները եւ կամ ուրիշներ, պարտաւոր ենք գոչել, ամբողջ ձայնով բողոքել, եթէ մենք իրօք բարձր գաղափարների ջատագովներն ենք:

Իսկ եթէ նուաստացուցիչ դրութիւնը, որում գտնոււմ են Ղարաբաղի մարդիկ, նախատեսոււմ է սահմանադրութեամբ, լինի դա ստալինեանը թէ՛ բրեժնեւեանը, հարկ է փոխել այդ սահմանադրութիւնը: Սահմանադրութիւնն է մարդու համար, ոչ թէ մարդը՝ սահմանադրութեան:

Այդ իսկ պատճառով, տեսնելով Ղարաբաղի ու Հայաստանի բոլոր կոչերն ու խնդրանքները՝ ինքնավար մարզը հայկական հանրապետութեան միացնելու մասին, մնում են անհետեւանք, մենք դիմում ենք ձեզ՝ բարեկամներ, եղբայրներ, արուեստի, գիտութեան ու մշակույթի ծառաներ, մարդկանց, ում սրտում արթուն է մեծ Ռուսաստանի խիղճը, օգնեցէք Լեռնային Ղարաբաղին, բարձրացրէք ձեր ձայնն այդ բազմաչարչար աշխատատր մարդկանց, ամենայն շարգանքի արժանի ազատամենչներին՝ ի պաշտպանութիւն:

Եթէ Լեռնային Ղարաբաղի վերամիաւորումը Հայաստանի հետ այդ աստիճան անհնարին է, թող այն մտցուի Ռուսաստանի կազմի մէջ, թող այն յատուկ ստատուսով կցուի Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդին, թող նրան հնարաւորութիւն ընձեռուի Ինքնավար Հանրապետութիւն կոչուելու եւ դրանով իսկ, գոնէ մասամբ, ինքնորոշն ապրելու եւ աշխատելու իրաւունք սրուի:

Իսկ ինչ վերաբերում է մեզ՝ Հայաստանի ժողովրդին, ողջ հայ ժողովրդին, ապա մենք վարժուել ենք հեշտութեամբ հաւատալուն ու անողորձաբար խաբուելուն: Մենք այդ հաշտով՝ դարաւոր **իմունիտետ** ունենք եւ դանդաղօրէն, փոճկալով, դրժուարութեամբ այս անգամ էլ ուշքի կը գանք, կը վերականգնենք մեր ուժերը:

Արդեօք վերստին կը հաւատա՞նք վերակառուցմանը, դա դեռ յայտնի չէ: Կեանքը ցոյց կը տայ: Միայն մի բան պարզ է. մենք կ'աղերսենք մեր հազարամեայ հոգեւոր պաշարներին ու կը շարունակենք ապրել:

Մեր պատմութիւնը մի ողբերգականօրէն լուսապայծառ տարեթիւ ունի՝ 451: Այդ թուին տեղի ունեցաւ Աւարայրի ճակատամարտը, ուր թուով բազմիցս գերազանց պարսից զօրքի

դէմ կռուելիս՝ հայերը ծանր պարտութիւն կրեցին: Ընկաւ զօրավար Վարդան Մամիկոնեանն, ընկան նրա ռազմիկները: Սակայն յանուն հայրենի հողի ու հաւատի մղումով աչդ մարտը, թող դա ձեզ չզարմացնի, մեր տարեգրութեան մէջ մտաւ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆ անունով: Ահա արդէն 15 դար շարունակ, ամէն տարի, Փետրուար ամսի երկրորդ շաբաթուայ Ուրբաթ օրը հայկական եկեղեցիների կամարների ներքոյ, հանդիսատք պատարագով նշում է աչդ տարեթիւր՝ որպէս ոգու եւ հաւատի տօն, ի յիշատակ Աւարայրում իրենց գլուխները խոնարհած անմահ Վարդանի ու նրա զինակիցների:

Եւ ահա մեր աչդ վիթխարի պարտութիւնն օգնեց մեզ յաղթելու:

Ինչպէս էլ որ մեզ վարկաբեկէն ու նսեմացնեն մեծերն ու փոքրերը, տեղական ու ոչ տեղական իշխանութիւնները, միեւնոյնն է, մենք մեր տագնապների ու յոգների վեհութեամբ յագեցած եօթնօրեակ պոռթկումները, երեսնցիների 700 հազարնոց ցոյցն ու Հայաստանի բոլոր ծայրերից ուտքով մեզ դիմող շարասիւնները, աշխարհի տարբեր ծագերում բնակուող հայերի համագգային արձագանգը, 1988 թուականի Փետրուարի 27ի աչդ անմոռանալի օրը մենք համարում ենք մեր բազմադարեայ պատմութեան աստեղնային ժամերից մէկը, համարում ենք ժողովրդական ոգու յաղթանակը, աչդ ոգու միասնութեա՛ն յաղթանակը: Աչդ յաղթանակը կ'օգնի մեզ ապրել, յուսալ, արարել:

Ողջ աշխարհի եւ Սովետների Երկրի մաքուր խիղճ ունեցող մարդիկ, նրանց արտցաւութիւնն ու խորթափանցութիւնը կ'օգնեն մեզ՝ ինչ ազգի էլ նրանք պատկանեն: Մեզ կ'օգնի իսկական ռուս մտատրական Վալերի Բրիտովի անունն ու գործը, որ 1916 թուականին, կամենալով հոգեպէս սատարել ցեղասպանութեան վերապրած ժողովրդին, հաւաքեց նրա «վեհանձնութեան վկայութիւնը» հանդիսացող բանաստեղծական ժառանգութիւնը եւ, հրատարակելով «Պոեզիա Արմենիի» հատըն-

տիրը, դրա ներածութիւնը ասարտեց այսօր էլ չափազանց արդիական հնչող բառերով. «Հայկական պատմութեան երկնակամարը քանի-քանի անգամ մթագնած սեւ ամպերի միջից, հաչ ժողովրդի կեանքը քանիցս պարուրած անեղ ու խեղդիչ մըշուշի միջից յաղթանակօրէն ճեղքել-անցել ու մինչեւ օրս էլ փայլում են հայկական բանաստեղծութեան հրավառ շողերը: Աչդ փառաստակումը մեզ լաւագոյն ատեփսն է թում Հայաստանի պատմական ճակատագրի համար նաեւ ապագայում»...


Աչդ, այն ժողովուրդը, որը կարողանում է պարտութիւնը յաղթանակի վերածել, որն իր հանճարեղ Նարեկացու շուրթերով՝ աստուածավայել ամենաթողութեամբ կարողանում է ներել նամայն մարդկութեան մեղքերը, կարողանում է Գեղարդի մայրերը հատելով՝ ստորգետնեայ խաւարից ճանապարհ կերտել դէպի երկինք, դէպի լոյսը, աչդ ժողովուրդը յարատեւելու է: Նա ինքն է նուանել իր ապրելու իրատունքը...

05.4.88 թիւ
Իփրական

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ



Բոխ եկեղեցի, արվանդանյան խաչքարերէն




Գ.

**ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՊԱՀԱՆՋԱՏԻՐԱԿԱՆ ԵԼՈՅԹՆԵՐՈՒՆ
(11 Փետրուարէն 22 Յուլիս 1988)**

- 11 Փետրուարին Լ.Ղ.ի մարզի կեդրոն Ստեփանակերտի մէջ ծայր կու տան ժողովրդային ցոյցեր, Ղարաբաղի Հայաստանին կցումը պահանջող թերթիկներու, ինկրագիբներու եւ բաց նամակներու ձեռքէ ձեռք փոխանցումով:

Աւելի ուշ, Ասկերանի եւ Մարտունիի մէջ եւս, հայոց եւ ազրբեջանցիներու միջեւ ծայր կու տան սուր վեճեր եւ բանակոյիւներ, յանախ տեղ-տեղ ձեռնամարտերու վերածուելով:



ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԱՐՅԱՆ (ՂԱՐԱՔԱՆ)

0 40 80 120 ԿՄ.

- 12 Փետրուար — ցոյցերը կը կրկնուին Ղարաբաղի մէջ:
- 13 Փետրուար — տեղի կ'ունենայ հաւաք մը Ստեփանակերտի տեղական Համայնավար կուսակցութեան կեդրոնին առջեւ, իսկ հարիւրաւոր դպրոցականներ եւ ուսանողներ կը դիմեն դասադուլի:
- 15 Փետրուար — Երեւանի մէջ տեղի կ'ունենայ դարաբաղցիներուն զօրակցութեան ցոյց մը:
- 16 Փետրուար — Երեւանէն բազմաթիւ հայորդիներ 4 օթոպիւսներով Ղարաբաղ կ'ուղղուին զօրակցութիւն յայտնելու համար Ղարաբաղի հայութեան: Ստեփանակերտի մօտ օթոպիւսները յարձակման կ'ենթարկուին ադրբեջանցի թուրքերու կողմէ եւ կ'իյնան 5 վիրաւորներ:
- 10 Փետրուար. — Ադրբեջանի պատկերասփիւռը կը հրապարակէ հայերու պահանջը բացարձակապէս մերժող հաղորդագրութիւն մը:
- 20 Փետրուար — Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մասին Ադր. ՍՍՀ օրէնքի 30րդ յօդուածին համաձայն եւ մարզի 87 դեպուտատներուն արտակարգ նստաշրջանի մը պահանջին ընդառաջելով, տեղի կ'ունենայ Լ.Ղ.Ի մարզի խորհրդարանին արտահերթ նիստը, որ կը քննարկէ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանական ՍՍՀ կազմից հանելու եւ Հայկական ՍՍՀին յանձնելու համար Ադրբեջանական ՍՍՀ եւ Հայկական ՍՍՀ գերագոյն սովետների միջեւ միջնորդութեան մասին» հարցը:
Հարցին սպառիչ քննարկումէն ետք, խորհրդարանը իր 110 հայ անդամներու միաձայն քուէարկութեամբ (30 ազերի անդամներու բացակայութեան)

կ'որոշէ Ղարաբաղը Հայաստանին կցելու բանաձեւ մը:
Այնուհետեւ, յիշեալ բանաձեւին վաւերացման առաջարկով Ղարաբաղէն յատուկ պատգամաւորութիւն մը կը մեկնի Մոսկուա:

Նոյն օրը, Ադրբեջանի Համայնավար կուսակցութեան քարտուղար Քիւմրան Բաղիրով Ղարաբաղ կ'այցելէ մօտէն ծանօթանալու համար իրադարձութիւններուն:

Երեւանի մէջ, Լ.Ղ.Ի մարզի խորհրդարանին որոշումին լուրը առնելով, 10 հազար անձեր հաւաք մը կը կազմակերպեն Օպերայի հրապարակին վրայ:

- 22 Փետրուար — դէպքերը կը զարգանան զանազան ուղղութիւններով:

ա. Համայնավար կուսակցութեան պաշտօնաթերթ «Իզվեստիա» կը վկայակոչէ Պոլիտբիւրոյի անդամներէն Կեռնի Ռազումովսկիի մէկ յայտարարութիւնը, թէ «հայկական ազգայնականութեան բռնկումը կրնայ լուրջ հետեւանմանք ունենալ, եթէ ժամ առաջ ձեռք չառնուին ազգու միջոցներ»:

բ. Ա.ՖՓին հետ հաղորդակցութեան մը ընթացքին, Հայաստանի ոչ պաշտօնական կազմակերպութիւններէն «Ազգային Ինքնորոշման Շարժում»ի ղեկավար Պարոյր Հայրիկեան կը յայտնէ, որ իր շարժումը հեռագիր մը յղած է Խ. Միութեան նախագահ Անտրէյ Գրոմիկոյին եւ անկէ պահանջած, որ Ղարաբաղի շրջանը կցուի Հայաստանին:

գ. Երեկոյեան մայրաքաղաքէն թէ այլ քաղաքներէն (յատկապէս Լենինական, Գորիս, Եղեգնաձոր, Արմավիան շրջաններէն) հաւաքուած տասնեակ հազարաւոր հայորդիներ կը մասնակցին Երեւանի մէջ կազ-

մակերպուած ցոյցի մը, պահանջելով Ղարաբաղի Հայաստանին վերակցումը: Յոյցի դեկավարները կը յայտարարեն, թէ ցոյցերը պիտի շարունակուին, մինչեւ որ կա՛մ Ղարաբաղը կցուի Հայաստանին, կա՛մ բանակը սկսի կրակել իրենց վրայ:

Այս առթիւ, Հայաստանի Համայնավար կուսակցութեան առաջին ֆարտուղար Կարէն Դեմիրճեան պատկերասփիւռէն խօսք առնելով կը հաւաստիացնէ, որ Ստալինի իշխանութեան օրով Ադրբեջանի կըցուած Ղարաբաղի վերակցման հարցը «ֆննարկման տակ է»:

Վերոյիշեալ ցոյցերուն կողքին, ցուցարարները կ'որոշեն յաջորդ օրը գործադուլ յայտարարել, մասնաւորաբար՝ Երեւանի համալսարանէն ներս:

դ. Մինչ այդ, Բաֆուի մէջ եւս լարուածութիւն կը տիրէ, երբ հայերու պատկանող բնակարաններ եւ ինֆնաշարժներ խափանարարական արարքներու թիրախ կը դառնան եւ հայերու բնակարաններուն ապակիները կը փշրուին:

• 23 Փետրուար — կ'արձանագրուին հետեւեալ ուշագրաւ իրադարձութիւնները.

ա. Խորհրդային Միութեան Համայնավար կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէն ետ կը մղէ Լեոնային Ղարաբաղի ինֆնավար Մարզին Խ. Ադրբեջանէն անջատման եւ Հայաստանի կցման պահանջը, այն պատճառաբանութեամբ, որ «գոյութիւն ունեցող հողային եւ ազգային կառոյցներու վերանայումի առաջարկները կը հակասեն Խ. Ադրբեջանի եւ Հայաստանի աշխատաւորութեան շահերուն եւ կը վնասեն ազգամիջեան յարաբերութիւններուն»:

Կեդրոնական Կոմիտէն Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանութիւններէն կը պահանջէ որդեգրել «անհրաժեշտ միջոցառումները» բարելաւելու համար վիճակը, նաեւ անոնց կը հրահանգէ «(հանրութեան) բացատրելի ազգութիւններու գծով լեցնեան ֆաղափականութիւնը»: Քայլ մը անդին անցնելով, Կ. Կոմիտէն կը պահանջէ նաեւ խստացնել ապահովութեան միջոցառումները նկատելով, որ «հանրային կարգն ու կանոնը խանգարող արարքները» հրահրուած են «ծայրայեղական անհատներու անպատասխանատու կոչերով»: Ան կը թելադրէ նաեւ, որ ձեռք առնուին Ղարաբաղի տնտեսա-ընկերային եւ մշակութային վիճակը բարելաւող միջոցներ:

բ. Կէսօրին մօտաւորապէս 120 հազար ցուցարարներ կը ֆայլեն Երեւանի փողոցներէն, պահանջելով Հայաստանի գերագոյն խորհուրդի բացառիկ նիստ եւ Ղարաբաղի Հայաստանին վերակցումը:

Ցուցարարները, որոնք խաղաղօրէն կ'անցնին մայրուղիներէ, Երկուշաբթիէն Երեքշաբթի լուսցող գիշերը կը բողոքեն Մոսկուայի մէջ Պոլիտբիւրոյին տուած որոշումին դէմ:

գ. Երեկոյեան Պոլիտբիւրոյի երկու պատասխանատուներ՝ Կէրկի Ռազումովսկի եւ Պիոտր Դեմիչեւ Հայաստան կը ժամանեն խորհրդակցութիւններ ունենալու համար տեղոյն պատասխանատուներուն հետ: Դեմիչեւ նոյն օրը ելոյթ կ'ունենայ հայկական պատկերասփիւռէն՝ կարգի հրաւիրելով ցուցարար բազմութիւնները:

• 24 Փետրուար — մինչ Ղարաբաղի Հայաստանին վերակցման պահանջատիրութիւնը կը թեւակոխէ իր

երկրորդ շաբաթը, իրողական գետնի վրայ կ'արձանագրուին հետեւեալները.

ա. Առաւօտեան, «իր գործին մէջ թերացած» ըլլալու ամբաստանութեամբ կը պաշտօնագրկուի Լ. Ղարաբաղի շրջանին կուսակցական ղեկավար՝ Բորիս Գէորգով. փոխարէն՝ Ղարաբաղի Համայնավար կուսակցութեան Կ. Կոմիտէն առաջին ֆարտուղար կ'ընտրէ Հենրիկ Պօղոսեանը:

բ. Ստեփանակերտի մէջ տեղւոյն Համայնավար կուսակցութեան միւտորը ամբողջութեամբ կ'որդեգրէ եւ կը բաժնէ Կ. Կոմիտէի տուած այն կարծիքը, թէ Ղարաբաղի մէջ կացութիւնը «լուրջ է»:

Երեւանի մէջ կուսակցականներու առջեւ խօսք առնելով, Կարէն Դեմիրճեան կը խօսի Հայաստանի մայրաքաղաքին մէջ հանդարտութիւնը վերահաստատելու «ստիպողական միջոցներու» մասին:

գ. Մինչ Երեւանի մէջ ցոյցերը կը շարունակուին նախորդող օրերու ուժգնութեամբ, Մոսկուա ուժ կը դրկէ Ղարաբաղ, տեղւոյն հայ բնակչութեան պաշտպանութեան նպատակով:

դ. Օրուան ընթացքին, Փարիզի հետ հեռաձայնային հաղորդակցութեան մը ընթացքին, «Ազգային Ի. Շարժում»-ի մէկ բանբերը կը հաղորդէ, որ Ղարաբաղի մէջ, ադրբեջանցի թուրքեր մուտք գործած են հայկական եկեղեցիներ եւ գերեզմանատուներ եւ պղծած են զանոնք: Բանբերը միաժամանակ կ'աւելցնէ, որ նախագահ Անտրէյ Գրոմիկոյի տեղակալը՝ Օխինով Հայաստան այցելած է, իսկ անոր օգնականը գացած է Բաֆու:

Բանբերը իր հաղորդակցութիւնը կ'եզրափակէ ը-

սելով, որ Պարոյր Հայրիկեան դիմում կատարած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. ին անկէ խնդրելով, որ ինք գլխաւորէ Ղարաբաղի վերակցման պահանջատիրական այս շարժումը, սակայն Վազգէն Ա. վերապահութիւն յայտնած է այս դիմումին նկատմամբ:

Նոյն օրը, Երեւանի համալսարանը, դպրոցներն ու մանկապարտէզները դասադուլի կը դիմեն, իսկ աշխատաւորական շարքեր, իրենց կարգին, կը սպառնան գործադուլի դիմել եւ ցոյցեր կազմակերպել Հինգշաբթի, 25 Փետրուարին:

• 25 Փետրուար — Ղարաբաղի զօրակցութեան ցոյցերը կը հասնին իրենց գագաթնակէտին: Միաժամանակ կ'արձանագրուին կարգ մը այլ յատկանշական եւ խիստ կարեւոր անցուդարձեր: Այսպէս՝

ա. Կէսօրէ առաջ, ցուցարար հայորդիներուն ուղղուած կոչով մը, Երեւանի Օպերայի հրապարակին վրայ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. հանդարտութեան եւ խաղաղութեան հրաւեր մը կ'ուղղէ, միաժամանակ Մոսկուայէն պահանջելով, որ արդարութիւն գործադրէ: Հայրապետին կոչը կը պատկերասփռուի եւ կը ձայնասփռուի:

բ. Կէսօրին, մօտաւորապէս մէկ միլիոն հայորդիներու մասնակցութեամբ, աննախընթաց ցոյց մը տեղի կ'ունենայ Երեւանի մէջ: Այս առթիւ, Երեւան կը ժամանեն Թիֆլիսէն եւ Ռոստովէն հայեր:

Ցուցարարներուն առջեւ կը փորձէ խօսք առնել Խ. Հայաստանի փոխ նախագահ Արզումանեան, սակայն ցուցարարները բացազանչութիւններով եւ սուլոցներով առիթ չեն տար անոր:

Լենինականի մէջ 200 հազար հայերու մասնակցութեամբ ցոյցէ մը ետք, տասնեակ հազարաւոր ցուցարարներ քայարշաւով մը կ'ուղղուին Երեւան:

գ. Յետմիջօրէի ժամը Յին յատուկ պատգամաւորութիւն մը, բաղկացած Սիլվա Կապուտիկեանէ, Զօրի Բալայեանէ, Վիկտոր Համբարձումեանէ, Յովհաննէս Զէքիանեանէ, Սեբո Խանգադեանէ եւ Ստեփանակերտի թատրոնի տնօրէն Վաչէ Սարուխանեանէ կը մեկնի Մոսկուա, Ղարաբաղի հարցին գծով տեսակցութիւն մը ունենալու Կրեմլինի դեկավարին հետ (Սարուխանեան, սակայն, դարաբաղցի ըլլալով, Գորբաչովի կողմէ ընդունուողներուն շարքին չ'ըլլար):

դ. ԱՖՓ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ նախորդող գիշեր խորհրդային բանակէն միաւորներ Երեւան մտած են եւ զինուորական բեռնակառքերով հաստատուած՝ կարգ մը շէնքերու եւ «Դինամօ» մարզահամալիրին մէջ:

ե. Հայաստան ուղղուիլ փախաֆողներու կը տեղեկացուի, թէ սահմանը փակ է. իսկ Երեւանի հետ հեռաձայնային հաղորդակցութիւնները (ցոյցերու մասին) անմիջապէս կը խզուին:

զ. «Ռեօթըր» բրիտանական լրատու գործակալութիւնը իր կարգին կը մատնանշէ, որ 2 բարձրաստիճան պատասխանատուներ՝ Վլադիմիր Դոլգիխ եւ Անատոլի Լուկիանով Երեւանի մէջ հանդարտութեան կոչեր ուղղած են, որովհետեւ Հայաստանի Համայնավար կուսակցութեան դեկավար Կարէն Դեմիրճեանի նոյնիմաստ կոչերը արդիւնք չեն տուած:

է. Միջազգային լրատու գործակալութիւններ առաջին անգամ ըլլալով կը խօսին Ղարաբաղի մէջ տեղի

ունեցած արհմալի բախումներու մասին:

Երեւանէն՝ «Ա. Ի. Շարժում»ի մէկ բանբերը, Փարիզի հետ հեռաձայնային հաղորդակցութեան մը ընթացքին, կը յայտնէ, թէ թուրքեր յարձակում գործած են հայկական մանկապարտէզի մը վրայ եւ կրակի տուած են գայն: Զոհ կամ վիրաւոր չէ արձանագրուած, որովհետեւ դասադուլ յայտարարուած էր: Բանբերը կ'աւելցնէ նաեւ, որ հայ եւ ազերի բնակիչներու միջեւ տեղի ունեցած են արհմալի բախումներ, որոնց հետեւանքով ինկած են 3 հայ վիրաւոր եւ 2 ազերի սպանեալ:

• 26 Փետրուար — հայրենի ժողովուրդին պահանջատիրական խաղաղ շարժումը կը ստանայ ազգային ինքնահաստատման բնոյթ: Միւս կողմէ, օրը կը յատկանշուի ցուցարար բազմութիւններուն ուղղուած հանդարտութեան եւ զգաստութեան կարգ մը կոչերով: Այսպէս՝

ա. Խ. Միութեան Համայնավար կուսակցութեան առաջին ֆարտուղար Մ. Գորբաչով, աննախընթաց յայտարարութեամբ մը, ֆաղաֆացիական հասունութեան կոչ կ'ուղղէ Հայաստանի եւ Ադրբեջանի ժողովուրդներուն, ինքնագապումի կը հրաւիրէ գանձնիք ըսելով, որ նմանօրինակ խնդիրները կարելի չէ լուծել զգացական մթնոլորտի մէջ եւ թէ՛ լուծումը կը կարօտի որոշ ժամանակի: Ան միաժամանակ կը խոստանայ ձեռք առնել միջոցներ, որոնք պիտի բարելաւեն Ղարաբաղի հայութեան վիճակը:

Գորբաչովի յայտարարութեան բովանդակութիւնը յատուկ պատուիրակներու միջոցով կը հաղորդուի Հայաստանի եւ Ադրբեջանի պատկերասփիւռէն եւ

ձայնասփիւռէն: Երեւանի մէջ յայտարարութիւնը կը կարդայ Պոլիտքիւրոյի անդամութեան թեկնածու՝ Վլադիմիր Դոլգիխ:

բ. Կարէն Դեմիրճեան, իր կարգին, ցուցարարներուն առջեւ ելոյթ ունենալով, գործադուլ ընողներէն կը պահանջէ Շարաթ օր աշխատանքի վերադառնալ: Ան կը սպառնայ՝ ըսելով, որ իր այս կոչին անտեսումը «կրնայ ծանր հետեւանքներ ունենալ»: Օպերայի հրապարակին վրայ հաւաքուած ցուցարարները ծաղրական սուլոցներով կը դիմագրաւեն Դեմիրճեանի արտայայտութիւնները:

գ. Երեւանի մէջ, Խորհրդային Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կեդրոնական Խորհուրդը, ժողով մը գումարելով, Մոսկուայի ղեկավարութեան կ'առաջարկէ յատուկ յանձնաժողովի մը յառաջացումը, քննարկելու համար Ղարաբաղի Հայաստանին վերակցման հարցը: Այս ժողովին կը մասնակցին նաեւ Գորբաչովի յատուկ պատուիրակ եւ Պոլիտքիւրոյի անդամութեան թեկնածու՝ Վլադիմիր Դոլգիխ եւ Ադրբեջանի Համայնավար կուսակցութեան ղեկավար՝ Քիւմրան Բադիրով:

դ. Ինչ կը վերաբերի բողոքի ելոյթներուն, ցոյցերը մակընթացութիւն կ'արձանագրեն, գերագանցելով օր մը առաջ տեղի ունեցած մէկ միլիոն հայերու ծովածաւալ ցոյցերը: Յատկանշական կերպով, ցոյցերուն կը մասնակցին նաեւ հայաստանաբնակ ֆիւրտեր եւ համալսարանի օտար ուսանողներ:

- 27 Փետրուար — քաղաքական հասունութեան ամէնէն պերնախօս արտայայտութեամբ, հայրենի պահանջատէր ցուցարարները մէկ մարդու նման վերջ կու տան

ցոյցերուն, երբ Խորհրդային Միութեան ղեկավարութիւնը պաշտօնապէս խոստում կու տայ ամիս մը ետք՝ քննարկելու Ղարաբաղի հարցը: Ցոյցերը վերջ կը գտնեն տեղական ժամով ժամը 15ին, երբ Օպերայի հրապարակին վրայ «Կազմակերպական Կոմիտէ»ի անդամներէն Զօրի Բալայեան եւ Սիլվա Կապուտիկեան բազմութեան կը զեկուցեն Մոսկուայի մէջ Գորբաչովի հետ իրենց ունեցած տեսակցութեան արդիւնքը:

Այնուհետեւ, ցոյցերը կ'առկախուին մինչեւ 26 Մարտ 1988 (մինչեւ Համայնավար կուսակցութեան Կ. Կոմիտէի ազգութիւններու հարցին յատկացուած լիազումար նիստը):

- Կարմիր Կիրակի, 28 Փետրուար — Ադրբեջանի մայրաքաղաք Բաքուէն 18 քլմ. հիւսիս գտնուող Սումգայթ քաղաքի քաղաքական կազմակերպութեան մէջ, «16-17 տարեկան խուլիգաններ» եւ «նախկին ռմբակործներ» (որոնք բանտէն արձակուելէ ետք Սումգայթ զրկուած են աշխատելու համար քարիւղի հանքերուն մէջ), կը կատարեն հայերու ահաւոր սպանդներ: Հետզհետէ բացայայտուող պաշտօնական լուրերը գոհերուն թիւը պիտի հասցնեն 32ի, ոչ-պաշտօնական՝ 300ի, իսկ հաւանական՝ 1500ի:

Սփիւռքի տարածքին տեղի կ'ունենան զօրակցութեան հաւաքներ եւ բողոքի ցոյցեր: Կ'ուղարկուին հեռագիրներ Միխայիլ Գորբաչովի եւ Վազգէն Ա.ի, մասնաւորաբար Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ.ին կողմէ:

- 20 Փետրուար — Սումգայթի հետեւողութեամբ, Լ. Ղարաբաղէն 50 քլմ. հիւսիս գտնուող Կիրովապատ

(Գանձակ) ֆադաֆին մէջ եւս հայ ազգաբնակչութեան դէմ տեղի կ'ունենան զանազան բռնարարքներ եւ ջարդեր:

Միւս կողմէ, Ադրբեջանի Համայնավար կուսակցութեան թիւ մէկը՝ Քիւմրան Բաղիրով կ'այցելէ ըստեփանակերտ եւ խաղաղութեան ու հանդարտութեան կոչ կ'ուղղէ բնակիչներուն:

Երեկոյեան Բաղիրով նոյնիմաստ հանդարտութեան կոչ մը կ'ուղղէ նաեւ Ադրբեջանի պատկերասփիւռէն:

- 1 Մարտ — Բաֆուի ձայնասփիւռը կը յայտնէ, թէ կազմուած է յատուկ յանձնախումբ մը Ադրբեջանի Համայնավար կուսակցութեան Կ. Կոմիտէի ֆարտուղար Ղասան Ղասանովի գլխաւորութեամբ, որպէսզի զբաղի ազերի գաղթականներու Հայաստանի իրենց տունները վերադարձով:
- 3 Մարտ — Սումգայթի մէջ կը կատարուի հայ գոհերու թաղումը: Իշխանութիւնները իւրաքանչիւր ընտանիքէն միայն 1 հոգիի ներկայութիւնը կ'արտօնեն թաղման արարողութեան:
- 4 Մարտ — բողոքելով Սումգայթի մէջ հայ անգէն ֆաղաֆացիներու սպանդին դէմ, Մոսկուա բնակող աւելի քան 3000 հայեր ցոյց մը կը կատարեն Մոսկուայի հայ եկեղեցւոյ շրջափակին մէջ:
- 8 Մարտ — «Ղարաբաղի Կոմիտէ»ի կազմակերպութեամբ շուրջ 300.000 հայեր կարգապահ եւ լուռ շարքերով կը տողանցեն Ծիծեռնակաբերդի յուշակոթողին առջեւ, ոգեկոչելով յիշատակը Ադրբեջանի մէջ նահատակուած հայերուն:

Մոսկուայի մէջ յուշահանդէսի բնոյթով 300 հո-

գինոց երկրորդ ցոյց մը տեղի կ'ունենայ հայկական եկեղեցւոյ առջեւ եւ գերեզմանատան մէջ:

- 9 Մարտ — Կրեմլինի մէջ կը գումարուի Խ. Միութեան բարձրագոյն ղեկավարութեան ժողով մը, որուն ընթացքին Միխայիլ Գորբաչով կը զգուշացնէ կացութեան որեւէ վատթարացման դէմ. վատթարացում, որու հետեւանալով Խ. Միութեան ժողովուրդը կրնայ 70 տարի ետ երթալ:

Այս առթիւ, ժողովը Հայաստանի եւ Ադրբեջանի կուսակցութիւններու Կ. Կոմիտէներուն կը յանձնարարէ ուսումնասիրել «երկար ժամանակի վրայ երկարող միջոցառումներ՝ բարելաւելու համար աշխատատեղերու միջազգայնական դաստիարակութիւնը եւ միասնաբար լուծելու ստիպողական կարելիութիւններ կայացնող խնդիրները»:

- 11 Մարտ — Ադրբեջանի պատկերասփիւռը կը յայտարարէ, որ 180 Ադրբեջանցիներ ձերբակալուած են հայերու դէմ կատարուած սպանդին իրենց մասնակցութեան յանցանքով: Այս գծով, ադրբեջանական այլ աղբիւրներ կ'աւելցնեն, որ ձերբակալուածներուն դատավարութիւնը տեղի պիտի ունենայ Մայիսի կէսերուն, Սումգայթի ատեանին առջեւ:
- 12 Մարտ — Բաֆուի «*Բաքիսաքի Ռապոչի*» պաշտօնաթերթին մէջ Խ. Միութեան պետական փոխ ընդհանուր դատախազ Ալեքսանդր Կաթուսի կը հաստատէ, որ «ծանրակշիռ խոսովութիւններ տեղի ունեցած են Սումգայթի մէջ, որոնց ընկերացած են ջարդեր (փոկրոմ), ոճրային հրդեհներ եւ այլ վայրագութիւններ»:
- 13 Մարտ — Մոսկուայի «կազմակերպիչ յանձնախումբ»ին կոչին ընդառաջելով, շուրջ 1000 հայորդի-

ներու մասնակցութեամբ հաւաք մը տեղի կ'ունենայ Մոսկուայի հայոց գերեզմանատան մէջ, անգամ մը եւս ոգեկոչելու համար յիշատակը՝ Սումգայթի մէջ ինկած անմեղ հայ նահատակներուն:

• 15 Մարտ — Եուկոսլաւիա իր այցելութեան ընթացքին, Մ. Գորբաչով կը յայտարարէ. «Հոն (Ղարաբաղի մէջ), ոչ ոք արժարժեց խորհրդային կառավարութեան, ընկերվարութեան կամ անջատումի մասին հարցեր: Իրողութիւնը այն է, որ կան մշակոյթի եւ թեքնիք բնոյթի հարցեր, որոնք վրիպած են մեր նկատողութենէն եւ ժամանակի ընթացքին կուտակուած են իրարու վրայ»:

• 17 Մարտ — պաշտօնանկ կ'ըլլան Սումգայթի Համայնավար կուսակցութեան ղեկավարը՝ Տ. Մ. Միւսլիմզատէն եւ քաղաքապետը՝ Ե. Մամետով: Անոնք կը փոխարինուին Նախիջեւանի վարչապետ՝ Սալեհ Հանիբով եւ Ռ. Ա. Էմինպէյլիով:

Նոյն օրը Լ. Ղ. Ի. Մարգի Համայնավար կուսակցութեան շրջանային կոմիտէն իր լիազումար նիստին կ'որդեգրէ Ղարաբաղը Հայաստանին վերակցելու որոշում մը:

Ցերեկը 70 հազար ցուցարարներ կը տողանցեն Ստեփանակերտի մէջ:

• 18 Մարտ — Ղարաբաղը Հայաստանին վերակցելու հարցին արժարժումէն ետք առաջին անգամ ըլլալով, մարզը ներկայացնող պատուիրակութիւն մը, բաղկացած կուսակցական եւ հասարակական պատասխանատուներէ, տեսակցութիւն մը կ'ունենայ Խ. Միութեան Համայնավար կուսակցութեան Կ. Կոմիտէի պատասխանատուներուն հետ: Նոյն միջոցին տեղի կ'ունենայ

այլ հանդիպում մը եւս՝ Կրեմլինի ղեկավարներուն եւ Մոսկուա բնակող հայերու եւ ադրբեջանցիներու միջեւ:

Մինչ այդ, Մոսկուայի հայոց գերեզմանատան մէջ կ'արգիլուի Սումգայթի գոհերուն յիշատակին ոգեկոչման հաւաք մը:

• 21 Մարտ — Սումգայթ քաղաքի Համայնավար կուսակցութեան պաշտօնագրկուած ղեկավարը՝ Միւսլիմզատէն եւ քաղաքի ոստիկանապետը՝ Ճափարով կ'արտաքսուին Համայնավար կուսակցութենէն:


Միւս կողմէ, Խ. Միութեան պաշտօնաթերթ «Պրաւդա» 26 Մարտի պայմանաժամէն 5 օր առաջ դիտել կու տայ, որ «Ղարաբաղ-Ադրբեջան կապերը կարելի չէ խզել»:

Կէսօրին, Երեւանի պատկերասփիւռի մէկ սրահին մէջ տեղի կ'ունենայ հաւաք մը, որու ընթացքին շուրջ 3 հազար հոգի կը խմբուին սրահին առջեւ եւ կ'առնեն կարգ մը արմատական որոշումներ:

• 22 Մարտ — Ղարաբաղի պահանջատիրութիւնը կը թեւակոխէ արմատականացման նոր փուլ մը: Այսպէս՝ ա. Բազմահազար հայեր ցոյց մը կը կատարեն Երեւանի մէջ, իրրեւ բողոք՝ «Պրաւդա»ի մէջ լոյս տեսած այն յօդուածին դէմ, որ բացայայտ կը դարձնէր, թէ Մոսկուա պիտի չընդառաջէ Ղարաբաղի վերակրթման պահանջին:

բ. Խ. Միութեան 15 հանրապետութիւններէն 13ին Գերագոյն Խորհուրդները իրենց նիստերուն ընթացքին կը պահանջեն որդեգրել «վնական միջոցառումներ», Հայաստանի եւ Ադրբեջանի մէջ ապահովելու

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԷՍ



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՎԱՆՔԵՐՈՒ ՔԱՐՏԷՍ



համար խորհրդային սահմանադրութեան «լրիւ» գործադրութիւնը:

գ. Նոյն օրը, անցագիր չկրելուն պատճառով, Պարոյր Հայրիկեան կը վտարուի Մոսկուայէն, ուր գացած էր մասնակցելու ալլախոհներու համագումարի մը:

- 23 Մարտ — Խ. Միութեան պետական բարձրագոյն հեղինակութիւնը՝ Գերագոյն Խորհուրդի (խորհրդարան) նախագահութիւնը կը մերժէ ընդառաջել Լեոնային Ղարաբաղը Հայաստանին վերակցելու պահանջին:

Այս առթիւ, Խորհուրդը կը հրապարակէ 5 կէտերէ բաղկացած հաղորդագրութիւն մը, ուր կ'առաջադրէ զարկ տալ Ղարաբաղի տնտեսական, մշակութային եւ ընկերային բարեկարգումներու նիգերուն:

Երեկոյեան, պատկերասփիռէն խօսք առնելով, Սիլվա Կապուտիկեան եւ Զօրի Բալայեան կոչ կ'ուղղեն դադրեցնելու բոլոր ցոյցերն ու բողոքի ելոյթները:

- 24 Մարտ — Ղարաբաղը Հայաստանին վերակցելու պահանջատիրութիւնը նոր անկիւնադարձ մը կ'արձանագրէ: Այսպէս՝

ա. Համայնավար կուսակցութեան գերագոյն մարմինը՝ Պոլիտբիւրոն կը հաստատէ Գերագոյն Խորհուրդի որոշումը եւ այսպէսով կը փակէ հարցը: Մինչ այդ, Խ. Հայաստանի Գերագոյն Խորհուրդը, իր կարգին, լուծարքի կ'ենթարկէ «Ղարաբաղի Յանձնախումբ»ը եւ անոր տեղական մասնաճիւղերը, ինչպէս նաեւ յատուկ որոշումով մը կ'արգիլէ ցոյցերը եւ կը նշէ, որ այսուհետեւ, որեւէ ցոյցի համար, կազմա-

կերպիչները պէտք է առնուագն 10 օր առաջ արտօնութիւն առնեն:

բ. Խ. Միութեան բանակէն կարելոր թիւով զօրաբաժիններ բանակային կառնելով եւ հրասայլերով կը գրաւեն Երեւանի եւ Ստեփանակերտի գլխաւոր կեդրոնները, պողոտաներն ու շրջակայ խաչմերուկները եւ անկարելի կը դարձնեն որեւէ համախմբում: Բանակային ուղղաթիւներ Երեւանի գրաւումը կ'ամբողջացնեն անընդմէջ թռիչքներով:

գ. Ստեփանակերտի մէջ ինքնաբոյս կերպով ծայր կու տայ ընդհանուր գործադուլ, իսկ Շուշիի մէջ կը գործադրուին հայութիւնը տեղահան ընելու փորձեր: Միաժամանակ, Ղարաբաղի մէջ լուծուած կը յայտարարուի ցոյցերու կազմակերպիչ «Կոունկ» յանձնախումբը:

- 25 Մարտ — Ստեփանակերտի մէջ կը հռչակուի եռօրեայ գործադուլ: Մինչ Երեւանի մէջ, կը ձեռքակալուի Պարոյր Հայրիկեան:

- 26 Մարտ — Ղարաբաղը Հայաստանին վերակցելու պահանջը կը ստանայ նոր ձեւ եւ տարողութիւն: Այսպէս՝

ա. Երեւանը կը հռչակուի «մեռեալ քաղաք»:

բ. Պարոյր Հայրիկեանի ձեռքակալութենէն օր մը ետք, կը ձեռքակալուին նաեւ Ղարաբաղի յանձնախումբին գորակցութիւն յայտնող 3 այլ անձնաւորութիւններ՝ Մովսէս Կորկիզեան, Մեխակ Գաբրիելեան եւ Գեորգ Միրզոյեան:

գ. Մինչ եռօրեայ գործադուլը ընթացքի մէջ է, հսկայական ցոյցեր տեղի կ'ունենան Ստեփանակերտի մէջ:

դ. Մոսկուայի մէջ բազմահարիւր հայեր հաւաք մը կը կազմակերպեն հայոց գերեզմանատան մէջ:

- 28 Մարտ — Ղարաբաղ կը շարունակէ անդամալուծուած մնալ ընդհանուր գործադուլով:
- 20 Մարտ — Ղարաբաղցի կը կազմեն նոր յանձնախումբ մը, շարունակելու համար իրենց ծանօթ պահանջներուն հետապնդումը:

Յանձնախումբը կոչով մը կը դիմէ Խ. Միութեան բոլոր ժողովուրդներուն, որպէսզի դիմեն ընդհանուր գործադուլի, ձայնակցելով իրենց պահանջներուն:

Նոյն օրը, Երեւանի մէջ, անտեսելով ցոյցերու արգիլման օրէնքը, երկու տարբեր հաւաքներու ընթացքին, 700 հոգի կը բողոքեն հայ ալլախոհներու բանտարկութեան դէմ: Միւս կողմէ, «ալլախոհներու վստահութեան խմբակ» կազմակերպութիւնը Մոսկուայի մէջ կոչ կ'ուղղէ, որպէսզի վերջ գտնէ Երեւանի ցոյցերու կազմակերպիչներուն գործունէութեան վերայ դրուած կառավարական արգելքը:

Մինչ այդ, Սումգայթի մէջ կը ջնջուի 1 մարտէն սկսեալ ի գօրու կրակմարի դրութիւնը:

- 30 Մարտ — Մինչ Ստեփանակերտի մէջ գործադուլը կը շարունակուի, Լեռնային Ղարաբաղի Համայնավար կուսակցութեան շրջանային կոմիտէն, ֆննադատելով հանդերձ «կառավարութեան վրայ ի գործ դրուած ննշումները» (գործադուլ), միաձայնութեամբ կը ֆուէրակէ որոշում մը, որ կ'ըսէ թէ «Ղարաբաղի վերակցման խնդիրը չէ կարգադրուած եւ լուծումի կը սպասէ»:
- 31 Մարտ — Խորհրդային «Տասս» լրատու գործակալութիւնը բուռն կերպով կը ֆննադատէ Եւրոպական

Խորհրդարանի այն բանաձեւը, որ դէմ կ'արտայայտուի Ղարաբաղի հարցին նկատմամբ Խ. Միութեան որդեգրած միջոցառումներուն եւ կը հաստատէ թէ այդ ձեւով Խ. Միութիւն մարդկային իրաւունքներ կը բռնաբարէ:

- 2 Ապրիլ — Շուրջ հազար հոգի ցոյց մը կը կատարեն Երեւանի Լենինի հրապարակին վրայ, պահանջելով Պարոյր Հայրիկեանի ազատ արձակումը: Տոյցի աւարտին, հարցաֆննութեան համար, 20 հոգի ոստիկանատուն կը տարուին:

Նոյն օրը «Պրաւդա» բուռն կերպով կը ֆննադատէ օտար լրատու գործակալութիւնները եւ մասնաւորաբար «Պի. Պի. Սի.»-ն, «Ամերիկայի Չայն»ը եւ «Տէօչ Վէլ» կայանը, որոնք իբրեւ թէ իրենց տեղեկութիւնները կը ֆաղեն «նախկին ռերագործներէ եւ անհատներէ, որոնք միտումնաւոր կերպով սուտեր կը տարածայնեն»: Աւելի ուշ, Գորբաչով եւս կը ձայնակցի արեւմտեան լրատու աղբիւրներու դէմ շղթայագերծուած ֆննադատական այս արշաւին:

- 4 Ապրիլ — Պարոյր Հայրիկեանի ազատ արձակման պահանջով նոր ցոյցեր տեղի կ'ունենան Երեւանի մէջ:
- 7 Ապրիլ — Ղարաբաղի մէջ գործադուլը վերջ կը գտնէ:
- 10 Ապրիլ — Խ. Հայաստանի Համայնավար կուսակցութեան պաշտօնաթերթ «Կոմունիստ» կը հաղորդէ, որ Ղարաբաղ դրկուած են հայ մասնագէտներ, հայկական մշակոյթի տուն մը եւ հայկական կոթողներ վերականգնելու ծրագիրներ մշակելու համար:
- 14 Ապրիլ — «Մոսկուայի լուրեր» շաբաթաթերթը, Սումգայթի դէպքերը «աննախընթաց տարողութեամբ ռնիր» անուանելէ ետք, կը գրէ որ աւելի քան 60 հոգի

ձերբակալուած են Սումգայթի վայրագութեանց մասնակցած ըլլալու ամբաստանութեանը:

- 18 Ապրիլ — Անուղղակիօրէն Ղարաբաղի հարցին ակնարկելով՝ «Պրակա» դիտել կուտայ որ Խ. Միութեան ներքին սահմաններուն վերականգնումի հարցը կը կարօտի յաւելեալ ուսումնասիրութեան, սակայն կը նշէ նաեւ որ հապնեալ վերատեսուութիւնները կրնան տնտեսական անկայունութեան պատճառ դառնալ:
- 19 Ապրիլ — Խ. Միութեան փոխ արտաքին գործոց նախարար Նիկոլայ Դեմիդով, պատկերասփռուած գրոյցի մը ընթացքին, կը յայտարարէ որ աւելի քան 80 հոգի ձերբակալուած են Սումգայթի դէպքերուն մասնակցած ըլլալու յանցանքով:
- 24 Ապրիլ — Լեռնային Ղարաբաղի հայութիւնը առաջին անգամ ըլլալով արտօնութիւնը կ'ունենայ ոգեկոչելու 1915ի Ցեղասպանութեան գոհերու յիշատակը: Այս առթիւ, Եղեռնի նահատակներուն նուիրուած յուշակոթող մը կը կանգնի Ղարաբաղի մէջ:

Երեւանի մէջ, Միծեռնակաբերդի յուշակոթողին կից կը հաստատուի Սումգայթի գոհերուն նուիրուած խաչքար մը:

- 26 Ապրիլ — Երկու ամսուան ուշացումով մը, Մոսկուայի պատկերասփիւռը կը սփռէ «Լեռնային Ղարաբաղ՝ բարձրաձայն գրոյց» խորագրով վաւերագրական յայտագիր մը, որուն մէջ հարազատօրէն կը ներկայացուին Սումգայթի փոկրումին մանրամասնութիւնները:
- 29 Ապրիլ — Ղարաբաղի բնակչութիւնը կը սկսի դիտել Երեւանի հեռատեսիլին յայտագիրները: Փոխադարձաբար, Հայաստանի Միսուանի շրջանի ադրբե-

ջանցիներով բնակուած կարգ մը գիւղերու բնակիչները կը սկսին դիտել Բաֆուի հեռատեսիլին յայտագիրները:

- 10 Մայիս — Շուրջ ամսուան մը ընդհատումէ ետք, Ստեփանակերտի մէջ տեղի կ'ունենայ բողոքի *սիթ-ին* մը, մասնակցութեամբ 1500 հոգիներու: Ստեփանակերտցիք կը բողոքեն նոյն օրը շրջանին մէջ ազերիի մը փոխ դատախազ նշանակման դէմ:
- 11 Մայիս — Ստեփանակերտի մէջ բողոքի ելոյթները կը սաստկանան, երբ Շուշիի մէջ (Ստեփանակերտի հարաւը) ազերիներ կը սպաննեն հայ երիտասարդ մը:
Երեկոյեան, խորհրդային բանակէն յատուկ ուժեր կը մտնեն Ստեփանակերտ եւ իրենց հակակշռին տակ կ'առնեն Լեռնային Ղարաբաղի գլխաւոր քաղաքին փողոցները:
- 12 Մայիս — 40 հազար հայորդիներ ցոյց մը կը կատարեն Երեւանի Օպերայի հրապարակին վրայ: Անոնք գորակցութիւն կը յայտնեն Ստեփանակերտի մէջ ցոյցեր եւ *սիթ-ին* կազմակերպող իրենց հայրենակիցներուն եւ կը պահանջեն Պարոյր Հայրիկեանի ազատ արձակումը:
Միւս կողմէ, խումբ մը ուսանողներ Երեւանի հրապարակին վրայ կը կազմակերպեն այլ հաւաք մը, «խորհրդակցելու համար Սումգայթի մէջ օր մը առաջ բացուած դատավարութեան շուրջ»:
- 16 Մայիս — Ադրբեջանի դատական գերագոյն ատեանը Սումգայթի ջարդին հերոսներէն՝ 21 տարեկան Թալէիս Իսմայիլովը կանխամտածուած մարդասպանութեան եւ խուժանային խռովութեան մասնակցու-

թեան յանցանքով կը դատապարտէ 15 տարուան տա-
ժանակիր աշխատանքի:

Դատավարութեան ընթացքին Իսմայիլով
կը խոստովանի որ ի՛նք սպաննած է 62 տարեկան Շա-
հէն Սարգիսեանը, մետաղի գաւազանով հարուածներ
տալով անոր գանկին եւ կուրծքին:

• 17 Մայիս — Երեւանի մէջ 150 հազար հայեր կը բողո-
քեն Իսմայիլովի հասցէին արձակուած մեղմ վնիռին
դէմ: Նոյն իմաստով հազարաւոր հայեր բողոքի ցոյ-
ցեր կը կատարեն նաեւ Ղարաբաղի մէջ:

• 18 Մայիս — Տասնեակ հազարաւոր ազերիներ Բաքուի
մէջ կը կատարեն ցոյց մը՝ բողոքելու համար Հայաս-
տանի Արարատ շրջանին մէջ (Երեւանի հարաւը, Հա-
յաստան-Թուրքիա-Իրան սահմաններու միացման կէ-
տին վրայ) ազերիի մը բնակարանին հրկիզումին դէմ:

Այս առթիւ, բաժնուցի ցուցարարները մէկ կողմէ
կը բողոքեն նաեւ Լեռնային Ղարաբաղի մէջ կարգ մը
ազերիներու պաշտօնագրկման դէմ, իսկ միւս կողմէ
կը պահանջեն որ Սումգայթի ջարդերուն մասնակցող
80 ձերբակալեալներուն դատը ներողամտութեամբ
ֆննարկուի:

• 19 Մայիս — 40 հազար ցուցարարներ կը ֆայեն Երե-
ւանի փողոցներէն, իբրեւ բողոքի արտայայտութիւն՝
Թ. Իսմայիլովի դէմ արձակուած վնիռին մեղմ բնոյ-
թին դէմ: Ցուցարարները դէմ կ'արտայայտուին նաեւ
դատավարութեան ընթացքին հայ թղթակիցներու սը-
րահէն ներս մուտքին արգիւման. անոնք կը պահանջեն
բաց դատավարութիւն, ինչպէս նաեւ՝ Ղարաբաղի կա-
ցութեան մասին լուրերու հաղորդում:

• 20 Մայիս — Մոսկուայի մէջ մտաւորապէս ֆսան հա-

յեր Արդարադատական Գերագոյն Ատեանին դիմաց
հաւաքուած՝ Սումգայթի ռնրագործներուն համար կը
պահանջեն աւելի խիստ պատիժներ:

Նոյն օրը, Կրեմլի թիւ երկուքը՝ Իգոր Լիզաչեւ,
Բաքուէն Մոսկուա կը հեռագրէ թէ «Լեռնային Ղարա-
բաղի հարցերը լուծուած են»: Լիզաչեւի այս յայտա-
րարութիւնը Երեւանի եւ Ստեփանակերտի մէջ առիթ
կու տայ բողոքի նորանոր ելոյթներու:

• 21 Մայիս — Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդա-
յին Ադրբեջանի հանրապետութեանց Համայնավար
կուսակցութիւններուն առաջին ֆարտուղարները՝
Կարէն Յակոբի Դեմիրճեան եւ Քիւմրան Մահմետօղլի
Բաղիրով պաշտօնանկ կ'ըլլան եւ կը շնորհագրկուին,
յայտնապէս՝ Լեռնային Ղարաբաղի հարցին հետե-
ւանքները դարմանել չկարենալու յանցանքով: Անոնք
կը փոխարինուին Սուրէն Յարութիւնեանով եւ Ապ-
տիւլ Ռահման Վեզիրովով:

• 23 Մայիս — Ստեփանակերտի մէջ ծայր կու տայ գոր-
ծադուլի նոր ալիք մը՝ Խ. Հայաստանին վերակցման
պահանջով:

• 24 Մայիս — Մինչ Ստեփանակերտի մէջ ցոյցերն ու
հաւաքները կը ստանան սուր բնոյթ, տեղւոյն խոր-
հրդային բանակը կը փոխարինուի ոստիկաններով:
Երեւանի մէջ յաջորդաբար երկրորդ օրն ըլլալով
տասնեակ հազարաւոր հայեր Օպերայի հրապարակին
վրայ կը կատարեն ցոյց մը՝ ի նպաստ Պարոյր Հայ-
րիկեանի:

• 29 Մայիս — Մոսկուայի հայոց գերեզմանատան մէջ
հաւաքուած 300 հայեր գորակցական ցոյց մը կը կա-
տարեն 23 Մայիսէն ի վեր ընդհանուր գործադուլի

ձեռնարկած եւ տնտեսական պաշարումի ենթակայ ստեփանակերտցի իրենց հայրենակիցներուն ի նըպաստ: Աւելի ուշ, ցուցարարներէն 100 հոգի ցոյցը կը շարունակեն Պուշկին հրապարակը՝ Մոսկուայի կեդրոնը:

Երեւանի մէջ, մանաւանդ Լիգաչեւի ծանօթ յայտարարութիւնէն ետք, ցոյցերն ու բողոքի հաւաքները կը ստանան առօրեայ հերթականութիւն եւ կը դառնան ընթացիկ երեւոյթ: Մինչ Երեւանի Օպերայի հրապարակին վրայ հազարաւոր ուսանողներ, իրենց կարգին, կը ձեռնարկեն *սիթ-ին*ներու:

Նոյն օրը, Խորհրդային Հայաստանի եւ Ադրբեջանի Համայնավար կուսակցութիւններուն ղեկավարները՝ Սուրէն Յարութիւնեան եւ Ապտիւլ Ռահիման Վեգիրով քննական շրջապտոյտ մը կը կատարեն գոյգ հանրապետութեանց «կարգ մը շրջանները» եւ կը քննարկեն «տեղւոյն ժողովուրդներուն տնտեսական եւ մշակութային հարցերը»:

- 1 Յունիս — 2780 հայեր Ադրբեջանէն կը փախչին եւ Հայաստան կ'ապաստանին:
- 4 Յունիս — Տասնեակ հայեր՝ ուսանողներ եւ Աֆղանըստանի մէջ կոռւած նախկին զինուորներ կը ձեռնարկեն հացազուլի մը, պահանջելով որ Խ. Հայաստանի Գերագոյն Խորհուրդը քննէ Ղարաբաղի հարցը:
- 9 Յունիս — Մոսկուայի Համայնավար կուսակցութեան կեդրոնական Կոմիտէի քարտուղարութիւնը, Հայաստանի, Ղարաբաղի եւ Ադրբեջանի Համայնավար կուսակցութեանց պետերուն՝ Յարութիւնեանի, Պօղոսեանի եւ Վեգիրովի ներկայութեամբ ու Ի. Լի-

գաչեւի գլխաւորութեամբ ժողովի մը ընթացքին, կը մերժէ Ղարաբաղի Հայաստանի վերակցման պահանջը եւ փոխարէնը կ'առաջարկէ Ադրբեջանի հովանաւորութեան տակ Ղարաբաղը վերածել «ինքնավար հանրապետութեան» մը, անոր ընծայելով «ֆիչ մը արելի լաւ» պայմաններ: Առաջարկը կը մերժուի հայերու կողմէ:

Կէսօրին Հայաստան վերադառնալով, Յարութիւնեան ելոյթ կ'ունենայ Երեւանի Օպերայի հրապարակին վրայ եւ խոստում կու տայ որ Հայաստանի Գերագոյն Խորհուրդը «դրական լուծում» մը պիտի տայ Ղարաբաղի հարցին:

Նոյն պահուն քաղաքապետ ցուցարարները, իրենց կարգին, կոչ կ'ուղղեն, որպէսզի Գերագոյն Խորհուրդին նիստը պատկերասփռուի եւ ձայնասփռուի ուղղակիօրէն:

- 10 Յունիս — «Պրաւդա» առաջին անգամ ըլլալով կ'անդրադառնայ դարաբաղեան ցոյցերու եւ գործադուլներու երկրորդ փուլին եւ կը գրէ որ «Ամէն առաւօտ տասնեակ հազարաւորներ կը քայլեն Ստեփանակերտի փողոցներէն եւ կը սարքեն հաւաքներ: Անոնք ունին միայն մէկ նպատակ՝ դիմանալ մինչեւ վերջ»:
- Նոյն օրը 4000 ազերի թուրքեր Հայաստանէն կը փախչին եւ Ադրբեջան կ'ապաստանին:
- 11 Յունիս — Ադրբեջանի մայրաքաղաք Բաքուի մէջ ազերի թուրքեր, «բողոքելու համար Ղարաբաղի նըկատմամբ հայութեան կեցուածքին» դէմ, փողոց կ'իջնեն եւ նոր վայրագութիւններ կը կազմակերպեն հայերու դէմ, որոնց ընթացքին կը սպաննուի նաեւ ազե-

րի միլիս մը՝ իբրեւ թէ Ազանբէկեան անունով հայու մը կողմէ:

Երեւանի, Լենինականի, Կիրովականի, Ղափանի եւ հայաստանեան այլ ֆաղաֆներու մէջ դարաբաղեան պահանջատիրութիւնը արտայայտող հաւաքներն ու գիշերային հսկումները կը շարունակուին մեծ թափով:

- 12 Յունիս — Գորիսէն, 20 ինքնաշարժներով, դէպի Ստեփանակերտ՝ դարաբաղիներուն գորակցելու համար ճամբայ ելած խումբ մը հայեր սահմանամերձ Լաչին աւանին մօտ կ'իյնան ազերիներու կողմէ լարուած թակարդ մը եւ կը խոշտանգուին: 15 ինքնաշարժներ ջարդուփշուր կ'ըլլան եւ կ'արձանագրուին ֆանի մը վիրաւորներ:
- 13 Յունիս — Մոսկուայի Համայնավար կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի ֆարտուղարութեան Լեոնային Ղարաբաղի պահանջին մերժումի լոյսին տակ, Խ. Հայաստանի հայութիւնը կը հռչակէ եռօրեայ գործադուլ եւ կը վերսկսի ծովածաւալ ցոյցերու, որոնց մասնակցողներուն թիւը Փետրուարի ծանօթ ցոյցերէն ետք առաջին անգամ ըլլալով կը հասնի մէկ միլիոնի: Գործադուլը, բացի Երեւանէն, կ'ընդգրկէ նաեւ Լենինականն ու այլ ֆաղաֆներ:
- 14 Յունիս — Խ. Հայաստանի Համայնավար կուսակցութեան ընդհանուր ֆարտուղար Ս. Յարութիւնեան, Օպերայի հրապարակին վրայ հաւաքուած ցուցարարներուն առջեւ ելոյթ ունենալով, կը յայտարարէ որ 15 Յունիսի նիստին Հայաստանի Գերագոյն Խորհուրդը պիտի որդեգրէ Ղարաբաղը Հայաստանին վերակցելու բաճակ մը: Այնուհետեւ, գործադուլը կը ջնջուի,

ցուցարարները կը ցրուին եւ Երեւանն ու այլ ֆաղաֆները 80 առ հարիւր համեմատութեամբ կը գտնեն իրենց բնականոն վիճակը:

Յարութիւնեանի յայտարարութենէն ֆանի մը ժամ ետք, Ադրբեջանի Համայնավար կուսակցութեան ընդհ. ֆարտուղար Վեգիբով, իր կարգին, կը յայտարարէ որ Ղարաբաղը պիտի չվերադարձուի Հայաստանի եւ թէ այս գծով Ադրբեջանի խորհրդարանի նախագահութիւնը արդէն իսկ օր մը առաջ որդեգրած է բաճակ մը:

Գրեթէ նոյն պահուն, հակահայ բռնարարներու, բայց մանաւանդ ազերի երիտասարդներու կողմէ հայկական Խուտոր թաղամասին գրաւման փորձին լոյսին տակ, խորհրդային բանակը, Բաֆու մտնելով, պաշարման օղակի մէջ կ'առնէ ֆաղաֆի հայկական թաղամասը, կանխարգիլելու համար հակահայ որեւէ արարք:

- 15 Յունիս — Մեկնելով Խ. Միութեան սահմանադրութեան 70րդ յօդուածի տրամադրութիւններէն, Խ. Հայաստանի խորհրդարանը կ'առնէ պատմական աննախընթաց ֆայլ մը, երբ կը պահանջէ, որ 1923ին Խորհրդային Ադրբեջանին տրուած Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզը վերամիացուի Խորհրդային Հայաստանի:

340 անդամ հաշուող խորհրդարանը որոշումը կու տայ միաձայնութեամբ:

Մոսկուայի մէջ, 200 հայեր հայոց գերեզմանատան մէջ կը կատարեն հաւաք մը, որու ընթացքին կը ցրուեն Բաֆուէն Մոսկուա հասած թերթիկներ, որոնք

կը բովանդակեն հայերու հասցեագրուած սպառնալիքներ եւ լուտանքներ:

- 17 Յունիս — Մեկնելով Խ. Միութեան սահմանադրութեան 78րդ յօդուածի տրամադրութիւններէն, Խ. Ադրբեջանի խորհրդարանը միաձայնութեամբ կ'որոշեց որոշում մը, որ կը մերժէ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը յանձնել Հայաստանի:

Նոյն օրը, Երեւանի հարաւը, Թուրքիոյ սահմանամերձ Սայաթ Նովա եւ Մասիս ւաններուն մէջ կ'արձանագրուին խոռվութեան եւ վայրագութեան արարքներ, որոնց ընթացքին փամփուշտներով կը վիրաւորուին 8 հայեր, իսկ 7-8 ազերիներ կը վիրաւորուին քարկոծումով եւ բիրերու հարուածներով:

- 18 Յունիս — Մոսկուայի հայոց գերեզմանատան մէջ կայացած հաւաքի մը ընթացքին, Հայր Տիրան Կիրեղեան կը յայտնէ թէ Բաբուի մէջ մթնոլորտը կը մնայ լարուած եւ թէ ազերի թուրքերը քանի մը օր առաջ բռնաբարած են հայոց գերեզմանատունը եւ տապալած՝ Ստեփան Շահումեանի արձանը:

Հակահայ արարքներու ծիրէն ներս, Թիֆլիսէն Կիրովական ուղղուող հայկական օթոպիւս մը վրաստանի Մառնեւլ քաղաքի ազերի բնակիչներուն կողմէ կ'ենթարկուի քարկոծումի, որուն հետեւանքով կ'իյնան քանի մը վիրաւորներ:

- 21 Յունիս — Լեռնային Ղարաբաղի շրջանային խորհուրդը (խորհրդարան) անգամ մը եւս կը վերահաստատէ Փետրուար 20ի ծանօթ իր որոշումը, երբ կը վերականգնէ Ղարաբաղը Հայաստանին վերամիացնելու իր պահանջը եւ կոչ կ'ուղղէ Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդին, որպէսզի այդ քայլին իբրեւ նա-

խապատրաստութիւն՝ Ղարաբաղը առժամաբար դուրս բերուի Ադրբեջանի հակակշիռէն եւ ուղղակի կապուի Մոսկուայի, ստանալով ինքնավար հանրապետութեան գոյավիճակ:

Պայթուցիկ մթնոլորտի մը մէջ տեղի ունեցած այս ժողովին կը մասնակցին նաեւ Ադրբեջանի Գերագոյն Խորհուրդին նախագահ՝ Սիւլէյման Տատլիեւի... Սումգայթի ուժերու հրամանատար՝ Գօր. Գրաբի:

- 22 Յունիս — Այն պահուն, երբ զարաբաղցիներու գործադուլը կը թեւակոխէ իր առաջին ամիսը, Ստեփանակերտի Յաղթանակի հրապարակը կը հաւաքուին քաղմահազար հայեր, յայտնելու համար որ օր մը առաջ տրուած որոշումը քաւարարութիւն չի տար իրենց պահանջին:

Երեւանի մէջ, մօտաւորապէս հազար հոգի ցոյց մը կը կատարեն Երեւանի ՔԱ. ԿԷ. ՊԷ. ի կեդրոնին առջեւ եւ կը պահանջեն երեք ամիսէ ի վեր արգելափակուած Պարոյր Հայրիկեանի ազատ արձակումը:

- 24 Յունիս — Հակահայ տրամադրութիւնները կը շարունակուին ամէն մակարդակի վրայ: Այսպէս՝ Հայաստանի Մասիս շրջանին մէջ 45 հայուհիներ կը թունաւորուին եւ կը փոխադրուին հիւանդանոց, իբրեւ հետեւանք՝ հիւսուածեղէնի գործարանի մը մէջ պիւթակազի «փախուստ»ի:

Աւելի ուշ, քննութիւնները ցոյց կու տան որ դէպքը խափանարարութեան մը արդիւնքն է:

«Պրաւդա» կը հրատարակէ Բաբուի հայերուն վերագրուած հաւաքական նամակ մը, որուն մէջ անոնք կը յայտնեն իրենց «խոր մտահոգութիւնը» Ղարաբաղի

մարզին վերջին գարգացումներուն համար:

• 25 Յունիս — Անգլիական «ՊԻ. ՊԻ. ՄԻ.» ռատիոկայանը կը հաղորդէ որ Խ. Վրաստանի Համայնավար կուսակցութեան ընդհ. փարտուղար Ճումպեր Փաթիսչվիլի, կուսակցական նիստի մը ընթացքին ելոյթունենալով, Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդէն խնդրած է որ լրջօրէն նկատի առնուին Անդրկովկասի ժողովուրդներուն կեանքը խռովող վերջին գարգացումները եւ հաշուի առնուի Ղարաբաղի խորհրդարանին Խ. Հայաստանին վերակցուելու գծով ներկայացուցած պահանջը:

• 28 Յունիս — Մոսկուայի մէջ կը բացուի Խ. Միութեան Համայնավար կուսակցութեան 19րդ համագումարը, որուն 4491 պատգամաւորներու շարքին կ'ըլլան նաեւ 51 հայաստանցի եւ 5 դարաբաղցի պատգամաւորներ: Համագումարի առաջին օրուան նիստին կրեմլի դեկավար Մ. Գորբաչով, Խ. Միութեան ժողովուրդները գոյակցութեան հրաւիրելով, կը մերժէ սահմանային որեւէ փոփոխութիւն:

Միւս կողմէ, Մոսկուայի մէջ տեղի ունեցած մամլոյ ասուլիսի մը ընթացքին, Համայնավար կուսակցութեան Կ. Կոմիտէի անդամներէն Վիաչեսլաւ Միխայիլով կը յայտնէ թէ Սումգայթի փոկրումին մեղսակցութեան յանցանքով ձերբակալուած 80 ամբաստանեալներէն երեքը ստացած են քանտարկութեան վճիռներ: Ան կ'աւելցնէ որ ամէնէն ծանր վճիռը 15 տարի քանտարկութիւն է:

Ասուլիսի պահուն, Միխայիլով կը յայտնէ նաեւ որ հայերու եւ ազերիներու միջեւ «միջադէպեր» պատահած են Քազախի մէջ, Ադրբեջանի հիւսիս-արեւել-

քը, առանց սակայն գոհեր արձանագրելու:

• 29 Յունիս — Ադրբեջանի Համայնավար կուսակցութեան դեկավար՝ Ապտիւլ Ռահման Վեզիրով, Խ. Միութեան Համայնավար կուսակցութեան համագումարին առջեւ խօսք առնելով, կը յայտնէ որ Լեռնային Ղարաբաղի պէս ինքնավար շրջաններ պէտք է աւելի լայն իրաւասութիւններ վայելեն, սակայն կ'աւելցնէ նաեւ որ շրջանները պէտք է գիտնան Խ. Միութեան նկատմամբ իրենց պատասխանատուութիւնը:

Այնուհետեւ, Վեզիրովէն անմիջապէս ետք խօսք առնելով, Սուրէն Յարութիւնեան, իր կարգին, դիտել կու տայ որ «անյետաձգելի պահանջ է նոր մտածելակերպի մը որդեգրումը՝ ազգային հարցերուն նկատմամբ»:

• 30 Յունիս — Մոսկուայի մէջ կայացած մամլոյ ասուլիսի մը ընթացքին, ազերի պատասխանատուներ բոլորովին անընդունելի կը նկատեն հայերու կողմէ ներկայացուած՝ Ղարաբաղը առժամաբար Ստաւրոպոլի, Ռուսիոյ կամ նոյնիմէն Մոսկուայի հակակշիռին տակ դնելու երեք ընտրանքները:

Մինչ այդ, Ադրբեջանի Համայնավար կուսակցութեան փարոզական բաժանմունքի վարիչ՝ Աֆրանտ Դաշդեմիրով կը յայտնէ որ Ղարաբաղի հարցին շուրջ համախոհութիւնը պէտք է հիմնուի «ինքնավարութեան ամրապնդման եւ ոչ թէ հանրապետութեան բաժանման վրայ»:

• 1 Յուլիս — Ոստիկանական ուժերու զգալի յաւելում կ'արձանագրուի Երեւանի փողոցներուն մէջ, իսկ «ծիծեռնակներ» առաւօտեան թռիչքներ կը կատարեն ֆաղափն վերել:

Երեկոյեան, Երեւանի Օպերայի հրապարակը հաւաքուած մեծ թիւով ցուցարարներ կը պահանջեն յատուկ յանձնախումբի մը կազմութիւնը, քննութիւն բանալու համար շարաք մը առաջ Մասիսի շրջանին մէջ պատահած կազի «փախուստ»ի միջադէպին շուրջ:

- 2 Յուլիս — Մինչ Ադրբեջանի փոխ ներքին գործոց նախարար՝ Թ. Ասլանով եւ նախարարութեան պաշտօնէութեան բաժանմունքի վարիչը կը պաշտօնագրկուին, Խ. Միութեան Համայնավար կուսակցութեան 19րդ համագումարը կ'աւարտէ իր աշխատանքները եւ, ի շարս այլոց, ազգութիւններու հարցին վերաբերեալ յատուկ բանաձեւ մը կը հրապարակէ, որ կ'առաջադրուի ստեղծել կառավարական յատուկ մարմին մը, որ պիտի գրադի ազգային եւ ազգութիւններու հարցերով:

Միւս կողմէ, մինչ մոսկուաբնակ 300 հայեր իրենց հերթական հաւաքը կ'ունենան հայոց գերեզմանատան մէջ, Մոսկուայի հայկական աղբիւրները կը հաստատեն որ իրենց տրամադրութեան տակ ունին Սումգայթի փոկրումին սպաննուած հայերուն անուանացանկին մէկ լուսապատնէնը, որ կ'ընդգրկէ 33 հայու անուն:

Իր կարգին, խորհրդային բնակի պաշտօնները՝ «Կարմիր Աստղ» կը հաղորդէ որ Անդրկովկասի երեք հանրապետութիւններուն՝ Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի գինուորական եւ քաղաքական պատասխանատուները ժողով մը գումարած են, քաղաքային պաշտպանութեան հարցեր քննարկելու համար:

- 3 Յուլիս — Համայնավար կուսակցութեան ընդհանուր

համագումարէն պատասխան ստացած չըլլալով, հայրենի ժողովուրդը Երեւանի մէջ կը ձեռնարկէ ցոյցերու եւ գործադուլներու նոր ալիքի մը:

- 4 Յուլիս — Գորբաչով կ'ընդունի Լեւոնային Ղարաբաղի Համայնավար կուսակցութեան առաջին քարտուղար Հենրիկ Պողոսեանը:
- 5 Յուլիս — Հայկական արդար եւ նպատակասլաց պահանջատիրութիւնը կ'արձանագրէ մասնակի եւ պարագայական արտայայտութիւն, երբ կը բխի բիրտ ուժի եւ արիւն կը հոսի:

Արդարեւ, Երեւանի «Զուարթնոց» օդակայանն ու անոր անմիջական շրջակայքը թատերաբեմ կը դառնան քախումբներու, որոնք տեղի կ'ունենան հայ ցուցարարներու եւ Խ. Միութեան ներքին գործոց նախարարութեան ենթակայ ոստիկան ուժերու միջեւ, պատճառելով 2 զոհ, մէկը՝ փամփուշտով, իսկ միւսը՝ սրտի կաթուածով եւ 90 վիրաւոր, որոնցմէ 36ը՝ լուրջ: Դէպէն անմիջապէս ետք, Երեւանի օդակայանէն թռուիչները կ'առկախուին 2 օրով, իսկ ապահովութեան ուժեր գրահապար կառնելով կը պաշարեն Օպերայի հրապարակը եւ կ'արգիլեն որեւէ բնոյթի զանգուածային հաւաք:

Պահանջատէր ժողովուրդը, իր կարգին, Երեւանը կը վերածէ «Մեռեալ քաղաք»ի:

- 7 Յուլիս — Ապահովութեան ուժերը կը քաշուին Երեւանի կեդրոնէն, բայց գործադուրը կը շարունակուի, իսկ փոխադրական միջոցները կը մնան անկանոն: Մինչ ցուցարար բազմութիւնները կը դիմեն բողոքի արտայայտութեան նոր հնարներու, երբ իրենց ինքնաշարժներուն ճշակները հնչեցնելով եւ դրօշակներ

պարգած՝ կը շրջին Երեւանի փողոցներուն մէջ: Այս առթիւ, Երեւանի շէնքերը կը ծածկուին սեւ դրօշակներով:

Օրուան ընթացքին տեղի կ'ունենայ օդակայանի դէպքին 2 գոհերուն յուղարկաւորութիւնը: Նոյն միջոցին Ստեփանակերտի մէջ տեղի կ'ունենայ գոհերուն նուիրում տպաւորիչ ցոյց մը: Ստեփանակերտցիք մոմերով լուռ կը տողանցեն Լեռնային Ղարաբաղի գլխաւոր քաղաքին փողոցներէն:

Աւելի ուշ, երկար լոռութենէ ետք, Վազգէն Ա. Կաթողիկոս պատկերասփիւռէն ժողովուրդին կ'ուղղէ հանդարտութեան կոչ մը եւ կը պահանջէ ըլլալ «իմաստուն», «շարժիլ խոհեմութեամբ», «օրինապահօրէն» եւ չդիմել «գործադուլի ու ցոյցերու»:

• 8 Յուլիս — Խ. Միութեան Գերագոյն Ատեանը կ'որոշէ Ռուսիոյ Դաշնակցային հանրապետութեան ատեաններուն վստահիլ Սումգայթի փոկրումին մասնակցած ազերիներուն դատաւարութիւնը:

Երեւանի մէջ, Վազգէն Ա. Կաթողիկոս անգամ մը եւս հայ-ազերի խաղաղ գոյակցութեան ու բարի դրացնութեան վիճակին պահպանման ի նպաստ կոչ մը կ'ուղղէ 300 հազար ցուցարարներու:

• 9 Յուլիս — Խ. Միութեան ներքին գործոց նախարարութենէն ստուարաթիւ ոստիկան-գինուորներ հրասայլերով եւ զրահապատներով կը պաշարեն Երեւանի Օպերայի հրապարակը եւ գայն փակ կը հռչակեն ցուցարարներու առջեւ: Այնուհետեւ, ցոյցերը կը տեղափոխուին Հրազդան մարզադաշտի շրջանը:

Միւս կողմէ, Երեւանի պատկերասփիւռէն խօսք առնելով, Հայաստանի Համայնավար կուսակցութեան

ընդհ. քարտուղար Ս. Յարութիւնեան կը վստահեցնէ, որ Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդը մօտ ատենէն պիտի քննարկէ Լեռնային Ղարաբաղի հարցը: Այս առթիւ, ան կոչ կ'ուղղէ նաեւ աշխատանքի վերադառնալու:

• 10 Յուլիս — Մինչ Լեռնային Ղարաբաղի մէջ գործադուլը կը թեւակոխէ իր 50րդ օրը, հայրենի ժողովուրդը, իր կարգին, կը թեւակոխէ գործադուլի երկրորդ շաբաթը:

Երեւանի մէջ, բացի սպասարկութիւններէն եւ փոխադրամիջոցներէն, բոլոր մարզերը կ'անդամալուծուին: Երեւանի Օպերայի հրապարակը օրինական ուժերուն կողմէ կը մնայ «փակ գօտի»: Ցոյցերը կը շարունակուին Հին Արուեստներու Հիմնարկին շրջանը: Ցուցարարներուն թիւը կը հասնի 400 հազարի:

Իրենց կարգին, մոսկուաբնակ բազմահարիւր հայեր հրապարակային ցոյցերով եւ *սիթ-ին*ներով կը շարունակեն հանրային կարծիքին ուշադրութիւնը երաւիրել երեւանեան իրադարձութիւններուն վրայ:

• 12 Յուլիս — Լեռնային Ղարաբաղի խորհուրդը (խորհրդարանը) պատմական նիստի մը ընթացքին կ'որոշէ շրջանը անջատել Ադրբեջանէն, վերամկրտել իր պատմական անունով՝ Արցախ եւ որդեգրել ինքնավար այս մարզը գործնապէս Խ. Հայաստանին կապելու քայլեր:

Ադրբեջանեան հակադրութիւնը չ'ուշանար: Արդարեւ, Ադրբեջանի Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը անմիջապէս նիստ մը կը գումարէ եւ «չեղեալ» ու «հակա-սահմանադրական» կ'որակէ Ղարաբաղի խորհրդարանին քայլը:

Նոյն օրը, Էստոնիոյ մէջ տեղի կ'ունենայ Ղարաբաղի պահանջատիրութեան գորավիզ կանգնելու միօրեայ ընդհանուր գործադուլ մը:

- 13 Յուլիս — Խ. Հայաստանի Համայնավար կուսակցութիւնը, Սուրէն Յարութիւնեանի նախագահութեամբ գումարուած նիստի մը ընթացքին, կ'որոշեցրէ բանաձեւ մը, որ կրեմլէն կը պահանջէ ընթացք տալ դարաբաղցիներու պահանջին եւ պատմական Արցախը վերամիացնել Հայաստանի: Բանաձեւ-դիմումը առ ի ֆննութիւն կը յղուի Մոսկուա:

Երեւանի մէջ, Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի նախագահութեան նիստի նախօրեակին, կը տիրէ սպասողական վիճակ: Մինչ 200 հազար ցուցարարներ մատենադարանի հրապարակը հաւաքուած՝ կը վերահաստատեն հայ ժողովուրդի անփոփոխ եւ անմահանջ պահանջը:

- 14 Յուլիս — Գործադուլներն ու ցոյցերը կը շարունակուին Երեւանի, Լենինականի եւ Հայաստանի մընացեալ քաղաքներուն մէջ:

Մոսկուայի մէջ, Պալթեան երկիրներէն շուրջ 30 ցուցարարներ, Լենինի մատենադարանին մօտ պատուներ եւ դրօշակներ պարզած, գորակցութիւն կը յայտնեն Ղարաբաղի հայութեան պահանջին:

- 15 Յուլիս — Ղարաբաղի թէ Հայաստանի իրազարձութիւններուն մասին խորհրդային պատկերասփիւռին ու մամուլին կողմնակալ եւ բացայայտօրէն հակահայ լրատուութիւնը խոր ընդվզում կ'առաջացնէ Հայաստանի մէջ:

Նոյն օրը, Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէն, իր մէկ ժողովին ըն-

թացքին, կուսակցութենէն կ'արտափէ Աշոտ Մանուչարեանը եւ Վալերի Ենգիպարեանը (երկուքն ալ «Ղարաբաղի Յանձնախումբ»ի անդամներ), ինչպէս նաեւ իր պաշտօնէն կը հեռացնէ Համայնավար կուսակցութեան Երեւանի կոմիտէի պետ՝ Լեւոն Սահակեանը եւ, անոր փոխարէն, կ'ընտրէ Միքայէլ Մինասրէկեանը:

- 16 Յուլիս — Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի նախագահութեան նիստի նախօրեակին, Երեւանի մէջ ցոյցերը վերջ կը գտնեն մարտավարական նկատառումներով:

Իրողական գետնի վրայ, այլախոհական աղբիւրներ կը յայտնեն թէ Երեւան կը հասնին 118 հրասայլեր, 130 զինուորական փոխադրակառքեր եւ 4 ուղղաթիռներ:

Ստեփանակերտի մէջ կը շարունակուի գէնֆի «հաւաք»ը:

- 18 Յուլիս — Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը կը մերժէ ընդառաջել Հայաստանին վերադառնալու Լեոնային Ղարաբաղի պահանջը եւ կ'որոշէ որոշեցրել կարգ մը միջոցառումներ, որոնք պիտի ամբողջացնեն շրջանի տնտեսական եւ մշակութային զարգացման ծրագիրները:

Գերագոյն Խորհուրդի նախագահութեան այս նիստին կը մասնակցին նաեւ տասնամեղամ պատուիրակութիւններ Հայաստանէն եւ Ադրբեջանէն:

Միւս կողմէ, ա'յն պահուն, երբ խորհրդային կեդրոնական մամուլն ու լրատու աղբիւրները կը բարեխառնեն իրենց հակահայ տրամադրութիւնները, «Ռէէօթըլլ» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ որ վերջին շրջանին 100 հազար լատվիացիներ ցոյց մը

կատարած են ի նպաստ Ղարաբաղի եւ կոչ ուղղած՝ Կրեմլի, որպէսզի ընդունի դարաբաղցիներուն ընծայել հանրաժողովի իրաւունք՝ ինքնորոշում ստանալու ի խնդիր: Հաղորդումը կ'աւելցնէ նաեւ որ 400 լեհինկրատցիներ, իրենց կարգին, յուշագիր մը ստորագրած են եւ Մոսկուայէն պահանջած՝ որ ընդառաջէ դարաբաղցիներու պահանջին եւ վերջ տայ Ղարաբաղի իրադարձութիւններուն մասին «սպատեղեկատուութեան»:

• 19 Յուլիս — Մոսկուայի մէջ կայացած մամլոյ ասուլիսի մը ընթացքին, Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի փոխ նախագահ՝ Պիոտր Դեմիչիւ, ներքին գործոց նախարար՝ Ալեքսանդր Վլասով եւ պետական ընդհանուր դատախազ Ալեքսանդր Սուխարեւ սպառնալիկ պատժամիջոցներով կը սպառնան Ղարաբաղի եւ Հայաստանի հայութեան:

• 20 Յուլիս — Մինչ Ղարաբաղի պահանջատիրական շարժումը կը թեւակոխէ իր երրորդ փուլը, իրողական գետնի վրայ կ'արձանագրուին հետեւեալ իրադարձութիւնները.

ա. Երեւանի մէջ հաւաքուած 400 հազար հայեր կ'որոշեն երկօրեայ ընդհանուր գործադուլ յայտարարել, իբրեւ բողոքի արտայայտութիւն՝ Լեռնային Ղարաբաղի Հայաստանի վերամիացման գծով Կրեմլի մերժողական պատասխանին դէմ:

բ. Խորհրդային մամուլն ու բանբերները, շարունակելով սխալ տեղեկատուութեան իրենց արշաւները, քննադատական սուր արշաւ մը կը շղթայագործեն «Ղարաբաղի Յանձնախումբ»ի 11 անդամներուն

դէմ, զանոնք ամբաստանելով՝ «անիշխանութիւն» տարածելու, «ազգութիւններու միջեւ տեղափոխութիւններ մտնելու» եւ Ղարաբաղի նկատմամբ իր «ամբոխավարութեամբ»՝ «իշխանութեան ձգտելու» յանցանքներով:

գ. Ադրբեջանի Համայնավար կուսակցութեան ղեկավար՝ Ապտիւ Ռահման Վեգիբով, Բաքուի պատկերասփիւռէն ելոյթ ունենալով, կոչ կ'ուղղէ Խ. Հայաստանի եւ Վրաստանի իր պաշտօնակիցներուն՝ Սուրէն Յարութիւնեանի եւ Ճոմպէր Փաթիսշվիլիի, որպէսզի անդրկովկասեան երեք երկիրներուն միջեւ բանակցութիւններ բացուին, ի խնդիր ազգամիջեան հարցերու լուծման եւ հասարակաց ռազմավարութեան մը որդեգրման:

դ. Մոսկուայի մէջ, Պարոյր Հայրիկեան կը գրկուի խորհրդային իր հպատակութենէն՝ «Սորհրդային Միութեան վարկին վնաս հասցուցած ըլլալուն համար»:

• 21 Յուլիս — 300 հազար հոգիի մասնակցութեամբ Երեւանի մէջ կայացած հաւաքի մը ընթացքին, վերանորոգելով հանդերձ ընդհանուր գործադուլի իր կոչը, «Ղարաբաղի Յանձնախումբ»ը ժամանակուան մը համար կ'առկախէ հաւաքները: Այնուհետեւ, հաւաքին մասնակցողներուն պահանջին վրայ, Երեւանի քաղաքային պետական խորհուրդը կը գումարէ ժողով մը, քննարկելու համար մայրաքաղաքէն բանակայիններուն հետացման հարցը:

Բաքուի մէջ, 180 հազար ազերիներ բողոք կ'արտայայտեն Լեռնային Ղարաբաղի մէջ 2 ամիսէ ի վեր շարունակուող ընդհանուր գործադուլին համար:

- 22 Յուլիս — Այն պահուն, երբ գրագետ Զորի Բալայ-եանի ընկերակցութեամբ յատուկ պատուիրակութիւն մը կ'ուղղուի Ստեփանակերտ, խորհրդակցութիւն ունենալու համար շրջանի բնակիչներուն հետ, Խորհրդոյին Միութեան դատական մարզի պատասխանատուներէն՝ Արկադի Բորեցքի ակնարկութիւն կ'ընէ Ստեփանակերտի առեւտուրի մարզի պատասխանատու Ա. Անանեանի եւ կայարանի պետ Է. Շախատաւայի նկատմամբ կարգապահական տնօրինումներու մասին:
- 23 Յուլիս — Երեւանի մէջ, ցուցարար բազմութիւններ հետգհետէ կը սկսին գործի վերադառնալ: Այնուհետեւ, որոշ հիմնարկներ շաբաթավերջերուն եւս կ'աշխատին, որպէսզի կարելի ըլլայ ամբողջացնել կեդրոնական կառավարութեան կողմէ Հայաստանի վրայ դրուած տնտեսական արտադրաչափը:
- 25 Յուլիս — Արցախի հայութիւնը եւս վերջ կու տայ իր ամբողջական գործադուլին, իսկ Երեւանի մէջ, Համայնավար կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէն կ'որոշէ «քացայայտել Ղարաբաղ Կոմիտէ»ի գործիչներուն «հակընկերային գործունէութիւնը»:
- 26 Յուլիս — Երեւանի ցոյցերու մասնակից 44 հայորդիներ կ'ամբաստանուին քրէական յանցանքներով: Մինչ պետական հեռատեսիլի կոմիտէի նախագահ Ստեփան Պողոսեան ազատ կ'արձակուի իր պաշտօնէն:
- 27 Յուլիս — Միացեալ Նահանգներու Ծերակոյտը միաձայնութեամբ կոչ կ'ուղղէ Խ. Միութեան, որպէսզի «յարգէ հայ ժողովուրդի իրաւական ձգտումները»: Կոչը նաեւ կը գգուշացնէ, թէ հայերու հանդէպ խստութիւններու շարունակումը «որոշակի կերպով պիտի ազդէ ամերիկեւիտրիքային յարաբերութիւններուն վրայ»:

- 28 Յուլիս — Կրեմլին Երեւան կը դրկէ իր յատուկ պատուիրակը Արկադի Վոլսկին, անոր վստահելով 18 Յուլիսին Գերագոյն Խորհուրդին տուած որոշումներուն կիրարկման եւ շրջանին բնականոն վիճակի վերստեղծման հսկողութեան առաքելութիւնը:
- 29 Յուլիս — Բաւական երկար ընդմիջումէ ետք, շուրջ կէս միլիոնի բազմութիւն մը կը հաւաքուի Երեւանի Մատենադարանին առջեւ: Այս խաղաղ հաւաքին մասնակցողները կը պահանջեն, որ Հայաստանի եւ Ղարաբաղի մէջ հանրաժողով կազմակերպուի, Արցախի Հայաստանի վերամիացման համար:
 Մոսկուայի մէջ, Գերագոյն Խորհուրդի նախագահութեան նիստին կողմէ նշանակուած յատուկ յանձնախումբը կը գումարէ իր առաջին ժողովը: Աւելի ուշ, յանձնախումբը պիտի նշանակէ 5 ենթախանութիւններ, քննարկելու եւ նշոյնելու համար Արցախի իրավիճակը եւ ապագայ կարելիութիւնները:
- 2 Օգոստոս — Արցախի կարիքներուն քննարկման համար Ստեփանակերտի մէջ կը գումարուի աննախընթաց եւ կարելու ժողով մը, որուն կը մասնակցին Յարութիւնեան, Վեգիբով, Պողոսեան եւ Վոլսքի: Յիշեալ ժողովին կը յաջորդեն Հայաստանի եւ Ադրբեջանի Համայնավար կուսակցութեանց ղեկավարութեան ժողովները:
- 3 Օգոստոս — Խ. Միութեան ընդհանուր դատախազութիւնը կը տեղեկացնէ, թէ հայերու դէմ գործուած բռնարարներու մասնակցութեան յանցանքով ամբաստանուած 94 սովկայիթցի ազերիներ ձերբակալուած են, եւ անոնցմէ 20ին դատերը արդէն իսկ Ռուսիոյ Դաշնակցային Հանրապետութեան դատարաններուն յղուած են:
- 4 Օգոստոս — Ստեփանակերտի մէջ, արցախցիք անգամ մը եւս կը դիմեն ցոյցի, բողոքելու համար Շուշիի մէջ

ագերիներու կողմէ հայերու վրայ կատարուող յարձակումներուն դէմ:

Նոյն օրը, Մոսկուայի լիազօր ներկայացուցիչ Վոլսկի հանդիպում մը կ'ունենայ շրջանի կուսակցական եւ տնտեսական ղեկավարներուն հետ:

- 5 Օգոստոս — «Ղարաբաղ Կոմիտէ»ի երաւերով, 300 հազար համախմբող ընթացիկ հաւաք՝ Մատենադարանին առջեւ:
- 8 Օգոստոս — Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի նախագահութեան յառաջացուցած ենթայանձնախումբի անդամ, պատմագէտ Եւզենի Համբարձումով կոչ կ'ուղղէ Խորհրդային լրատու գործակալութեանց, որպէսզի «եղելութիւնները նշմարտութեամբ եւ ամբողջութեամբ փոխանցեն հանրութեան»: Իր կարծիքով, Գերագոյն Խորհուրդի նախագահութեան որոշումը վերջնական չէ, նկատի ունենալով որ «աշխարհի վրայ ոչ մէկ բան վերջնական կրնայ ըլլալ»:
- 12 Օգոստոս — Ադրբեջանի Քա. կէ. Պէ. ի պատասխանատուն՝ Ջիա Եուսուֆ-Ջադէ պաշտօնանկ կ'ըլլայ եւ կը փոխարինուի Իւան Կորելովսկիով, որ 1986էն ի վեր կը պաշտօնավարէր Խորհրդային գաղտնի գործակալութեան Մոսկուայի կեդրոնական գրասենեակին մէջ:
- 17 եւ 18 Օգոստոս — Ջանգուածային նոր ցոյցեր տեղի կ'ունենան Երեւանի մէջ, բողոքելու համար հաւաքներու եւ ցոյցերու նկատմամբ կառավարական արգելիքն դէմ: Այս առթիւ ոստիկանութիւնը կը ձերբակալէ 4 հոգի:
- 19 Օգոստոս — 200 հազար ժողովուրդ համախմբող հաւաք՝ Խաղաղութեան պողոտային վրայ: Պաշտօնապէս արտօնուած այս հաւաքին խօսք կ'առնէ Լիթուանիայէն ներկայացուցիչ մը, որ Լիթուանիոյ ժողովուրդին անունով հայութեան պահանջներուն զօրակցութիւն կը յայտնէ:

Հաւաքին ընթացիկն կը կազմուի նաեւ յանձնախումբ մը, որ պիտի զբաղի Ադրբեջանէն գաղթած հայերուն օժանդակելու հարցով:

- 20 Օգոստոս — Խ. Միութեան հանրային դատախազ Ալեքսանտր Կատուշեւ կը յայտնէ, որ Սումգայի դէպքերուն ծանրութիւնը նկատի ունենալով, յարմար նրկատուած է որ Քա. կէ. Պէ. ի կեդրոնական գրասենեակին մասնագէտ ֆենիչները եւս իրենց մասնակցութիւնն ու ներդրումը բերեն կատարուող հարցաֆենութիւններուն:

Ստեփանակերտի մէջ, պաշտօնական արտօնութեամբ կայացած հաւաքի մը ընթացիկն, ժողովուրդը խոր ընդվզում կը յայտնէ այն իրողութեան դէմ, որ ադրբեջանական իշխանութիւնները չեն յարգեր Հայաստանէն գաղթած ագերիներու Արցախի մէջ հաստատուիլը արգիլելու իրենց խոստումը:

- 24 Օգոստոս — Ժողովրդային զօրակցական ելոյթներու բարձր մթնոլորտի մը մէջ, ԼՂԻՄԻ Գերագոյն Խորհուրդը միաձայն ֆուտարկութեամբ կ'որոշէ դիմել Կրեմլինի, որպէսզի վերանայի շրջանին վարչականօրէն Ադրբեջանի ենթակայ ըլլալու հարցը:

Միաժամանակ, տեղի կ'ունենայ մարզի Գերագոյն Խորհուրդի նախագահի ընտրութիւն: Ագերի նախագահը կը փոխարինուի հայով մը՝ Բարայեան: Նոր նախագահն ու մարզկոմի Ա. Բարտուղար Հենրիկ Պօղոսեան խօսք առնելով կը շեշտեն Ղարաբաղը Ինքնավար Հանրապետութեան մը վերածելու կարեւորութիւնը:

- 25 Օգոստոս — «Պրակա» անդրադառնալով մարզի Գերագոյն Խորհուրդի նիստին, Ինքնավար Հանրապետութեան մը ստեղծումը կը նկատէ Ղարաբաղի հարցին յարմարագոյն լուծումը:
- 26 Օգոստոս — Երեւանի Խաղաղութեան պողոտային վը-

րայ տեղի կ'ունենայ նոր հաւաք մը, ուր, ի շարս այլոց, կ'արժարժուին Մասիսի շրջանի հայ կանանց թունաւորման պարագան, Շուշիի մէջ թաթարներ վերաբնակեցնելու Բաբուի նիգերը եւ Լեռնային Ղարաբաղի Գերագոյն Խորհուրդի նախորդ օրերու որոշումը:

Հաւաքին խօսք կ'առնեն նաեւ Լիթուանիոյ եւ Էսթոնիոյ ներկայացուցիչները, որոնք, զօրակցութեան խօսք յայտնելով, կ'առաջարկեն կազմել փոխադարձ գործունէութեան կոմիտէ մը:

• 31 Օգոստոս — 100 հազարնոց ցոյցի մը ընթացքին, հայրենի ժողովուրդը կը պահանջէ Երեւանի շրջաններէն մէկը կոչել զօր. Անդրանիկի անունով:

• 1 Սեպտեմբեր — Ուշագրաւ ցոյց-հաւաքները տեղի կ'ունենան ուսական դպրոցներուն առջեւ: Ցուցարարները կը համոզեն աշակերտները, որպէսզի դպրոց չերթան:

Մինչ այդ, 100 ուսանողներ նստացոյց մը կը կազմակերպեն, Թատերական (Օպերայի) հրապարակին վըրայ հաւաքներ կազմակերպելու իրաւունք պահանջելով:

• 2 Սեպտեմբեր — Հակառակ ոստիկանական պաշարումին, «Ղարաբաղ Կոմիտէ»ի հրաւերով, 100 հազար հայեր կը համախմբուին Երեւանի Օպերայի հրապարակին վրայ:

Հաւաքին խօսք առնելով, «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամները կը կարդան «Հայոց Համագգային Շարժում»ին ծրագիրը, որ կը պահանջէ Արցախի Հայաստանին միացումը, Եռագոյն դրօշի պաշտօնականացումը, ինչպէս նաեւ իրաւունքներ՝ հայաեռօք գաղութներու մէջ հայկական հիւպատոսարաններ հիմնելու, հայ երիտասարդներու զինուորական ծառայութիւնը Հայաստանի մէջ կատարելու եւ կեդրոնական տնտեսական ծրագիրներու ընդդիմանալու:

Նոյն օրը, Կրեմլին կ'արտօնէ օտար թղթակիցներու Հայաստան եւ Վրաստան մուտքը:

• 7 Սեպտեմբեր — Վերստին ուսանողական նստացոյցեր՝ Թատերական հրապարակին վրայ:

• 9 Սեպտեմբեր — Աւելի քան 200 հազար բողոքի ցոյց մը կը կատարեն Երեւանի փողոցներուն մէջ, որմէ ետք անոնք կը հաւաքուին Օպերայի հրապարակը, զոր Ազատութեան հրապարակ կը վերանուանեն:

Այս առթիւ, ցուցարար բազմութիւնները կը պահանջեն Արցախեան շարժումի դեկլարներուն դէմ հալածանքներու դադրեցումը եւ Օգոստոսի վերջերուն քրեական անհիմն ամբաստանութեամբ ձերբակալուած Համլէթ Բոչարեանի ազատ արձակումը:

• 10 Սեպտեմբեր — Օպերայի հրապարակը կրկին կը լիցւի շուրջ 10 հազար ցուցարարներով, որոնք կը պահանջեն հանրահաւաքներ կազմակերպելու իրաւունք: Հաւաքին ընթացքին խօսք կ'առնէ Հրանդ Ոսկանեան:

• 11 Սեպտեմբեր — Ստեփանակերտի ձեռնարկութիւններուն եւ հիմնարկութեանց տնօրէններուն խորհուրդը կ'որոշէ 12 Սեպտեմբերէն սկսեալ շաբաթօրեայ գործադուլներ կազմակերպել: Մինչ այդ, Ստեփանակերտի մէջ տեղի կ'ունենայ 30 հազարնոց հաւաք մը:

• 12 Սեպտեմբեր — Ստեփանակերտի մէջ նոր գործադուլ մը կը սկսի: Արցախցիք կը պահանջեն շրջանին վերամիացումը Հայաստանի եւ կը բողոքեն շրջանին մէջ ազերի թուրքեր վերաբնակեցնելու գործնական աշխատանքներուն դէմ:

Շուտով կ'արձագանգէ Երեւան, ուր Եռագոյն դրօշներու ծածանումը կը դառնայ ընթացիկ երեւոյթ: Հոս ցուցարարները կ'արժարժեն նաեւ կենսուրդի մտահոգութիւններ եւ կ'արտայայտուին պետական շրջանակներու փտութեան դէմ:

- 13 Սեպտեմբեր — Սուրեն Յարութիւնեան բուռն ռնով կը քննադատէ երկրի նախկին ղեկավարները, որոնց թոյլատրած ընկերային եւ տնտեսական սխալները պատճառ դարձած են արցախեան ցոյցերուն եւ գործադուլներուն:
- 14 եւ 15 Սեպտեմբեր — Տոյցերն ու հաւաքները կը շարունակուին առօրեայ հերթականութեամբ:
- 16 Սեպտեմբեր — Երեւանի հայութիւնը եւս գործադուլի կը դիմէ, գորակցելու համար Արցախի իր եղբայրներուն կողմէ վերսկսուած գործադուլին: 150 հազար հայեր իրենց մասնակցութիւնը կը բերեն ժողովրդական հաւաքի մը:
- 17 Սեպտեմբեր — Երեւանի գործարաններուն եւ վարժարաններուն մեծ մասը փակ կը մնայ:
- 18 Սեպտեմբեր — Երեւանէն Ստեփանակերտ ուղղուած միջոցին, հայ ուսանողներով լեցուն հանրակառք մը Ստեփանակերտի մօտակայ Խոջալու գիւղին մօտ գինեալ յարձակումի կ'ենթարկուի ազերի խուժանին կողմէ: Արդիւնք՝ հայ ծերունի մը կը սպաննուի եւ 25 ուրիշներ կը վիրաւորուին (17ը՝ հայ):

Նոյն օրը, «Պրակա»-յի մէջ լոյս տեսած յօդուած մը լուսարձակի տակ կ'առնէ Երեւանի մէջ տեղի ունեցած «ծայրայեղական» ելոյթները եւ անոնց պատասխանատու կը նկատէ «Ղարաբաղ Կոմիտէ»-ի անդամները: Ակնարկութիւն կ'ըլլայ նաեւ կաշառակեր ու վատասերած տարրերու գործունէութեան:

- 19 Սեպտեմբեր — Հայ ուսանողներու վրայ կատարուած յարձակումին իբրեւ հետեւանք, Խոջալուի եւ Ստեփանակերտի մէջ արիւնալի ընդհարումներ տեղի կ'ունենան հայերու եւ ազերիներու միջեւ: 17 հայեր կը վիրաւորուին:

Երեւանի եւ Ստեփանակերտի մէջ ցոյցերն ու գործադուլները կը շարունակուին: Ստեփանակերտի մօտ

գտնուող Արովեան աւանի շինարարութեան մարզի աշխատաւորներով բնակուած շէնքի մը մէջ ահան մը կը պայթի: Վայրին մօտ գտնուած թռուցիկ մը կը յայտնէ, թէ «ասիկա նուէր մըն է Ղարաբաղի բնակիչներուն»:

- 20 Սեպտեմբեր — Ս. Յարութիւնեանի հետ խօսակցութեան մը ընթացքին, Գորբաչով խոր մտահոգութիւն կ'արտայայտէ Խոջալուի եւ Ստեփանակերտի ընդհարումներուն մասին: Միաժամանակ, ան դիտելու տայ, որ Յուլիս 18ի որոշումը վերջնական չի սեպուիր, թանկի մը կը մտածէ իսկական լուծում մը բերելու հարցին:

Արժանահաւատ ազգիւրներ կը տեղեկացնեն նաեւ, որ Գորբաչով Յարութիւնեանէն կը խնդրէ իր անունով «Ղարաբաղ Կոմիտէ»-ին հաւաստիացնել, որ հիմնական լուծում մը պիտի գտնուի, եւ թելադրել՝ որ խուսափին զգացումներով մղուելէ եւ գործադուլներու միջոցաւ երկիրը անշարժացնելէ:

- 21 Սեպտեմբեր — Պահանջատիրական շարժումը հետըզհետէ կ'արմատականանայ եւ ծայրայեղական յախուռն տրամադրութիւններով կը հասնի անհակաշոյնիի աստիճանին:

Երեւանի մէջ, ցոյցերն ու հաւաքները կը շարունակուին: Ծայրայեղական խմբակցութիւնները մտահոգիչ կերպով լայն հող կը շահին: Բան մը, որ կուսակցական ղեկավարութիւնը կը ստիպէ դիմելու ժողովուրդին: Արկաղի Վոլսկի, Վ. Համբարձումեան եւ Ս. Կապուտիկեան, հեռատեսիլէն եւ մամուլէն ելոյթ ունենալով, ինքնագոյնումի եւ գործադուլներուն վերջ տալու կոչեր կ'ուղղեն ժողովուրդին:

Ստեփանակերտ, ըմպելի ջուրի սուր տագնապի մը մէջ, ամբողջութեամբ պաշարուած կը մնայ խորհրդային զօրքերուն կողմէ: Այսուհանդերձ՝ գործադուլը կը շարունակուի:

Պաճու եւս յուսարձակներ կը խլէ: Ադրբեջանի կուսակցական, պետական ու տնտեսական դեկավարներուն ուղղուած գեկուցումի մը մէջ, Ա. Վեգիրով կ'անդրադառնայ ԼՂԻՄի մէջ արձանագրուած «հակընկերային» իրադարձութիւններուն:

- 22 Սեպտեմբեր — Երեւանի մէջ տեղի կ'ունենայ 850 հազարոց հաւաք մը, ուր Գերագոյն Խորհուրդի անմիջական նիստ կը պահանջուի:

Նոյն օրը, Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիան, արտակարգ նիստ մը գումարելով, կոչ կ'ուղղէ ժողովուրդին՝ գործադուլներուն վերջ տալու:

Մոսկուայի մէջ, արտաքին գործոց նախարարութեան բանբեր Վատիմ Փերֆիլիեւ կը յայտնէ, թէ Խոջալուի ու Ստեփանակերտի բախումներուն ընթացքին, առ նուազն 30 շէնքեր հրկիգուած են եւ վաթսուներեք անլի ինքնաշարժներ փնացուած: 32 հայեր եւ 16 ադրբեջանցիներ վիրաւորուած կը ներկայացուին:

- 23 Սեպտեմբեր — Հայաստանի մտաւորականութեան ներկայացուցիչներուն հետ հանդիպումի մը ընթացքին, Ս. Յարութիւնեան մեծապէս կը գնահատէ գործադուլներուն վերջ տալու առընչութեամբ անոնց ցուցաբերած ելոյթները՝ մամուլէն ու հեռատեսիլէն:

Գորբաչով, իր կարգին, խորհրդային մտաւորականներու հետ հանդիպումի մը ընթացքին, Արցախի հարցին անդրադառնալով, կտրուկ կերպով կը շեշտէ, որ «կարգ ու կանոն պէտք է տիրէ»:

- 24 Սեպտեմբեր — Մինչ ժողովրդային զանգուածային ցոյցերը կը շարունակուին Երեւանի մէջ, Խ. Հայաստանի Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը կը գումարէ նիստ մը, որմէ թիւս իրադրագրութիւնը մէկ կողմէ հանդարտութեան կոչ կ'ուղղէ հայրենի ժողովուրդին, իսկ միւս կողմէ կը պահանջէ, որ կրեմլին փութացնէ

Արցախի բարգաւանման որոշումներուն կիրարկումը: Նիստին վաղորդայինն Երեւան կը ժամանէ Խ. Միութեան ներքին գործոց փոխ նախարար Նիկոլայ Տեմիտով:

- 25 Սեպտեմբեր — Խ. Միութեան ներքին գործոց նախարարութիւնը կը հաստատէ, որ չարտօնուած հաւաքներու մասնակցութեան ամբաստանութեամբ՝ ցարդ ձերբակալուած են 117 հոգի:

- 26 Սեպտեմբեր — Երեւանի մէջ, կացութիւնը համեմատաբար կը խաղաղի եւ հանրային փոխադրամիջոցներն ու կարգ մը գործարաններ կը վերադառնան աշխատանքի:

Ստեփանակերտ կը դիմագրաւէ սննդամթերքի սուր տագնապ: Միս գրեթէ անկարելի կ'ըլլայ գտնել: Շրջագայութեան արգելք մէկ ժամով կը կրճատուի, տնելով մինչեւ առաւօտեան ժամը 5:

Մոսկուայի ձայնասփիւռը կը հաղորդէ, որ արցախցիները կամաւոր կերպով խորհրդային ռատիկանութեան յանձնած են 695 զէնք, իսկ ռատիկանութիւնը խուզարկութիւններու միջոցաւ գրաւած է աւելի քան 100 երացան:

- 27 Սեպտեմբեր — 150 հազար հոգի համախմբող հաւաքի մը ընթացքին, «Ղարաբաղ Կոմիտէ»ն վերստին գործադուլը շարունակելու կոչ կ'ուղղէ՝ իշխանութիւններուն վրայ ճնշում բանեցնելու համար:

Միաժամանակ, Արցախի մէջ, 600 հայեր կը ձերբակալուին խորհրդային ռատիկաններու կողմէ, իշխանութեանց հաստատած շրջագայութեան արգելքը անտեսած ըլլալու համար:

- 28 Սեպտեմբեր — Հայաստանի Համայնավար կուսակցութեան կեդրոնական Կոմիտէն լիազուար նիստի մը ընթացքին նկատել կու տայ, որ գործադուլները կը վնաս

սեն երկրի տնտեսութեան եւ թէ ժողովուրդի լայն զանգ-
ւածները համաձայն չեն «գրգռիչ տարրերու» կողմէ հը-
րահրուած այս գործադուլներուն:

Դարձեալ Նրեւանի մէջ, Հայաստանի ժողովրդային
Հակաս կազմելու առաջին ժողովը կը ձախողի, որովհե-
տեւ նախաձեռնողները լաւ հաղորդակցութիւն չեն հաս-
տատել ազգային նպատակներ հետապնդող ա՛յլ խումբե-
րու հետ:

«Պրաւդա» կը դատապարտէ Արցախ ուղարկուած
խորհրդային ուժերը, ինչպէս նաեւ տեղւոյն իշխանու-
թիւնները, որոնք «վնասական կեցուածք չեն կրցած ցու-
ցարեքել ազգամիջեան հակամարտութիւններուն վերջ
տալու գործին մէջ»:

- 30 Սեպտեմբեր — Ամէնօրեայ հաւաքի մը ընթացքին,
«Ղարաբաղ Կոմիտէ»ն գործադուլին վերջ տալու եւ աշ-
խատանքի վերադառնալու կոչ կ'ուղղէ Նրեւանի ժողո-
վուրդին:

Արցախի մէջ գործադուլը կը շարունակուի: Ժողո-
վուրդը վնասակամ է ցոյցերը շարունակելու մինչեւ ար-
դար լուծում: Արցախ ո՛չ վարչական եւ ոչ ալ տնտեսա-
կան կապ կը պահէ Խ. Ադրբեջանի կառավարութեան
հետ, հետեւաբար շրջանին պարենաւորումը չափազանց
կը դժուարանայ:

- 2 Հոկտեմբեր — Ադրբեջանեան իշխանութիւնները յա-
տուկ հսկողութեան տակ կ'առնեն Ադտամի հայերուն
բնակարանները (շուրջ 48 տուն), զանոնք պաշտպանելու
յայտարարութեամբ:

Մտահոգիչ կացութիւն կը տիրէ Մեղրիի շրջանին
մէջ, ուր բաւական թիւով ադրբեջանցիներ կ'ապրին:

Նրեւանի մէջ, ցուցարար բազմութիւններ կ'որո-
շեն, օրական երկուֆին փոխարէն, օրական մէկ հաւաք
զումարել, նկատելով որ աշխատանքները վերսկսած են:

- 3 Հոկտեմբեր — Մինչ Ստեփանակերտի ժողովուրդը կը
շարունակէ գործադուլը եւ բոլոր գործարաններն ու
ձեռնարկութիւնները կը մնան փակ, շրջան ուղարկուած
խորհրդային ուժերը գործի կը լծուին, կատարելով ար-
ցախցիներու աշխատանքը:

Նոյն միջոցին, Ստեփանակերտ կը հասնի Խ. Միու-
թեան Գերագոյն Խորհուրդը ներկայացնող պատուիրա-
կութիւն մը, որ բազմակողմանի հանդիպումներ կ'ունե-
նայ տեղւոյն մտաւորականներուն, զանազան մարզերու
պատասխանատուներուն եւ «Կոունկ» կոմիտէին հետ:

- 4 Հոկտեմբեր — Մոսկուայի մէջ, հայութեան ներկայա-
ցուցիչներ տեսակցութիւն մը կ'ունենան Համայնավար
կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի ներկայացու-
ցիչներուն հետ: Կ'արծարծուին Արցախի վերամիաց-
ման, Սոււզայթի եւ Խոջալուի սպանդներուն հարցերը:

- 5 Հոկտեմբեր — Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի
պատուիրակութիւնը կը ժամանէ Նրեւան, ուր կը տե-
սակցի Ս. Յարութիւնեանի հետ:

Նրեւանի մէջ գործադուլը վերջ գտած է, սակայն
մարդիկ տակաւին ամէն երեկոյ կը հաւաքուին Օպերայի
հրապարակը, վերջին տեղեկութիւնները ստանալու հա-
մար: 9 հոգի կը շարունակեն հացադուլ կատարել, իսկ
հարիւրաւոր երիտասարդներ կը ձեռնարկեն նստացոյ-
ցի:

- 7 Հոկտեմբեր — Խորհրդային «Սեյսբայա ժիդն» թերթը
կը հաղորդէ, որ Շուշիի հայ բնակչութեան կէսէն աւելին
փախած է իր տունէն, երբ տեղւոյն ադրբեջանցիները,
վախ ու սարսափ տարածելու միտումով, այրած են կարգ
մը հայերու բնակարաններ: Միւս կողմէ, Արցախի շըր-
ջաններէն 1000 ադրբեջանցի ընտանիքներ, լքելով իրենց
տունները, հաստատուած են Ադտամ: Շուշիի մէջ մեծ թի-

ուով հայեր գործէ կ'արձակուին, իսկ Արցախի մէջ՝ ադրբեջանցիներ:

- 9 Հոկտեմբեր — Հայաստանի Գերագոյն Խորհուրդի երեսփոխանական ընտրութիւններուն ընթացքին, Համայնավար կուսակցութեան թեկնածուներէն Յուսիկ Յարութիւնեան եւ Անատոլի Մկրտչեան ջախջախիչ պարտութիւններ կը կրեն «Ղարաբաղ Կոմիտէ»ի թեկնածուներ Խաչիկ Ստամբոլցեանի եւ Աշոտ Մանուչարեանի կողմէ: Սակայն, զանազան պատճառաբանութիւններով, ընտրութիւնները չեղեալ կը նկատուին:
- 10 Հոկտեմբեր — ԹԱՍՍ կը հաղորդէ, որ ԼՂԻՄի կուսակցական եւ կառավարական պատասխանատուները, տուն առ տուն շրջելով, կը յաջողին համոզել արցախցիներու մեծամասնութիւնը՝ վերջ տալու գործադուլին եւ վերադառնալու աշխատանքի:

Իսկ «Պրակա», Սուլգայթի փոկրոմին անդրադառնալով, կը յստիքէ, թէ 19 պարագաներու բնութիւնը արդէն աւարտած է, եւ 25 հոգի բանտարկութեան վրեժներ ստացած են: Տակաւին 100 ուրիշներ կը սպասեն դատավարութեան:

- 11 Հոկտեմբեր — Ստեփանակերտի մէջ հանդիպում մը տեղի կ'ունենայ Հայաստանի եւ Ադրբեջանի Համայնավար կուսակցութիւններուն առաջին ֆարտուղարներուն միջեւ: Կը բնութիւն շրջանի տնտեսութիւնը բարելաւելու եւ բնակչութեան ապահովութիւնը երաշխաւորելու միջոցները:
- 12 Հոկտեմբեր — Երեւանի մէջ եօթը նոր անձեր կը սկսին հացադուլի, փոխարինելով նախկին խումբը, որուն մաս կը կազմէր նաեւ Հայաստանի Գերագոյն Խորհուրդի երեսփոխանական ընտրութիւններուն «Ղարաբաղ Կոմիտէ»ի թեկնածուն՝ Խաչիկ Ստամբոլցեանը, որ Սեպտեմբեր 20էն ի վեր հացադուլ կը կատարէր:

- 18 Հոկտեմբեր — Խ. Միութեան Գերագոյն Ատեանը կը ձեռնարկէ Սուլգայթի սպանդին մասնակցութեան յանցանքով ձերբակալուած ազերիներէն երեքին դատավարութեան: Ամբաստանեալներն են՝ Ահմէտ Իման Օղլի Ահմէտով, Իսմայիլ Ազադ Օղլի Իսմայիլով եւ Եւալար Գիյաս Ջաֆարով:

Նոյն օրը, Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէն կը վաւերացնէ Ս. Յարութիւնեանի Արցախ այցելութիւնն ու Ադրբեջանի առաջին ֆարտուղարին հետ տեսակցութեան առաջարկը:

- 19 Հոկտեմբեր — «Հայ Դատի Պաշտպանութեան Ընկերակցութեան» անդամներ Յովիկ Վասիլեան եւ Շողիկ Ասոյեան Երեւանէն կը տեղեկացնեն, թէ ժողովրդական մէկ մակատ ստեղծելու փորձերը տակաւին չեն յաջողած: Անոնք կ'աւելցնեն, որ գոյութիւն ունեցող երեք մակատներն են «Ղարաբաղ Կոմիտէ»ի ղեկավարած «Հայոց Համագգային Շարժում»ը, ակադեմականներէ, գրողներէ ու արհեստագէտներէ բաղկացած «Ժողովրդային Ճակատ»ը եւ Կարէն Սիմոնեանի գլխաւորած՝ «Ժողովրդային Ճակատ»ը:
- 25 Հոկտեմբեր — Խորհրդային մամուլը պաշտօնական գործակալութիւնները կը հրատարակեն սահմանադրական փոփոխութիւններու առաջարկներ, որոնք կը ներկայացուին Գերագոյն Խորհուրդի բնութեան: Այս առաջարկներէն մէկը կը պահանջէ Սահմանադրութիւնը փոխել այնպէս, որ Ինքնավար Մարզերը եւս, ինքնավար հանրապետութիւններու նման, ինքնորոշման իրաւունք ունենան՝ իրենց նախընտրած հանրապետութիւններուն մաս կազմելու:
- 26 Հոկտեմբեր — Բանակցութիւնները կը շարունակուին «Ղարաբաղ Կոմիտէ»ի նախաձեռնած «Հայոց Համագգային Շարժում»ին եւ հայ ակադեմական տարրերու կողմէ

- առաջադրուած «Ժողովրդական Ճակատ»ի դեկավարներուն միջեւ միացեալ նակատ մը կազմելու համար:
- 27 Հոկտեմբեր — Մինչ Սումգայթի ամբաստանեալներէն երեքինն դատավարութիւնը կը շարունակուի, Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդը կը գումարէ իր հերթական նիստը, առանց քննելու Ղարաբաղի հարցը:
 - 28 Հոկտեմբեր — Երեւանի «Ազատութեան» [Օպերայի] հրապարակին վրայ տեղի կ'ունենայ մեծ հաւաք մը, որուն կը մասնակցին 100 հազար հայորդիներ: «Ղարաբաղ Կոմիտէ»ն ներկաներուն անունով խորհրդային իշխանութիւններէն կը պահանջէ վերացնել Արցախի «պարետային ժամը», որ Արցախի մէջ շրջագայութիւնը կ'արգիլէ կէս գիշերէն մինչեւ առաւօտեան ժամը հիմզր:
 - 1 Նոյեմբեր — Երեւանի պետական համալսարանին մէջ կը գումարուի «Հայ Ուսանողութեան Դաշինք» խմբակցութեան հիմնադիր ժողովը, որուն կը մասնակցին 200 հոգի: Ժողովը կ'որոշեցրէ միութեան ծրագիրը, որ կ'առաջադրէ ազգերու ինքնորոշման իրաւունքը պաշտպանել՝ խաղաղ միջոցներով:
 - 4 Նոյեմբեր — Ստեփանակերտի մէջ կը գումարուի ԼՂԻՄի ժողովրդային Երեսփոխաններու Խորհուրդի նիստը, ուր անգամ մը եւս կը վերահաստատուի շրջանին Հայաստանի վերամիանալու գլխաւոր պահանջը:
 - 5 Նոյեմբեր — Երեւանի Թատերական հրապարակին վրայ տեղի կ'ունենայ հաւաք մը, նուիրուած՝ Արցախի կացութեան եւ Սումգայթի ոնրագործներուն դատավարութեան: Հաւաքին կը մասնակցին 300 հազար հայորդիներ:
 - 6 Նոյեմբեր — Հաւաքի մը ընթացքին, «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամ Ա. Մանուչարեան կը յայտարարէ, թէ անհամաձայնութիւն մը առաջացած է «Կոմիտէ»ին եւ իշ-

խանութիւններուն միջեւ, Նոյեմբեր 7ի տօնակատարութիւններուն կարգախօսներուն մասին:

- 7 Նոյեմբեր — Զինուորական եւ պաշտօնական տղանցքներէ հտք, «Լեհիւն»ի հրապարակ կը խուժէ քովընտի փողոցներուն մէջ հաւաքուած 300 հազարնոց բազմութիւն մը: Այս առթիւ, Ս. Յարութիւնեանի հետը կը դիմաւորուի սուլոցներով:
- Աւելի ուշ, 100 հազարնոց բազմութիւն մը կ'ուղղուի թատերական հրապարակ, ուր հաւաքը կը շարունակուի: Միաժամանակ, Եռագոյն դրօշը կը պարզուի Օպերայի Տան վրայ:
- 8 Նոյեմբեր — «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամներ Լ. Տէր Պետրոսեան, Վ. Մանուկեան եւ Բ. Արաքցեան «կը հրաւիրուին» Քա. Կէ. Պէ. ի մօտ, ուր իրենց կը տեղեկացուի, թէ օր մը առաջուան իրենց գործունէութիւնը «արտօնելի սահմաններէն անդին էր»:
- 9 Նոյեմբեր — Փոքր ցոյցեր՝ կառավարական հաստատութիւններու առջեւ, բողոքելու համար Օպերայի Տան վրայէն Եռագոյնը վար առնուելուն դէմ:
- 14 Նոյեմբեր — Ստեփանակերտի մէջ ծայր կու տայ գործադուլի նոր ակիւք մը, պահանջելով 21 Սեպտեմբերին հաստատուած մասնակի կրակմարին ջնջումը:
- 18 Նոյեմբեր — Մոսկուայի մէջ դատուող Սումգայթի երեք յանցաւորներէն մէկը մահուան կը դատապարտուի:
- Նոյն օրը, արձագանգելով Ստեփանակերտի մէջ տեղի ունեցող գործադուլին, Երեւանի մէջ կը յայտարարուի միօրեայ գործադուլ: Տեղի կ'ունենայ նաեւ ցոյց մը՝ մէկ միլիոնի հասնող բազմութեամբ:
- 19 Նոյեմբեր — Բաբուի մէջ, ազերիներ կը կազմակերպեն ցոյց մը, բողոքելու համար Խ. Միութեան Գերագոյն Ատեանին դէմ, որ Ահմէտ Ահմէտովը յանցաւոր կը

նկատե՛ Սուվկայիթի *փոկրոմ*ին մասնակցութեան համար:

- 21 Նոյեմբեր — Երեւանի մէջ կը բացուի Հայաստանի Գերագոյն Խորհուրդի նստաշրջանը:

- 22 Նոյեմբեր — Բաբուի «Լենին» հրապարակին վրայ, թրքական դրօշներով եւ Այաթոլլա Խումէյնիի նկարներով 500 հազար ազերի ցուցարարներ կը պահանջեն Արցախի ղեկավար Հենրիկ Պողոսեանի պաշտօնազրկումը, Շուշիի շրջանին մէջ կառուցուող ալիւմինումի գործարանի մը փակումը եւ... Հայաստանի մէջ ազերիներու համար ինքնավար մարզի մը ստեղծումը:

Միաժամանակ, Բաբուի, Նախիջեւանի եւ յատկապէս Կիրովապատի մէջ կ'արձանագրուին հակահայ բրտութիւններ եւ հալածանքներ, որոնց հետեւանքով պաշտօնական ադրիւրներու համաձայն կը սպաննուին 20 հայեր եւ 3 խորհրդային զինուորներ (Անտրէ Սախարով հայ գոհերուն թիւը կը հասցնէ 138ի): Միայն Կիրովապատի մէջ կը հրկիզուին 300-500 հայու բնակարաններ:

- 23 Նոյեմբեր — «Լենին»ի հրապարակին ցուցարարներուն թիւը կը հասնի 800 հազարի: Իսկ հակահայ բրտութիւններուն կ'ընկերանան բռնագաղթեր: Ադրբեջանի զանազան շրջաններէն, ինչպէս նաեւ Նախիջեւանէն կը փախչին եւ Հայաստան կ'ապաստանին շուրջ 70 հազար հայեր: Փոխադարձաբար, շուրջ 40 հազար ազերիներ կը հեռանան Հայաստանէն:

- 24 Նոյեմբեր — Հայկական Գերագոյն Խորհուրդը կ'աւարտէ իր նստաշրջանը եւ անգամ մը եւս հաստատ կը մնայ Արցախը Հայաստանին վերամիացնելու իր պահանջին վրայ: Այս առթիւ, Սումգայթի *փոկրոմ*ը ցեղասպանութիւն կ'որակուի եւ ուժգին բողոք կ'արձանագրուի:



գրուի կեդրոնական մամուլի հակահայ կեցուածքներուն դէմ:

Իրողական գետնի վրայ, Կիրովապատի եւ Նախիջեւանի մէջ կացութիւնը կը մնայ ծայր աստիճան լարուած: 1700 հայ կիներ ու երեխաներ ուղղաթիւներով կը փոխադրուին Հայաստան, մինչ տղամարդիկ իրենց շրջանները կը մնան՝ ինքնապաշտպանութիւն կազմակերպելու համար:

Մոսկուայի մէջ, 150 հոգի ցոյց մը կը կազմակերպեն Սվերտլովսկի հրապարակին վրայ, պահանջելով Ադրբեջանի հայերուն ապահովութեան երաշխաւորումը: Քիչ ետք, ցոյցին մասնակիցներէն շատերը կը ձերբակալուին կամ տուգանքի կ'ենթարկուին:

Նոյն օրը, Երեւանի մէջ կը հաստատուի կրակմարի յատուկ դրութիւն եւ ցոյցի կամ հաւաքի կազմակերպումը բացարձակապէս կ'արգիլուի:

- 26 Նոյեմբեր — Մոսկուայի հայկական գերեզմանատան մէջ 400 հոգի կը կազմակերպեն հաւաք մը՝ «դադրեցուցէ՛ք հայերու ցեղասպանութիւնը Ադրբեջանի մէջ» կարգախօսով:
- 27 Նոյեմբեր — Մոսկուա, տեղի տալով ազերի վարիչներու մեքենայութեանց, Շուշիի մէջ կառուցուող ալիւմինումի գործարանին ծրագիրը չեղեալ կը յայտարարէ:
- 28 Նոյեմբեր — 7 հազար նոր փախստականներ կը մտնեն Հայաստան, մինչ հազարաւոր ուրիշներ, անկարող նոյնը ընելու, կը ջանան ապաստան գտնել Հիւսիսային Կովկասի մէջ:
- 30 Նոյեմբեր — Արցախի մէջ, Թոզ գիւղը կ'ենթարկուի յարձակումի: Գիւղացիներու ուժեղ դիմադրութիւնը, սակայն, ետ կը մղէ յարձակողները:
- 1 Դեկտեմբեր — Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի նիստին, Արքատի Վոլսի հայ պատուիրակութեան հար-

ցումներուն պատասխանելով, կ'ընդունի, որ Բաքուի մէջ հակահայ մթնոլորտ կը սնուցանուի:

Գորբաչով, իր կարգին, նիստին վաղորդայնին, հանդիպում մը ունենալով հայ եւ ազերի պատուիրակութիւններուն հետ, բացայայտ կը դարձնէ, որ պիտի կազմուի յանձնախումբ մը, որպէսզի «վաւերականօրէն միջազգայնական լուծում մը կը գտնէ հարցերուն, առանց փոփոխութեան ենթարկելու ԼՂԽՄի հողային պատկանելիութիւնը»:

Բաքուի մէջ, հակահայ ցոյցերը կը շարունակուին: 1 Դեկտեմբերին, Բաքուի 200 հազար հայ բնակչութեանէն միայն 80 հազարը մնացած է:

- 2 Դեկտեմբեր — Համաթուրանական մոլուցքով ազերիներու բռնութիւնները կը մնան անսանձելի: Նախիջեւան, Ջաֆաթաի, Լենինրան, Ղազախ, Կիրովապատ, Դաշկեսան, Խանլար եւ Ադտամ կը հանդիսանան ազերի խժոճութիւններու մնայուն քատերաքեմեր:

Հայաստանի Եղեգնաձորի շրջանին մէջ, 28 հայ աշխատաւորներ կը թունաւորուին, Սումգայթէն ստացւած մանած թելերով աշխատանքի պատնառով:

Մինչ այդ, Արցախի մէջ ցոյցերը կը շարունակուին, մինչ Կիրովապատէն Ստեփանակերտ կը հասնին մեծ թիւով գաղթականներ:

- 3 Դեկտեմբեր — Խ. Միութեան նախարարաց խորհուրդը կը հրատարակէ հրամանագիր մը, ըստ որուն ուժանիւթի եւ փոխադրութեան սպասարկութիւններուն վրայ կը հաստատուի 24 ժամեայ հսկողութիւն: Այս առթիւ, յիշեալ ձեռնարկութիւններուն մէջ գործադուլները կ'արգիլուին:
- 4 Դեկտեմբեր — «Ղարաբաղ Կոմիտէ»ի հրաւերով էջմիածնի մէջ տեղի կ'ունենայ հաւաք մը, որուն կը մասնակցին 50 հազար հոգի: Հաւաքին ընթացքին կ'որոշուի

վերջ տալ 18 նոյեմբերին սկսած գործադուլին:

Միւս կողմէ, Բաբուի «Լեւին» հրապարակը դարձ-
եալ լուսարձակներ կը խլէ, երբ տեղւոյն զօրքին եւ ցու-
ցարար բազմութեան միջեւ կ'արձանագրուին արիւնալի
բախումներ, որոնց ընթացքին կը վիրաւորուին 17 հո-
գի: Տեղի կ'ունենան նաեւ ձերբակալութիւններ:

- 5 Դեկտեմբեր — Հայ-ագերի լարուածութիւնը կը հասնի
գագաթնակետին: Երեւանի ձայնասփիւռը կը հաստատէ,
թէ ագերիներ պաշարման ենթարկած են Արցախը: Կա-
ցութիւնը մասնաւորաբար կը վատթարանայ Ադտամի
մէջ: Հայաստանի մէջ, վարչական 37 շրջաններէն 16ը
ստիպողական վիճակի մէջ են:

Մոսկուայի մէջ, Համայնավար կուսակցութեան Կ.
Կոմիտէն եւ նախարարաց խորհուրդը կը հրատարակեն
հրամանագիր մը, որ կ'անդրադառնայ Հայաստանի եւ
Ադրբեջանի մէջ պաշտօնատարներուն անընդունելի գոր-
ծունէութեան՝ «ֆաղաֆացիները ստիպելով լիբլու իրենց
մնայուն բնակավայրերը»:

- 6 Դեկտեմբեր — Բաբուի մէջ կը կատարուին հայերու
չարդի ֆանի մը փորձեր, սակայն զօրքը կը յաջողի զսպել
ամբոխը: Բախումներուն ընթացքին կը սպաննուին 3
ֆաղաֆացիներ եւ 14 բանակայիւններ, մինչ 30 այլ ֆա-
ղաֆացիներ կը վիրաւորուին:

Նոյն օրը, Ադրբեջանի պետական հեռատեսիլը եւ
ձայնասփիւռի տնօրէնը ինչպէս նաեւ «Ադրբեջանի Պիո-
նէր» եւ «Ադրբեջանի Երիտասարդ Կոմունիստ» թերթե-
րուն գլխաւոր խմբագիրները կը պաշտօնազրկուին՝ հը-
րահրիչ լուրեր հաղորդած ըլլալու պատճառով:

- 7 Դեկտեմբեր — 6-9 ռիխթըր աստիճան ուժգնութեամբ
ահաւոր երկրաշարժ մը կը հարուածէ հայրենի երկրին
հիւսիսային շրջանը: Քար ու ֆանդ կ'ըլլայ Լեւինակա-

նէն մինչեւ Սպիտակ, Հոկտեմբերեան, Ղուկասեան եւ
Կիրովական տարածուող գօտին:

Երկրաշարժին կը յաջորդէ համաշխարհային գորա-
շարժ՝ աղէտեալներուն օգնութեան փութալու համար:
Երեւանի մէջ, կրակմարի յատուկ դրութիւնը գրեթէ կը
ջնջուի:

- 10 Դեկտեմբեր — Գրողներու Միութեան Տան մէջ ժողովի
մը ընթացքին, պետական օգնութիւններուն չափազանց
դանդաղ ու անկազմակերպ վիճակը նկատելով, «Ղարա-
բաղ Կոմիտէ»ն կ'որոշէ իր ուսերուն վերցնել աղէտեալ-
ներուն օժանդակութեան հարցը: Շուտով վրայ կը հաս-
նի Երեւանի զինուորական հրամանատարը, որ ձերբա-
կալել կու տայ 18 հոգի, որոնց մէջ «Ղարաբաղ Կոմիտէ»ի
6 անդամներ: Քիչ անց, Ա. Մանուչարեան ազատ կ'ար-
ձակուի, երբ կը հաստատուի որ Հայաստանի Գերագոյն
Խորհուրդի անդամ է: Մնացեալները կը դատապարտ-
ուին 30 օրուան կալանքի:

Նոյն օրը, Երեւանի մէջ տեղի կ'ունենայ ցոյց մը,
որպէսզի երկրաշարժին պատճառով որք մնացած հայ ե-
րեւանները Հայաստանէն դուրս չտարուին:

- 11 Դեկտեմբեր — Երեւան ու ապա երկրաշարժէն վնաս-
ւած շրջանները իր այցելութեանէն ետք, Գորբաչով, Երե-
ւանի հեռատեսիլէն ելոյթ ունենալով, նկատել կու տայ,
որ Արցախեան պահանջատիրութեան ետին կանգնած է
կաշառակերներու եւ բախտախնդիրներու խմբակ մը:

Պահանջատիրութեան նկատմամբ կեղդոնական իշ-
խանութիւններու կեցուածքին կարծրացումը իր արտա-
յայտութիւնը կը գտնէ այլապէս: Երեւանի մէջ, ցուցա-
բարներ ցրուելու պատրուակով, զօրքը կը յարձակի հա-
ւաճուած բազմութեան վրայ եւ ձեռնի կ'ենթարկէ գայն:
Տասնեակ անձեր կը վիրաւորուին, իսկ 22 հայորդիներ
կը ձերբակալուին:

Սպիտակի մէջ, «աւագակութիւնը արգիլելու համար» կրակմարի դրութիւնը կը ջնջուի:

- 11-15 Դեկտեմբեր — Այն պահուն, երբ կեդրոնական ու հանրապետական մամուլը քարոզչական ուժեղ արշալի մը կը ձեռնարկէ «Ղարաբաղ Կոմիտէ»ի եւ առհասարակ հայ ազգայնականներուն դէմ, Երեւանի մէջ ծայր կու տայ ձերբակալումներու արշաւ մը. կը ձերբակալուին «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամներ, գործակիցներ եւ այլ անձեր, բոլորը՝ շուրջ 150 հոգի: Զերբակալուելներուն մեծամասնութիւնը կը դատապարտուի 30 օրուան կալանքի:

Պետական մակարդակի վրայ, «կարգապահութիւնը խանգարող դէպքերուն վրայ հսկողութիւն եւ հակակշիռ բանեցուցած չըլլալու» յանցանքով, Հայաստանի Համայնավար կուսակցութիւնը պատիժներ կը սահմանէ 110 կուսակցական պաշտօնատարներու: Ոմանք՝ ներքին գործոց նախարարութեան պատասխանատուներ, ուրիշներ՝ քաղաքացիներու եւ արդարադատութեան վարիչներ:

- 23 Դեկտեմբեր — Մոսկուայի մէջ կը գումարուի Բ. Կէ. Պէ. Ի յանձնախմբային մէկ ժողովը, ուր յատուկ քննութեան կ'ենթարկուի «Հայաստանի եւ Ադրբեջանի մէջ կացութիւնը կայունացնելու եւ ծայրայեղական ելույթները սանձելու հարցը»:
- 24-26 Դեկտեմբեր — Բաբուի մէջ կացութիւնը կը մնայ լարուած: Լայնածիր ձերբակալումները, տարօրինակօրէն, մեծ մասամբ թիրախ կ'ունենան հայեր, որոնք կ'ամբաստանուին «խուլիկանութեան եւ պայթուցիկներու ու զէնքի գործածութեան համար»:

Մինչ այդ, «Պրաւդա», «Իզվեստիա» եւ ԹԱՍՍ կը շարունակեն իրենց յախուռն յարակումները՝ «Ղարաբաղ» եւ «Կոունկ» կոմիտէներուն դէմ:

- 28 Դեկտեմբեր — Իկոը Մուրատեանի մայրը հեռագիր մը

կը յղէ Կրեմլինի վարիչ Գորբաչովին, լուսաբանութիւններ պահանջելով իր տղուն վիճակուած կացութեան մասին:

Նոյն օրը, Խ. Միութեան Գերագոյն Ատեանը Հայաստանի եւ Ադրբեջանի ատեաններէն կը պահանջէ, որ դատական հետապնդումի ենթարկուին ազգամիջեան խռովութիւններ հրահրողները:

- 4 Յունուար — Խ. Հայաստանի գրողներու միութեան ընդհանուր ժողովը կը հրատարակէ բողոքագիր մը, ուր յստակ կը դարձնէ, թէ Խ. Հայաստանի իշխանութիւնները կը փորձեն հարկադրանքով Խ. Ադրբեջան վերադարձնել Հայաստան ապաստանած հայ գաղթականները:
- 8 Յունուար — Երեւանի մէջ կը ձերբակալուին «Ղարաբաղ Կոմիտէ»ի մինչ այդ ազատ մնացած 4 անդամներն ու անոնց 8 գործակիցները:

Մոսկուայի մէջ, մշակոյթի մարզի ներկայացուցիչներուն հետ հանդիպումի մը պահուն, Գորբաչով, անդրադառնալով Կովկասն ու Պալթեան երկիրները տագնապեցնող ազգամիջեան հարցերուն, դիտել կու տայ, որ Խ. Միութեան տնտեսական եւ դաշնակցային դրութիւնը անհրաժեշտ կը դարձնեն կեդրոնաձիգ դրութիւն մը, առանց որուն այս դրութիւնը պիտի ըլլայ «անընդունելի եւ պարզապէս անկարելի»:

Միւս կողմէ, «Պրաւդա»ի մէջ կատարուած յայտարարութեան մը մէջ, Խ. Միութեան ներքին գործոց նախարարութեան ոմրային հարցերու հետապնդման քաժանմունքի վարիչ զօր. Վիաչեսլաւ Փանքին կը յայտնէ, թէ աշնան Հայաստանի եւ Ադրբեջանի մէջ տեղի ունեցած դէպքերուն հետեւանքով 43 հոգի սպաննուած են եւ բազմաթիւ ուրիշներ վիրաւորուած:

- 9 Յունուար — Երեւանի մէջ, մամուլի ասուլիսի մը ընթացքին, Հայաստանի ներքին գործոց նախարար Յուսիկ

Յարութիւնեան կը յայտնէ, որ «Ղարաբաղ Կոմիտէ»ի կարգ մը անդամները «հաւաքական անկարգապահութիւն պատճառած ըլլալու» ամբաստանութեան տակ պիտի առնուին:

- 10 Յունուար — «Ղարաբաղ Կոմիտէ»ի ձերբակալեալ անդամները կը փոխադրուին Մոսկուայի Բուստրիկա բանտը:

Բաբուի մէջ, ազերիներ յարձակում մը կը գործեն խորհրդային զօրքին վրայ: Կրակմարի ժամերը կը խրատանան:

- 11 Յունուար — Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի նիստին նախօրեակին, Փոլիթպիւրոյի յատուկ յանձնախումբին հրաւերով, Խ. Հայաստանի եւ Ադրբեջանի կուսակցութեանց ղեկավարները, նախագահներն ու վարչապետները կը գումարեն ժողով մը, ուր կը համաձայնին «անմիջական միջոցառումներ» որդեգրել՝ հանդարտեցնելու համար ազգամիջեան լարուածութիւնը:

- 12 Յունուար — «Ստիպողական հարցեր»ու քննարկման յատկացուած ժողովի մը մէջ, Գերագոյն Խորհուրդը կ'որոշէ Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծել կառավարական մասնաշատուկ դրութիւն մը, ըստ որուն՝ 20 Յունուար 1989էն սկսեալ, մարզը վարչականօրէն Ադրբեջանի կազմին մէջ մնալով հանդերձ, կառավարութի կրեմլինի յատուկ պատուիրակ Արքատի Վոլսֆիի գլխաւորած մարմինին կողմէ: Որոշումը կը նախատեսէ նաեւ, որ մարմինին տրուին գործադիրի եւ օրէնսդիրի լայն իրաւասութիւններ, ինչպէս նաեւ ճարտարարուեստի, վարչական, կրթական, մամուլի, պատկերասփիւռի եւ ձայնասփիւռի աշխատանքներուն հսկողութիւնն ու վարչութիւնը:

- 14 Յունուար — Հակաժողովրդավարական բացայայտ քայլով մը, խուզարկութեան կ'ենթարկուին «Ղարաբաղ

Կոմիտէ»ի անդամներուն բնակարանները:

- 15 Յունուար — «Պրաւդա»ի կողմէ հրատարակուած հարցազրոյցի մը մէջ, Վոլսֆի կը յայտնէ, որ Կրեմլին դէմ է սահմաններու վերստեսութեան, որովհետեւ այդ քայլը վտանգներ կը սպառնայ:

- 16 Յունուար — Խ. Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի դիւանը կը հաստատէ 15 Դեկտեմբեր 1988ի Կ. Կոմիտէի նիստին տրուած պատժական որոշումները: Հետեւաբար, 13 անդամներ կ'արտաքսուին կուսակցութենէն, կուսակցական, կառավարական եւ տնտեսական մարմիններու 25 բարձրաստիճան պաշտօնատարներ եւ քաղաքացիներու 12 պատասխանատուներ պաշտօնանկ կ'ըլլան, իսկ 68 ուրիշներ կը ստանան կուսակցական պատժական տնօրինումներ: Մեղադրեալներու շարքին կ'ըլլան նաեւ հանրային կրթութեան եւ ներքին գործոց նախարարները՝ Ս. Հախումեան եւ Յ. Յարութիւնեան:

Միաժամանակ կը տեղեկացուի, որ Ադրբեջանի մէջ 2500 պաշտօնատարներ պաշտօնազրկուած են միեւնոյն ամբաստանութեամբ:

- 13 Յունուար — Մոսկուայի մէջ, Անտրէ Սախարով կը դատապարտէ «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամներուն ձերբակալումը եւ կը յայտնէ, որ «Արեւմուտքը չ'անդրադառնար, թէ Խ. Միութեան մէջ գոյութիւն ունին խղճի նոր բանտարկեալներ»:

- 17 Յունուար — Խ. Հայաստանի ղեկավար մարմինը կ'ընդունի վարչապետ Ֆադէյ Սարգսեանի հրաժարումը եւ յաջորդ կը նշանակուի Վլատիմիր Մարգարեանց: Նմանապէս, ժողովը կը փոխարինէ Խ. Հայաստանի Համայնավար կուսակցութեան երկրորդ քարտուղար՝ Յուրի Քոչեմբեովը եւ անոր յաջորդ կը նշանակուի Օլէկ Լոպովը:

Յիշեալ ժողովին Խ. Միութեան վարչապետ Նիկոլայ Ռիժֆով Երեւանի իշխանութիւններէն կը պահանջէ ննչել բոլոր այն կազմակերպութիւններուն վրայ, որոնք «ազգամիջեան խոռվութիւններ կը հրահրեն եւ կը խափանեն Փեռեսթրոյֆան»:

- 19 Յունուար — Եւրոխորհրդարանը կոչ կ'ուղղէ խորհրդային իշխանութիւններուն, որպէսզի «անմիջապէս» ազատ արձակուին «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամները: Այս առթիւ փոփոխուած որոշումը Մոսկուայի ուշադրութեան կը յանձնէ նաեւ այն, որ «Ղարաբաղ Կոմիտէ»ն նկատւած ամբողջական իրաւասութեամբ բանակցող մը եւ անոր արտօնէ ազատօրէն աշխատիլ:

Նոյն օրը, Արցախի մէջ «հանգստեան կը կոչուի» տեղւոյն Համայնավար կուսակցութեան Ա. Բարտուղար Հենրիկ Պօղոսեան:

- 20 Յունուար — Մոսկուայի կողմէ նշանակուած եւ անոր ուղղակի ենթակայ Էնոնային Ղարաբաղի նոր վարչամեքենան կ'անցնի պաշտօնի: Շրջանէն՝ վարչամեքենային մաս կը կազմեն Լ. Ղարաբաղի գործադիր խորհուրդի Նախագահ Ս. Պապայեան, Վ. Թովմասեան եւ Շուշիի ազերի կուսակցապետ Վ. Ճաֆարով:
- 21 Յունուար — «Քրուտ» թերթին կողմէ հրատարակուած յայտարարութեան մը մէջ, Արցախի գինուորական հրամանատար գոր. Քոլումիցեւ նկատելի կու տայ, որ շրջանին կացութիւնը «տակաւին ամբողջութեամբ հանդարտ չէ»: Ան կ'աւելցնէ նաեւ, որ 200 ազերի ընտանիքներ Ստեփանակերտէն հեռացած են, լարուածութեան պատճառով:
- 23 Յունուար — Խ. Հայաստանի Գերագոյն Ատեանը կը բանայ դատավարութիւնը՝ «Զուարթնոց» օդակայանի անցեալ Յուլիսի դէպքերուն պատասխանատու նկատուող 2 անձերուն՝ Ալպրիկ Գելոյեանի (38 տարեկան) եւ

Արթիւր Պօղոսեանի (30 տարեկան): Անոնք կ'ամբաստանուին օդակայանի աշխատանքները խանգարած ըլլալու եւ 33 հազար ռուբլիի վնաս հասցուցած ըլլալու յանցանքներով:

- 24 Յունուար — «Արմէնփրէս» կը հաղորդէ, որ անցեալ տարեվերջին Հայաստանէն հեռացած ազերի գիւղացիներ սկսած են վերադառնալ իրենց հայաստանեան գիւղերը եւ ստանձնել իրենց բնակարանները:
- 25 Յունուար — ԹԱՍՍ կը հաղորդէ, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. թեկնածու նշանակուած է Խորհրդային Միութեան նոր խորհրդարանին:
Նոյն միջոցին, կը ներկայացուի նաեւ «Ղարաբաղ Կոմիտէ»ի ձերբակալեալ անդամներէն չորսին թեկնածութիւնը:
- 26 Յունուար — Թիֆլիսէն հեռագրալուրով մը, «Արմէնփրէս» կը տեղեկացնէ, որ Խ. Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի Համայնավար կուսակցութեանց ղեկավարները ժողով մը գումարած են Թիֆլիսի մէջ, քննարկելու համար կովկասեան հանրապետութիւնները յուզող հարցեր ու Հայաստանի երկրաշարժին հետեւանքներուն դարմանումի միջոցները:
Երեւանի մէջ ծայր կու տան նոր ձերբակալումներ: Կը ձերբակալուին «Ղարաբաղ Կոմիտէ»ի գործակից 11 հոգի:
- 29 Յունուար — Լրատու գործակալութիւններ կը տեղեկագրեն, որ Յունուարի վերջերուն պաշտօնանկ եղած է Խ. Ադրբեջանի վարչապետ Հասան Սէյիտով եւ անոր յաջորդ նշանակուած է Այազ Մութալիպով, որ 6 տարիէ կը վարէր փոխ վարչապետութիւնը:
- 2 Փետրուար — Նոյնմբեր 88ին Բաբուի մէջ տեղի ունեցած դէպքերէն ետք ձերբակալուած ազերի մը՝ Նանաֆ Կուլիբե «ազգամիջեան թշնամանք սերմանող ֆարզու-

թիւն եւ շարժումներ» կատարած ըլլալու յանցանքով կը դատապարտուի երկուֆուկէս տարուան բանտարկութեան: Մինչ 3 այլ ազերիներ, միեւնոյն յանցանքներով, կը ստանան «վարչական պատիժներ»:

- 4 Փետրուար — Խորհրդային հարիւրաւոր մտաւորականներէ բաղկացած ֆաղափական ակումբ մը՝ «Մոսկուայի Բեմ» կոչ կ'ուղղէ, որպէսզի «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամները ազատ արձակուին: Նմանօրինակ կոչ մը լոյս կը տեսնէ «Մոսկուայի լուրեր» շաբաթաթերթին մէջ:
- 6 Փետրուար — Սախարով «Իզվեսթիա»ի էջերէն մտահոգութիւն կը յայտնէ «Ղարաբաղ Կոմիտէ»ի եւ «Կոունկ»ի անդամներուն ձերբակալման հարցով:
- 7 Փետրուար — Հոռմի մէջ, Իտալիոյ Ընկերվարական կուսակցութեան դեկավար Պեթթիւս Քրաֆսիի հետ տեսակցութեան մը ետք, Սախարով անգամ մը եւս կոչ կ'ուղղէ Արեւմուտքին, ի խնդիր «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամներուն ազատ արձակման:

Նմանապէս, «Ձերանսեւիայական Միասնականութեան Ընկերակցութիւն»ը (հիմնուած՝ 1984ին) եւս կոչ մը կ'ուղղէ, որպէսզի Հայաստանի մէջ վերահաստատուի ժողովրդավարութիւնը: Ընկերակցութիւնը կը պահանջէ նաեւ «Ղարաբաղ Կոմիտէ»ի 11 անդամներուն ազատ արձակումը, Կոմիտէի օրինականացումը եւ Հայաստանի մէջ ստիպողական վիճակի դրութեան ջնջումը:

Ազնաւուր, իր կարգին, վարչապետ Ռիժնովի հետ տեսակցութեան մը ընթացքին, կ'արծարծէ «Ղարաբաղ Կոմիտէ»ի ազատ արձակման եւ երկրաշարժի աղէտեալներուն տրամադրուելիք օժանդակութիւններուն հարցերը:

Նոյն օրը, ԹԱՍՍի մէջ հրատարակուած պաշտօնական վիճակագրութիւն մը դիտել կու տայ, որ ընդամէնը 91 հոգի սպաննուած են եւ 1600 ուրիշներ վիրաւորուած՝

Հայաստանի եւ Ադրբեջանի մէջ, մէկ տարիէ ի վեր տեղի ունեցող ազգամիջեան բախումներուն ընթացքին: Ներքին գործոց նախարարութեան ուժերը տուած են 4 գոն եւ 117 վիրաւոր: 32 ոստիկաններ վիրաւորուած են բախումներու ընթացքին:

Նաեւ, 22 Նոյեմբեր 88էն ի վեր 141 հազար ազերիներ հեռացած են Հայաստանէն, իսկ 158 հազար հայեր՝ Ադրբեջանէն:

Դարձեալ 7 Փետրուարին, Կրեմլին խիստ ֆննադատութեան կ'ենթարկէ Խ. Հայաստանի վարիչները, որովհետեւ անոնք անհրաժեշտ փութկոտութեամբ չեն աշխատիր, դիմագրաւելու համար Երեւանի ջերմակոքիգային կայանին փակման յաջորդ փուլը եւ ելեկտրոժի արտադրութեան այլ միջոցներ չեն որոնք:

- 8 Փետրուար — Սախարով Իտալիոյ Պոլոնիա ֆաղափին մէջ կը վերանորոգէ «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամներուն ազատ արձակման իր պահանջը, այս առթիւ նշելով, որ «Կոմիտէ»ի անդամները «խղի բանտարկեալներ» են, որոնք «ոնիր կամ վայրագութիւն չէին գործած, այլ անոնք կ'արտայայտէին ժողովուրդի մը կամքը եւ սիրուած էին այդ ժողովուրդին կողմէ»:
- 10 Փետրուար — Երեւանի մէջ, նախարարաց խորհուրդը կը վաւերացնէ որոշում մը, ըստ որուն՝ յատուկ միջոցառումներ պիտի որդեգրուին, գաղթականներու ընկերակենցաղային բարեկապատ դրութիւն ապահովելու համար:
- 12 Փետրուար — «Ձերանսեւիայական Միասնականութեան Ընկերակցութեան» կողմէ հրապարակուած հաղորդագրութիւն մը կը տեղեկացնէ, թէ հիմնած է փաստաբաններու ընկերակցութիւն մը, ստանձնելու համար «Ղարաբաղ Կոմիտէ»ի պաշտպանութիւնը: Խմբակցութիւնը կը բաղկանայ մեքէր Տանիէլ Ժաֆոպիէ, Հանրի

Լըֆլէրէ, Իվ Լօրէնէ եւ Քաթրին Քէսէնեանէ:

- 13 Փետրուար — Երեւանի մէջ տեղի կ'ունենայ խորհրդաւոր պայթում մը՝ հինգ յարկանի շէնֆի մը մէջ, պատճառելով 5-6 գոն:

Արցախի մէջ տեղի կ'ունենայ միօրեայ գործադուլ, նշելու համար շրջանին Հայաստանի վերամիացման առաջին ցոյցերուն տարեդարձը: Միաժամանակ կը պահանջուի «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամներուն ազատ արձակումը եւ ԼՂԻՄի մարզային խորհուրդին իրաւասութիւններուն վերականգնումը:

- 15 Փետրուար — Տոյց՝ Արովեանի մէջ: 1000 հոգի կ'արձակեն «գրգռիչ» նշանախօսքեր:
- 16 Փետրուար — Լրատու գործակալութիւններ կը տեղեկագրեն, որ ցարդ 166 հազար հայեր Ադրբեջանէն ապաստանած են Հայաստան:
- 17 Փետրուար — «Ղարաբաղ Կոմիտէ»ի 11 անդամներուն կիներն ու մայրերը նամակով մը կը դիմեն Մ. Նահանգներու նախագահ Ճորն Պուշին, անկէ պահանջելով որ միջամտէ ի նպաստ «Կոմիտէ»ի բանտարկուած անդամներուն:
- 18 Փետրուար — Երեւանի մէջ կը ձերբակալուին «Անկախութիւն» միաւորումի երեք անդամներ, երբ կը փորձեն Փետրուարեան ապստամբութեան մասին թուցիկներ ցրուիլ: Ձերբակալուողներն են. — Մովսէս Կորկիզեան, Դանիէլ Յակոբեան եւ Դաւիթ Մխնեան:
- 19 Փետրուար — Խումբ մը մտաւորականներու նախաձեռնութեամբ, Երեւանի մէջ կը ստեղծուի «Իկոր Մուրատեանի պաշտպանութեան Կոմիտէ»: «Կոմիտէ»ին մաս կը կազմեն Ջ. Բալայեան, Ս. Խանգադեան, Մ. Մարգարեան, Ա. Պետրոսեան, Ս. Սարգսեան, Լ. Խուրշուդեան, Յ. Վասիլեան եւ շուրջ 25 այլ մտաւորականներ: Նոյն օրը, խորհրդային բանակի պաշտօնաթերթը՝

«Կարմիր Աստղ» գգուշութեան կոչ կ'ուղղէ Երեւանի բրնակիչներուն, որոնք 28 Փետրուարին կ'ուզեն ցոյց մը կատարել, նշելու համար Սումկայիթի փոկրումին առաջին տարեդարձը: Պաշտօնաթերթը կը յիշեցնէ նաեւ, որ, կրակմարի դրութեան պատճառով, հաւաքները արգիւտած են Հայաստանի մայրաքաղաքին մէջ:

- 21 Փետրուար — «Կոմունիստ» կը հաղորդէ, որ 4 հայ երիտասարդներ ձերբակալուած են Երեւանի մէջ, երբ փորձած են խափանել ընտրական հաւաք մը: Ձերբակալները ամբաստանուած են «ժողովրդավարութիւնը իրրեւ պատրուակ գործածելու եւ հոնտորութեամբ հանրային կարգապահութիւնը խափանելու» յանցանքով: Նոյն միջոցին, Մոսկուայի մէջ 17 հայորդիներ, իսկ Երեւանի մէջ 8 ուրիշներ կը յայտարարեն եօթնօրեայ հացադուլ, պահանջելով Կիրովապատի մէջ արգելափակուած Իկոր Մուրատեանի ազատ արձակումը: Նոյնիմաստ ցոյց մը տեղի կ'ունենայ Արովեան քաղաքին մէջ:
- 23 Փետրուար — «Արմէնփրէս» կը հաստատէ, որ Խ. Հայաստանի դատախազութիւնը ամբաստանագիրներ արձակած է «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամներուն եւ Խաչիկ Ստամբուլցեանի դէմ:
- 25 Փետրուար — 1976ին վանիկ Ներսէսեանի նարտարապետութեամբ կառուցուած Մեծամորի ջերմակորիզային կայանին առաջին հնոցը կը փակուի:
- 27 Փետրուար — Երեւանի գիւնուորական հրամանատար Եուրի Քուզնեցով «Կարմիր Աստղ»ի կողմէ կատարուած հարցազրոյցի մը մէջ կը հաստատէ, որ «Խ. Հայաստանի մէջ ստիպողական վիճակի դրութիւնն ու անկէ թելադրուած օրէնքները կարելի չէ ջնջել, որովհետեւ ազգամիջեան հարցերը կը մնան վառ»: Ստեփանակերտի մէջ, արցախցիներ յատուկ հան-

դիսութեամբ մը կ'ոգեկոչեն Սոււկայիթի նահատակներուն յիշատակը, այս առթիւ բացումը կատարելով անոնց յիշատակը յաւերժացնող յուշակոթողի մը:

- 28 Փետրուար — Դարձեալ «Կարմիր Աստղ»ի կողմէ հրատարակուած հարցազրոյցի մը մէջ, Արքատի Վոլսֆի կը հաստատէ, որ «երկու ազգութիւններուն ներկայացուցիչներուն միջեւ յարաբերութեանց ընդհանուր մթնոլորտը դժբախտաբար կը մնայ լարուած», անելցնելով, որ «հին կիրքերուն հրդեհը տակաւին չէ մարած եւ տակաւին կրակ կայ մոխիրին տակ»:

Հայաստանի մէջ, բազմահարիւր հազարաւոր հայորդիներ կ'ողողեն Երեւանի փողոցները եւ լուռ կը տողանցեն դէպի Ծիծեռնակաբերդ, ոգեկոչելով Սոււկայիթի նահատակներուն յիշատակը:

- 2 Մարտ — Երեւանի մէջ կ'աւարտի «Զուարթնոց» օդակայանի դէպքին կապուած դատավարութիւնը: Ալպրիկ Գեւոյեան եւ Արթիւր Պօղոսեան կը դատապարտուին մէկ ու կէս տարուան բանտարկութեան:
- 4 Մարտ — Արցախի Ամուսա վանքին մէջ տեղի կ'ունենայ հոգեհանգիստ՝ Սոււկայիթի եւ երկրաշարժի զոհներուն յիշատակին: Այս առթիւ կը պատարագեն էջմիածինէն շրջան առաքուած Աստղիկ Եպիսկոպոս եւ հայր Վրթանէս:
- 5 Մարտ — Ստեփանակերտի մէջ կը գումարուի «Ամուսա» հայկական բարեգործական ընկերութեան հիմնադիր ժողովը, որ կ'ընտրէ վարչութիւն եւ կը մշակէ աշխատանքային ծրագիր: Համագումարին կը մասնակցի նաեւ Հայաստանէն պատուիրակութիւն մը:

Նոյն օրն իսկ, շրջանին մէջ ծայր կու տայ գործադուլի նոր ալիք, պահանջելով Ադրբեջանի հետ Արցախի բոլոր կապերու խզում, շրջանին Խ. Հայաստանի վերամիացում, Վոլսֆիի գլխաւորած մարմնին գործունէու-



Դադի կամ հուրավանք (լուսանկարուած 1911ին)



հուրափիրիկի 15 աշխանի կամուրջը (Արաքս գետ)

թեան մասին ժողովուրդին զեկուցում եւ շարք մը այլ գործնական միջոցառումներ:

- 7 Մարտ — Մոսկուայի մէջ, վարչապետ Ռիժժնովի գրասենեակին առջեւ համախմբուած աւելի քան 50 հայ գաղթականներ դժգոհութիւն կ'արտայայտեն զիրենք Ադրբեջան վերադարձնելու պետական ծրագիրներուն համար: Անոնք կը մերժեն Ադրբեջան վերադառնալ եւ կը նախընտրեն բնակութիւն հաստատել Մոսկուա կամ այլուր:

Խ. Միութենէն դուրս, «Ֆրանսեւիայկական Գործակցութեան Ընկերակցութիւն»ը ֆրանսական 11 քաղաքներու կոչ կ'ուղղէ, որպէսզի անոնցմէ իւրաքանչիւրը ստանձնէ «Ղարաբաղ Կոմիտէ»ի մէկ անդամին պաշտպանութիւնը:

- 8 Մարտ — «Կանանց Միջազգային Օրուման» առթիւ, 300 կիներ Երեւանի մէջ կը կազմակերպեն հաւաք եւ ֆայլարշաւ, որուն կը հետեւին մեծ թիւով մըն ալ այրեր, որոնք սակայն կ'առնուին զինուորական օղակի մէջ:

Հաւաքին մասնակիցները կը բարձրացնեն Նոագոյն դրօշներ ու կը պահանջեն անկախութիւն եւ «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամներուն ազատ արձակում:

- 10 Մարտ — Երեւանի մէջ կը հիմնուի «14ի Պաշտպանութեան Խորհուրդ»ը, որուն մաս կը կազմեն Լուսինի Խաչատուրեան, Ալլաքի Կիրակոսեան, Պելլա Յարութիւնեան եւ ուրիշներ: «Խորհուրդ»ը կ'առաջադրէ հետապնդել «Ղարաբաղ Կոմիտէ»ի 11 անդամներուն, ինչպէս նաեւ Խաչիկ Ստամբուլցեանի, Իկոն Մուրատեանի եւ Աշոտ Մանուչարեանի դատերը:
- 18 Մարտ — Մեծամօրի ջերմակորիզային կայանին երկրորդ եւ վերջին հնոցը կը փակուի:
- 19 Մարտ — Երեւանի պետական ճայնասփիւռը կը հաղորդէ, որ «Հայաստանի նախարարաց խորհուրդը որո-

շած է 24 Ապրիլը՝ Հայկական Ցեղասպանութեան յուշարձանը հռչակել աշխատանքէ զերծ օր (24 Նոյեմբեր 88ին, Հայաստանի Գերագոյն Խորհուրդը Ապրիլ 24ը յայտարարած էր Ազգային Սուգի Օր):

- 23 Մարտ — «Ղարաբաղ Կոմիտէ»ի մօտիկ շրջանակներու կոչին ընդառաջելով, Խ. Հայաստանի բնակիչներուն ջախջախիչ մեծամասնութիւնը պոյժոթի կ'ենթարկէ Գերագոյն Խորհուրդի երեսփոխանական ընտրութիւնները: Քուէարկողներու համեմատութիւնը կ'ըլլայ 30 %: Ի դէպ «Արմէնփրէս» այդ թիւը կը բարձրացնէ 72 %ի:

Ընտրուողներուն շարքին են. — Վ. Մարգարեանց, Ս. Յարութիւնեան, Վազգէն Ա. Կաթողիկոս, Գրիգոր Խանջեան, Ֆրունզիկ Դովլաթեան, Վիկտոր Համբարձումեան եւ ուրիշներ: Կարգ մը թեկնածուներու ընտրութիւնը չեղեալ կը նկատուի, որովհետեւ անոնք չեն կրնար ապահովել աներաժեշտ թիւով քուէներ:

- 27 Մարտ — «Ֆրանսեւիայկական Միասնականութեան Ընկերակցութիւն»ը կոչ կ'ուղղէ խորհրդային իշխանութիւններուն, որպէսզի չեղեալ համարէ Խ. Հայաստանի երեսփոխանական ընտրութիւնները, ժողովրդավարական պայմաններու մէջ նոր ընտրութիւններու նախաձեռնէ եւ ազատ արձակէ «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամները:

- Ապրիլի սկիզբ — Խորհրդակցական հանդիպում մը՝ Խ. Հայաստանի Համայնավար կուսակցութեան, կառավարութեան ներկայացուցիչներուն եւ մտաւորականութեան միջեւ, երկրաշարժի հետեւանալով աւերուած շրջաններու վերաշինութեան աշխատանքներուն եւ Արցախեան պահանջատիրութեան շուրջ:

- 13 Ապրիլ — «Արմէնփրէս» կը հաղորդէ, որ Խ. Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կ. Կոմիտէն ընդունած է նախարարաց խորհուրդի առընթեր եզրաբա-

նական կոմիտեին այն որոշումը, թե՛ այսուհետև «սովետ» բառը պիտի փոխարինուի «խորհուրդ» բառով:

- 22 Ապրիլ — Արցախցիք յայտարարագրով մը կը դիմեն Խ. Միութեան ժողովուրդներուն, ընդվզում արտայայտելով Արցախի մէջ տակաւին յամեցող արարքներու եւ կեցուածքներու դէմ:
- 24 Ապրիլ — Հայ պետականութիւնը ԱՌԱՋԻՆ անգամ ըլլալով պաշտօնապէս կ'ոգեկոչէ Յեղասպանութեան գոհերու օրը, գայն յայտարարելով աշխատանքէ գերծ' պաշտօնական Սուգի Օր:

Երեւանի մէջ, 1.5 միլիոն հայեր կը տողանցեն դէպի Միծեռնակաբերդ: Այս առթիւ Նահատակաց Յուշակոթողին առջեւ ծաղկեպսակներ կը գետեղեն Խ. Հայաստանի պետական աւագանին, Վազգէն Ա. եւ Գարեգին Բ. կաթողիկոսներ, Դեկտեմբերի երկրաշարժին հարցերով Հայաստան գտնուող Խ. Միութեան վարչապետի տեղակալ Սիլան եւ Հայաստանի անպաշտօն կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Պաշտօնական ոգեկոչման նմանօրինակ ձեռնարկներ տեղի կ'ունենան նաեւ Ստեփանակերտի եւ Մոսկուայի մէջ:

- 25 Ապրիլ — Խ. Միութեան Համայնավար կուսակցութեան Կ. Կոմիտէի նիստին խօսք առնելով, Գորբաչով Անդրկովկասեան հանրապետութիւններուն, Պայթեան երկիրներուն, Իւզպէֆիստանի եւ Թիւրքմենիստանի վիճակը կը նկատէ «ահագանգային»:
- 1 Մայիս — Թէեւ կեդրոնական իշխանութիւնները Հայաստանի եւ Վրաստանի մէջ ջնջած են Մայիս 1ի տողանցքը, սակայն շուրջ 50 հազար հայեր կը տողանցեն Երեւանի փողոցներէն, «երկրաշարժին հետեւանքները դարմանելու միտող միջազգային օժանդակութիւններուն շնորհակալութիւն յայտնելու» պիտակին տակ:

- Յուցարարները կը պարզեն Եռագոյն դրօշներ, ինչպէս նաեւ «Ղարաբաղ Կոմիտէ»ի ազատութիւնը պահանջող եւ Ս. Յարութիւնեանը քննադատող պաստառներ: Տեղի կ'ունենայ նաեւ հաւաք՝ Մատենադարանին առջեւ:
- 3 Մայիս — Երեւանի մէջ, «քոնաքարութեան» մեղադրանքով, տեղւոյն իշխանութիւններուն կողմէ կը ձերբակալուի «Հ. Հ. Շ.»ի ղեկավարներէն Սմբատ Յակոբեան: Նոյն օրերուն, Երեւանի Գեղարուեստաթատերական հիմնարկ»ի ուսանողները կը կազմակերպեն նստացոյց մը, պահանջելով անոր անյապաղ ազատ արձակումը:

Ստեփանակերտի մէջ ծայր կու տայ գործադուլի նոր ալիք, պահանջելով շրջանին վերամիացումը Խ. Հայաստանին:

- 5 Մայիս — Արցախահայութիւնը Մ. Գորբաչովի եւ Խ. Հայաստանի կառավարական պատասխանատուներուն կը յղէ երկու նամակներ, ուր անգամ մը եւս կը բացայայտին այն իրականութիւնները, որոնք այլապէս «վրիպած» են լրատու աղբիւրներու նկատողութենէն եւ ցոյց կու տան Արցախը ադրբեջանականացնելու Բաֆուի ծանօթ քաղաքականութիւնը:

Սերո Խանգաղեան, իր կարգին, «Գրական թերթ»ի մէջ կը հրատարակէ Խ. Հայաստանի Գերագոյն Խորհուրդին ուղղուած բաց նամակ մը, ուր կ'առաջադրէ վերստեղծութեան ենթարկելու սրբագրել՝ Ապրիլ 24ի առիթով Խ. Հայաստանի կառավարութեան հրատարակած օրէնքը:

Նոյն օրը, Ստեփանակերտի մօտակայ Քերֆինան գիւղին մէջ բախումներ ծայր կու տան հայերու եւ ազերիներու միջեւ: 3 հայեր ծեծկոտուի կը մտնեն շուրջ 200 ազերիներու դէմ: Բանակը «օդը կը կրակէ եւ կը վերահաստատէ կարգը...»:

- 6 Մայիս — Երեւանէն Մարտունի ուղղուող երկաթուղին կը ֆարկոծուի ազերիներու կողմէ: Կ'իյնան եօթը վիրաւորներ, որոնցմէ չորսը՝ բանակայիններ: Հակահայ բռնութիւններ կ'արձանագրուին նաեւ Շուշիի մէջ:

Երեւանի մէջ, 200 հազար կը համախմբուին Համայնավար կուսակցութեան Կ. Կոմիտէի կեդրոնատեղիին դիմաց եւ ապա մօտ երեք ժամ կը տողանցեն Երեւանի փողոցներուն մէջ, պահանջելով «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամներուն ազատ արձակումը եւ Հայաստանի կառավարութեան հրաժարումը:

- 8 Մայիս — Հոկտեմբերեանի աշխատւորներուն մէկ հաւաքին առջեւ խօսք առնելով, Ս. Յարութիւնեան կը յայտարարէ, թէ «Ժամանակը հասած է որ Մայիս 28ը նանչցուի իբրեւ հայկական պետականութեան ստեղծման պաշտօնական օր»:

Նոյն օրերուն, Ստեփանակերտի մօտակայ Մարդակերտի մէջ կ'արձանագրուի հայ-ազերի երկրորդ բախում մը: Բախումին կը մասնակցին շուրջ 30 հայեր եւ ազերիներ: Երկու կողմերէն կ'իյնան 5 վիրաւոր:

- 10 Մայիս — Սմբատ Յակոբեան երաշխաւորութեամբ ազատ կ'արձակուի:

- 11 Մայիս — Շուրջ կէս միլիոն հայեր Մատենադարանին առջեւ կը մասնակցին արտօնեալ ցոյցի մը: Անոնք կը պարզեն Եռագոյն դրօշներ եւ կը ներկայացնեն շարք մը պահանջներ, որոնց կարգին՝ «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամներուն ազատ արձակում, երկրաշարժէն ֆանդուած շրջաններու վերաշինութեան ծրագիրներուն գործնականացում, գաղթականներու եւ Արցախի հարցերուն լուծում, Մայիս 28ը Հայաստանի պետականութեան հիմնադրութեան օր հռչակում, եւ այլն:

Նոյն օրը, պատմաբան Լեւոնդուշ Խուրշուդեանի ստորագրութեամբ՝ «Երեկոյեան Երեւան» թերթին մէջ



Ծծախաղ – Թաղլար ֆարայրի արտափին տեսք



Աւետարանոց-Չանախչի, կուսանաց անապատը

յոյս կը տեսնէ «Եռագոյնի գնահատութեան հարցի շուրջ» խորագրեալ յօդուածը:

Ստեփանակերտի մէջ, 500 հայերու առջեւ իսոյ՛ անկողով, Արֆատի Վոլսֆի կը փորձէ հանդարտեցնել Գերֆիհան գիւղին մէջ պատահած հայ-ազերի բախումներէն ընդվզած ժողովուրդը:

Մինչ այդ, Արցախի մէջ ադրբեջանական շինարարական ծրագիրները կը շարունակուին: Իսկ Ստեփանակերտ կը գտնուի Ադրբեջանի փոխ վարչապետը:

• 12 Մայիս — Թիւրքմենիստանի Նեպիթ Տաղ ֆաղաֆին մէջ, թիւրքմեններ, ազերիներ, լեզգիներ եւ ղազախներ կ'ունենան ազգային քնոյթով ելոյթներ ու խոսովութիւններ: Այս առթիւ անոնք նշանախօսքեր կ'արձակեն նաեւ հայերու դէմ:

• 14 Մայիս — Խորհրդարանական լրացուցիչ ընտրութիւններուն, Հայաստանի մէջ յաղթական դուրս կու գան ժողովրդային համակրանք վայելող թեկնածուներ, ինչպէս՝ Կ. Սիմոնեան, Ս. Սարգսեան եւ Ս. Խանգաղեան: Քուէարկութեան մասնակցութեան համեմատութիւնը կ'ըլլայ շատ բարձր:

Մինչ այդ, ԼՂԽՄի նորընտիր հայ երեսփոխանները նամակով մը կը պահանջեն Մ. Գորբաչովի հետ տեսակցութիւն ունենալ եւ կը դատապարտեն մարզը ադրբեջանականացնելու ֆաղափականութիւնը: Ազերի երեսփոխաններ, իրենց կարգին, նամակով մը կը դիմեն Գորբաչովի, պահանջելով որ պահպանուի իրենց հանրապետութեան հողային ամբողջականութիւնը:

• 16 Մայիս — 2000 հայեր Երեւանի մէջ ցոյց սը կ'ընեն, երբ կը յայտարարուի որ Հայաստանի Գերագոյն Խորհուրդը Յունիս 27էն առաջ նիստ պիտի չգումարէ:

• 17 Մայիս — 20 հազար հայեր նոր ցոյց մը կը կատարեն

Երեւանի մէջ եւ կը ֆարկոծեն ոստիկանները, որոնք կը սկսին ֆաշուիլ փողոցներէն:

• 18 Մայիս — Մատենադարանին առջեւ 150 հազար հոգի-նոց հաւաքէ մը ետք, Երեւանի մէջ ծայր կու տայ նոր գործադուլ:

• 19 Մայիս — ԼՂԽՄի հարցով զբաղող Փոլիթպիւրոյի յատուկ յանձնախումբը, վարչապետ Ռիժոֆովի գլխաւորութեամբ ժողովի մը ընթացքին, կ'որոշէ ընդարձակել ԼՂԽՄի վարչական խորհուրդին իրաւասութիւնները, «միջազգայնական հիման վրայ» ապահովելու համար շրջանին «ընկերային եւ տնտեսական զարգացումը»:

• 20 Մայիս — Բազմահարիւր աշակերտներ ցոյց մը կ'ընեն Երեւանի կեդրոնը, պահանջելով Արցախի Հայաստանին վերամիացումը եւ «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամներուն ազատ արձակումը:

• 21 Մայիս — Մատենադարանին առջեւ 500 հազար հոգի-նոց ցոյց-հաւաք մը:

Ցուցարարները կ'որոշեն գործադուլը դադրեցնել եւ ապա գումարել հիմնարկ-ձեռնարկութիւններու ժողովներ եւ հոն որոշել թէ գործադուլը պէ՞տք է շարունակուի թէ ոչ: Անոնք կ'որոշեն նաեւ նամակներ յղել Գերագոյն Խորհուրդի յառաջիկայ ժողովին, պահանջելով Արցախի վերամիացումն ու «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամներուն ազատ արձակումը:

Նոյն օրը, մմանօրինակ ցոյց մը տեղի կ'ունենայ նաեւ Մոսկուայի մէջ, ուր իսոյ՛ կ'առնեն Հայաստանի նորընտիր երեսփոխաններէն Կալինա Սթարովոյթովա, իսկ Արցախէն՝ Ափանասեան:

• 22 Մայիս — Սախարով եւ շուրջ 50 այլ մտաւորական-երեսփոխաններ «Ղարաբաղ Կոմիտէ»ի ազատ արձակման դիմում մը կը յղեն Խ. Միութեան գլխաւոր դատախազին:

- 23 Մայիս — Մոսկուայի մէջ տեղի ունեցած հարցազրոյցի մը ընթացքին, Ս. Յարութիւնեան կը բացայայտէ, որ «եյնելով այն բանից, որ 1918 թուականի Մայիս 28ը պատմական տարեթիւ է հայ ժողովրդի նակատագրում, ազգային պետականութեան վերականգնման օրը, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը գաղափարախօսական յանձնաժողովին յանձնած է, ներգրանելով գիտական լայն հասարակութեանը, համակողմանիօրէն ուսումնասիրել այդ հարցը եւ համապատասխան առաջարկութիւններ ներկայացնել Կենտկոմ, հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի նախագահութեան քննարկմանը մըտքընելու համար»:

- 25 Մայիս — Մոսկուայի մէջ կը բացուի Խ. Միութեան նոր խորհրդարանին անդրանիկ նիստը:

Միւս կողմէ, Եւրոխորհրդարանը կ'որոգեգրէ «Ղարաբաղ Կոմիտէ»ի ազատ արձակման բանաձեւ մը:

- 6 Մայիս — Երեւանի մէջ, Գիտութիւններու Ակադեմիայի, Համայնավար կուսակցութեան Կ. Կոմիտէի առընթեր Մարքսիզմ-Լենինիզմի եւ կուսպատմութեան բաժանմունքներուն, ինչպէս նաեւ Երեւանի պետական համալսարանին համատեղ նախաձեռնութեամբ տեղի կ'ունենայ գիտական նստաշրջան մը, ուր մանրամասն կեդրով կը քննարկուին 1918-1921 ժամանակաշրջանին տեղի ունեցած պատմական իրադարձութիւնները եւ կը կատարուին կարգ մը եզրայանգումներ: Նստաշրջանին ելոյթ կ'ունենան Գ. Մարգսեան, Հ. Աւետիսեան, Լ. Խուրշուդեան, Խ. Բարսեղեան, Հ. Սիմոնեան, Գ. Ղարիբջանեան, Է. Զոհրաբեան, Հ. Կարապետեան, Պ. Մայիլեան, Գ. Մախմուրեան եւ Ռ. Խուրշուդեան:

Նստաշրջանը կ'որոշէ Կ. Կոմիտէին ներկայացնել «1918 Մայիս 28ը Հայ ժողովրդի Պետականութեան վերականգնման Օր», եւ «Յոսագոյն Դրօշը Ազգային Խոր-

հրդանիշ» քանաչելու մասին որոշում:

Նոյն օրը, Մոսկուայի մէջ մեծ աղմուկ կը յարուցւի Գերագոյն Խորհուրդի Ազգութիւններու Խորհուրդին Հենրիկ Պողոսեանի եւ Վակիֆ Ճաֆարովի անդամակցութեան դէմ: Վերջինին անդամակցութիւնը կը մերժուի Արցախի ներկայացուցիչներուն կողմէ, որոնք նկատելի կու տան, որ հայերը մեծամասնութիւն են շրջանին մէջ: Կը դիմուի երկրորդ ֆուէարկութեան, սակայն Ճաֆարով անգամ մը եւս կ'ընտրուի:

- 27 Մայիս — Հայաստանի Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը կը հրապարակէ օրէնք մը, որ 1918 Մայիս 28ը իրրեւ հայկական պետականութեան վերականգնման թուական, իսկ Եոսագոյն դրօշը իրրեւ այդ պետականութիւնը խորհրդանշող ազգային դրօշ կը քանչնայ:

Նոյն օրը, Թալինի շրջանի Ուջան գիւղին մէջ տեղի կ'ունենայ տօնախմբութիւն մը, Հայաստանի անկախութեան տարեդարձին առիթով: Միաժամանակ, բացումը կը կատարուի ազատամարտիկներու նուիրուած յատուկ յուշակոթողի մը:

Երեւանի մէջ, հասարակական խմբակցութիւններու 4րդ հանդիպումի մը ընթացքին, «Հայկաշէն ժողովրդային ձակաւոր Պատմաբան Լեւոնուշ Խուրշուդեանի Թիւ», «Հայ Դատի Պաշտպան Ընկերակցութիւն», «Հայ Ուսանողական Դաշինք», «Նարեկ» եւ «Զանգակատուն» խմբակները կ'որոշեն հրապարակ գալ միացեալ նակատով: «Հ. Հ. Շարժում»ը կը մասնակցի առաջին հանդիպումին, որմէ ետք կ'անտես իրեն ուղղուած հրաւերները: Մինչ «Ինքնորոշում-Միաւորում» եւ «Մաշտոց» խմբակները, իրենց կարգին, երրորդ հանդիպումին ցուցական կեդրով կը հետանան ժողովէն եւ կը մերժեն մասնակցիլ այդ հանդիպումին:

- 28 Մայիս — Պետութեան կողմէ պաշտօնապէս արտօն-

ւած հաւաքներուն, Երեւանի մէջ ԱՌԱՋԻՆ անգամ ըլլալով կը նշուի Մայիս 28ը:

Առաւօտուն, «Հայ Դատի Պաշտպան Բնկերակցութեան» կազմակերպութեամբ հաւաք մը տեղի կ'ունենայ Սարգսրապատի յուշակոթողին առջեւ: Աւելի ուշ, «Հայ Ուսանողական Դաշինք»ին եւ համալսարանի ղեկավարութեան նախաձեռնութեամբ տեղի կ'ունենայ երկրորդ հաւաք մը՝ պետական համալսարանին առջեւ: Հաւաքէն վերջ, մասնակցողներէն մեծ խումբ մը կ'ուղղուի Թոխմախ լինին մօտ գտնուող քաղաքային պանթէոնը, ուր յարգանքի տուրք կը մատուցուի Արամ Մանուկեանի գերեզմանին:

Գլխաւոր հաւաք-ցոյցը տեղի կ'ունենայ Մատենադարանին առջեւ, «Հայոց Համագգային Շարժում»ին կազմակերպութեամբ: Հաւաքին խօսք կ'առնեն նաեւ Վրաստանի ազգային շարժումին ղեկավարները եւ Վրաստան բնակող հայերու ներկայացուցիչներ: Այս առթիւ կը վերանորոգուին Արցախը Հայաստանին վերամիացնելու եւ «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամները ազատ արձակելու ծանօթ պահանջները:

Նմանօրինակ պաշտօնական հաւաքներ, Եռագոյն դրօշներով, տեղի կ'ունենան նաեւ Արցախի եւ Մոսկուայի մէջ:

Նոյն օրը, «*Խորհրդային Հայաստան*» կը հրատարակէ Լենդրուշ Խուրշուդեանի «1918 Թուականի Մայիսի 28ը՝ Հայկական Պետականութեան Վերականգնման Օր» ծաւալուն յօդուածը, մինչ «*Երեկոյեան Երեւան*»ի էջերէն Համբարձում Կարապետեան եւ Դաւիթ Յովհաննէս կը ստորագրեն «Հայկական Հանրապետութեան Ստեղծման Եւ Գոյատեւման Պատմութիւնից» եւ «Անդրանիկի Ոգին» գրութիւնները:

Սփիւռքի մէջ, Հ.Յ.Դ. Բիւրոն յայտարարագրով մը



Արցախի պարեկաւորումը, օգոստին համբով

կ'ողջունե խ. Հայաստանի Գերագոյն Խորհուրդին պատմական որոշումը:

• 29 Մայիս — Հայկական պետականութեան վերականգնման առթիւ, Եռագոյն դրօշներով ժողովրդային տօնախմբութիւններ Հայաստանի զանազան շրջաններուն մէջ:

• 30 Մայիս — Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի նստաշրջանին Վոլսֆի կոչ կ'ուղղէ հայ եւ ազերի երեսփոխաններուն, որպէսզի վերջ տան Արցախի շուրջ իրենց բանավէճին, որովհետեւ «անուշադրութեամբ արտասանւած որեւէ բառ կրնայ վատ անդրադարձ ունենայ կիներու, մանուկներու եւ ծերերու վրայ»:

Քուլիսներու ետին, հայ երեսփոխաններէն Ֆ. Դովլաթեան Արցախի հարցով տեսակցութիւն մը կ'ունենայ Գորբաչովի հետ:

Նոյն օրը, «Ղարաբաղ Կոմիտէ»ի ձերբակալեալ անդամները Մոսկուայէն կը փոխադրուին Հայաստանի Սովետաշէն բանօր:

• 31 Մայիս — Ժողովրդային ցնծութեան մթնոլորտի մը մէջ, երաշխաւորութեամբ ազատ կ'արձակուին «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամներն ու Իկոը Մուրատեան: Բանտարկուած կը մնայ «Կոռունկ» կոմիտէի ղեկավար Արֆատի Մանուչարեան:

Նոյն օրը, Մոսկուայի մէջ, Գերագոյն Խորհուրդի նստաշրջանին, Ս. Յարութիւնեան կ'արտասանէ յանդուգն ճառ մը, ուր ան կ'արտայայտուի ի նպաստ Արցախի եւ 1915ի ցեղասպանութեան ճանաչման:

• 2 Յունիս — «Ղարաբաղ Կոմիտէ»ի կազմակերպութեամբ Երեւանի մատենադարանին առջեւ տեղի կ'ունենայ ժողովրդային հաւաք մը, որուն ներկայ կ'ըլլան կէս միլիոն հոգի: Հաւաքին խօսք առնողները անգամ մը եւս կը

հաստատեն Արցախի հարցը շարունակելու իրենց անըկուն պայքարը:

• 3-10 Յունիս — Ստեփանակերտի մէջ տեղի կ'ունենան ժողովրդային ցոյց-հաւաքներ, ուր ցուցարարներ կը բարձրացնեն «Արցախցիները ազատութիւն կը պահանջեն» եւ «Միացում, միացում, միացում» նշանախօսքերով պաստառներ: Մինչ այդ, շրջանին մէջ, Մայիս 3ին ծայր տուած գործադուլը կը շարունակուի:

• 9 Յունիս — Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի երեսփոխանական համագումարը իր աշխատանքները կ'աւարտէ, առանց սակայն ուղղակի լուծում տալու Արցախի հարցին: Այսուհանդերձ, համագումարը պարտականութիւն կու տայ նորընտիր Գերագոյն Խորհուրդին, ֆենեկու շարք մը ազգային խնդիրներ, որոնց կարգին՝ Արցախի հարցը:

Բացի Ս. Յարութիւնեանի 31 Մայիսի յանդուգն ելոյթէն, համագումարին տեւողութեան հայատրոփ եւ յանձնառու արտայայտութիւններ կ'ունենան նաեւ Վ. Համբարձումեան եւ Զ. Բալայեան: Առաջինը Խ. Միութեանէն կը պահանջէ Արեւմտեան Հայաստանի հողերուն եւ 1915ի Ցեղասպանութեան ճանաչումն ու Օսմանեան Թուրքիոյ դատապարտումը՝ իրրեւ ցեղասպան կառավարութիւն: Մինչ երկրորդը կ'անդրադառնայ Նախիջեւանի եւ Հայաստանի նախկին սահմաններուն (1914ի) հարցի ֆենաքկման:

• 11 Յունիս — Մինչ գործադուլներն ու դասադուլները կը շարունակուին, Ստեփանակերտի մէջ տեղի կ'ունենայ հաւաք մը, ուր խօսք առնողները անգամ մը եւս կը շեշտեն որ Արցախի ընկերա-տնտեսական հարցը միայն «բաղաճական լուծումով» կարելի է հարթել: Անոնք կը պահանջեն նաեւ վերահաստատել շրջանին կուսակցական մարմնին եւ երեսփոխաններուն պաշտօնավարու-

թիւնը, կրճատել կրակմարի ժամերը եւ, վերջապէս, ազատ արձակել Արկադի Մանուչարեանը:

- 14 Յունիս — Ամենայն Հայոց Կաթողիկոսը կոնդակով մը կ'ողջունէ 1918 Մայիս 28ը հայկական պետականութեան վերականգնման տարեթիւ նշելու որոշումը:
- 16 Յունիս — «Ղարաբաղ Կոմիտէ»ի կազմակերպութեամբ մեծ հաւաք՝ Մատենադարանին առջեւ:
- 17 Յունիս — Երեւանի մէջ կը գումարուի «Հայոց Համազգային Շարժում»ին հիմնադիր ժողովը, որուն կը մասնակցին բազմաթիւ ոչ-պաշտօնական խմբակցութիւններ եւ հոսանքներ: Աւելի ուշ, 19 Օգոստոսին, «Շարժում»ը կը հրատարակէ իր անդրանիկ հռչակագիրը:
- 20 Յունիս — Հայաստանի մէջ, մայրաքաղաք Երեւանի կուսակցական ղեկավարը՝ Միքայէլ Միկապետեան «մէկ տարիէ ի վեր քաղաքին մէջ տեղի ունեցող խռովութիւնները չկարենալ զսպելուն համար» պաշտօնանկ կ'ըլլայ եւ կը փոխարինուի Կ. Ասատուրեանով:
- 22 Յունիս — Խ. Ադրբեջանի նախագահ Սուլէյման Թաթլիբի կը հրաժարի «իւր անձնական փափաքով»: Անոր յաջորդ կը նշանակուի նախկին փոխ վարչապետուհի Էլմիրա Քաֆարովա:
Նոյն օրը, «Ձրանսեւիսկական Միասնականութեան Ընկերակցութիւն»ը կը յայտարարէ, որ Խ. Հայաստանի մէջ հիմնած է մարդկային իրաւանց պաշտպանութեան ընկերակցութիւն մը:
- 23-26 Յունիս — Երեւանի մէջ կը գումարուին Հայաստանի խորհրդարանական ընթացիկ նիստերը, որոնց՝ խորհրդակցական ձայնով կը մասնակցին նաեւ «Ղարաբաղ Կոմիտէ»ի 4 անդամներ: Նիստերը ուղղակի կը պատկերասփռուին Երեւանի մէջ: Մասնակից երեսփոխանները համափոհութիւն կը յայտնեն Հայաստանի մէջ

ազատ նախաձեռնութիւններու գօտիներու ստեղծման եւ կը պահանջեն ժողովրդավարական եւ սահմանադրական հիմքերու վրայ Արցախի տագնապին արդար լուծում մը: Այս առթիւ, խորհրդարանը կ'որոշէ.

* Պաշտօնապէս ցանչնալ «Հայոց Համազգային Շարժում»ը:

* Մինչեւ տարեվերջ փակել ձգախեղձի արտադրութեան «Նայիրիտ» գործարանը:

* Կազմել խորհրդարանական յանձնախումբեր, որոնց անդամակցին նաեւ ոչ-պաշտօնական շարժումներ եւ «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամներ եւ որոնց նպատակը ըլլայ՝ Արցախեան պահանջատիրութեան, Ադրբեջանէն Հայաստան եկած գաղթականներու հարցին եւ կենսաբանական տագնապներուն հետապնդումը:

- 24 Յունիս — Ստեփանակերտի մէջ կրակմարի դրութիւնը կը կրճատուի եւ կը տեւէ առաւօտեան ժամը 1էն 5: Գործարանական քնականոն ընթացքը տակաւին կը մնայ անդամալուծուած, սակայն կացութիւնը համեմատաբար խաղաղած է:

- 25-26 Յունիս — Արցախցի ներկայացուցիչներ հանդիպում մը կ'ունենան Մ. Գորբաչովի հետ:

- 27 Յունիս — Ստեփանակերտի «Ցաղթանակ» հրապարակին վրայ տեղի կ'ունենայ արտօնեալ հաւաք մը, ուր խօսք կ'առնեն Ստեփանակերտի կուսակցապետ Վալերի Աթաջանեան, ինչպէս նաեւ՝ կուսակցական այլ ղեկավարներ եւ երեսփոխաններ: Բանախօսները անգամ մը եւս կը շեշտեն, որ տագնապին արդար լուծման կարելի է հասնիլ միայն ժողովրդավարական միջոցներով:

Երեւանի մէջ, «Հայոց Համազգային Շարժում»ին առընթեր, 17 ոչ-պաշտօնական հասարակական խմբակցութիւններ միացեալ յայտարարագրով մը հրապարակ

կու գան, իբրև «ոչ-պաշտօնական կազմակերպութիւններու խորհուրդ»:

- 1 Յուլիս — Գորբաչով զգուշութեան կը հրաւիրէ Խ. Միութեան ժողովուրդները, պահանջելով որ անոնք վերջ տան ազգամիջեան հակադրութիւններուն եւ անկախ ու ինքնիշխան պետութիւններ ստեղծելու նիւթերուն, որովհետեւ այս ընթացքը վնաս պիտի հասցնէ ամբողջ երկրին ու խորհրդային ընկերութիւնը կազմող բոլոր ժողովուրդներուն:
- 5 Յուլիս — Արցախի Քերֆինան գիւղին մէջ նոր բախումներ տեղի կ'ունենան հայերու եւ ազերիներու միջեւ: Երկու կողմերէն կ'իյնան մէկական վիրաւորներ:
- Յուլիսի առաջին շաբաթը — Արցախ կ'ակնկալուի Խ. Միութեան խորհրդարանը ներկայացնող պատուիրակութիւն մը, տեղւոյն վրայ քննարկելու համար շրջանի հայութեան պահանջները:
Մինչ այդ, Խ. Հայաստանի եւ Արցախի միջեւ ցամաքային ճամբաները կը մնան խզուած: Իսկ Գորիս-Ստեփանակերտ ճամբուն շինութեան աշխատանքները կանգ առած են, որովհետեւ ադրբեջանական իշխանութիւնները կ'արգելակեն զանոնք:
- 9-10 Յուլիս — Խ. Միութեան ներքին գործոց նախարարութեան ոստիկան-զօրաց հրամանատար զօր. Եւրի Շաքալին անձամբ կ'ուղղուի Արցախ: Իսկ շրջանին յատուկ վարչամեքենան կը գումարէ արտակարգ նիստ մը:
Դէպի Արցախ տանող ճամբաները կը մնան խզուած:
- 10-11 Յուլիս — Հայ եւ ազերի նոր բախումներ ծայր կու տան Ստեփանակերտի մօտակայ Քերֆինան գիւղին մէջ: Երկու ազերիներ կը սպաննուին եւ 20 ուրիշներ կը վիրաւորուին: Բախումները ծայր կու տան, երբ ոստիկան-զօրաց ուժերէն զինուորներ կը փորձեն վերաբանալ կարգ մը ճամբաներ:

- 12 Յուլիս — Հակահայ բռնութիւնները կը կրկնուին Շուշիի շրջանի Եղցահող եւ Ասկերանի շրջանի Դաշրուլազ, Խրամորթ, Այրուլազ եւ Մարիբէյլի գիւղերուն մէջ:

Ասկերանի մէջ, ազերի ամբոխներ ջարդուիշուր կ'ընեն խանութ մը եւ Ստեփանակերտի օդակայանին գրասենեակը: Իսկ Մարդակերդի շրջանի Քիչան եւ Արխաւենա գիւղերուն միջեւ կը գտնուի հայորդիի մը անշնչացած մարմինը:


Նոյն օրը, ազերիներ կը խափանեն Երեւանի պատկերասփիւռին հաղորդումները Ստեփանակերտ փոխանցող հաղորդիչը:

Դարձեալ 12 Յուլիսին, Ստեփանակերտի եւ Մարդակերտի միջեւ հեռաձայնային կապերը կը խզուին: Մինչ օրոպիւսային հաղորդակցութիւնները ամբողջովին կ'ընդհատուին:

- 13 Յուլիս — «Հրահրիչ» հրացանագութիւնները կը շարունակուին Արցախի գանազան շրջաններուն մէջ:
- 14 Յուլիս — Ամերիկեան Մերակոյտի արտաքին յարաբերութեանց եւ զինեալ ուժերու անդամներուն կողմէ կ'որդեգրուի միացեալ բանաձեւ մը, «արտայայտելու համար ամերիկեան զօրակցութիւնը՝ Արցախի հարցին լուծման գծով Խ. Հայաստանի ժողովուրդին ձգտումներուն»:
- Յուլիսի կէսերը — Բաբուի մէջ կը սկսի սաղմնաւորուիլ «Ադրբեջանի ժողովրդային ձակատ» կազմակերպութիւնը: ձակատը կը փորձէ համախմբել Արցախը Ադրբեջանէն անբաժան պահել ուզող խմբակները եւ վերջ տալ... հակահայ մոլուցքին:
- 24 Յուլիս — Հ. Յ. Դ. Բիւրոն յայտարարագրով մը նկատել կու տայ, որ Արցախեան շարժումին հասունացման պահը հասած է եւ թէ «ժողովուրդին ծոցէն ծնունդ առած

մարտունակ խմբաւորումները կը դիմագրաւեն *գաղափարական իրենց ուղին ճշգրտողելու եւ կազմակերպական միեւնոյն ճակատին մէջ խմբուելու մարտահրաւէրը*»:

- 26 Յուլիս — Ադրբեջանի կազմին մէջ գտնուող Շահում-եանի շրջանային խորհուրդը յատկանշական նախաձեռնութեամբ մը, իր շրջանի «Նոր Ուղի» թերթին մէջ կը հրապարակէ միութեանական եւ ադրբեջանական իշխանութիւններուն ուղղուած դիմում մը, որով կը պահանջէ շրջանին վերամիացումը հայկական Արցախին:
- 1 Օգոստոս — 300 ազերիներ Լաչինի մօտ կը յարձակին բռնակառքերու կարաւանի մը վրայ, որ Հայաստանէն շինանիւթ կը փոխադրէր Արցախ: Յարձակումին եւ անոր հետեւած բախումին պատճառով կը վիրաւորուին 13 հոգի: Վիրաւորներու շարքին կ'ըլլան 3 բանակայիններ: Յարձակողներէն կը վիրաւորուին 7 հոգի:
Փոխադարձաբար, հայեր կը փորձեն փակել Շուշին Ադտամ ֆաղափին կապող ցամբան, սակայն ոստիկանութիւնն ու ներքին գործոց նախարարութեան ուժերը կը միջամտեն եւ կը ցրուեն զանոնք:
- 3 Օգոստոս — Բաֆուի մէջ նոր խժոժութիւններ հայկական թաղամասերուն դէմ: Երկու հայեր կը սպաննուին եւ ֆանի մը ազերիներ կը վիրաւորուին:
- 5 Օգոստոս — «Ադրբեջանի ժողովրդային ձակատ»ը Բաֆուի մէջ կը կազմակերպէ հաւաք մը, դատապարտելով... հակահայ զգացումները հրահրողները:
- 12 Օգոստոս — Բաֆուի մէջ, տասնեակ հազարաւոր ազերիներ ցոյց մը կ'ընեն, պահանջելով վերջ տալ Արցախի վարչական յատուկ դրութեան:
Արցախի մէջ կը սպաննուին երկու ազերիներ:
- 13 Օգոստոս — Արցախի կացութիւնը ահազանգային բրնձոյթ կը ստանայ, երբ շրջանին բոլոր ցամբանները կը



Շուշի. Յունուտի կիրճէն մաս մը

փակուին եւ ազերիներ կը սկսին զինեալ յարձակումներ գործել Արցախ երթեւեկողներուն վրայ:

Բաֆուի մէջ կը ձեռնարկուի միօրեայ գործադուլի:

- 14 Օգոստոս — Երաշտի բացայայտ վտանգի դիմաց, Արցախ կը դիմէ գործադուլի: Մինչ ազերիներու ազգայնական տրամադրութիւնները կ'արձանագրեն յարանուն վերելք:

Արդարեւ, 150 հազար ազերիներ մեծ ցոյց մը կը կատարեն Բաֆուի մէջ, հրապարակելով շարք մը յանդուզն պահանջներ: Հաւաքէն անմիջապէս ետք, Մուկուլայէն Բաֆու կը ժամանէ պաշտօնական պատուիրակութիւն մը, բանակցութեան նստելով «Ճակատ»ի ներկայացուցիչներուն հետ:

- 15 Օգոստոս — Խ. Հայաստանի Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը չեղեալ կը նկատէ Արքատի Մանուչարեանի երեսփոխանական թեկնածութիւնը:

- 16 Օգոստոս — Ստեփանակերտի մէջ կը գումարուի Արցախի հայութեան ազգային համագումարը, մասնակցութեամբ բոլոր շրջաններէն եկած 400 պատգամաւորներու: Համագումարը կ'ընտրէ 78 անդամներէ բաղկացած Ազգային Խորհուրդ մը, որ իր կարգին կ'ընտրէ 17 անձերէ կազմուած Խորհուրդի նախագահութիւն (գործադիր Խորհուրդ), որուն հետապնդելիք առաջնահերթ հարցերը կը նկատուին. —

ա) Շրջանի կացութեան կայունացումը.

բ) Ազգամիջեան բախումներու զսպումը.

գ) Աշխատանքային գործի վերսկսումը եւ

դ) շրջանին մէջ բոլոր ազգերու ներկայացուցիչներուն հետ յարաբերութեանց վերահաստատումը:

Բացի այս, կ'որոշուի նաեւ Ինքնավար Մարզին մէջ Խորհրդային Ադրբեջանի պետական դրօշին փոխարինումը՝ Խ. Հայաստանի դրօշով:

- 17 Օգոստոս — Ազգային հարցերով տագնապող Խ. Միութեան Գերագոյն դեկլարութիւնը կը հրապարակէ հաղորդագրութիւն մը, որ կ'առաջադրէ «արմատական փոփոխութիւններու ենթարկելի խորհրդային հանրապետութեանց դաշնակցութիւնը, այնպէս մը՝ որ իւրաքանչիւր հանրապետութեան եւ Խ. Միութեան շահերը զիրար ամբողջացնեն:

- 19 Օգոստոս — Տասնեակ հազարաւոր ազերիներ նոր ցոյց մը կ'ընեն Բաֆուի մէջ, գորակցութիւն արտայայտելով «Ազգային Ճակատ»ի պահանջներուն:

Նոյն օրը, Երեւանի մէջ, «Հայոց Համագային Շարժում»ը կը հրապարակէ իր անդրանիկ հռչակագիրը, որմէ ի յայտ կու գայ, թէ «Շարժում»ին առաջնահերթ նպատակն է Արցախի վերամիացումը՝ Հայաստանին: Ան կը հետապնդէ նաեւ Հայաստանի տնտեսական ինքնավարութիւնը, հայկական ազգային գորագունդներուն վերականգնումը, Սփիւռքի հայահոծ գաղութներուն մէջ հայկական հիւպատոսարաններու բացումը, Հայաստանի մէջ ժողովրդավարութեան ամրապնդումը եւ հայերէն լեզուի պաշտպանութիւնն ու տարածումը:

- 20 Օգոստոս — Մինչ ազերիական ցոյցերը հետգհետ առօրեայ հերթականութիւն կը ստանան, Բաֆուի եւ Սումգայի մէջ ծայր կու տան բաց գործադուլի ալիքներ:

- 22 Օգոստոս — Ազերիներու կողմէ Հայաստանի երկաթուղագիծերուն վրայ պարտադրուած պաշարման իրրեւ հետեւանք, Երեւանի մէջ ծայր կու տայ վառելանիւթի սուր տագնապ:

- 25 Օգոստոս — Երեւանի կեդրոնական մէկ շրջանին մէջ կը պայթի «Լատա» տիպի ինքնաշարժ մը: Ինքնաշարժը լեցուած կ'ըլլայ զինամթերքով եւ պայթուցիկ նիւթերով: Մարդկային զոհեր չեն արձանագրուիր:

- 27 Օգոստոս — Խ. Հայաստանի երեսփոխանական մաս-

նակի ընտրութիւններուն, ընտրուողներու շարքին կ'ըլլան «Ղարաբաղ Կոմիտէ»ի անդամներ Ռաֆայել Ղազարեան, Լեւոն Տէր Պետրոսեան եւ դարաբաղեան ծագումով 2 անճամարութիւններ՝ Ռոպերթ Քոչարեան եւ Արկադի Մանուչարեան:

- 29 Օգոստոս — ԹԱՍՍ կը հաղորդէ, որ Խ. Միութեան ներքին գործոց նախարարութիւնը յաւելեալ ուժ դրկած է Հայաստան եւ Ադրբեջան:

Մինչ այդ, Արցախի մէջ կացութիւնը կը մնայ պայթուցիկ եւ վտանգաւոր:

- Օգոստոսի վերջերը — Նոր բախումներ Արցախի ազերիական Քարահոյ եւ Քիմիկի գիւղերուն մէջ, ուր հայեր կ'այրեն 4 ազերիներու տուններ:

- 1 Սեպտեմբեր — Մինչ Արցախ կ'ենթարկուի ամբողջական պաշարման, Ադրբեջանի մէջ հայ-ազերի լարուածութիւնը կը սքի: Այնքան մը, որ Ադրբեջանի համալսարաններուն վերամուտը կը յետաճգուի մէկ ամիսով:

Նոյն օրը, «Ազատութիւն» ռատիոկայանի Խ. Միութեան մասին անգլերէն հրատարակուող բանբերը կը տեղեկագրէ, որ ազերիներ հիմնած են «քիրլիք» անունով նոր կազմակերպութիւն մը, որուն գլխաւոր նպատակն է՝ Իրանի խորհրդային սահմանին երկու կողմերուն միացումով ստեղծել Միացեալ Ադրբեջան:

- 2 Սեպտեմբեր — Բաքուի մէջ, «Ադրբեջանի ժողովրդային ձակաս»ին կազմակերպութեամբ ցոյցի մը ընթացքին, 100 հազար ազերիներ կը պահանջեն Խ. Ադրբեջանի յաւելեալ ինքնավարութիւն եւ Լեւոնային Ղարաբաղի Ադրբեջանի հակակշիռն ենթարկում:

- 3 Սեպտեմբեր — «Կարմիր Աստղ» պաշտօնաթերթին կողմէ հրատարակուած հարցազրոյցի մը մէջ, Արցախի յատուկ կառավարիչ Արկադի Վոլսկի նկատել կու տայ, որ ազգամիջեան խռովութիւնները շրջանը վառօդի տակա-

նի մը վերածած են, եւ թէ, որեւէ պահուն «Քաղաքացիական պատերազմ» կրնայ պայթիլ:

- 4 Սեպտեմբեր — Բաքուի Համայնավար կուսակցութեան դեկավար Միւսլիմ Մամետով պատկերասփիտէն ելոյթ ունենալով կը հաւաստիացնէ, որ Ադրբեջանի իշխանութիւնները բնաւ պիտի չընդունին Լեւոնային Ղարաբաղի վրայ իրենց գերիշխանութեան կորուստը:

Միաժամանակ, ազերիներ կը նախաձեռնեն մէկ շաբթուան մասնակի գործադուլի: Ինչ որ աւելի եւս կը դժուարացնէ Հայաստանի պարեմաւորումը:

- 5 Սեպտեմբեր — «Խորհրդային Ղարաբաղ»ի մէջ լոյս կը տեսնէ արցախցիներու կոչը՝ ՄԱԿին, որպէսզի ան անհրաժեշտ միջոցառումներ որդեգրէ շրջանի հայ բնակչութեան ապահովութիւնը երաշխաւորելու համար: Նոյնիմաստ կոչ մըն ալ կ'ուղղուի Հայաստանի ներքին գործոց նախարարութեան, որպէսզի ուժ դրկէ Արցախ, տեղւոյն բնակչութեան ապահովութեան հսկելու:

- 6 Սեպտեմբեր — Բաքուի գործադուլը կազմակերպող դեկավարներէն՝ Ըխթիպար Մամետով սպառնագին կը յայտարարէ, որ «եթէ նախագահ Գորբաչով, վարչապետ Ռիժժով կամ գոնէ Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի փոխ նախագահը՝ Անաթոլի Լուիհանով Ադրբեջան չժամանեն, գործադուլը պիտի չդադրեցնենք եւ պիտի պահանջենք անջատուիլ Խ. Միութենէն»:

- 7 Սեպտեմբեր — Նոր յարձակումներ՝ Հայաստանէն Ստեփանակերտ մեկնող *օթուպիւս*ներու վրայ: Շրջանին 4000 զինուորները կը մնան ակնակապ:

- Նոյն օրերը — Արցախի բանակային ուժերու ընդհանուր հրամանատար Եւրի Շաթալին եւ երկու այլ բարձրաստիճան սպաներ պատանդ կը բռնուին ազերիներու կողմէ:

- 9-10 Սեպտեմբեր — Երեւանի մէջ կը գումարուի հայրե-

նի մտաւորականութեան համաժողով, որ իր հրատարակած հռչակագիրով հայ ժողովուրդի վերջնական նպատակ կը յայտարարէ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի ստեղծումը: Այս առթիւ, ժողովը կ'ընտրէ 67 հոգինոց խորհուրդ մը, որ իր կարգին կ'ընդգրկէ 15 հոգինոց նախագահութեան կազմ:

Վտանգաւոր զարգացումով մը, նոյն օրերուն կ'արձանագրուին Հայաստանը Արցախին կապող կամուրջներու ակնումներ:

• Սեպտեմբերի առաջին տասնօրեակ — Պաշարման կողմին, Ադրբեջանի մէջ ծայր տուած միաշարքեայ գործադուլին իբրեւ հետեւանք, Հայաստան կ'ապրի կենսամիութեամբ եւ քարիւղի սուր տագնապ: Գրեթէ անգտանելի կը դառնան բրինձ, խմորներ, լուցկի եւ ալիւր:

• 13 Սեպտեմբեր — Խ. Հայաստանի Գերագոյն Խորհուրդը Երեւանի ձայնասփիւռէն կոչով մը կը դիմէ խորհրդային խորհրդարանին եւ Ադրբեջանի Գերագոյն Խորհուրդին, որպէսզի անհրաժեշտ միջոցառումներու դիմեն՝ շոգեկառներու դէպի Հայաստան մուտքը սկսեցնելու համար:

• 14 Սեպտեմբեր — Խ. Հայաստանի վարչապետ Վ. Մարգարեանց «Պրաւդա»ի կը յայտարարէ, որ «Հայաստան կը գտնուի տնտեսական իսկական պաշարումի տակ»:

• 16 Սեպտեմբեր — Արտակարգ նիստի մը ընթացքին, Ադրբեջանի Գերագոյն Խորհուրդը կ'որոշէ պահանջել՝ վերջ տալ Արցախի վարչական դրութեան:

Նոյն օրը, Մոսկուայի պատկերասփիւռին հետ հարցազրոյցի մը ընթացքին, Արկադի Վոլսկի կը հաստատէ, որ «Լեռնային Ղարաբաղի մէջ եւ անոր շուրջ կացութիւնը այնքան լարուած եւ պայթուցիկ չէ եղած»:

• 18 Սեպտեմբեր — Ադրբեջանական Ադտամ շրջանին մէջ կը սպաննուին երկու զինուորներ, որոնք կը փորձէին

ցրուել ապահովութեան ուժերուն նամբան փակող ազերի ամբոխը:

• 19 Սեպտեմբեր — Մոսկուայի մէջ, Համայնավար կուսակցութեան Կ. Կոմիտէի յատուկ նիստին, Մ. Գորբաչով կ'առաջարկէ ակնցնել հանրապետութեանց լիազօրութիւնները, անոնց տալով սահմանադրական երաշխիքներ, ի խնդիր՝ իշխանութեան մակարդակի վրայ նոր հաւասարակշռութեան:

Նոյն նիստին ելոյթ ունենալով, Ս. Յարութիւնեան, Արցախի հարցը կը ներկայացնէ իբրեւ պայթուցիկ հարց եւ «եռացող կաթսայ», իսկ Հայաստանի վիճակը կ'որակէ «նգնաժամային»:

• 20 Սեպտեմբեր — Վոլսկի եւս իօսֆ առնելով Համայնավար կուսակցութեան Կ. Կոմիտէի յատուկ նիստին, կը յայտարարէ, որ Հայաստանի եւ Ադրբեջանի հանրապետութիւնները «պատերազմական» վիճակի մէջ կը գրտնընդունեն եւ խաղաղութիւնը պիտի չվերահաստատուի, եթէ անմիջական միջոցառումներու չդիմուի: Ան կը նշէ նաեւ, որ «երկու հանրապետութիւնները ազգամիջեան պատերազմի մը սահմանին վրայ կը գտնուին» եւ թէ, Արցախի պարենաւորումի վիճակը «աղետալի է»:

Նոյն օրը, «Իզվեստիա» կը հաղորդէ, որ Խ. Հայաստանի քարիւղի պահեստը սպառած է, ծանր տագնապի մատնելով մինչեւ իսկ Երեւանի օդակայանը:

• 21 Սեպտեմբեր — Պաշարման իրավիճակին իբրեւ հետեւանք, թուրքի պահեստները սպառած ըլլալով, Հայաստանի մէջ օրաթերթերը լոյս չեն տեսներ:

• 22 Սեպտեմբեր — Խ. Հայաստանի Գերագոյն Խորհուրդը Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդին կը ներկայացնէ դիմում մը, որով կը պահանջէ «անմիջական միջոցառումներ» որդեգրել, քակելու համար Ադրբեջանի կողմէ

ամիսէ մը ի վեր Հայաստանի եւ Արցախի պարտադրուած վիճակը:

- 23 Սեպտեմբեր — Հայ երեւէ կուսակցութիւնները միացեալ կոչով մը կը դիմեն Խ. Միութեան նախագահ Միխայէլ Գորբաչովի, պահանջելով որ Խ. Միութեան կեդրոնական իշխանութիւնները անմիջապէս վերջ տան Հայաստանի պաշարման վիճակին, երաշխաւորեն Արցախի հայութեան ապահովութիւնը՝ գործնական բոլոր միջոցառումներով եւ վեճահատեն Արցախի նակատագիրը՝ գահացում տալով շրջանի բնակչութեան արդար պահանջներուն:

Ադրբեջանի մէջ, տեղւոյն Գերագոյն Խորհուրդը կ'որոշեցրէ որոշում մը, որ Ադրբեջանի գերիշխանութիւնը կը վերահաստատէ Արցախի վրայ:

- 24 Սեպտեմբեր — Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի ընթացիկ նստաշրջանին, երեսփոխաններ Սախարով եւ Աֆանասիսի նախագահութեան կոչ կ'ուղղեն՝ «օդային կամուրջ մը» հաստատելու Հայաստանի հետ, որպէսզի պաշարման հետեւանքները որոշ չափով դարմանուին:

Արցախի մէջ, կացութիւնը կ'ուղղուի վատէն դէպի յոռեգոյնը: Ցարակումի մը ընթացքին կը սպաննուի գինուոր մը եւ կը վիրաւորուին 4 ուրիշներ:

- 25 Սեպտեմբեր — Մ. Գորբաչով 48 ժամուան պայմանաժամ կու տայ Խ. Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարութեանց, որպէսզի Հայաստանի տնտեսական պաշարման հարցը լուծուի:

- 26 Սեպտեմբեր — Արցախ կ'ուղարկուի գրահապատ միաւոր մը, թիկունք կանգնելու համար հոն գտնուող 4000 զինուորներուն:

Միաժամանակ, ձեւականօրէն միայն կը ֆակուի Հայաստանի պաշարումը, մինչ իրողական վիճակը կը մնայ միեւնոյնը: Երեւան հասնող շոգեկառքերը իրենց

հետ կը բերեն ահագին... փնացած ուտեստեղէն եւ աւօգտագործելի վառելանիւթ:

- 27 Սեպտեմբեր — «Ադրբեջանի ժողովրդային ձակատ»ի անդամները կը յայտնեն, թէ Հայաստանի պաշարումը հետեւանք է երկաթուղագիծի աշխատաւորներուն գործադուլին, իբրեւ բողոք՝... «Ադրբեջանի ներքին հարցերուն հայերուն միջամտութեան» եւ «շոգեկառքերու վրայ յարձակումներուն»: Այս առթիւ, անոնք հայերէն կը պահանջեն նաեւ ներդրութիւն խնդրել, Արցախը Հայաստանին միացնելու իրենց պահանջին համար:

- 28 Սեպտեմբեր — «Իզվեստիա» կը հաղորդէ, որ Արցախի մէջ, Գուրգուր Զայ գետին վրայ գտնուող երկաթուղագիծի կամուրջ մը ականուած եւ ֆանդուած է:

Երեւանի մէջ, Երեւանի երկաթուղագիծի սպասարկութեան փոխ տնօրէն Ա. Արոյեան «Կոմունիստ» պաշտօնաթերթին կը յայտնէ, որ ազերիներ Ջուլֆայի, Նախիջեւանի եւ Միջեւանի մէջ ֆարիւղ փոխադրող վակոնները կը ֆակեն, հետեւաբար, վառելանիւթ չի հասնիր Հայաստան:

- 1 Հոկտեմբեր — Ռուս երեսփոխաններու միջնորդութեամբ՝ «Ղարաբաղ Կոմիտէ»ի եւ «Ադրբեջանի ժողովրդային ձակատ»ին միջեւ տեղի կ'ունենայ հանդիպում մը, որ սակայն կը ձախողի:

Արցախի մէջ, Հասանապատ գիւղին մօտ, ազերիներ փամփուշտներով կը վիրաւորեն երկու ռուս աշխատաւորներ:

Նոյն օրը, գործածութեան կը դրուի Գանձասարի եկեղեցին:

- 2 Հոկտեմբեր — Այն պահուն, երբ Ադրբեջանէն հասնող շոգեկառքերը անգամ մը եւս ամբողջովին կ'անդամալուծուին, Մոսկուայի կեդրոնական պատկերասփիւռը Արցախի մասին կը ներկայացնէ յատուկ թղթակցութիւն

մը, ուր կը պարգուի, որ շրջանին պաշարումը ծանր տագնապներ ստեղծած է տեղւոյն բնակչութեան համար:

Դժնդակ ու անհակակշիռ կացութեան դիմաց, Մ. Գորբաչով կը պահանջէ անյապաղ վերջ տալ Անդրկովկասի մէջ տեղի ունեցող գործադուլին: Միաժամանակ, փոխ վարչապետ Լեւ Վորոնի բացայայտ կը դարձնէ, որ եթէ ազերիները վերջ չտան գործադուլին, զինուորական ուժերը ձեռք պիտի դնեն երկաթուղիի ցանցին վրայ:

- 3 Հոկտեմբեր — Ադրբեջանի Համայնավար կուսակցութեան առաջին քարտուղար Ապտիւլ Ռահման Վեգիրով Ադրբեջանի խորհրդարանին առջեւ խօսք առնելով նկատել կու տայ, որ երկաթուղագիծը անդամալուծուած է «ժողովուրդին եւ յատկապէս կիներուն կողմէ, որոնք երկաթուղիին վրայ կը կանգնին, որպէսզի շոգեկառքերը Հայաստան չհասնին»:

Ժողովրդային մակարդակի վրայ, «Ադրբեջանի ժողովրդային ձակատ»ը հեռագիր մը կը յղէ Մ. Գորբաչովի, սպառնալով ընդհանուր գործադուլ յայտարարել եւ յառաջ էջել Ադրբեջանը Խ. Միութեանն անջատելու իր պահանջը, եթէ, Անդրկովկասի երկաթուղագիծի ցանցին անդամալուծումը դարմանելու համար, բանակը եւ զինեալ ուժերը միջամտութիւն կատարեն:

- Նոյն օրերը (2-3 Հոկտեմբեր) — Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի նստաշրջանին, Խ. Հայաստանի խորհրդարանի նախագահ Հրանդ Ռսկանեան, դատապարտելով Հայաստանի պարտադրուած քաղաքական խորճով տնտեսական պաշարումը, յատուկ պատժամիջոցներ կը պահանջէ Ադրբեջանի դէմ:

Միւս կողմէ, Արցախը կառավարող յատուկ վարչամեքենայի անդամ Վալերի Սիտորով «Արկիւմենտի Ի ֆակտի» թերթին կը յայտնէ, թէ «առանց հրացանաձրգութեան, պայթումներու, ականոււմներու, փոկրոմեն-

րու եւ հրահրութեան՝ ոչ իսկ օր մը կամ գիշեր մը կ'անցնի: Ինքնաշարժներուն վրայ կը կրակեն, պատանդներ կը բռնեն, ճամբաները կը փակեն»: Ան կ'աւելցնէ նաեւ, որ «Հայաստան եւ Ադրբեջան պատրաստ են իրենց միջեւ տեղի ունեցող պաղ պատերազմը որեւէ վայրկեանի վերածելու իսկական քաղաքացիական պատերազմի»:

- 4 Հոկտեմբեր — Մինչ Արցախի ներքին ապահովութեան ուժերու մէկ գնադասպետը՝ Փաւել դիտել կու տայ, որ մինչեւ իսկ պետական ուժերու ընկերակցութեամբ կարաւանները չեն կրնար Արցախ հասնիլ, Արցախի սահմանային շրջաններուն մէջ ազերիներ կը սկսին զինեալ դիրքեր հաստատել: Անոնք զինուած կ'ըլլան գնդացիներով եւ տունը պատրաստուած ականներով:

Յատկանշականօրէն, նոյն օրերուն ազերիներ կը սկսին աւաններ կառուցել Հայաստանը Արցախէն բաժնող Լաչինի այն շրջանին մէջ, ուրկէ պիտի անցնէր Գորիս-Ստեփանակերտ ճամբան:

- 5 Հոկտեմբեր — Ադրբեջանի խորհրդարանը կը քուէարկէ իր գերիշխանութեան մասին օրէնք մը, ըստ որուն, ան իր գերիշխանութիւնը կը տարածէ նաեւ Արցախի ու Նախիջեւանի վրայ: Բացի այս, խորհրդարանը ինքզինք կը լիազօրէ հանրաքուէ մը կազմակերպելու, որպէսզի վնոէ Խ. Միութեան կազմին մէջ մնալու կամ չմնալու հարցը:

Նոյն օրը, Արցախի մէջ, հայեր 25 ինքնաշարժներով զինեալ յարձակում մը կը գործեն ազերիաբնակ գիւղի մը վրայ:

- 6 Հոկտեմբեր — Երեւանի մէջ տեղի կ'ունենայ զօրակոչներու նստացոյց: Անոնք կը պահանջեն իրենց ծառայութիւնը կատարել Հայաստանի՝ երկրաշարժէն աւերեալ շրջաններու զօրանցներուն մէջ:
- 7 Հոկտեմբեր — Բաքուի մէջ, պաշտօնական ճանաչում ապահոված «Ադրբեջանի ժողովրդային ձակատ»ը ան-

գամ մը եւս կը դիմէ «չՖմեղանքի», երբ, մերժելով ֆակելի Հայաստանի ու Արցախի պաշարումը, կը յայտարարէ, որ հայերը իրենց կարգին փակած են Մեղրի-Նախիջեւան երկաթուղագիծը եւ հետեւաբար պաշարման ենթարկած՝ Նախիջեւանը:

Երեւանի մէջ, «Ղարաբաղ Կոմիտէ»ի կոչին վրայ տեղի կ'ունենայ հաւաք: Ճառախօսները կ'անդրադառնան Խ. Հայաստանի եւ Արցախի իրադրութեանց, Խ. Հայաստանի Գերագոյն Խորհուրդի մօտալուս ընտրութիւններուն եւ 4 Նոյեմբերին նախատեսուած «Հայոց Համագգային Շարժում»ի հիմնադիր ժողովին:

Ադրբեջանի հայաբնակ շրջաններն ու Արցախ կը մնան բռնկած: Այդ օր կ'ականահարուի Ադտամը Շուշիին կապող կամուրջ մը: Շուշիի մէջ, ազերիներ կը յարձակին հայաբնակ գիւղի մը վրայ: Իբրեւ հակադարձ, հայեր կը յարձակին Լաչինի վրայ: Բախումներ կ'արձանագրուին նաեւ Ստեփանակերտի Քարի Տակ գիւղին եւ Մարդակերտի շրջաններուն մէջ, ուր կը վիրաւորուին 2 հայեր եւ կը ձերբակալուին 2 ազերիներ: Քիչ ետք, ազերիաբնակ Շուշին ու ապա՝ Ստեփանակերտի հարաւը գտնուող հայաբնակ Հադրութ ււանը պաշարման ենթարկուելով՝ կը կտրուին շրջապատէն:

- 9 Հոկտեմբեր — Արցախի մէջ, Հադրութի շրջանի Հախուլլա գիւղի ազերի բնակիչները որսորդական հրացաններով կը յարձակին նոյն շրջանի Էդիլլու հայկական գիւղին վրայ: Բախումը կ'ըլլայ բուռն: Զոհեր չեն արձանագրուիր:
- 10 Հոկտեմբեր — Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդը կը վերահաստատէ իր այն որոշումը, թէ «տեղական իշխանութիւնները եւ կառավարութիւնները կրնան լուծել հայ-ազերի տագնապը», սակայն ան կ'աւելցնէ նաեւ, որ իրողական վիճակը կը մնայ գրեթէ անփոփոխ եւ հետե-

ւաբար՝ տագնապալի: Իսկ երբ խորհրդարանի նախագահը՝ Լուիխանով կը մերժէ օրակարգի առանձին նիւթ դարձնել Արցախի եւ պաշարումներու հարցը, իբրեւ բողոքի արտայայտութիւն, 20 հայ երեսփոխաններ կը լինեն ժողովասրահը:

Դարձեալ Մոսկուայի մէջ, «Ադրբեջանի ժողովրդային Ճակատ»ի մէկ պատուիրակութիւնը կ'ընդունուի Համայնավար կուսակցութեան պատասխանատուներուն կողմէ եւ այս առթիւ գոհացում կը ստանայ Բաքուի մէջ կրակմարի դրութեան ջնջման իր պահանջին: Փոխադարձաբար, «Ճակատ»ը կը խոստանայ Արցախի պաշարումը «ամբողջովին փակել»:

Ստեփանակերտի մէջ, խորհրդային բանակէն զինւորներ առաջին անգամ ըլլալով կը սպաննեն հայ մը (Սպարտակ Առաքելեան) եւ կը վիրաւորեն 8 ուրիշներ, երբ տեղւոյն բնակիչները արգելք կը դառնան Շուշի ուղղուող ազերիներու կարաւանի մը անցքին: Նոյն օրերուն, աչքի կը գարնեն եւ կը ձերբակալուին Ադրբեջանէն «յատուկ առաքելութեամբ» Արցախ եկած քանի մը ազերիներ:

- 11 Հոկտեմբեր — Ստեփանակերտի ծանօթ դէպքին լոյսին տակ, Երեւանի մէջ տեղի կ'ունենայ յատուկ հաւաք, ուր կ'որոշուի Մոսկուայէն տուն կանչել հայ երեսփոխանները:
- 12 Հոկտեմբեր — Ազերիներ իրենց պաշարման օղակին մէջ կ'առնեն նաեւ Վրաստանը: Անոնք այս ֆայլին կը դիմեն, երբ Վրաստանի «Ժողովրդային Ճակատ»ը կը մերժէ փակել Հայաստան տանող նամբաներն ու երկաթուղագիծերը:
- 13 Հոկտեմբեր — Հայաստանի պաշարումը մասամբ կը թուլնայ, երբ սննդամթերք եւ վառելանիւթ փոխադրող

նկատանքի թիւով շոգեկառններ եւ բռնատարներ կը սկսին հասնիլ Երեւան:

Լաչինի մօտ կ'արձանագրուին նոր բախումներ:

- 14 Հոկտեմբեր — «Ադրբեջանի Ժողովրդային Հակատ»ը 15 օրուան պայմանաժամ մը կու տայ Խ. Միութեան խորհրդարանին, որպէսզի «լուծէ» Արցախի տագնապը, այլապէս ան կը սպառնայ վերսկսիլ գործադուլերու:
- 16 Հոկտեմբեր — Արցախի պաշարման օղակը եւս մասամբ կը թուլնայ, երբ որոշ գգուչութեամբ քանի մը փոխադրակառներ վառելանիւթ եւ պարէն կը հասցնեն Ստեփանակերտ:
- 18 Հոկտեմբեր — Հայաստանի Արովեան քաղաքին մէջ, մանկապարտեզի մը բոլոր մանուկները կը թունաւորուին, երբ կը ճաշակեն քանի մը օր առաջ Ադրբեջանէն հասած փռոշի շաքար:

Նոյն օրը, Արցախի Զենկալի գիւղին մօտ կ'արձանագրուի զինեալ բախում մը, որուն ընթացքին կը ըսպաննուի ազերի մը:

- 19 Հոկտեմբեր — Արցախի Ազգային Խորհուրդը, նիստ մը գումարելով, կու տայ շարք մը կարեւոր որոշումներ: Այսպէս՝

ա. Խորհուրդը կը դատապարտէ Կովկասեան քաղաքիւրոյի 1921 Յուլիս 5ի որոշումը, գայն գտնելով հակասահմանադրական եւ հակահայկական:

բ. Հիմնուելով իւրաքանչիւր ազգի ինքնորոշման անկապտելի իրաւունքին վրայ, Խորհուրդը Հայաստանի Գերագոյն Խորհուրդէն կը խնդրէ քննարկել՝ շրջանը Հայաստանի կազմին մէջ մտցնելու հարցը:

գ. Հայաստանի Գերագոյն Խորհուրդէն կը խնդրուի ստեղծել համատեղ յանձնաժողով մը, մշակելու համար շրջանը Հայաստանի կազմին մէջ մտցնելու գործնական քայլերը:

Այս առթիւ, Խորհուրդը կը նշանակի Ռան Լալաստանի հետ համատեղ յանձնաժողովի իր կողմի անկամները. — Ս. Յակոբեան, Ռոբերթ Քոչարեան, Ս. Սեդրակեան, Իկոր Մուրատեան եւ Ա. Մատուրեան:

Միաժամանակ, բախումներ կ'արձանագրուին Արցախի Վանք գիւղին մօտ, ուր կը սպաննուին 2 ազերիներ:

- 20 Հոկտեմբեր — Բոլորովին ուշագրաւ քայլով մը, Արցախի հարցին քաղաքական լուծում մը գտնելու առաջադրութեամբ, Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը միաժամանակ առաջարկներ կը ներկայացնէ Արցախի եւ Ադրբեջանի խորհրդարաններուն: Այսպէսով, իրողապէս ճանչնալով Արցախի խորհրդարանին գոյութիւնը:
- 24 Հոկտեմբեր — Մամլոյ ասուլիսի մը ընթացքին, Խ. Միութեան ներքին գործոց նախարարութեան ուժերու հրամանատար զօր. Նուրի Շաթալին կը հաստատէ, որ Արցախի պաշարումը կը շարունակուի եւ շրջանին մէջ ցամաքի ճամբով փոխադրութիւնը «գործնապէս անկարելի է»:
- 30 Հոկտեմբեր — Հայաստանի եզիտիներու «Զահանգիր Աղա»յի անուան մշակութային ընկերութիւնը իր երրորդ համագումարէն թիւս ինչակազմով զօրակցութիւն կը յայտնէ «Հայոց Համագգային Շարժում»ին եւ Արցախի հայութեան ազատ ինքնորոշման պայքարին:
- 1 Նոյեմբեր — Խ. Հայաստանի եւ Արցախի միջեւ ամենամօտ կէտը հանդիսացող Բերդաճորի շրջանը պարպելու առաջադրութեամբ, ազերիներ կը պաշարեն հայաբնակ այդ շրջանը եւ հոնկէ կը ձերբակալեն 30 երիտասարդներ:
- 4 Նոյեմբեր — Երեւանի մէջ կը գումարուի «Հայոց Համագգային Շարժում»ին հիմնադիր ժողովը, մասնակ-

ցութեամբ շուրջ 1500 պատգամաւորներու: Հայաստանի կարգ մը հոսանքներու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներէն անկախ, ժողովին կը հրաւիրուին նաեւ Արցախի, Ջաւախի, խորհրդային սփիւտքի եւ արտասահմանեան սփիւտքի կուսակցութիւններու ներկայացուցիչները: Հ. Յ. Դաշնակցութիւնը չի մասնակցիր:

Երկու օրուան վրայ երկարող հիմնադիր նիստերը կ'ըլլան բանավեճային եւ փոթորկոտ: Այս առթիւ, «Շարժում»ը իր հակա-ժողովրդավարական շարք մը քայլերով, բայց մանաւանդ՝ Արցախի ու Արեւմտահայաստանի հայապատկան հողամասերուն կապակցութեամբ ծրագրային իր հարեւանցի եւ անլուրջ մօտեցումներով, ի դերեւ կը հանէ իր վրայ դրուած յոյսերն ու ակնկալութիւնները, վերածուելով լոկ ծրագիր-կանոնագիր ունեցող կուսակցութեան մը:

Այլ ուղղութեամբ մը, «Խորհրդային Հարաբազ» օրաթերթին մէջ յոյս կը տեսնէ Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդին ուղղուած՝ խորհրդային աւելի քան 50 գիտնականներու բաց նամակը, ուր անոնք կը խնդրեն Արցախի հարցը լուծել՝ համաձայն շրջանի ժողովուրդին ազատ ինքնորոշման իրաւունքի տրամադրութիւններուն:

- 7 Նոյեմբեր — Երեւանի մէջ հանդէս կու գան «Ազգային ինքնորոշման Միաւորում»ի անդամները, որոնք Մովսէս Կորկիզեանի առաջնորդութեամբ՝ Երեւանի «Ազատութեան» հրապարակին վրայ ցոյց մը կազմակերպելով, պաշտօնական շէնքերէն վար կ'առնեն խորհրդային կարմիր դրոշմները եւ կ'այրեն գանոնք:
- 10 Նոյեմբեր — Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը Պալթեան երեք երկիրներէն եւ Ադրբեջանէն կը պահանջէ ջնջել այն բոլոր օրէնքները, որոնք «խոտոր կը համեմատին» խորհրդային սահմանադրու-

թեան: Յայտնաբար, ակնարկութիւնը կ'երբայ Խ. Միութեան անջատուելու տրամադրութիւններուն:

- 13 Նոյեմբեր — Երեւանէն Ստեփանակերտ ուղղուող ուղղաթիւ մը պարտադիր էջք կը կատարէ Ադրամի մէջ, ուր ազերիներ կը ձերբակալեն ուղղաթիւին մէջ գրանցուող 11 երիտասարդները, որոնցմէ 8ը շուտով ազատ կ'արձակուին, իսկ 3ը կը տարուին Բաքու: Այս միջոցին, լրատու աղբիւրներ կը խօսին Բաքուի մէջ բանտարկուած շուրջ 100 հայ երիտասարդներու թիւի մը մասին:
 - Նոյեմբերի առաջին կիսամսեակ — Արցախ կը մնայ պաշարուած, իսկ անոր հետ ամէնօրեայ 3-4 օդային հարձակոցութիւնները եւս (Գորիս-Ստեփանակերտ եւ կամ՝ Մարդակերտ, Հաղրութ եւ Դոլայար գիւղերը) կը սկսին դժուարանալ, կլիմայական պայմաններու բերումով:
 - 14-15 Նոյեմբեր — Արցախցի 5 պատասխանատուներ եւ երեսփոխաններ նամակով մը կը դիմեն Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդին, անոր նկատողութեան յանձնելով, որ Ադրբեջանի իշխանութիւնները ձեռնարկած են հետեւողական աշխատանքի, Արցախի ազգագրական իրավիճակը այլափոխելու եւ ինքնավար մարզը ադրբեջանականացնելու միտումով: Անոնք կը դնեն նաեւ շարք մը այլ պահանջներ, որոնց շարքին՝ շրջանին պարենաւորման ապահովութեան երաշխաւորումը:
- Այս առթիւ, ղետներու ուշադրութեանէն չի վրիպիր այն, որ Խոջալուի մէջ 46 նորահաստար ընտանիքներուն վրայ կու գան աւելնալ 16 ուրիշներ: Ստեփանակերտի մօտակայ Մանիտի գիւղին նախկին 10 ազերի ընտանիքներուն թիւը կը բարձրանայ 24ի, իսկ Հայապոլու գիւղը, իր կարգին, «կը հիւրընկալէ» 11 մծիւթ թուրք ընտանիքներ:
- 17 Նոյեմբեր — Ամերիկեան Մերակոյտը միաձայնութեամբ կը բուեարկէ բանաձեւ մը, որ կը յայտնէ թէ.

«Միացեալ Նահանգներ գորավիզ կը կանգնին ԼՂԻՄի ժողովուրդին ձգտումներուն՝ ի խնդիր խաղաղ եւ արդար լուծումի մը»: Որոշումը գոհունակութեամբ կ'ընկալուի Երեւանի եւ Ստեփանակերտի հայրենի իշխանութիւններուն կողմէ:

- 19 Նոյեմբեր — Խ. Միութեան արտաքին գործոց փոխնախարար Ալեքսանտր Պեմերթնիխ իր մօտ հրաւիրելով Մոսկուայի մօտ Մ. Նահանգներու դեսպանը՝ Ճէֆ Մաքլոֆ, անոր կը յանձնէ բողոքագիր մը, Ծերակոյտի որոշումը նկատելով Խ. Միութեան ներքին հարցերուն միջամտութիւն: Ուաշինկթըն կը շտապէ լուսաբանել, որ Մ. Նահանգներու դէմ ուղղուած բողոքագիրը «սխալ կերպով հիմնաւորուած է»:
- 18-19 Նոյեմբեր — Խ. Միութեան թուրք ժողովուրդներու ներկայացուցիչները Բաքուի մէջ կը գումարեն ժողով մը, քննարկելու համար թրքական ընդհանուր կազմակերպութիւն մը ստեղծելու ծրագիրը: Ժողովը ազերի բանբերի մը կողմէ կ'որակուի «համաթրքական եւ համիւլամական»:
- 21 Նոյեմբեր — Արցախի Ազգային Խորհուրդը, յանուն Արցախի հայութեան, գոհունակութիւն կ'արտայայտէ Մ. Նահանգներու Ծերակոյտին որդեգրած բանաձեւին համար եւ կը դատապարտէ կեդրոնական իշխանութիւնները, որովհետեւ անոնք «Խորհրդային Միութեան ներքին գործերուն միջամտութիւն» որակած են յայտարարութիւնը:
- 22 Նոյեմբեր — «Ադրբեջանի ժողովրդային ձակատ»ին կոչին ընդառաջելով, ազերիներ կը դիմեն միօրեայ «ըզգուշացումի» գործադուլի, կեդրոնական իշխանութիւններէն պահանջելով անյապաղ վերջ տալ Արցախի յատուկ մարմինին գործունէութեան: Գործադուլը, ոչօրինական քայլով մը, կ'ընդգրկէ նաեւ հանրապետու-

թեան ձեռնարկութիւններուն ու նարտարարուեստի մարզը:

- 23 Նոյեմբեր — Մինչ ինքնապաշտպանական բնոյթի բախումները ամենայն սաստկութեամբ կը շարունակուին Հադրուք, Գերֆիման, Փարուխ, Սպիտակաշէն, Ստորաշէն եւ Կարմիր աւան շրջաններուն մէջ, նոր բռնութիւններ կ'արձանագրուին Մարդակերտի մէջ:

Ջանազան շրջաններու մէջ փոխադարձ ձերբակալումները կը ստանան առօրեայ բնոյթ:

- 25 Նոյեմբեր — Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի նիստին նախօրեակին, Խորհուրդի փոխ նախագահ Լուիխանովի հրաւերով ու ներկայութեամբ, Մոսկուայի մէջ հանդիպում մը տեղի կ'ունենայ Արցախի հայութեան եւ Ադրբեջանի ներկայացուցիչներուն միջեւ: Այս առթիւ, Լուիխանով անգամ մը եւս յստակ կը դարձնէ, որ Արցախի հարցը պէտք է լուծուի գտնէ Արցախի եւ Ադրբեջանի ներկայացուցիչներուն միջեւ եւ թէ՛ անոնք պարտաւոր են «լեզու գտնել» իրարու հետ:

- 28 Նոյեմբեր — Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդը քացարձակ մեծամասնութեամբ կ'որոշէ վերջ տալ 20 Յունուար 1989էն ի վեր Հայկական Ինքնավար Մարզը ուղղակի իր իշխանութեան ենթակայ պահելու իրաւավիճակին:

4ի դէմ 374 քուէով տրուած որոշումը կ'առաջադրէ հետեւեալները.—

- Ա. Լեռնային Ղարաբաղը կը մնայ Խ. Ադրբեջանի կազմին մէջ:
- Բ. Ուղղակի Մոսկուայի ենթակայ վոլսֆիի մարմինը կը լուծուի:
- Գ. Բաքուի ենթակայ մնալով, լայն իրաւասութիւններով կը վերականգնին ԼՂԻՄի Մարզկոմն ու Մարզխորհուրդը:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ ՈՒԹԻՒՆ

Գ. Մինչեւ երկու շաբաթ, Արցախն ու Ադրբեջանը կը պարտաւորուին համաձայնագիր կնքել, Արցախի պաշարումը վերցնելու եւ շրջանի բնակչութեան ապահովութիւնը երաշխաւորելու համար:

Ե. Կը նշանակուի հսկողութեան յանձնաժողով մը, որ խորհրդային ներքին ապահովութեան գործերուն միջոցով պիտի ջանայ առաջքը առնել ընդհարումներու եւ հսկել, որ այս որոշումը գործադրուի: Ցանձնախումբին կազմութիւնը կը ձգուի Գերագոյն Խորհուրդի նախագահութեան:

• 30 նոյեմբեր — Երեւանի մէջ գումարուած Խ. Հայաստանի Գերագոյն Խորհուրդին եւ Արցախի Ազգային Խորհուրդին համատեղ նիստը՝ 6 կէտերէ բաղկացած որոշումներով իր կտրուկ ո՛չը կ'ըսէ Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի որոշումին եւ Հայաստանն ու Արցախը կը հռչակէ «վերամիաւորուած»: Միաժամանակ, որոշումը Արցախի բնակչութեան վրայ կը տարածէ նաեւ «Հայաստանի հանրապետութեան քաղաքացիական իրաւունքները»:

ԻՆՔՆԱՀԱՍՏԱՏՄԱՆ ԹԱՐԳԱՎԱՀՄԱՆ ԵՒ ԳՈՅԱՏԵՒՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՎ	Վ. Ե.	5
ՀԱՄԱԹՕՏ ԱԿՆԱՐԿ՝ ԱՐՑԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ	ԽՄԲ.	19
ԵՈՐՀՐԳԱՀԱՅ ՆԵՂԻՆԱԿԻ ՀԱԿԱՀԱՅ ՅՕԳՈՒԱՇԻ ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆԸ	Ն. Վ. ԳԱՐԱՊԵՏԵԱՆ	27
ԵՈՐՀՐԳԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՕՏԱՐՈՒԱՅ՝ ԵՐԿՐԱՄԱՍԵՐՈՒՄ Ս. ԳԵՈՐԳԵԱՆ	67
ԳԻՏՈՒԹԵԱՆ, ՄՇԱԿՈՅԹԻ ՈՒ ՄԱՄԼՈՅ ԲՈՂՈՐ ԱԶՆԻԻ ԳՈՐԾԶՆԵՐԻՆ	Ս. ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ	103
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԱՐԱԲԱՂԻ ՊԱՀԱՆՋԱՏԻՐԱԿԱՆ ԵԼՈՅԹՆԵՐՈՒՆ	Վ. ԱՒԱԳԵԱՆ	135

ԱՐՑԱԽԻՆ ՀԵՏ.
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՄԱՐ

ԽՄԲԱԳԻՐ՝

Վ. ԷԹԻԵՄԵՋԵԱՆ

Հ.Յ.Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի
հրատարակութիւնները.

- 1.— ՊԱՏՄԱԿԱՆ ԷՆԻԵՐՆԵՐ — Գառնիկ Գիւզալեան
- 2.— ԻՆՆՍՈՒՆԱՄԵԱՅ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ — Հրաչ Տասնապետեան
- 3.— ԱՐՑԱԽԻՆ ՀԵՏ. ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՄԱՐ

Կեդրոնատեղի

HAMASKAÏNE Bookshop
SHAGHZOYAN Cultural Center
Bourj Hammoud — Lebanon

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ
ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Պատուէր	731
Պրակ	16
Տպագանակ	2000
Աւարտում	5-11-90



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Printed in Lebanon by Hamaskaine Wahe Sethian Press

Հասցե

HAMASKAÏNE BOOK SHOP
A. & N. SHAGHZOYAN CULTURAL CENTER
BOURJ HAMMOUD - LEBANON



ՀԱՄԱՂԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԻԱՆ ՏՊԱՐԱՆ

Printed in Lebanon by Hamaskaïne W. Sethian Press